



S. I. R. U.



ԲԱՐՁՐԱՅԻՐ ԲԱՐՁՐԱՅՈՒԹ



Հ. Մ. Ը. Մ. Ի

70ամեակ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

1918-1988

ՀՐԱԶԴԱՆ
(ՊԱՐԳԵՒ ՇԻՐԻՆԵԱՆ)

Հ . Մ . Լ . Մ . ի

70ամեակ


ՅՈՒՇԱՏԵՏՐ

1918-1988



ՀՐԱԶԴԱՆ
(ՊԱՐԳԵՒ ՇԻՐԻՆԵԱՆ)

Տպարան ՄՇԱԿ
Ֆրեզմօ, Քալիֆորնիա
1991



ՅԱՌԱՋ ՆԱՀԱՏԱԿ

Երաժշտութիւն՝ Բ. ԿԱՆԱԶԵԱՆԻ
Խօսք՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑԻ

Յառաջ, նահատակ ցեղի անմահներ,
Վեց դարու անմոռ վրէժի զրահներ,
Կատարն հայրենի լերանց հեռագոյն՝
Երթանք կոթողել դրօշակն Եռագոյն:

Հսկայ նուիրման
Տորմիդ հըրաթեւ,
Կամաւո՛ր բանակ,
Յառաջ, յառաջ անսասան,
Յառաջ անդեղեւ
Դէպի յաղթանակ, յաղթանակ:

Վատին սեւ արիւն մեր հողն ոռոգեց,
Տարագիր հայն իր կեանքը նորոգեց,
Երէկ՝ շղթայուած, այսօր՝ ինքնավար,
Յարեալ վեհօրէն դամբանէն խաւար:

Հսկայ նուիրման
Տորմիդ հըրաթեւ,
Կամաւո՛ր բանակ,
Յառաջ, յառաջ անսասան,
Յառաջ անդեղեւ
Դէպի յաղթանակ, յաղթանակ:

Հովանաւորութեամբ՝

Հ. Ա. Ը. Մ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ճեմարանի կամարներուն տակ բացաւ միտքի եւ հոգիի իր աչքերը եւ նեմարանական մթնոլորտի մէջ թեւածեց Հրազդանի (Պարգև Շիրինեան) բովանդակ կեանքը:

Ուսանողական տարիներուն, Շանթ-Աղբալեանի հովանիին ներքեւ՝ լո՛ւռ սպասարկեց հայ դպրութեան քուրմերուն. եւ վկայականը առնելէ ետք չհեռացաւ Ճեմարանի շուքեն: "Ճամագգային"ի "Յոյս" տպարանի պատասխանատու-գրաշարապետ, տանամեակնե՛ր, հոգածութեամբ շարեց, փորձերը սրբագրեց եւ գուրգուրանեռով լոյս ընծայեց առաքելատիպ իր ուսուցիչներուն երկերը եւ հայ մշակոյրի հարկատու բացում այլ հրատարակութիւններ:

Ամերիկա անցնելուն՝ կանգ առաւ կրկին գիր ու գրականութեան, մշակոյրի ափը: "Ասպարեզ" օրաբերքի եւ տպարանի մէջ դարձաւ օգտաշատ ներկայութիւն իրը սրբագրիչ եւ յօդուածագիր: Միաժամանակ աշխատակցութիւնը բերաւ այլ հրատարակութիւններու:

Փոքր տարիքեն՝ գաղափարական ներշնչումը առաւ Հայոց Պատմութենէն, մասնաւորաբար Հ. Յ. Դաշնակցութենէն: Բայց, Յեղափոխութեան առասպելական հերոսներէն ետք՝ սիրե՛ց, Սփիւռքի տարածքին Եռագոյնը բա՛րձր բռնած՝ յաղթաքայլ տողանցող սկառտներով եւ հայութեան համար փառքի բաժակ ու դափնի ապահովող մարզիկներով սիրտին հարազատ միւս կազմակերպութիւնը՝ Հ. Մ. Ը. Մ. ը:

Պարապոյ ժամերուն, զրոսանքին՝ գնդակ ալ խաղցաւ, առանց երբեք անուանի մարզիկ մը դառնալու: Ակումբային կեանքին, ժողովներու բերա՛ւ իր մասնակցութիւնը՝ վարչականօրէն առանց վաստակաւոր մը ըլլալու: Այսուհանդերձ, մտաւորական-մշակութային իր հակումները արգելվ չեղան, որ ինք հեռու մնար մարզաշխարհէն:

Հ.Մ.Ը.Մ.ի մրցումներուն, մրցաշարքերուն ներկայ եղաւ յաճախ, հանդիսութիւններուն՝ գրեթէ մի՛շտ: Տագնապեցա՛ւ անոր դիմակալած դժուարութիւններով, ցնծա՛ց եւ հպարտացաւ անոր յաղթանակներով:

Տոհմիկ ընտանիք կազմեց, զաւակներ եւ անփոխարինելի բոռ-

Եիկներ ալ ունեցաւ: Բայց Հ.Մ.Ը.Մ.ի հանդեպ իր սէրն ու խանդաղատանքը նուազում չարձանագրեցին, չմօսրացան երբե՛ք:

Ամէն մակընթացութենէ գերիվեր՝ Հ.Մ.Ը.Մ.ը մնայուն ապրո՛ւմ եղաւ իր մէջ: Ու ինք քոյլ տուաւ որ անոր արձագանգները ընդլայնին ու ներդաշնակուին ներաշխարհի տարածքին՝ վերածուելու համար համանուագի:

Միւս կողմէ, լուռ ու համեստ, շարունակ քաղեց մամուլին ինչ որ կը վերաբերէր Հ.Մ.Ը.Մ.ին, շարադասելով, շարահիւսելով զանոնք ի մի ամբողջութիւն:

Լրիւ կեանքի մը ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ականի այդ ապրումներուն, յիշատակներուն եւ ոգեկոչումներուն, ուսումնական մարդու պրպրտումներուն եւ բանահաւաքումին փնջաւորո՛ւմն է, համատեղումն ու համանուագը՝ լայնածաւալ այս հատորը, զոր Հրազդան կը մատուցանէ հանրութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի 75ամեակի սեմին:


Փոքր մոռացումներ կամ թերացումնե՞ր, բնակա՞ն է եօթանասունամեակ մը ընդգրկող բազմահարիւր այս էջերուն համար, որոնք հարուստ հանդիսարանն են վաւերագրումներու եւ վկայութիւններու, թուականներու եւ լուսանկարներու՝ խանդաղատանքով ջերմացած:

Հայ նորագոյն պատմութեան նպաստ ու ներդրում,

Հ.Մ.Ը.Մ.ի անցեալի հայելի եւ ապագայի ուղեցոյց-փարոս

Այս հատորը արժանի՛ է տեղ գրաւելու ամէն հայ գրադարանի մէջ, մանաւանդ՝ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի երդիքին տակ:

Հ. Մ. Ը. Մ. ի
ԿԵՆԴՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ԲՈԼՈՐՈՒԻՒԼ Հ. Մ. Ը. Մ. Ի ՇՈՒՐՋ ԸԼԼԱԼ Հ. Մ. Ը. Մ. Ի ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԵԶ

Հ. Մ. Ը. Մ.

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն:

Վսեմ յղացում՝ 1918ի վերջերը, Պոլիս, խումբ մը գաղափարապաշտ,
հաւատաւոր ու հեռատես երիտասարդ հայորդիներու:

Նշանաբան՝

«Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր»:

Հիմնական նպատակ՝

Ֆիզիքապէս, բարոյապէս եւ հոգեպէս բարձրացնել հայ երկսեռ
երիտասարդութիւնը:

Խանդավառ սկիզբ, աննախընթաց ոգեւորութիւն, շքեղ երթ:

Վերածնունդի եռուն, բայց քանի մը տարիներու կարճատեւ շրջան,
ու ակամայ տարագրութիւն արեւմտահայերու եւ գաղթաշխարհ:

Պոլիս, 1922 Սեպտեմբեր 16:

Վերջին նիստ՝ Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութեան:

Որոշում՝

Հ. Մ. Ը. Մ. ը Թուրքիոյ մէջ լուծուած յայտարարել եւ, իբրեւ հարա-
զատ զաւակը իր ժողովուրդին, հետեւիլ անոր, սփիւրքահայ գաղութ-
ներու մէջ շարունակելու համար Հ. Մ. Ը. Մ. ի հայապահպանման նուիրա-
կան առաքելութիւնը:

Ու այսօր, համագաղութային կառոյց ունեցող եւ տակաւ հզօրացող,
հայութեան սիրտը կախարդած ու ժողովրդական դարձած սիրելի
անուն մը՝

Հ. Մ. Ը. Մ.

Մի՛շտ պատրաստ, մի՛շտ ներկայ եւ մի՛շտ մասնակից գաղութներու
կազմաւորումին, անոնց յառաջընթացքին ու վերելքին:

Հ. Մ. Ը. Մ.

Զահակիր հայ ժողովուրդի հոգեկան ու Փիզիքական արժանիքներուն, կը կրթէ ու կը կերտէ, տոկուն ու ազնուական կը դարձնէ հասակ առնող մեր մանուկները, պարման-պարմանուիիները, երիտասարդ-երիտասարդուիիները, կը մարգէ անոնց մկանները, կ'ամրացնէ անոնց կամքը:

Հ. Մ. Ը. Մ.

Հայ կեանքի բախտաւոր ու երշանիկ ստեղծագործութիւններէն, առաջնորդ ու դաստիարակ, մարմնակրթանիքի միջոցով նորահաս սերունդներուն կը ջամրէ պարտականութեան եւ պատասխանատուութեան գիտակցութիւն, խղճմտանիք, փոխադարձ օգնութեան ոգի, խանդակառութիւն, ուրախութիւն, անընկնելի կորով, անրասիր նկարագիր:

Հ. Մ. Ը. Մ.

Ազգապահպանման ամուր բերդ, օտարացման դէմ ապահով երդիք ունեցող ակումբ, երիտասարդութեան ապաստարան, վառ կը պահէ ազգային ոգին, կազմակերպելով ազգային ինքնութիւնը, ազգային հպարտութիւնը արմատացնող մրցումներ, մարզահանդէսներ, տողանցքներ, արշաւներ, բանակումներ, դասախոսութիւններ, ընկերային ու գեղարուեստական հաւաքոյթներ, տօնահանդէսներ:

Հ. Մ. Ը. Մ.

70 տարիներու փառահեղ անցեալով արժեւորուած գոյութիւն եւ նոր հեռանկարներով յաղրականօրէն շարունակուող առաքելութիւն:

Ու գնահատել Հ. Մ. Ը. Մ. ի առաքելութիւնը, կը նշանակէ ըմբռնել անոր անհրաժեշտութիւնը, բոլորուի անոր շուրջ եւ ըլլալ անոր ծառայութեան մէջ:

Հ. Մ. Ը. Մ. ի ծառայութեան մէջ ըլլալ, սակայն, չի նշանակեր միայն մարզիկի կամ մարզիչի արժանիք ունենալ:

70 տարիներու պատմութիւնը վկայ, բոլոր ասպարեզներէն եկած եւ իրարու յաջորդած նուիրեալներու, վաստակաշա'տ նուիրեալներու փաղանգ մը կայ Հ. Մ. Ը. Մ. ի ծառայութեան մէջ:

Մեծ Եղեննէն նողոպրած սերունդէն ու հասակ առած որբերէն սկսեալ՝ Հ. Մ. Ը. Մ. ին ծառայելու եկած են արհեստաւորներ, պաշտօնեաներ, առեւտրականներ, ուսանողներ, գիտութեան ու գրականութեան սպասարկուներ:

Այսօր, Հ. Մ. Ը. Մ. ի ընտանիքը՝ մրջնիկ, գայլիկ, արի, արենոյշ, մարզիկ-մարզիկուիի թէ անդամ-անդամուիի, պատկառելի թիւ մը կը ներկայացնէ:

Ընտանիք մը բազմանիւղ, հաստատուած Մերձաւոր Արեւելքի, Եւրոպայի, Աֆրիկէի, Աւստրալիոյ, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաներու հայահոծ հին ու նոր կազմաւորուող գաղութներու մէջ:

Ընտանիք մը, որուն տէրն ու հոգատարը միայն ու միայն ինքը՝ հայ ժողովուրդն է:

Գուրգուրանք Հ. Մ. Ը. Մ. ի ընտանիքին: Ամբողջական գուրգուրանքով: Այնպէս՝ ինչպէս ծնողները կը տածեն իրենց սիրասուն զաւակներուն հանդէպ:

Ու ինչ որ տրուած է Հ. Մ. Ը. Մ. ին, առաւելագոյնս արդիւնաւորուած է:

70 տարի, անվարան, Հ. Մ. Ը. Մ. միայն երախտագիտական զգացումով, նուիրումով եւ ծառայասիրութեամբ տրամադրած է իր ակումբներն ու անդամները մեր ժողովուրդին, երբ ան կարիք ունեցած է, երբ դժուարին կացութիւններու դէմ յանդիման գտնուած է կամ դժբախտութիւններ պատահած են:

Տակաւի՛ն. Հ. Մ. Ը. Մ. ի անդամները, մարզիկներն ու սկաուտական կազմերը մեր ազգային ճեռարկներուն մասնակցած են Հ. Մ. Ը. Մ. ականի յատուկ ոգիով:

Տպաւորիչ եղած է անոնց ներկայութիւնը, փայլը հանդիսացած են հանդէսներուն, մեր ազգային տօնակատարութիւններուն:

Աւելի՛ն. նիւթապէս եւ բարոյապէս զոհողութիւն պահանջող պարտաւորութեամբ, Հ. Մ. Ը. Մ. ականներ գիտցած են լաւագոյնս օգտագործել գաղութներու կարելիութիւնները եւ խանդավառութեամբ, համբերութեամբ, աննկուն յարատեւութեամբ եւ վճռակամութեամբ կրցած են յաջողապէս կազմակերպել ազգային ոգեշունչ մթնոլորտ ստեղծող Միջ-Մասնանիդային հանդիպումներ, Նաւասարդեան Մարզախաղեր:

Ու հայ ժողովուրդը հոգեկան երջանկութեամբ դիտած է իր հարազատներուն՝ Հ. Մ. Ը. Մ. ական սերունդներուն մարզական ելոյթներն ու փառահեղ տողանցքները:

Պոլիս, Մերձաւոր Արեւելք, Եւրոպա, Եգիպտոս, Ամերիկա, Աւստրալիա եւ այլուր, ապրուած բաղցը օրերու յիշատակներ ունի Հ. Մ. Ը. Մ. ի պատմութիւնը:

Կատարուած իրագործումներ, արձանագրուած նուանումներ եւ տարուած փառաւոր յաղթանակներ, որոնք ուրախութեան արցումներ խլած են եւ հպարտութեամբ լեցուցած են յաղթանակներու կարօտ հայու կուրծքը:

Հ. Մ. Ը. Մ. ի պատմութիւնը:

Որքա՛ն սրտաշարժ դրուագներ կան անոր էջերուն մէջ:

Գաղթականութեան դառն օրերուն, ինչպիսի նուիրուածութեամբ, զոհողութեան անկրկնելի ոգիով համախմբած ու յուսադրած է որք մնացած սերունդը:

Յուզումի ի՛նչ պահեր ապրուած են, երբ ոնքածին բուրքի նիրաններէն ազատագրուած անշափահաս բեկորներ՝ արաք հիւրընկալ ու բարեսիրտ ընտանիքներու մէջ հասակ առնելէ ետք, անսալով իրենց սրտի զարկերակին, դիմած են Հ. Մ. Ը. Մ. ին, ուր գրկարաց ընդունուած են եւ ուր Հ. Մ. Ը. Մ. ի ստեղծած հայարոյր մթնոլորտին մէջ վերագտած են իրենց ցեղային ինքնութիւնը:

Հ. Մ. Ը. Մ.

Հայու կեանքը վերանորոգող, ամրացնող դարբնոց:

Այսօր, ամէնուրեք, երիտասարդութեան բանակ մը կայ Հ. Մ. Ը. Ը. ով խանդավառ, Հ. Մ. Ը. Մ. ի ծառայութեան մէջ: Սեփական դիմագիծ ու նկարագիր ունեցող հաւատաւոր երիտասարդութիւն մը:

Այսուհանդերձ, դեռ որքա՞ն ուրիշներ կան, բազում հազարներ, որոնք երբ մուտք գործեն Հ. Մ. Ը. Մ. ի ընտանիքն ներս, կրնան առաւել գոտեպնդուիլ իրենց հայութեամբ:

Նոյնիսկ նակատագրի թերումով, ակամայ, օտար շրջանակներու մէջ իրենց ազգային ինքնուրիւնը առկայժեալ հայորդիներ, եթէ առաջնորդուին Հ. Մ. Ը. Մ. ի ակումբը, կրնան հուր ստանալ Հ. Մ. Ը. Մ. ի հայութիւն բորբոքող հնոցէն, վերանորոգուիլ եւ խորք բարքերէ, յոռի սովորութիւններէ հեռու, իրենց ցեղային արժանիքները ցուցաբերել Հ. Մ. Ը. Մ. ի ծառայութեան մէջ:

Հ. Մ. Ը. Մ.

Գոյատեւումի յոյս ու հաւատք ներշնչող կազմակերպութիւն:

Ստուարացնենք ու հզօրացնենք Հ. Մ. Ը. Մ. ի շարքերը ու պատրաստենք Հ. Մ. Ը. Մ. ի դրօշը, հայո՛ւ դրօշը բարձր պահող մարդիկներ ու խումբեր:

Ու եթէ դեռ հեռու ենք եւ, դժբախտաբար, չենք կրնար ազգային դրօշով եւ ազգային խումբերով մասնակցի միջազգային պաշտօնական մրցումներու կամ ողիմապիականներու, կարելի է սակայն միջազգային չափանիշով մեր ժողովուրդը, մանաւանդ մեր երիտասարդութիւնը ազգային ոգիով խանդավառող մարզիկներ պատրաստել, տարրեր մարդախաղերու կեդրոնական խումբեր ունենալ:

Ազգերու յոյսն ու ապագան երիտասարդութիւնն է, առո՛ղջ երիտասարդութիւնը:

Ի զուր չէ, որ կառավարութիւնները բազմամիլիոն գումարներ կը յատկացնեն, մարզելու համար իրենց երիտասարդութիւնը:

Ի զուր չէ, որ բոլոր ազգերը մարզախաղերով մրցակցութեան մէջ են իրարու հետ: Մարզախաղեր՝ որոնք, ամառնային թէ ձմեռնային, տարին 12 ամիս հերթով եւ անդադար կը կատարուին եւ մեծ հետաքրքրութիւն կը ստեղծեն:

Եւ ի զուր չէ, որ գրեթէ ամէն օր մարզական կեանքը ներկայացնող պատկերազարդ օրաբերքեր, շաբաթաթերթեր, պարբերաթերթեր, ամսագրեր, գրքոյկներ ու գիրքեր լոյս կը տեսնեն, մրցումներն ու մարզիկները կը ցուցադրուին պատկերասփիւններէն, ճայնասփիւնի խօսնակներ լայնօրէն կ'անդրադառնան եւ առօրեայ մամուլը յատուկ էջեր ու սիւնակներ կը յատկացնէ:

Արդարեւ, բոլոր մարզախաղերը, անխտիր, բազմամիլիոն հետեւրդներ ունին ամէնուրեք եւ մրցանիշներ կոտրող, դափնիներ եւ մետալներ խոր մարզիկներն ու յաղթական խումբերը ազգային հպարտանքով կը դիմաւորուին: Յաղթանակները ցնծատօններու կը վերածուին:

Հակառակ մեր պատմական դարաւոր անցեալին, աշխարհի ժողովուրդներուն որքան ծանօթ, նոյնքան եւ աւելիով անձանօթ ազգ ենք:

Նիւթական ի՞նչ մեծ զոհողութիւններով ու նիգերով կը չանանք ծանօթացնել մեր երկիրը, մեր ժողովուրդը եւ մեր պատմութիւնը, հետապնդելու համար մեր ազգային գերագոյն նպատակը՝ մեր արդար դատը:

Եթէ ունենանք մարզախաներուն գոհացում տուող եւ արդիական ոնով կառուցուած գեղակերտ ակումբներ, մարզաւաններ կամ մարզավայրեր ու խաղաղաշտեր, միջազգային չափանիշով մեր պատրաստած մարզիկներով ու խումբերով ոչ միայն կրնանք հարստացնել մեր հանրային կեանքը իրարու յաջորդող մարզական ձեռնարկներով, այլ եւ միջազգային մրցումներով կրնանք մեծ հետաքրքրութիւն ստեղծել եւ ինքնարերաբար մեր տրամադրութեան տակ ունենալ ու ծանօթացումի, մեր դատին հանդէպ միջազգային հանրային նպաստաւոր կարծիք ու համակրանք ստեղծելու օգտագործել մրցակից ազգերու այնքան սուղ ու դժուարահան ճայնասփիւոր, պատկերասփիւոր եւ մամուլը:

Արդ, անհրաժեշտ է լայնօրէն բանալ սրտերը եւ Հ. Մ. Ը. Մ. ի ծառայութեան մէջ, Հ. Մ. Ը. Մ. ի համար ստեղծել լաւագո՞յն կարելիութիւններ:

Կարելիութիւններ՝ որոնք կան, կրնան ստեղծուիլ ամենուրեք:

Մեր նիւթական նուիրաբերումը, մեր ներկայութիւնը, մեր հետաքրքրութիւնը, մեր ցուցաբերած գուրգուրանքը, սէրն ու բաջալերանքը թէեւ մեծապէս կ'արդիւնաւորեն Հ. Մ. Ը. Մ. ի նպատակն ու ձգտումները, սակայն, պետական յատկացումներէ զուրկ Հ. Մ. Ը. Մ. ի համար անհրաժեշտ է, այլ'տք է ստեղծել շահարեր կամ եկամտաբեր մնայուն աղքիւններ, որոնցմով միայն իրապէս կարելի է արդարացնել այն յոյսերը, որոնք դրուած են Հ. Մ. Ը. Մ. ի ուսերուն վրայ:

Հ. Մ. Ը. Մ.

Մարզականի առընթեր՝ նաեւ յստակօրէն բանաձեւուած Գաղափարի Միութիւն:

Մի՛շտ պատրաստ, կամաւո՞ր բանակ:

Հ. Մ. Ը. Մ.

Մեր ժողովուրդի ապագայի հանդէպ անսահման հաւատքով՝ նոյն զգացումով բարախող սրտերու ջերմ մէկտեղում:

Սրտեր՝ որոնց պարտականութիւնն ու պարտաւորութիւնը եղած է գիտակցութեամբ, հրամայական յանձնառութեամբ մեր անժամանցելի արդար դատը հետապնդելու, մեր ազգային իրաւունքներուն տէր կանգնելու պատրաստակամ ու գիտակից հայորդիներ պատրաստել:

Տակաւին. դրական մասնակցութիւն բերել՝ պահանջատիրական մեր նիգերուն, Հայ Դատի հետապնդման նոր, ազդու ու գործնական միջոցառումներուն:

Հ. Մ. Ը. Մ. ի 70ամեակի հանգրուանին՝

Նոր կարելիութիւններով, նոր պայմաններով ու նոր ծաւալով Հ. Մ. Ը. Մ. ը հզօրացնելու առաջադրանքով՝

Բոլորուիլ Հ. Մ. Ը. Մ. ի շուրջ:

Ըլլա՛լ Հ. Մ. Ը. Մ. ի ծառայութեան մէջ:

ՀՐԱԶԴԱՆ



Հ. Մ. Ը. Մ. ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՊՈԼԻՍ — ԳԱԻԱՌՈՒՆԵՐ — ԿԻԼԻԿԻԱ

Հ. Մ. Ը. Մ.

**Հայ Մարմնակրթական Ընդհանուր
Միութիւն:**

Կը հիմնուի 1918ին, քայքայուած օսմանեան կայսրութեան մայրաքաղաք Պոլսոյ մէջ, խումբ մը հայրենասէր ու գաղափարապաշտ երիտասարդներու կողմէ, թուրքից եղասպանութեան դէմ վսեմ յղացումով՝ եղեռնէն ճողովրած մեր մնացորդացի զաւակներէն եւ որբերու սերունդէն բարձրաճակատ ու վրէժինդիր հայորդիներ պատրաստելու համար :

Պոլսոյ մէջ մարզական ակումբներն ու խումբերը Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութեան մը դրօշին տակ հաւաքելու գաղափարը յղացածէր Հայ մարմնակրթանքի ուահվիրայ, Պոլսոյ մէջ հրապարակային առաջին սկաւուտական երդումը տուող եւ հայկական առաջին մարզական «Մարմնամարզ» պարբերաթերթի հրատարակիչ Շաւարշ Քրիսեան: Նահատակուած՝ 1915ին :

— Հ. Մ. Ը. Մ. ի հիմնադիր ժողովը կը գումարուի 16 նոյեմբեր 1918ին:

Հիմնադիր ժողովի անդամներն էին՝ Սկավուտապետ Գրիգոր Յակոբեան, Տիգրան Խոյեան (ապա՝ Տիգրան Ա. քհնյ. Խոյեան), Գարլո Շահինեան, Հայկ Ճիգմէճեան, Լեւոն Յակոբեան, Ժիրայր Խորասանձեան, Վահրամ Փափազեան:

— Հ. Մ. Ը. Մ. ի «Բարձրացի՛ր, Բարձրացն'ւր» նշանաբանը կը յղանայ՝ Պետրոս Ատրունի:

— Սկավուտութեան գաղափարախօսը կ'ըլլայ՝ Յովհաննէս Հինդեան:

— Հ. Մ. Ը. Մ. ի Մրագիր-Կանոնագրի գլխաւոր խմբագիրն էր՝ Յ. Ճ. Սիրունի:

— 1918 նոյեմբեր 16ին գումարուած Հ. Մ. Ը. Մ. ի հիմնադիր ժողովը կ'որոշէ Պոլսոյ թաղերուն մէջ կազմակերպչական աշխատանք տանիլ եւ հիմնել Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղեր:

— Հիմնադիր անդամներէն Մասնաճիւղեր հիմնելու եռանդուն աշխատանքի կը լծուին՝

Գրիգոր Յակոբեան եւ Ժիրայր Խորասանձեան — Բերա թաղին մէջ:

Հայկ Ճիգմէճեան եւ Գարլո Շահինեան

— Սկիւտար թաղին մէջ:

Տիգրան Խոյեան եւ Լեւոն Յակոբեան

— Սամաթիա թաղին մէջ:

— 1918 նոյեմբեր 27ին, հիմնադիր անդամներու կեղը՝ Վարչութեան Բ. ժողովը կը հաստատէ Բերայի, Սկիւտարի եւ Սամաթիոյ մէջ հիմնուած Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերը:

— Մասնաճիւղեր հիմնելու աշխատանքները կը շարունակուին եւ կարճ ժամանակաշրջանի մը մէջ ոչ միայն Պոլսոյ,



ՇԱԻԱՐՇ ՔՐԻՍԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ՑԱԿՈԲԵԱՆ



ՊԵՏՐՈՍ ԱՏՐՈՒՆԻ



ՑՈՎՃԱՆՆԵՍ ՀԻՆԴԼԵԱՆ



ՏԻԳՐԱՆ ԽՈՅԵԱՆ



ԳԱՐԼՈ ՇԱՀԻՆԵԱՆ



ՀԱՅԿ ՃԻԶՄԵՋԵԱՆ



ԼԵՒՈՆ ՑԱԿՈՐԵԱՆ



ԺԻՐԱՅՐ ԽՈՐՍԱԿԱՆՃԵԱՆ




ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶԵԱՆ

այլեւ անոր մօտակայ Ատաբազար, Պարտիզակ, Իզմիթ (Նիկոմիտիա) եւ Ռոտոսթօքազաքներու մէջ կը հիմնուին թիւով 23 Մասնաճիւղեր, որոնց վրայ կ'աւելնան նաեւ Արմաշի Դպրեվանքին մէջ հաստատուած եւ երկրագործութեան նուիրուած որբանոցի 120 սաները, իբրեւ սկառտա-

— 1919ին, Պոլսոյ մէջ, ազգային ընդհանուր սկառտապետ Գրիգոր Յակոբեանի հրահանգով, Հ. Մ. Ը. Մ. ի սկառտները կը կատարեն չքեղ տողանցք:

— Պատերազմի տարիներուն անօրինակ նախճիրէն հազիւ ճողովրած մեր ժողովուրդի բեկորները, իբրեւ փրկութեան



Հ. Մ. Ը. Մ. ի Ա. Տարեկան Ողիմականը (31 Օգոստոս 1919)
Գատըգիւղի «Խւնիոն Քլիւպ» մարզավայրին մէջ:

կան միաւոր-Մասնաճիւղ, եւ որոնք 1920ին, կը փոխադրուին Հայաստան, հոն մնալու եւ շարունակելու համար երկրագործութեան ուսումը:

— 1918 Դեկտեմբերին, Հ. Մ. Ը. Մ. պաշտօնապէս կը վաւերացուի Ազգ. Կեդր. Վարչութենէն:

— Համաշխարհային Ա. պատերազմի զինազադարէն ետք, հայութեան մնացորդացը կը համախմբուի իր ծննդավայրերուն մէջ եւ կը սկսի վերակենդանացնել իր օճախը եւ ազգային կեանքը:

— 1919ին, Պոլիս, Գատըգիւղի «Խւնիոն Քլիւպ»ի մարզավայրին մէջ, Զաւէն Պատրիարքի նախագահութեամբ, տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպած Հ. Մ. Ը. Մ. ի Ա. Ողիմականը:

վերջին յոյս, կը լեցուին Պոլիս, ուր պոլսահայերու կողմէ կ'ընդունուին սրտբաց եւ կը պատսպարուին: Ազգ. Խնամատարութեան հոգածութենէն բացի, Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութիւնը անոնց յատուկ դեղարան մը կը բանայ, գործի կը լծէ իր սկառտները, որոնք մեծ նուիրումով կը դիմեն Պոլսոյ դեղարանները եւ կը հայթայթեն անհրաժեշտ բոլոր դեղերը:

— 1919ի Հոկտեմբերին, Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութեան նախաձեռնութեամբ կը հաստարակուի «Հայ Սկառտ» թերթը:

— 1919ին, Իզմիրի, Ատաբազարի, Մարզուանի մէջ եւ այլուր, նոր եռանդով կ'աշխուժանայ մարզական գործունէութիւնը:

— Կիլիկիոյ մէջ կը կազմակերպուի



ԶԱԻԷՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ՏէՐ ԵՂԻՍ.ՑԵՍՆ
Պատրիարք Հայոց Թուրքիոյ
1919 Պոլիս, Հ. Մ. Ը. Մ. ի Ա. Ողիմականի նախագահ

Կիլիկիոյ Հայ Մարմնամարզական Միութիւնու:

— Ատանայի մէջ, հիմը կը դրուի Արիամարտ Մարմնակրթական Միութեան, որ Մասնաճիւղեր կ'ունենայ Տարսոնի եւ Մերսինի մէջ: Աշխատանք կը տարուի Մասնաճիւղեր հիմնելու նաեւ Սիս, Հաճըն, Մա-



Բանաստեղծ

ՄԱՍԹԷՈՍ ԶԱՐԻՑԵԱՆ

Հ. Մ. Ը. Մ. ի առաջին սկաուտներէն

Գեղակագմ մարզիկ, ախոյիան բարձրութիւն
ցատկելու եւ երեք բայլ ոստումի

բաշ, Զէյթուն եւ Տէօրթ-եօլ քաղաքներու
մէջ:

— Արիամարտ Մարմնակրթական Միութիւնը կապի մէջ կը մտնէ Պոլիս, Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութեան հետ, որ իրաւունք կու տայ եւ Ատանայի մէջ կը կազմուի Հ. Մ. Ը. Մ. ի առժամեայ Յանձնախումը:

— 1919 Նոյեմբերին, առժամեայ Յանձնախումը կազմակերպչական աշխատանքներ տանելէ ետք, Կիլիկիոյ Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերը կ'ընտրեն Հ. Մ. Ը. Մ. ի Կիլիկիոյ Շրջանային Վարչութիւնը:

— Նորընտիր Շրջ. Վարչութիւնը

մեծ եռանդով գործի կը սկսի եւ 1920 Մարտին, Ատանայի «Արգարեան» վարժարանի մէջ կը կազմակերպէ սկաուտական երդման արարողութիւն:

— 1920 Մայիս 28ին, Հ. Մ. Ը. Մ. ի սկաուտներ, Ատանայի մէջ, իրենց մասնակցութիւնը կը բերեն Հայաստանի Անկախ Հանրապետութեան հրապարակային տօնակատարութեան:

— 1920ին, Գատըգիւղի «Խնիոն Քըլիւպ»ի մարզավայրին մէջ տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութեան կազմակերպած Հ. Մ. Ը. Մ. ի Բ. Ողիմպիականը:

— 1920ին եւ 1921ին կը գումարուին Հ. Մ. Ը. Մ. Մ. ի Պատգամաւորական Ժողովներ եւ կ'ընտրուին նոր Կեդր. Վարչութիւններ:

— 1921ին, առանձնաբար, տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. Մ. ի Սկիւտարի, Սամաթիոյ, Բերա-Շիշիի եւ Թաղային Մասնաճիւղերու տարեկան Ողիմպիականները:

— 1921ին տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. Մ. ի Փութպոլի Լիկի ախոյեանութեան մրցումներ, մասնակցութեամբ Հ. Մ. Ը. Մ. ի Իզմիթի, Պէշիկթաշի, Գում-Գափուի, Գատըգիւղի եւ Բերա-Շիշիի Մասնաճիւղերու խումբերուն: Աւարտական մրցումը՝ Գում-Գափուի եւ Բերա-Շիշիի խումբերուն միջեւ, վերջ կը գտնէ 1-1 հաւասար արդիւնքով: Մրցումը կը կրկնուի եւ 2-0 արդիւնքով յաղթանակին, ախոյեանի տիտղոսին եւ Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութեան տրամադրած բաժակին կը տիրանայ Հ. Մ. Ը. Մ. ի Բերա-Շիշիի խումբը:

— Հ. Մ. Ը. Մ. Մ. ականներ, ամէնուրեք, կը պատրաստուին մասնակցելու Պոլիս, Հ. Մ. Ը. Մ. ի Գ. Ողիմպիականին:

— 1921ին, սակայն, Թուրքիոյ մէջներքին յեղաշրջումով եւ քեմալականներու յաղթանակով, հայ ժողովուրդը, հարկադրաբար, անգամ մը եւս կը լքէ իր ծննդավայրը ու կը գառնայ գաղթական:


— 1922 Սեպտեմբեր 16ին, Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութիւնը Թուրքիոյ մէջ լուծուած կը յայտարարէ Հ. Մ. Ը. Մ. ը., որ, իբրեւ հարազատ զաւակը իր ժողովուրդին,

կը հետեւի անոր, սփիւռքահայ գաղութներու մէջ շարունակելու համար հայապահպանման նուիրական առաքելութիւնը:

— Արտերկրի մէջ, գաղթական հայութիւնը բնակութիւն կը հաստատէ տարբեր երկիրներու մէջ: Այսուհանդերձ, տարիներու հոլովոյթին հետ, քաղաքական ներքին պայքարներու, վարչակարգերու փոփոխութիւններու եւ տնտեսական տագնապներու հետեւանքով, կամայ թէ ակամայ, կատարուած են ու կը կատարուին աւելի

ապահով շրջաններ կամ երկիրներ տեղափոխութիւններ:

Հետեւաբար, թուական նուազումով կը տկարանան երբեմնի շէն ու բարգաւաճ գաղութներ, կամ թուական յաւելումով կը հզօրանան տկար ու փոքրաթիւ գաղութներ, կը ստեղծուին նաև աշխարհագրականօրէն իրարմէ հեռու նոր գաղութներ: Հ. Մ. Ը. Մ. միշտ փնտուած ներկայութիւն կ'ըլլայ ամէնուրեք:



1919-1920, Ատանա: Հ. Մ. Ը. Մ. ի ակումբին առջեւ, Հ. Մ. Ը. Մ. ական սկաուտներ, որոնք սփիւռքահայ գաղութներու մէջ Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերուն հիմնադիրները եւ գործօն անդամները եղան:

Ոտքի, երկրորդ շարք, ձախէն երկրորդը՝ Քերոր Առաքելան:



Հ. Մ. Ը. Մ. ի ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՎԵՐԻՆ ՄԱՐՄԻՆ 1921, Պոլիս
Ա. շարք ձախէն աջ Ա. Յովակիմեան, Թ. Մեծատուրեան, Գ. Յակոբեան,
Հ. Ճիզմէնեան, Օ. Ֆրէնկեան:
Բ. շարք ձախէն աջ Ե. Տ. Արանասեան, Պ. Պէօրեքնեան, Մ. Մալումեան,
Ա. Յակոբեան, Ժ. Մինթանեան, Ն. Սերոբեան, Յ. Թօգատլեան:



ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ

— 1920 Յուլիսին, Վահան Զերազ, Օննիկ Եազմաճեան եւ Տիգրան Խոյեան կը մեկնին Հայաստան, կրթական նախարար Նիկոլ Աղբալեանի հրաւէրով, ազատ ու անկախ հայրենիքի մէջ մարզական եւ սկառուտական դաստիարակութիւնը կազմակերպելու եւ տարածելու համար:

Նախապէս, արդէն, հայրենիքին իրենց նուիրեալ ծառայութիւնը բերելու համար Հայաստան մեկնած էին պոլսահայ մարզական կեանքի ուահվիրաներէն Եղիշէ եւ Եղնիկ Քաջունի եղբայրները եւ Վահան Զերազ: 1919ին Զերազ վերադարձած էր Պոլիս:

— 1920 Օգոստոսին, դէպի Հայաստան ճամբորդութեան ընթացքին, Վահան Զերազ, Օննիկ Եազմաճեան եւ Տիգրան Խոյեան, Պաթումի մէջ, իրենց կեցութեան օրերուն, տեղւոյն 20 սկառուտներով կը հիմնեն Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղ:

— Հայաստանի մէջ, եռանդամ պատուիրակութիւնը կը կազմէ ֆութպոլի խումբեր, կը կազմակերպէ հետաքրքրական մըրցումներ:

— 1920 Սեպտեմբերին, Ալեքսանդրապոլի մէջ տեղի կ'ունենայ ֆութպոլի մըրցում, տեղւոյն «Զօրավար Վարդան» եւ Երեւանի խումբերուն միջեւ, նախագահութեամբ Շիրակի նահանգապետ Կարօ Սասունիի եւ իրաւարութեամբ Տիգրան Խոյեան Խոյեանի հոգած առաջնորդութիւնը կազմակերպուի մէջ մարմնակրթական սկառուտական եւ որբախնամի աշխատանքներուն, կը գնդակահարուի Թիֆլիսի Զեկայի բանտին մէջ:



ՎԱՀԱՆ ԶԵՐԱԶ

յեանի: Կը յաղթէ Երեւանի խումբը, 1-0 արդիւնքով:

— Եռանդամ Պատուիրակութիւնը կազմակերպչական աշխոյժ գործունէութիւն կ'ունենայ, սակայն կարճատեւ, եւ իր առաքելութիւնը վերջ կը գտնէ Հայաստանի խորհրդայնացումով, 29 Նոյեմբեր 1921ին:

— Եռանդամ պատուիրակութեան անդամներէն Վահան Զերազ, իբրեւ վարձատրութիւն իր մարմնակրթական, սկառուտական եւ որբախնամի աշխատանքներուն, կը գնդակահարուի Թիֆլիսի Զեկայի բանտին մէջ:





ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ

Հ. Մ. Ը. Մ. ի ԴԵՐԸ

Մեծ է դերը Հ. Մ. Ը. Մ. ի: Այդ դերը լաւ ըմբռնելու համար, անհրաժեշտ է ազգային քարձը գիտակցութիւն, այսինքն՝ մեր ուժերու, մեր արժէքի, մեր ընթացքի եւ նպատակի պայծառ ըմբռնում: Յարգանք եւ պատկառանք, այս աշխարհի մէջ՝ ուժով կը ստացուին, կը պարտադրուին եւ կը ներշնչուին: Խսկ ուժեղ են առոյգը, առողջն ու կորովին:

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ



ԵԶՆԻԿ ՔԱԶՈՒՆԻ



ԵՂԻՇԵ ՔԱԶՈՒՆԻ

ՄԵՐՁԱԿՈՐ ԱՐԵՒԵԼՔ

ՀԻԲԱՆԱՆ, ՍՈՒՐԻԱ, ԱՄՄԱՆ,
ԵՐՈՒՍԱՂԵՄ, ՀԱՅՖԱ, ԵԱՖԱ

— 1921ին, արեւմտահայութիւնը, պատմական ծանօթ պատճառներով, հարկադրաբար, տուն ու տեղ ձգելով կը հեռանայ իր հայրենի երկրէն, կը դառնայ գաղթական։

— Գաղթական հայեր, յատկապէս Կիլիկիոյ հայութիւնը, հոծ զանգուածով, կը



Ա.Լ.Պէ՛՛ ՅԱԿՈԲԵԱՆ

հաստատուին հիւրընկալ երկիրներ՝ Սուրիա եւ Լիբանան, որոնք չուտով կը դառնան սփիւրքահայ աչքառու կեղրոններ։

— Մերձաւոր Արեւելքի Հ. Մ. Ը. Մ. ի առաջին Մասնաճիւղը կը հիմնուի Լիբանանի մայրաքաղաք Պէյրութի մէջ, 1924ին։

Հիմնադրութեան պատիւը կը պատկանի Հ. Մ. Ը. Մ. ի գաղափարով խանդավառ երեք երիտասարդներու՝ Ալպէո Յակոբեանի, Հայկ Պուտաքեանի եւ Յարութիւն

Պէյրութեանի, որոնք իրենց անհատական ջանքերով, առաջին իսկ առիթով կը յաջողին իրենց շուրջ համախմբել երկոտասանեակ մը երիտասարդներ։

— Նորակազմ Հ. Մ. Ը. Մ. ի առաջին Ընդհանուր ժողովը կը գումարուի 1924ին,



ՀԱՅԿ ՊՈՒՏԱՔԵԱՆ

Պէյրութի ազգային Ս. Նշան Վարժարանի (ապա՝ Բարձրագոյն եւ այժմ՝ «Խանամիրեան» գոլէճ) զասարաններէն մէկուն մէջ։ Կը մասնակցին 25 անդամներ։

— Առաջին Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Ալպէո Յակոբեան, Հայկ Պուտաքեան, Կարօ Պետիկեան, Յարութիւն Պէյրութեան, Արամ Քէհեայեան։

— Պէյրութի նորակազմ Հ. Մ. Ը. Մ. ի առաջին կոչը, ուղղուած նոր սերունդին, կը հրատարակուի Հ. Յ. Դաշնակցութեան «Փիւնիկ» (ապա՝ «Ազգակ») թերթին մէջ:

— Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի առաջին ֆութպոլի խումբը վերակազմուելէ ետք կ'ունենայ հետեւեալ կազմը. — Ժիրայր Ճիշտնեան, Եղնիկ Քէշիշեան, Պողոս Շահինեան, Կիւլպէնկ Կիւլպէնկեան, Օննիկ Փիլիկեան, Արսէն Գրիգորեան, Ցովհաննէս Շահինեան, Ցակոր Աճէմեան, Վահրամ

խումբերու ներկայացուցիչները, որոնք սկզբունքով համաձայն կը գտնուին Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղ մը հիմնելու առաջարկին:

— 1925ին, տոքթ. Ատուր Գապաքեանի բնակարանին մէջ գումարուած Բ. Ժողովին, «Համազասպ», «Տալւորիկ» եւ «Կայծակ» մարզական Միութիւններու լիազօր ներկայացուցիչները լուծուած կը յայտարարեն իրենց Միութիւնները եւ հիմը կը դնեն Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղին:




ԺԻՐԱՅՐ ՊԱԼԵԱՆ

Չոքարեան, Հայկ Պուտաքեան եւ Աւետիս:

— Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի սկզբանական շարժումին ուահվիրան կը հանդիսանայ Ժիրայր Պալեան:

— Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի վարչութիւնը հիւսիսային Սուրբոյ Հալէպ քաղաքին մէջ եւս Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղ մը հիմնելու համար նամակ կ'ուղարկէ ծանօթ ազգային տոքթ. Ատուր Գապաքեանին:

— 1925ին, անհատական ըրջարերականով մը, տոքթ. Ա. Գապաքեան իր ընակարանին մէջ ժողովի կը հրաւիրէ Հալէպի մարզական Միութիւններու եւ ֆութպոլի



ՏՈՔԹ. Ա. ՍՈՒԻՐ ԳԱՊԱՔԵԱՆ

— Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղին առաջին հանդէսը տեղի կ'ունենայ 1925ին, թատրոն «Քիւրսալ»ի մէջ: Հանդէսին նպատակն էր՝ Հ. Մ. Ը. Մ. լ մօտէն ծանօթացնել հայ ժողովուրդին:

— 1925ին, Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի նորակազմ Մասնաճիւղի Ա. Ընդհանուր ժողովին, որուն կը մասնակցին 48 անդամներ, առաջին վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Տիգրան Աղճայեան, Լեւոն Աբգարեան, Միհրան Կարապետեան, Լուտեր Մասպանաճեան, Սահակ Խաչատորեան, Լեւոն Պապիկեան եւ Շաւարչ Պէքեարեան:



Պեյրութի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր եւ գործօն անդամներ՝ 1925ին:

Զարսէն աջ՝ Ալպէն Յակորեան, Մարտիկ

Պեյլերեան, Հայկ Պուտաբեան, Յակոր Հայրապետեան:



Պեյրութի Հ.Մ.Ը.Մ.ի ֆութազոլի հիմնադիր առաջին խումբը, ձախէն աջ՝

Ա. շարք — Լեւոն, Կարպիս Մերտինեան, Շմաւոն Քէշիշեան

Բ. շարք — Համբարձում Յակորեան, Շաւարչ Պէքարեան, Միսաք

Գ. շարք — Յովհաննես Շահինեան, Կարօ Պատուհասեան, ,

Վազգէն Քէշիշեան, Օննիկ Փիլիկեան, Պողոս Շահինեան:



Հալեպի Հ. Մ. Ը. Մ. ի մասնաթիւղի հիմնադիր վարչութիւնը, 1925ին
Նստած, աջէն ձախ՝ Սահակ Խաչատուրեան, Լուտեր Մասպանակեան, Տիգրան Աղբակեան
Ոտքի, աջէն ձախ՝ Լեւոն Մուրատեան, Միհրան Կարապետեան, Լեւոն Արգարեան,
Լեւոն Պապիկեան եւ Շաւարշ Պէտքարեան



Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի առաջին սկաուտական կազմը

— Նոյն տարին կը կազմուի Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի սկառտական առաջին խումբը:

— 1925ին կը հիմնուի Դամասկոսի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը, նախաձեռնութեամբ՝ «Վահագն» Պատանեկան Միութեան:

— Դամասկոսի Հ. Մ. Լ. Մ. ի նորընտիր Վարչութիւնը առաջին իսկ առիթով լըքուած դաշտ մը յարդարելով, կը կազմակերպէ դաշտահանդէս մը:



ԿԱՐՈ ՊԵՏԻԿԵԱՆ

— 1925ի գարնան Պէյրութի Մասնաճիւղի երկրորդ անդամական Ընդհ. ժողովին, գումարուած ազգային Ս. Նշան վարժարանին մէջ, երկրորդ Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Ալպէո Յակոբեան, Հայկ Պուտաքեան, Ժիրայր Պալեան, Մարտիկ Պէյլէրեան, Կարօ Պետիկեան, Օննիկ Պէօճէքեան, Յարութիւն Պէօյիւքեան:

— 1925ի աշնան, տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ. ի Պէյրութի Մասնաճիւղի առաջին ողիմպիականը, ֆրանսական զինուորական մարզադաշտին վրայ: Մարզիկներու եւ սկառտաներու տողանցքը կ'առաջնորդէ զինուորական նուագախումբը:

Օրուան ախոյեան կը հանդիսանայ Յովհաննէս Շահինեան:



Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի Ա. Բ. Պղիմպիականներու ախոյեան ՅՈՎՀԱՆՆԻՍ ՇԱՀԻՆՆԵՍՆ

— 1925ին, Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ի սկառտական 30 հոգինոց առաջին խումբը կը կազմուի վաստակաւոր մարզիչ-խմբապետ Լեւոն Արգարեանի գլխաւորութեամբ:

Այնուհետեւ, չնորհիւ պատասխանատու ընդհանուր խմբապետներ Նշան Թիւյսիւզեանի, Լեւոն Պապլուզեանի, Արսէն Դանիէլեանի, Սուրէն Նազարեանի եւ ուրիշներու անձնուէր գործունէութեան, տարուէ տարի կ'աւելնայ սկառտաներու թիւը, կը հասնի աւելի քան 1500ի, կ'ունենայ նաև Հ. Մ. Լ. Մ. ի միջ-մասնաճիւղային մրցումներուն եւ պետական տողանցքներուն խանդավառութիւն ստեղծող իր հոչակաւոր նուագախումբը, զեկավարութեամբ Յակոբ Քէշիշեանի եւ խմբապետ Յովհաննէս Խաչատուրեանի:

— 1926ին, Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի կազմակերպած երկրորդ ողիմպիականին, դարձեալ օրուան ախոյեան կը հանդիսանայ մարզիկ Յովհաննէս Շահինեան:



Դամակոսի Հ. Ա. Ը. Մ. ի մասնաթիւի հիմնադիր անդամները 1925ին

— 1926ին, Հալէպի Հ. Մ. Լ. Մ.ի ֆութպողի խումբը ունէր հետեւեալ կազմը՝ Անդրանիկ Գավլանեան, Վոամ Ռսկանեան, Շաւարշ Պէքեարեան, Գրիգոր Մէշէփէճեան, Լեւոն Մուրատեան, Լեւոն Հիմիտեան, Մատթէոս Մանուկեան, Յարութիւն Մաթուեան, Լեւոն Պապիկեան, Կարապետ Աքելլեան, Սահակ Խաչատուրեան, Փանոս Խաչգրգեան, Ճորճ Միսիրեան:

— 1926ին կը հիմնուի Լաթաքիոյ Հ. Մ. Լ. Մ.ի Մասնաճիւղը, նախաճեռնութեամբ՝ 1924ին հիմնուած Կրթասիրաց Միութեան երիտասարդ անդամներուն՝ Պետրոս եւ Կարապետ Ուղուրլեան եղբայրներու, Գրիգոր Չպուքճեանի, Հայկ Ղազարեանի, Յարութիւն Գույումճեանի, Միսակ Շիրոյեանի եւ Միսակ Լիթոնեանի, որոնք կ'ընտրուին նաեւ Մասնաճիւղի առաջին Վարչութեան անդամ:


— 1927ին, Լիբանանի Զահլէ լեռնաքաղաքի քաղաքապետարանի անդամ տոքթ.



Լեիոն Աբգարեսն



Տոմաս Թակոր ՊէրՊէրեսն



Նշան ԹիհթՍիհջեսն



Հալեպի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաթիւղի ֆութպոլի Ա. խումբը 1926ին:
Նստած, ձախէն աջ՝ Անդրանիկ Գափլանեան, Վուամ Ոսկանեան, Շաւարշ Պէֆեարեան,
Բ. շարք՝ Գրիգոր Մէշէֆէնեան, Լեւոն Մուրատեան, Լեւոն Հիմիտեան, Մատթէոս

Մանուկեան, Ցարութիւն Մաքոսեան:

Գ. շարք՝ Լեւոն Պապիկեան, Կարապետ Աբելիեան, Սահակ Խաչատուրեան,
Փանոս Խաչգրգեան, Ճորի Միսիրեան:



1928ին, Պէյրութ, Հ. Մ. Ը. Մ. ի Բ. Միջ-մասնաթիւղային մրցումին մասնակցած
Հ. Մ. Ը. Մ. ի Պէյրութի եւ Հալեպի ֆութպոլի խումբերը:



Զահլէի Հ. Մ. Լ. Մ. ի մասնաճիւղի վարիչներէն
Զախէն աջ՝ Ազատ Գասարեան, Կիրակոս Թապագեան, Փայլակ Բալուլեան,
Մուրատ Քէշիշեան:

Յակոր Պէրպէրեանի նախաձեռնութեամբ, իր բնակարանին մէջ, խումբ մը հաւատաւոր երիտասարդներ՝ Ներսէս Գազազեան, Յակոր Իտիրեան, Կիրակոս Թապագեան, Գերսամ Կարապետեան, Գառնիկ Հասրծճեան, Մելքոն Նօխուտեան եւ Սարգիս Ռւնճեան, խորհրդակցական ժողովէ մը ետք հիմը կը դնեն Զահլէի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղին:

Երկրորդ ժողովին, հիմնադիրները գրեթէ ամբողջութեամբ կ'ընտրուին Մասնաճիւղի առաջին վարչութեան անդամ՝ Կարճ ժամանակ մը յետոյ, անդամներուն թիւը կը հասնի 45ի:

— Հ. Մ. Լ. Մ. ի առաջին Միջ-Մասնաճիւղին մրցումը տեղի կ'ունենայ Զալէպի մէջ, 1927ին:

Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի ֆութպոլի խումբը կը յաղթէ Զալէպի Հ. Մ. Լ. Մ. ի խումբին եւ կը տիրանայ Պէյրութի «Ազգակ» թերթի

տրամադրած բաժակին:

— Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի ֆութպոլի խումբը Զալէպի մէջ կը մրցի հետեւեալ կազմով. — Կարպիս Մերտինեան, Զայկ Պուտաքեան, Յարութիւն Օղլաքեան, Արսէն Գրիգորեան, Ստեփան Ռսկանեան, Յակոր Աճէմեան, Պողոս Շահինեան, Օնսիկ Փիլիկեան, Վահան Մշիկեան, Եփրեմ էլլէզեան, Յովհաննէս Շահինեան: Պէյրութ-Զալէպ-Պէյրութ երթեւեկի ծախքը կը հոգան ֆութպոլիստները:

— 1927ին, քանի մը նոր մարզիկներով վերակազմուած Հ. Մ. Լ. Մ. ի Պէյրութի ֆութպոլի խումբը, իր առաջին մըրցումին, փայլուն յաղթանակ մը կը տանի Լիբանանի զօրաւորագոյն խումբին՝ Ռընէսանսի դէմ:

— 1928ին, Հ. Մ. Լ. Մ. ի Պէյրութի Մասնաճիւղը կ'ունենայ իր մարզագաշտը, Պէյրութի արուարձաններէն ֆուրն էլ Շըպէքի մէջ:

— Հ. Մ. Լ. Մ. ի երկրորդ միջ-մասնաձիւղային ֆութպոլի մրցումը, Հ. Մ. Լ. Մ. ի Պէյրութի եւ Հալէպի Ա. խումբերուն միջեւ, տեղի կ'ունենայ 1928ին, Հ. Մ. Լ. Մ. ի Ֆուրն էլ Շըպպէքի մարզադաշտին վրայ: Ցաղթանակը կը տանի Պէյրութի խումբը:

— Հալէպի մարզական կեանքին մէջ, ֆութպոլի, պասքեթպոլի եւ թենիսի դաշտերուն հիմնադիրը կ'ըլլայ Հ. Մ. Լ. Մ. ը: 1928ին, Մասնաճիւղի Վարչութիւնը կը յաջողի գնել պարտէզ-արտ մը ձէպէլ նահրի մէջ: Դաշտին յարդարումը, ամբողջութեամբ եւ սիրայօժար, կը կատարեն Հ. Մ. Լ. Մ. ի անդամները: Այս մարզադաշտին մէջ, 1932ին, Հ. Մ. Լ. Մ. ը կ'ունենայ նաեւ իր պասքեթպոլի եւ թենիսի դաշտերը:

— 1928ին, Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի ֆութպոլի Ա. խումբը կը հրաւիրուի մասնակցելու Պէյրութի ախոյեանութեան մըրցաշարքին:

— 1928ին, Դամասկոսի Հ. Մ. Լ. Մ. ի ֆութպոլի Ա. խումբը փայլուն յաղթանակ մը կը տանի Դամասկոսի զինուորական վարժարանի խումբին դէմ:

— 1928ին, Դամասկոսի մէջ Հ. Մ. Լ. Մ. ի Պէյրութի եւ Դամասկոսի Ա. խումբերը բաժակի մրցում մը կը կատարեն: Պէյրութի խումբը կը յաղթէ եւ կը տիրանայ Հայկ Քալէնտէրեանի տրամադրած բաժակին:

— 1928ին տեղի կ'ունենան Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի Գ. Ողիմպիական խաղերը, մասնակցութեամբ Անթիլիասի որբերունուագիսումբին: Օրուան ախոյեանութիւնը հաւասար կէտերով կը շահին՝ Հայկագ Տէր Մանուէլեան եւ Արմէն Գույումճեան:

— 1929ին, Դամասկոսի Հ. Մ. Լ. Մ. ի սկառտական խումբերը կը կազմակերպեն իրենց առաջին բանակումը, Դամասկոսէն դուրս:

Դամասկոսի Հ. Մ. Լ. Մ. ի սկառտներն ու արենոյշները մարզելու եւ դաստիարակելու աշխատանքը կը տանի սկառտ-խմբապետ Տիգրան Ռուկերիչեան:



ՀԱՅԿԱԶ ՏԵՐ ՄԱՆՈՒԵԼԵԱՆ
Պէյրութի Գ. Ողիմպիական ախոյեաններէն

— 1929ին, Պէյրութի, Դամասկոսի եւ Զահէի Հ. Մ. Լ. Մ. ի Վարչութիւնները, իւրաքանչիւրը իր քաղաքին մէջ, կը կազմակերպեն գեղարուեստական շքեղ հանդէսներ, նուիրուած՝ Հ. Մ. Լ. Մ. ի հիմնադրութեան տասնամեակին:

— 1929ին լոյս կը տեսնէ Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի պաշտօնաթերթ «Հայ Սկառտ»:

— 1929ին Պէյրութի մէջ տեղի կ'ունենան Հ. Մ. Լ. Մ. ի Գ. միջ-մասնաճիւղային մրցումները: Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ի ֆութպոլի խումբը կը յաղթէ Պէյրութի խումբին եւ կը հռչակուի ախոյեան: Մըրցումին իրաւարարն էր՝ Լիբանանի Փաղանգաւոր կուսակցութեան հիմնադիր՝ Փիէռ Ճեմայէլ:

— 1929ին Պէյրութի մէջ կը գումարուի Լիբանանի եւ Սուրիոյ Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-մասնաճիւղային Պատգամաւորական Ա. Ժողովը:

Առաջին Շրջ. Վարչութեան անդամ



Թրիփոլիի Հ.Մ.Լ.Մ.ի Հիմնադիր ժողովը, 1929ին

կ'ընտրուին՝ Տաճատ Արագեան, տոքթ. Ալեքսան Պէջճեան, տոքթ. Յակոբ Գասապեան, Խորէն Սուքիասեան եւ Վահան Թորոսեան:

— Թրիփոլիի մէջ, 1926-27ին կազմուած «Հրազդան» մարզական Միութեան հիմնադիր Հայկաց Աթմաճեան, անդամներ՝ Միսաք Լիպարիտեան, Յովսէփ Առաքելեան եւ Վահան Գազանճեան խորհրդակցաբար կ'որոշեն միանալ Հ.Մ.Լ.Մ.ին: Որոշումը գործադրելով, 1929ի Յունուարին կը գումարուի Թրիփոլիի Հ.Մ.Լ.Մ.ի նորակազմ Մասնաճիւղի անդամական Ընդհանուր ժողով եւ առաջին Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Միսաք Լիպարիտեան, Խսահակ Գարաճեան, Վահան Գազանճեան, Յովսէփ Առաքելեան եւ Արիս Աթմաճեան:

— 1930ին, Հալէպի մէջ տեղի կ'ունենան Հ.Մ.Լ.Մ.ի Դ. Միջ-մասնաճիւղային մրցումները: Պէյրութի Հ.Մ.Լ.Մ.ի ֆութպոլի Ա. խումբը կը յաղթէ Հալէպի Հ.Մ.Լ.Մ.ի Ա. խումբին եւ կը հոչակուի ախոյեան:

— 1930ին, Պէյրութի Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտապետի պաշտօնը կը ստանձնէ մար-

զիչ-խմբապետ Յակոբ Աւագեան, որ առաւելաբար կը զբաղի աստիճանաւորներու պատրաստութեամբ:

— 1930ին, Յունաստանէն Պէյրութի կը փոխադրուի սքանչելի մարզիկ եւ անվիճելի կարողութիւններով օժտուած ֆութպոլիստ Օննիկ Կէվրէկեան: Ան կը նշանակուի Պէյրութի Հ.Մ.Լ.Մ.ի ֆութպոլի Ա. խումբի խմբապետ եւ մարզիչ:

— 1931ին, Հ.Մ.Լ.Մ.ի Ե. Միջ-մասնաճիւղային մրցումները տեղի կ'ունենան Հալէպի մէջ: Պէյրութի Հ.Մ.Լ.Մ.ի ֆութպոլի Ա. խումբը կը յաղթէ Հալէպի Հ.Մ.Լ.Մ.ի Ա. խումբին եւ կը հոչակուի ախոյեան:

— 1931ին, նախաձեռնութեամբ Ներսէս Պօյաճեանի, Գաբրիէլ Սարգիսեանի եւ խումբ մը մարզասէր երիտասարդներու, հիմը կը դրուի Գամիլլի (հիւսիսային Սուրիա-Ճեղիրէի շրջան) Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղին:

— 1931ին, խմբապետ Օննիկ Կէվրէկեանի մարզած Պէյրութի Հ.Մ.Լ.Մ.ի ֆութպոլի Ա. խումբը, Սուրիոյ եւ Լիբանանի մէջ անպարտելի նկատուած Հալէպի իւնիոն



Դամասկոսի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի Ա. խումբը, 1934ին, իր փառքի օրերուն: Գնդակին հետ՝ բերդապահ Նդուարդ Ավրիկեան: Ծունկի, ձախէն աշ՝ Ֆերտինանդ Թերթեման (Պուպուլ), Կարապետ Գոմաղլանեան, Գեորգ Տէր Յովհաննէսեան, Մելիքով Ասլանեան:

Ոտքի, ձախէն աշ՝ Օննիկ Կեվրէկեան (խմբապիտ), Զաւէն Զօրպանեան, Եղիշէ Մանուկեան, Սեզար Թերթեման, Կարապետ Սաարնեան, Յարութիւն Օղլագեան:



Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի Ա. խումբը, նկարուած 1931ին:
Ձախէն աշ, նստած՝ Արսէն Գրիգորեան, Կարպիս Մերտինեան, Յարութիւն Զեմբերքէնեան Երկրորդ շարք, ձախէն աշ՝ Հայկազ Տէր Մանուկեան, Շաւարչ Պէքարեան, Յակոբ Աթէմեան Ոտքի, ձախէն աշ՝ Օննիկ Փիլիկեան, Եփրեմ Էլլէգեան, Օննիկ Կեվրէկեան, Հրաչ Եանըգեան, Ներսէս Գագկեան:

Սփորթիւ խումբին դէմ մրցելով, Հալէպի մէջ, մրցակիցի դաշտին վրայ եւ անոր ժողովուրդին առջեւ 4-2 արդիւնքով փայլուն յաղթանակ կը տանի:

— 1931ին, խումբ մը երիտասարդներու նախաձեռնութեամբ՝ հիմը կը դրուի Գրըգիանի (Սանճագ) Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղին:

— 1931-1932թուականներուն, Դամասկոսի մէջ կը կազմուի հայ անուանի ֆութպոլիստներով չէրքէզներու զինուորական խումբը, նախաձեռնութեամբ Փրանսացի հարիւրապետ Քոլէի: Չէրքէզներու այս խումբը, գրեթէ նոյն կազմով, իբրեւ Դամասկոսի Հ. Մ. Ը. Մ. ի Ա. խումբ՝ Օննիկ Կէվրէկեանի խմբապետութեամբ, հոչակաւոր կը դառնայ յաջորդաբար իր տարած յաղթանակներով:

— 1932ին, 22 գործօն անդամներով եւ 21 սկաուտներով հիմը կը դրուի Հոմսի (Սուրիա) Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղին:

— 1932ին կը կազմուի Թէլ Ապիատի (Սուրիա) Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը: Ատեն մը Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղ գոյութիւն ունեցած է նաեւ Թէլ Ապիատի մօտիկ Արուսի մէջ:


— 1932ին կը կազմուի Ալէքսանտրէթի (Սանճագ) Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը:

— 1932ին կը կազմուի նաեւ Անտիոքի (Սանճագ) Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը:

— 1932ին, մարզական օրինակելի մըթնոլորտի մէջ, Հ. Մ. Ը. Մ. ի Հալէպի, Դամասկոսի եւ Պէյրութի ֆութպոլի Ա. խումբերը կը մրցին Զափահաս Որբերու Միութեան «Վահագն» խումբին դէմ:

— 1932ին, Հ. Մ. Ը. Մ. ի Զ. Միջ-մասնաճիւղային մրցումները տեղի կ'ունենան Հալէպի մէջ: Դամասկոսի Հ. Մ. Ը. Մ. ի Ա. խումբը յաջորդաբար կը յաղթէ Հալէպի եւ Պէյրութի Ա. խումբերուն եւ կը հոչակուի ախոյեան:

— 1932ին տեղի կ'ունենայ Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի մեծ մարզահանդէսը: Օրուայ ախոյեանները կը հանդիսանան՝ անուանի մարզիկներ Յակոր Գատեան եւ Օննիկ Փիլիկեան:



Օննիկ Փիլիկեան

Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի 1929ի եւ 1932ի ողիմականներու ախոյեան

— 1932ին, սկաուտապետ Արտաւազդ Հաճեան կը վերակազմէ Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի սկաուտական շարքերը նոր անդամներով:

— 1933ին, Պէյրութի ելեքտրական ընկերութեան մօտ գտնուող հայկական մեծ հիւղաւանի (քէմբ Ատանա) փայտաշէն խրճիթները հրոյ ճարակ կը դառնան:

Աղէտեալներուն անմիջական օգնութեան հասնելու համար, Հ. Մ. Ը. Մ. ի Մերձաւոր Արեւելքի Շըջ. Վարչութեան որոշումով, Լիբանանի եւ Սուրիոյ Հ. Մ. Ը. Մ. ի բոլոր Մասնաճիւղերու Վարչութիւնները կը ներկայանան իրենց շրջանի ազգային իշխանութեանց եւ կը յայտնեն իրենց պատրաստակամութիւնը օժանդակելու աղէտեալներուն ի նպաստ որեւէ ձեռնարկի:

Արդարեւ, Հ. Մ. Ը. Մ. ականներ, վար-



ՏԻԳՐԱՆ ՈՍԿԵՐԻՉԵԱՆ



Տոնիք ԲԵՆԻԱՄԻՆ ԳՈՒԼԱՔԵԱՆ



ՕՆՆԻԿ ԿԵՎՐԵԿԵԱՆ



ԳԱԿՈՐ ԱՒԱԳԵԱՆ



ԽՈՐԵՆ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

չական թէ անդամ, մեծ զոհողութիւններով կը բերեն իրենց լայն աջակցութիւնը։ Ի նպաստ աղէտեալներուն, Պէյրութի եւ Լաթաքիոյ մէջ կը կազմակերպուին նաեւ ֆութպոլի մրցումներ։

— 1933ին, Հ. Մ. Լ. Մ.ի Դրդ Միջ-մասնաճիւղային մրցումները տեղի կ'ունենան Հալէպի մէջ։ Դամասկոսի Հ. Մ. Լ. Մ.ի ֆութպոլի Ա. խումբը կը յաղթէ Հալէպի Հ. Մ. Լ. Մ.ի խումբին եւ կը հռչակուի ախոյեան։

— 1933ին, Հեծելարշաւի միջազգային մրցումի մը առաջնութիւնը կը շահի Ռայաքէն (Լիբանան) Հ. Մ. Լ. Մ.ական Հեծելանորդ Յակոբ Պալըգճեան։

— 1933ին, Պէյրութի Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ.ի սկաուտներու երդման տպաւորիչ արարողութիւնը։

— 1933ին, առաջին անդամ ըլլալով Դամասկոսի Հ. Մ. Լ. Մ.ի ֆութպոլի Ա. խումբը կը մրցի Պէյրութի մէջ եւ կը յաղթէ Լիբանանի զօրաւորագոյն խումբին՝ Տէ. Աշ. Փէ.ին։

— 1933ին, տեղի կ'ունենայ Պէյրութի



ՍԻՄՈՆ ԹԵՐՃԱՆԵԱՆ

Հ. Մ. Լ. Մ.ի նրդ ողիմպիական մեծ մարզահանդէսը։

— 1933ին, Պէյրութի մէջ տեղի կ'ունենայ Սուրբիոյ եւ Լիբանանի ֆութպոլի ախոյեանութեան մրցումը, Սուրբիոյ ախոյեան Դամասկոսի Հ. Մ. Լ. Մ.ի եւ Լիբանանի ախոյեան Տէ. Աշ. Փէ. խումբերուն միջեւ։ Մրցումը կը վերջանայ հաւասար արդիւրքով։

— Դարձեալ Պէյրութի մէջ, Սուրբիոյ եւ Լիբանանի ֆութպոլի ախոյեանութեան մրցումի երկրորդ կիսախաղին, երբ արդիւնքը հաւասար էր, կը ծագի աննախընթաց եւ անմոռանալի կոփւ եւ մրցումը կը մնայ անաւարտ։

— 1933ին, Պէյրութի մէջ կը գումարուի Հ. Մ. Լ. Մ.ի Գ. Միջ-մասնաճիւղային Պատգամաւորական ֆողովը, մասնակցութեամբ Սուրբիոյ եւ Լիբանանի Մասնաճիւղերու պատգամաւորներուն։ Շրջ. Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ տոքթ. Բենիամին Գուլյաքեան, Սուրէն Բարախեան, Օննիկ Պէօնէքեան, Ալպէո Յակոբեան, Խորէն Սուրբիասեան, Սիմոն Թերճանեան եւ Ցովհաննէս Շահինեան։



Պէյրութի սկաուտ առաջնորդները 1930ին:
Մէջտեղը՝ Խմբապետ ՅԱԿՈԲ Ա.Ի.ԱԳԵՍՆ

— 1933ին, Հալէպի Հ.Մ.Լ.Մ.ի Փութպոլի Ա. խումբը, Միջերկրականի Փութպոլի ախոյեան անգլիական խումբին դէմ փայլուն յաղթանակ մը կը տանի:

— 1933ին, Գէորգ Գանարեանի, Եղւարդ Տիլանեանի, Կարօ Աքարճալեանի, Բենիամին Պասմաճեանի, Յովհաննէս Զիլինկիրեանի եւ Սամուէլ Անդրանիկեանի անվերապահ օժանդակութեամբ, Զափահաս Որբերու Միութեան «Վահագն» եւ Լիկայի մնացորդ «Աստղ» խումբերը կը միանան Պէյրութի Հ.Մ.Լ.Մ.ին:

— «Վահագն» խումբէն Պէյրութի Հ.Մ.Լ.Մ.ի Փութպոլի Ա. խումբին կ'անցնին՝ Գեղամ Բարսեղեան, Լուտեր Եարտըմեան, Արմենակ Թիւֆէնքեան, Ռուկան Օհանեան, Խորէն Աւետիքեան, Հրանդ Տօստումեան եւ Պետրոս Սէտէֆեան: «Աստղ» խումբէն՝ Սարգիս Պատաքեան, Սամուէլ Անդրանիկեան, Փայլակ Թիթոյեան, Պատրիկ Ճնկըրեան եւ Սարգիս Տէվէլեան:

— 1934ին կը կազմուի Հալէպի մօտիկ դիւղաքաղաք Ազէզի Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղը:

— 1934ին կը կազմուի Ճարապլուսի (Սուրիա) Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղը:

— 1934ին կը կազմուի նաեւ Հիւսիսային Սուրիոյ Ճեզիրէի շրջանի վարչական գլխաւոր քաղաք Հասիչէի Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղը:

— 1934ին, Դամասկոսի Հ.Մ.Լ.Մ.ի Փութպոլի Ա. խումբը Պէյրութի մէջ կը մըցի Պաղեստինի ախոյեան թէլ Աւիւ «Հաբոէլ» զօրաւորագոյն խումբին դէմ եւ կը յաղթէ:

— 1934ին, Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի եւ Սուրիոյ տասնամեակին (1924-1934) նուիրուած բացառիկ թիւ մը կը հրատարակէ Պէյրութի «Ազգակ» օրաթերթը:

— 1934ին, հեծելանւորդ Յակոբ Պալբճեան Լիբանանի եւ Սուրիոյ հեծելարշաւի ախոյեան կը հոչակուի: Հ.Մ.Լ.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջ. Վարչութիւնը պատուանշանով կը պարգեւատրէ Հ.Մ.Լ.Մ.ական ախոյեանը:

— 1934ին, Հ.Մ.Լ.Մ.ի 8րդ Միջ-մաս-



Թրիփոլիի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի վարչութիւնը
Նստած, ձախէն աջ՝ Արիս Աբմանեան, Անդրանիկ Անուշեան, Վահրամ
Չռքքարեան, Ռուբի, ձախէն աջ՝ Յովհաննէս Փելքէքեան, Արամ
Չուգատարեան, Կարօ Պատուհասեան, Տիգրան Զալեան:

նաճիւղային մրցումները տեղի կ'ունենան
Հալէպի մէջ: Դամասկոսի Հ. Մ. Ը. Մ. ի
ֆութպոլի Ա. Խումբը կը յաղթէ Հալէպի
Հ. Մ. Ը. Մ. ի Ա. Խումբին եւ կը հռչակուի
ախոյեան:

Ֆութպոլի Բ. դասակարգի խումբերու
ախոյեանի տիտղոսը կը շահի Ալեքսանտ-
րէթի Հ. Մ. Ը. Մ. ի խումբը:

Պէտք է նշել, որ Միջ-մասնաճիւղային
մրցումներու յայտագրին վրայ, նոր Մաս-
նաճիւղերու հիմնումով, տարուէ տարի
կ'աւելնան ֆութպոլի Բ. եւ Գ. Դասակար-
գերու եւ պասաքեթպոլի երկսեռ խումբերու
հետաքրքրական մրցումները:

— 1934ին, Գամիշլիի Հ. Մ. Ը. Մ. ի
ֆութպոլի խումբը առաջին դիրքը կը գրաւէ
Գամիշլիի ֆութպոլի խումբերու մրցա-
շարքին եւ կը ստանայ Պանք տը Միրիի
տրամադրած բաժակը:

— 1935ին, կը կազմուի Սուրիոյ եւ
Թուրքիոյ սահմանին վրայ գտնուող գը-
րեթէ հայակերտ Արար Փունար քաղաքի
Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը:

— 1935ին կը կազմուի, նոյնպէս Սու-
րիոյ եւ Թուրքիոյ սահմանին վրայ (Ճե-
ղիրէ), Խաս իւլ Այնի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնա-
ճիւղը:

— 1935ին, Պէյրութի մէջ կը գումարուի
Հ. Մ. Ը. Մ. ի Դ. Միջ-մասնաճիւղային Պատ-
գամաւորական ֆողովը: Միաձայնութեամբ
Հ. Մ. Ը. Մ. ի պատուոյ նախագահ կը վեր-
ընտրուի Գասպար Իփէկեան: Առաջին ան-
գամ ընտրուած էր 1932ին:

Երջ. Վարչութեան անդամ կ'ընտրուին՝
տոքթ. Բենիամին Գուլաքեան, տոքթ.
Արամ Պաղտասարեան, Խորէն Սուլիաս-
եան, Սիմոն Թերճանեան, Օննիկ Պէօճէք-
եան, Գէորգ Սաղճեան եւ Եղիշէ Մանուկ-
եան:

— 1935ին, Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ը
կ'ունենայ ֆութպոլի նոր դաշտ, Գարագոլ
Տրուղի մօտ:

Նոր դաշտին մէջ յաջորդաբար տեղի
կ'ունենան ֆութպոլի հետաքրքրական
մրցումներ, որոնցմէ յիշատակութեան ար-
ժանի են Դամասկոսի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութ-
պոլի խումբին արձանագրած փայլուն յաղ-



ՏՈՔԹ. Ա.ՐԱՄ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

թանակները Պաղեստինի անգլիական ոստիկանութեան եւ բանակի խառն զօրաւոր խումբերուն դէմ:

— 1935ին, Հ.Մ.Լ.Մ.ի 9րդ Միջմասնաճիւղային մրցումները տեղի կ'ունենան Պէյրութի մէջ: Ֆութպոլի Ա. Դասակարգի կիսաւարտական մրցումին, Հալէպի եւ Պէյրութի խումբերը կը մնան հաւասար: Վիճակով, յաղթական կը հոչակուի Հալէպի խումբը: Աւարտական մրցումին, Դամասկոսի Հ.Մ.Լ.Մ.ի խումբը կը յաղթէ Հալէպի խումբին եւ կը դառնայ ախոյեան:

— 1935ին, Հալէպի Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղը ֆութպոլի, պասքեթպոլի, վոլիպոլի, թենիսի, գօտեմարտի եւ կոփամարտի ուշագրաւ գործունէութիւն կ'ունենայ: Կը կազմակերպուին նաեւ սկաուտական անմուանալի արշաւներ:

— 1933ին պատահած Պէյրութի հիւղաւանի մեծ հրդեհէն ետք, կը հիմնուին հայկական թաղամասեր՝ Նոր Հաճըն, Ռոմէյլ, Էյրէֆիէ, Հայաշէն, Գարանթինա, ՄարՄիայէլ եւ մանաւանդ Պուրճ Համուտ: Այս վերջինը չուտով կը դառնայ հայահոծ կեղրոն մը իր բազմաթիւ թաղամասերով՝ Նոր Մարաշ, Նոր Սիս, Նոր Ատանա, Նորաշէն, Եղղատ, Սվազ, Թոմարզա, Կիլիկիա, Նոր Ամանոս, Արագած, Կոմիտաս, Սին էլ Ֆիլ, Նոր Գիւղ, Եւայլ:



Անպարտելի ախոյեան հեծելանորդներ՝
Յակոր եւ Օննիկ Պալըգնեան
եղբայրներ

1935ին, խումբ մը գաղափարապաշտ երիտասարդներ, Արշակունի Ռաֆայէլեանի բնակարանին մէջ գումարուած ժողովին, Շրջ. Վարչութեան ներկայացուցիչ Օննիկ Պէօճէքեանի ներկայութեամբ, հիմը կը դնեն Պուրճ Համուտի Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղին: Նոյն ժողովին, առաջին Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Արշակունի Ռաֆայէլեան, Բենիամին Մինասեան, Հայկ Նարկիզեան, Ահարոն Մկրտիչեան եւ Յակոր Մինասեան:

— 1935ին, Հ.Մ.Լ.Մ.ական հեծելանորդ Յակոր Պալըգնեան դարձեալ հեծելարշաւի ախոյեանութիւնը կը շահի եւ մինչեւ 1937, մինչեւ ասպարէզէն քաշուիլը, կը մնայ Լիբանանի անպարտելի ախոյեանը:

— 1935ին, 45 անդամներով եւ Պէյրութէն Հ.Մ.Լ.Մ.ի ներկայացուցիչ Յովհաննէս Շահինեանի ներկայութեամբ՝ հիմը կը դրուի երուսաղէմի Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղին: Տարի մը յետոյ, անդամներուն թիւը կը բարձրանայ 250ի:



Հ. Մ. Լ. Մ. ական ըլլալը
դժուար է, աւելի դժուար է
Հ. Մ. Լ. Մ. ական մնալը:
Խղիշէ Մանուկեան

Եղիծէ ՄԱՆՈՒԿԵԱՆ

— 1936ին կը հիմնուի Տերպէսիէի (Սուրբիա) Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը, ֆութպոլի խումբով եւ սկառտական միաւորով:
— 1936ին, Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-մասնաճիւղային 10րդ մրցումները տեղի կ'ունենան Պէյրութի մէջ: Դամասկոսի Հ. Մ. Լ. Մ. ի Ա. խումբը կը յաղթէ Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի Ա. խումբին եւ կը հոչակուի ախոյժեան:

— 1936ին կը կազմուի Հայֆայի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը:

— 1936էն 1938, անուանի ֆութպոլիստ Եղիշէ Մանուկեան երուսաղէմի եւ Հայֆայի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղերու եւ Եաֆայի Հայկաշէն Գրական եւ Մարզական Միութեան ֆութպոլի խումբերը վերակազմելու եւ մարզելու աշխատանք կը տանի, նաեւ կը կազմակերպէ Հ. Մ. Լ. Մ. ի Պաղեստինեան ֆութպոլի խումբերու առաջին միջ-մասնաճիւղային մրցաշարքը:

Այնուհետեւ, երուսաղէմի, Եաֆայի եւ Հայֆայի մէջ կը շարունակուին միջ-մասնաճիւղային մրցումները, դաշտային հանդիպումները, մշակութային եւ մարզական ձեռնարկները:

Երուսաղէմի մէջ, Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի կազմութեան եւ հզօրացման աշխատանք կը տանին՝ Լեւոն Քէշիշեան, Եղ-

ուարդ Գայայեան, Վահան Ղազարեան, Կարօ Մարտիրոսեան, Պօղոս Պետրոսեան, Յակոբ Յակոբեան, Ֆիլիք Զաքարեան եւ ուրիշներ:

Հայֆայի մէջ, աշխատանք կը տանին՝ Թաշճեան եղբայրները, Յարութիւն Պէյրութեան, Արամ Այվազեան, Տիրան եւ Շաւարչ Պալպալեան եւ ուրիշներ:

Եաֆայի Հայկաշէն Միութեան (Ներկայիս՝ Հ. Մ. Լ. Մ. — Հայկաշէն) հիմնադրութեան եւ բարգաւաճման աշխատանք կը տանին՝ Բիւզանդ եւ Արմենակ Այնթապեաններ, Մանուէլ Քէյլեան, Արամ Այվազեան, Յովհաննէս Պարսամեան, Գէորգ եւ Նշան Մանճիկեան, Յովհաննէս Գազանճեան, Յակոբ եւ Ճորժ Յակոբեաններ, Նիկողոս Նիկողոսեան, Շոթիք, Ալթըպարմաքեան Եղբայրներ եւ ուրիշներ:

— 1937ին կը կազմուի Տէր-Զօրի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը, 35 անդամներով եւ ֆութպոլի Ա. եւ Բ. Դասակարգի խումբերով:

— 1937ին կը կազմուի Պուրճ Համուտի Հ. Մ. Լ. Մ. ի սկառտական խումբը:

— 1937ին, Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի ֆութպոլի Ա. խումբը կը դասուի Լիբանանի ֆութպոլի Ա. Դասակարգի խումբերու շարքին:


— 1937ին, Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-մասնաճիւղային 11րդ մրցումները տեղի կ'ունենան Հալէպի մէջ: Հ. Մ. Լ. Մ. ի Դամասկոսի եւ Հալէպի ֆութպոլի Ա. Դասակարգի խումբերու աւարտական մրցումը վերջ կը գտնէ հաւասար արդիւնքով:

— 1937ին, 20 երիտասարդներ հիմը կը դնեն Ամմանի (Յորդանան) Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղին:

— 1937ին, Պէյրութի հանրային պարտէզին մէջ տեղի կ'ունենայ Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի մեծ դաշտահանդէսը:

— 1937ին, առաջին անգամ ըլլալով, Երուսաղէմի մէջ կը տօնակատարուի Հ. Մ. Լ. Մ. ի օրը:

— 1937ին կը կազմուին Երուսաղէմի Հ. Մ. Լ. Մ. ի սկառտական խումբերը, սկա-



Երուսաղեմի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաթիւղի սկաուտները 1937ին,
Կեդրոնը՝ ընդհանուր խմբավետ Կարօ Մարտիրոսեան (ակնոցաւոր)

Ուստապետ Կարօ Մարտիրոսեանի ջանքերով:

— 1937ին, Պէյրութի մէջ կը գումարուի Հ. Մ. Ը. Մ. ի Միջ-մասնաճիւղային Ե. Պատգամաւորական Ժողովը, մասնակցութեամբ Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Մասնաճիւղերու պատգամաւորներուն:

Շրջ. Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Օննիկ Պէօճէքեան, Օննիկ Փիլիկեան, Խորէն Սուքիասեան, Թաղէոս Գարագալփակեան եւ Ալպէռ Յակոբեան:

— 1937ին, Բայազէի Հ. Մ. Ը. Մ. ի հեծելանւորդներէն Օննիկ Պալըգճեան, փայլուն յաղթանակով կը հոչակուի Լիբանանի հեծելարշաւի ախոյեան:

Օննիկ Պալըգճեան (կրտսեր եղբայրը 1934էն 1937 հեծելարշաւի ախոյեան Յակոբ Պալըգճեանի) Լիբանանի ախոյեանի տիտղոսը կը պահէ մինչեւ 1945:

— 1937ին, Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Վահրամ Կիւրճեան, Հայկազ Աֆարեան, Լութֆիկ Կէօնճեան, Հայկազ Զէօփճեան, Զօհրապ, Վահրամ Փափազեան, Օննիկ Պասմաճեան:

— 1937ին, Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի



ԹԱԴԻՌՈՍ ԳԱՐԱԳԱԼՓԱՔԵԱՆ

նորընտիր Վարչութեան ջանքերով կը գնուի Պէյրութի Մար Իլիաս թաղին մէջ, Սոնսենյէօր Շէպլի ժողոց, «Թէնիս Քլիւպ» մարզավայրը, յարակից պարտէզով եւ սրահով:



Հ. Մ. Լ. Մ. Ի Առաջին Պատգամաւրական Ժողովը 1929ին, Պեյրութ:



Մանօք Հ. Մ. Լ. Մ. ականեր 1938ին, Հայէպ

*Զախէն աջ՝ նշան Թիւյսիզբան, Վահրամ Կիւրթեան, Լեւոն Պապուզբան, Գառնիկ Ազիրեան,
տոքք. Յակոբ Գասապեան, Օննիկ Պէօնէքեան, Թադէ Գարագալրագբան, Յովհաննէս Փափազբան,
Լուտեր Մասպանանեան և Արամ Մինասեան:*



ՎԱՀՐԱՄ ԿԻՒՐՃԵԱՆ



ԼՈՒԹՖԻԿ ԿԵՕՆՃԵԱՆ

— 1938ին, պաշտօնական բացումը կը կատարուի Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի նոր գնուած ընդարձակ պարտէզ-ակումբին։ Տեղի կ'ունենայ նաեւ չքեղ տօնակատարութիւն։

— 1938ին, կը կազմուի Տէրիք գիւղի (հիւսիսային ձեզիրէ) Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը։ Ունէր 35 անդամ եւ 26 սկառտգայլիկ։

— 1938ին, Լիբանանի ֆութապոլի Ա. Դասակարգի խումբերու ախոյեանութեան մրցաշարքի աւարտական մրցումին, Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի Ա. խումբը կը պարտուի Ամերիկեան համալսարանի «Վարսիթի» խումբէն։ Նոյն օրը, Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի նորաբաց ակումբին մէջ, թէյասեղան մը կը տրուի ի պատիւ ախոյեան «Վարսիթի» խումբին։ Մրցումին իրաւարարը՝ Փիէռ ձեմայէլ եւ «Վարսիթի»ի վարիչ-մարզիչը՝ Ապտը Սաթթար Թրապուլսի, գովը կը հիւսեն Հ. Մ. Լ. Մ. ի։

— 1938ին, Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-մասնաճիւղային 12րդ մրցումները տեղի կ'ունենան Հալէպի մէջ, մասնակցութեամբ 12 Մասնաճիւղերու։

Հալէպի եւ Պէյրութի ֆութապոլի Ա. խումբերը կը մնան հաւասար։ Բ. Դասակարգի ֆութապոլի խումբերու ախոյեանութիւնը կը չահի Գրըգ-Խանի Հ. Մ. Լ. Մ. ի խումբը։

— 1938ին, Հ. Մ. Լ. Մ. ի Շրջ. Վարչութեան կազմակերպութեամբ, Պէյրութի քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի կ'ունենան Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-մասնաճիւղային առաջին Ողիմպիական մրցումները, մասնակցութեամբ Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Մասնաճիւղերուն։

— 1938ին, Պէյրութի, Պուրճ Համուտի եւ Զահլէի մէջ տեղի կ'ունենան Հ. Մ. Լ. Մ. ի հիմնադրութեան 20ամեակին նուիրուած չքեղ տօնակատարութիւններ։

— 1938ին, Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ի ֆութապոլի Ա. խումբը գեղեցիկ յաղթանակ մը կը տանի, պարտութեան մատնելով Հալէպի զօրաւորագոյն իւնիոն Սփորթիւ խումբը։

— 1939ին, Թրիփոլիի մէջ չքեղ հանդիսութեամբ կը տօնակատարուի Հ. Մ. Լ. Մ. ի հիմնադրութեան 20ամեակը։

— 1939ին, Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-մասնաճիւղային մրցումները տեղի կ'ունենան



ԳԵՈՐԳ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Պէյրութի մէջ: Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ի ֆութպոլի խումբը կը յաղթէ Դամասկոսի խումբին եւ կը դառնայ ախոյեան:

Բ. Դասակարգի ֆութպոլի խումբերու ախոյեանութիւնը կը շահի Անտիոքի Հ. Մ. Լ. Մ. ի խումբը:

— 1939ին, Հ. Մ. Լ. Մ. ական մարզիկ Գէորգ Մանուկեան Եւրոպայի ամէնէն գեղեցիկ մարզիկի մրցումին, Փարիզի մէջ, կը դրաւէ երրորդ դիրքը:

— 1939ին, Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ի ֆութպոլի խումբը Պէյրութի մէջ կը յաղթէ Լիբանանի ախոյեան Տէ. Աշ. Փէ. խումբին:

— 1939ին, Հալէպի մէջ, մեծ յաջողութեամբ եւ աննախընթաց խանդավառութեամբ կը տօնակատարուի Հ. Մ. Լ. Մ. ի Հիմնադրութեան 20ամեակը:

— 1939ին, Դամասկոսի մէջ տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ. ի նոր դաշտի պաշտօնական բացումը:

— 1939ին, Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Ցովհաննէս Շահինեան, Հրանդ Մուրատեան, Անդրանիկ Երամեան, Մամուէլ Գալուստեան,

Կարպիս Մերտինեան եւ Օննիկ Խուպէսէրեան:

— 1939ին, կը կազմուի Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի պասքեթպոլի խումբը: Հիմնադիր խումբին առաջին հինգ խաղացողները կ'ըլլան՝ Նուպար եւ Ցովսէփ Խաչատուրեան եղբայրները, Խաչիկ Խաչատուրեան, Ցակոր Գեղունի եւ Վահրամ Պագամճեան:

— 1939էն 1949, ամբողջ տասը տարի, Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ի ֆութպոլի Ա. խումբը, խմբապետութեամբ Վազգէն Տէր Ղուկասեանի, խիզախ ու տպաւորիչ խաղարկութեամբ, Սուրիոյ քաղաքներու եւ յատկապէս Հալէպի մէջ, տեղական թէ օտար խումբերու դէմ փայլուն յաղթանակներ տանելով, կը տիրանայ Սուրիոյ ախոյեանի տիտղոսին եւ երկոտասնեակ մը բաժակներու:

Հ. Մ. Լ. Մ. ի խումբին տարած յաղթանակներուն անմոռանալի փառապսակը կ'ըլլայ, Հալէպի քաղաքապետարանի բաժակի մրցումին, 5-2 արդիւնքով փայլուն յաղթանակը Հալէպի իւնիոն Սփորթիւ խումբին դէմ:

— 1939ին, Սանճազը Թուրքիոյ յանձնուելով, շրջանի հայութիւնը կ'արտագաղթէ: Ալեքսանտրէթի, Գրըգ-Խանի եւ Անտիոքի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղերը եւս լուծարքի կ'ենթարկուին եւ Հ. Մ. Լ. Մ. ականներ, ակամայ, կը լքեն իրենց ակումբները, տունն ու տեղը եւ կը հաստատուին առաւելաբար Սուրիոյ եւ Լիբանանի հայաշտ քաղաքները, ուր եւ կը շարունակեն Հ. Մ. Լ. Մ. ականի իրենց կեանքը:

Վերոյիշեալ երեք Մասնաճիւղերու կազմութեան եւ բարգաւաճման մէջ, մինչեւ լուծարք, աշխատանք կը տանին՝

Ալեքսանտրէթի մէջ Ցակոր Քէշիշեան, Ցակոր Աշգարեան, Մանուկ Պալեան, Լութֆիկ Շամլեան, Գրըգ-Խանի մէջ Արամ Մինասեան, Երուանդ Համալեան, Մելիք Մելքիսէթեան, Արամ Պօյաճեան, Ցովհաննէս Գոճակէօգեան, Մովսէս Պետրոսեան, Մովսէս Կարոյեան, Անտիոքի մէջ Գ. Փէշտիմալճեան, Փայլակ Բալուկեան եւ ուրիշներ:



Հայեպի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի Ա. խումբը, 1937-1938ին:

Նստած, ձախէն աջ՝ Հրանդ Շահինեան, Վազգեն Տեր Ղուկասեան, Յովհաննէս Կիւլէսէրեան, Տիգրան Քիրքնեան, Միշել Մարտիրեան, Վահրամ Վարժապետեան, Հրանդ Մարտիրոսեան: Առքի, ձախէն աջ՝ Կարապետ Աղնայեան, Գևորգ, Զօհրայ Ղազարեան, Յարութիւն Խաչատուրեան, Ճեմիլ Մարգիսեան, Սուրեն Պերպերեան, Գառնիկ Ազիրեան:



ՀՐԱՆԴ ՄՈՒՐԱՏԵԱՆ



ԱՐԱՄ ՄԻՆԱՍԵԱՆ



Պէյրութի Հ.Մ.Լ.Մ.ի Լիրանանի ախոյիան եւ բաժակակիր ֆութպոլի խումբը,
1943ին:

Զարոքն աջ, նստած՝ ձևմի, Զաւէն Հրթիկեան, Եղիշէ Մանուկեան,
Բ. շարք՝ Ցովհաննէս Նազարեան, Ժիրայր Ուրֆալեան, Կիրակոս Գալայնեան,
Ուրի, Գ. շարք՝ Մարտիրոս Պալըգմեան, Հանի Հայկ Կարմիրեան, Օզուն Սմբատեան,
Վարդավառ Ցովհաննէսեան, Խաչիկ Խաչատուրեան:



Պէյրութի եւ Հալէպի Հ.Մ.Լ.Մ.ի պասէեթպոլի խումբերը 1945-1946ին:



1942ին, Լիբանանի եւ Սուրբոյ Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Պատգամ. Ժողովին մասնակցած պատգամաւորները. Զախէն աջ նստած՝ Յովհաննէս Շահինեան, Վահրամ Կիւրինեան, Լուտք Մասպանանեան, Սիմոն Թերենանեան, կողքին ոտքի՝ Խաչիկ Արարատեան, երրորդ շարք, ոտքի՝ Մանուկ Տեօվլեթեան, Մամրէ Հիսարեան, Յարութիւն Պազարպաշեան, Երուանդ Տէր Յովհաննէսեան, Խաչիկ Խաչատուրեան, Մանուկ Գարբեան, Կարապետ Աղնայեան: Երրորդ շարք, ոտքի՝ Ազատ Դասարնեան, Գրիգոր Խւիտեյեան, Յովհաննէս Առաքելեան, Պողոս Շահինեան, Եղիշէ Մանուկեան:



Հայէպի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի Սուրբոյ ախոյեան անպարտելի խումբը, 1939-1949

Ա. շարք՝ նստած ձախէն աջ, Ստեփան Մելիքսեթեան, Վազգէն Տէր Ղուկասեան, Արմէն Արգարեան,

Արսէն Տէր Ղուկասեան, Համազասպ Արզումանեան:

Բ. շարք՝ ձախէն աջ՝ Կրացեան (խումբին մարզիչը՝ Գրանացի), ծագումով հայ), Կարապետ Գարայեան, Ալեքսան Փիլատեսեան, Լեւոն Սարգսեան, Մանուկ Յովհաննէսեան, Մանուկ Գարբեան, Երուանդ Յովհաննէսեան:

— 1940ին, կը կազմուի Մուսա Լեռէն գաղթած հայութեան նոր բնակավայր Այնձարի (Լիբանան) Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը, 50 անդամներով եւ 36 սկառտներով:

— 1940ին, Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի Փութպոլի Ա. խումբը Պէյրութի քաղաքապետարանի բաժակի մրցաշարքի աւարտական մրցումին պարտութեան մատնելով «Հիլմի Սփոր» խումբը, պաշտօնական իր առաջին յաղթանակը կը տանի: Քաղաքապետ Համառուի բաժակը կը յանձնէ Հ. Մ. Լ. Մ. ի խըմբապետ, տիպար ու տոկուն ֆութպոլիստ Կարապետ Մաաթճեանին (Մաաթճի):

— 1940ին, Պուրճ Համուտի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը մաս կը կազմէ Լեռնալիբանանի Ֆութպոլի Դաշնակցութեան:

— 1940ին 1953, Պուրճ Համուտի Հ. Մ. Լ. Մ. ի Փութպոլի խումբը, Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-մասնաճիւղային մրցումներուն, ուժ անգամ կը տիրանայ Բ. Դասակարգի ախոյեանութեան:

— 1940ին 1953, Պուրճ Համուտի Հ. Մ. Լ. Մ. ի Փութպոլի խումբը, Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-մասնաճիւղային մրցումներուն, ուժ անգամ կը տիրանայ Բ. Դասակարգի ախոյեանութեան:

— 1941ին, Դամասկոսի Հ. Մ. Լ. Մ. ի Փութպոլի Ա. խումբը գեղեցիկ յաղթանակ մը կ'արձանագրէ Դամասկոսի զինուորական զօրաւոր խումբին դէմ:

— 1941ին, Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ի Փութպոլի Ա. խումբը փայլուն յաղթանակ մը կ'արձանագրէ Լէժիօն էթրանժէ զօրաւոր խումբին դէմ:

— 1941ին, Հ. Մ. Լ. Մ. ի Շրջ. Վարչութեան կազմակերպութեամբ, Հ. Մ. Լ. Մ. ի Պէքաայի Մասնաճիւղերը — Շթօրա, Բայագ, Զահլէ, Մուսա Լեռ (Այնձար) — կ'ունենան Միջ-մասնաճիւղային մրցումներ:

— 1941ին, քաղաքական պայմաններու բերումով, Հ. Մ. Լ. Մ. ի 15րդ Միջ-մասնաճիւղային մրցումները տեղի չեն ունենար: Աւանդական սովորութիւնը պահելու հա-



ՄԱՐՏԻՐՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

մար, Հալէպի եւ Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի Փութպոլի Ա. խումբերը իրարու դէմ կը մրցին: Կը յաղթէ Հ. Մ. Լ. Մ. Հալէպ:

— 1943ին եւ 1944ին, Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ի մարզիկներէն կարճ վազքերու ախոյեան Մարտիրոս Վարդանեան, Հ. Մ. Լ. Մ. ի թէ՛ Հալէպի եւ թէ Միջ-մասնաճիւղային Ողիմպիական մրցումներուն կը հոչակուի ախոյեան:

— 1943ին, Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի Փութպոլի Ա. խումբը կը տիրանայ Լիբանանի ախոյեանի տիտղոսին եւ Լիբանանի բաժակին:

— 1944ին, 1945ին, 1948ին եւ 1950ին եւս, Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի Փութպոլի խումբը կը տիրանայ Լիբանանի ախոյեանի տիտղոսին, եւ երկրորդ անգամ ըլլալով Լիբանանի բաժակին՝ 1948ին:

— 1944էն 1948, Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի մանչերու պասքեթպոլի Ա. խումբը, բացի երկու տարիէն, կը տիրանայ Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-մասնաճիւղային մրցումներու ախոյեանի տիտղոսին:


— 1945ին, կը հիմնուի Թէլ-Պրաքի (Սուրիա) Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը:



Լիբանանի 1944ի ախոյեան՝ Պէյրուրի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի խումբը:
Նստած ձախէն աջ՝ Անդրանիկ Մկրտիչեան, Յովհաննես Նազարեան, Ժիրայր Ուրֆալեան,
Ստեփան Մելիքսէրեան, Ռոբի, ձախէն աջ՝ Կարապետ Սաարենեան, Յարութիւն
Մարտիրոսեան, Կիրակոս Գալայնեան, Ժողկված Նալպանտեան, Զաւէն Հրթիկեան, Եղիշէ¹
Մանուկեան, Վարդավառ Յովհաննեսեան:



Պուրճ-Համուտի Հ. Մ. Ը. Մ. ի սկաուտ-աստիճանաւորական կազմը, 1947ին:



Մամօք Հ. Մ. Ը. Մ. ակամենիր՝ 1947ին, Հայկակ:
Զարդէն աջ՝ Լուսեր Մասպամանինան, Յովկիանին Շահիննեան, տոֆք. Լեւոն Ենիգոմշունան,
տոֆք. Սառոր Գապաժինան, տոֆք. Յակոբ Գասպարինան, Լեւոն Գասպարինան, Կարպախտ
Աղնայինան, տոֆք. Իսկէնտի Քասիս, Միհրան Հերարդինան, Գանիկ Ազիրինան, Մանոկ
Տետիսան, Միսար Պժեհան:
Եստած՝ սկառուտ վարիչ Աներէն՝ Սահակ-Մեսրոպ Տէր Ղազարինան:



Հալեպի Հ. Մ. Ը. Մ. ի սկաուտ աստիճանաւորներու կազմը 1942ին:
Կեդրոնը նստած՝ խմբապետ Լեւոն Պավլովցեան:



Հալեպի Հ. Մ. Ը. Մ. ի նոր Գիւղի սկաուտական աստիճանաւորական ընդհանուր կազմը,
1944ին:



Պէյրութի Հ. Մ. Լ. Մ.ի Լիբանանի ախոյեան եւ քաժակակիր ֆութպոլի Ա. խումբը, 1948ին
Զախէն աջ, նստած Տրդատ Փանոսեան, Տիգրան Արավեան, Եղիշէ Մանուկեան,
Զախէն աջ, Բ. շարք՝ Յովհաննես Նազարեան, Ճորի Շատարեան, Լեւոն Այնթապլեան
Զախէն աջ, ստրք՝ Յակոբ Վարժապետեան, Անդրանիկ Գամարեան, Ժողկվ Նալպանտ-
եան (մարզիչ), Մանուէլ Ալբունեան, Վարդավառ Յովհաննեսեան, Սարգիս
Ազնաւորեան:

— 1945ին, Հ. Մ. Լ. Մ.ի Միջ-մասնա-
ճիւղային մրցումներուն, թենիսի ախո-
յեանութիւնը կը շահին՝ Պէյրութի Հ. Մ.
Լ. Մ.էն Ժիրայր Աթթարեան, Հալէպի Հ. Մ.
Լ. Մ.էն Յարութիւն Մարութեան:

— 1945ին, Երուսաղէմի, Հայֆայի եւ
Եափայի մէջ տեղի կ'ունենան ֆութպոլի
Միջ-մասնաճիւղային մրցումներ, մասնակ-
ցութեամբ Հալէպի եւ Պէյրութի Հ. Մ. Լ. Մ.ի
ֆութպոլի Ա. խումբերուն:

— 1946ին, Գամիլյանի մէջ տեղի կ'ու-
նենայ պետական ձեռնարկի մը համազօր

եւ Սուրիոյ օդանաւորդութեան ի նպաստ՝
Հ. Մ. Լ. Մ.ի դաշտահանդէսը, որ ձեզիրէի
պատմութեան մէջ կը մնայ առանձնայա-
տուկ թուական մը: Ձեռնարկը յաջողու-
թեամբ կը պսակուի չնորհիւ առաջնորդ
Խորէն Ծ. վրդ. Բարոյեանի (ապա՝ առաջ-
նորդ Լիբանանի Հայոց եւ Կաթողիկոս
Մեծի Տանն Կիլիկիոյ), Հ. Մ. Լ. Մ.ի Հալէպի
եւ Գամիլյանի Մասնաճիւղերու Վարչու-
թեանց:

Դաշտահանդէսին կը մասնակցին ձե-
զիրէի շրջանի Հ. Մ. Լ. Մ.ի Մասնաճիւղերու

սկառուտական եւ աթլեթիք կազմերը, Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ի սկառուտական կազմը եւ մարզիկները, առաջնորդութեամբ Լեւոն Պապլուղեանի եւ նուազախումբը, ղեկավարութեամբ Յակոբ Քէշիշեանի:

Մարզահանդէսէն բացի, սկառուտները կը կատարեն փառահեղ ջահագնացութիւն:

— 1946ին, Հասիչի (Ճեղիրէ) հայութիւնը կ'ապրի յիշատակելի օր մը: Տեղի կ'ունենան Հասիչի եւ Գամիշլիի Հ. Մ. Լ. Մ. ի ֆութպոլի խումբերու հաւասար արդիւնքով մրցումը, սկառուտական կազմերու տողանցքը եւ Մասնաճիւղի սեփական ակումբին մէջ խրախճանք-հանդէսը:

— 1946ին, Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ի մեծ զոհողութիւններով շինուած մարզավայրը կը գրաւուի Քաղաքապետութեան կողմէ, որովհետեւ, նոր բացուելիք պողոտան դաշտը երկուքի կը բաժնէր:

— 1947ին կը շինուի Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ի նոր Գիւղի «Նաւասարդ» դաշտը: Նոյն տարին կը գնուի նաեւ 5000 քառ. մետր տարածութեամբ հող մը:



ՅԱԿՈԲ ԳԱՏԵԱՆ
«ԳՈԶԸ»



Լիբանանի պասկերպողի Ա. դասակարգի ախոյեան Պէյրուքի Հ. Մ. Լ. Մ. ի խումբը, 1950ին:

Զախէն աշ՝ Յակոբ Գատեան (Մարզիչ), Ժան Տիարպէֆիրեան, Լեւոն Պէրպէրեան, Ալէն Ապուհայաբեան, Վարդգէս Տէր Կարապետեան, Վարուժան Ազատեան, Համբարձում Մրապեան, Վարդգէս Ալահայտոյեան, Գարլոս Էսի:



Հայէպի Հ. Մ. Ը. Մ. ի պասֆեթպոլի խումբը, 1945ին:



Հայէպի Հ. Մ. Ը. Մ. ի պասֆեթպոլի խումբը, 1948ին:



1948ին Հալեպի մէջ, ասին ազ' Յակոր Օշական, Բերիոյ Թեմի առաջնորդ Զարեհ եպիսկ. Փայասլեան (ապա արժանաւոր եւ ազգընտիր կաթողիկոս Մեծի Տանը Կիլիկիոյ Արքունին) եւ Շաւարչ Միսաքեան: Ուսի՞ Սուրբահայ Օգն. Խաչի Հալեպի Մասնաճիւղի վարչական ընկերուիհիներ:



Ճարապլուսի Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղի սկաուտական խումբը, 1947ին:



Տեր-Զօրի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի խումբը, 1948ին:



Արար Փունարի սկառուտ Առաջնորդները, 1948ին:
Զախէն աջ՝ Աղանան Եազուպիան, Ղազար Յակոբիան,
Արքահամ Յակոբիան, Յարութիւն Սարգիսիան:

— 1947ին 1951, Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի փինկ-փոնկիստներէն նուպար Գոնտուրածեան անպարտելի ախոյեանը կ'ըլլայ Սուրբոյ:

— 1948ին 1954, Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի հեծելանւորդներէն ժան Նալչայեան բազմաթիւ յաղթանակներ կը տանի: 1950ին կը հոչակուի Լիբանանի ախոյեան եւ կը հաստատէ լիբանանեան նոր մրցանիշ:

— 1948ին, Պուրճ Համուտի կաթողիկէ հայոց «Մեսրոպեան» վարժարանի մարզադաշտին վրայ տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի Սուրբոյ եւ Լիբանանի Մասնաճիւղերու սկառատական չորսօրեայ բանակումը, 2000 սկառատական:

— 1948ին, Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Վարչութեան կազմակերպած Միջ-մասնաճիւղային Ողիմպիական մրցումներուն օրը, Հ. Մ. Ը. Մ. ի բանակած 2000 սկառատական, առաջնորդութեամբ Հալէպի եւ Պուրճ Համուտի Հ. Մ. Ը. Մ. ի նուագախումբերուն, աննախընթաց ջահագնացութիւն մը կը կատարեն Պէյրութի մէջ: Լիբանանի նախագահ Շէյխ Պըշարա Խուրի հիացումով կ'արտայայտուի, երբ ջահակիր սկառատաներու շքերթը կանգ կ'առնէ նախագահական պալատին առջեւ:



ԿԱՐԱՊԵՏ ԱՂՃԱՑԵԱՆ

— Լիբանանի մարզական կեանքին մէջ, Հ. Մ. Ը. Մ. ի անուանի մարզիկներն ու մարզիկուհիները առանցքը կազմած են Լիբանանի յատկապէս ֆութպոլի, պասքեթպոլի, հեծելարշաւի, փինկ-փոնկի ազգային խումբերուն:

Օրինակ, 1948ին, Պէյրութի մէջ առաջին անգամ Անգարայէն եկած թուրքիոյ ազգային խումբին դէմ Լիբանանի ազգային խումբին յաղթանակը կերտողները կ'ըլլան Հ. Մ. Ը. Մ. ական մարզիկները:



1950ին, Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի պատմեթպոլի Ա. Խումբը, խմբանկարուած Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի Վարչութեան եւ խումբ մը անդամներու հետ:



Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ի սկաուտական խմբապետական ընդհանուր կազմը, 1950ին:

Առանձնապէս յիշատակութեան արժանի է երկրորդ կիսախաղին յաղթանակի անմոռանալի երկու կօլերը նշանակած՝ Սարգիս Ազնաւորեանը, որ 1985ին զոհ գնաց անարդ ոճիրի:

Դարձեալ, թրքական «Ատանա Սփոր» ֆութապոլի խումբին դէմ յաղթանակ տարած Լիբանանի ազգային խումբին ինը մարզիկները Հ. Մ. Լ. Մ. ականներ էին:

— 1949ին, Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի փինկ-փոնկիստներէն Վահագն Ցովհաննէսեան յաղթելով իր բոլոր մրցակիցներուն, կը հոչակուի Լիբանանի ախոյեան: Նոյն տարին, Վահագն ընկերակցութեամբ իր հօրեղօրորդուոյն՝ Պօղոս Ցովհաննէսեանի, կը շահի նաեւ Լիբանանի զոյգի ախոյեանութիւնը:

— 1949ին, Զահէի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը կ'ունենայ իր խաղավայրը:

— 1949ին, հիմք կը դրուի Հատէթի

(Լիբանան) Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղին: Առաջին Վարչութեան անդամ կ'ընտրուիին՝ Ռուբէն Դեղարարեան, Կարապետ Յակոբեան, Կիւլպէնկ Հաճաքեան, Յակոբ Գասարեան եւ Թաղէսոս Պաղտասարեան:

— 1950ական թուականներուն, Սուրիոյ բոլոր ժամանակներու լաւագոյն հեծելանւորդները կ'ըլլան՝ Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ի մարզիկներէն Արմէն Քաջեան, ապա՝ Ալպէս Էքմէքճեան:

— 1950ին, Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի պատքեթապոլի մանչերու խումբը կը շահի Լիբանանի ախոյեանի տիտղոսը:

— 1950էն սկսեալ եւ այնուհետեւ յաջորդաբար 7 տարի, Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի պատքեթապոլի աղջկանց խումբը կը տիրանայ Լիբանանի ախոյեանի տիտղոսին:

— 1950ին, կը հիմնուի Ռագգայի (Սուրէիա) Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը:



ՎԱՀԱԳՆ ՅՈՎՃԱՆՆԵՍԵԱՆ



ՊՈՂՈՍ ՅՈՎՃԱՆՆԵՍԵԱՆ



ԱՐՄԵՆ ՔԱԶԵԱՆ



ԱԼՊԵՌ ԷՔՄԵՔՃԵԱՆ



Պէյրութի աղջկանց պասֆեթպոլի խումբը, 1946ին:
Նստած, ձախէն աջ՝ Շաքէ Տէր Մելքոնեան, Արփինէ Թէրթանեան
Ռտքի, ձախէն աջ՝ Սալիկի Իփէկեան, Անայիս Գասապեան, Մարի
Սարեան, Էլօ Տէր Մելքոնեան:



1950էն սկսեալ, եօթը տարի յաջորդաբար Լիբանանի ախոյեան Պէյրութի
Հ. Մ. Ը. Մ. ի պասֆեթպոլի աղջկանց անպարտելի խումբը:
Ձախէն աջ՝ Անահիտ Տէր Կարապետեան, Սեդա Սարեան, Էլօ Ալահայտո-
յեան, Աստղիկ Տէր Կարապետեան եւ խմբապետուիի Մարի Սարեան:



Հ.Մ.Ը.Մ. Պէյրութի պասֆեթպոլի խումբը
Գահիրեկ «Արարատ» խումբին հետ 1951ին:



Պուրճ-Համուտի Հ.Մ.Ը.Մ. պասֆեթպոլի խումբը 1958-1959ին:
Զախին աջ՝ Զարուհի Սաարնեան, Սրբուհի Օհաննեան, Նուրիհան Մարտիրոսեան,
Վերժին Պըլյատեան, Արփի Լիպարիտեան, Ցուշիկ Բարխուդարեան, Արամսի
Գարբիեան, Աստղիկ Թէնիքեան, Զեփիւռ Մածունեան:



Հալեպի Հ. Մ. Լ. Մ. ի արլեքները 1953-1954ին:



Հալեպի եւ Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի պասիվեթ-պոլի աղջկանց
Ա. դասակարգի խումբերը, 1956ին:

Հ. Մ. Ը. Մ. ի ՄԻԶ-ՄԱՍՆԱՁԻՒՂԱՅԻՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ
ՓԱՌԱԶԵԴ ՏՈՂԱՆՑՔՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ՝ Հալեպ, 1956ին

«Սիրելիք, ժալեցէք այսպէս շարքերով
արի, կարգով գեղեցիկ, կամքով տոկուն,
հաւատքով լեցուն եւ տեսիլքով վառ:

«Հայոց ապագան է որ ձեզ կը կանչէ,
հայոց անցեալն է որ ձեզ կը մղէ, հայոց
ներկան է որ ձեզ կը հրաւիրէ սուրբ պար-
տականութեան:

«Դուք յոյսն էք մեր ազգին:
«Պատի՛ զգացէք եւ ազգին յոյսը ար-
դարացուցէք»:

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ



Հ. Մ. Ը. Մ. ի ՄԻԶ-ՄԱՍՆԱՃԻՒՂԱՅԻՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ
ՓԱՌԱՀԵՂ ՏՈՂԱՆՑՔԵՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ՝ Հալեպ, 1956ին



Հ. Մ. Ը. Մ. ի ՄԻԶ-ՄԱՍՆԱՃԻՒՂԱՑԻՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ
ՓԱՌԱՀԵԴԻ ՏՈՂԱՆՑՔՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ՝ Հալեպ, 1956ին



Հ. Մ. Ը. Մ. ի ՄԻԶՄԱՍՆԱՅԻԼԱՅԻՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ
ՓԱՌԱԶԵԴ ՏՈՂԱՆՑՔԵՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ՝ Հալէպ, 1956ին:





Ճիւնիի Հ. Մ. Ը. Մ. ի Վարչական կազմը, 1958-1959ին:
Նոստած, ճախէն աջ՝ Արքահամ Հալպըրեան եւ Ստեփան Հաստանեան,
Ոտքի, ճախէն աջ՝ Յովսէփ Գաղաննեան, Լեւոն Գալրագիեան,
Վարուժան Թորիկեան:

— 1950ին, Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի պասքեթպոլի մանչերու Ա. խումբը՝ Լեւոնիկ Պէրպէրեան, Վարդգէս Տէր Կարպետեան, Վարդգէս Ալահայտոյեան, Գարլոս Էսի, Ալէն Ապուհայաթեան, Վարուժան Ազատեան, Ժան Տիարպէքիրեան, Գէորգ Ազնաւորեան, Եղուարդ Պաղչէճեան եւ Համբարձում Արապեան, Եղիպտոսի մէջ (Գահիրէ եւ Աղեքսանդրիա) կը կատարեն հինգ մրցումներ տեղւոյն զօրաւոր խումբերուն դէմ: Կ'արձանագրեն 4 յաղթանակ եւ միայն մէկ պարտութիւն՝ Եղիպտոսի բանակի խառն խումբէն:

— 1951ին, Ճիւնիի (Լիբանան) «Ահարոննեան» Մարմնամարզական Միութեան վարիչները կ'որոշեն միանալ Հ. Մ. Ը. Մ. ին: Որոշումը գործադրելով՝ Միութեան Վարչութեան անդամները՝ Ստեփան Հաստանեան, Վարուժան Թորիկեան, Ժան Սաաթեան, Գէորգ Գաղաննեան եւ Բիւզանդ Թորիկեան, կը դառնան Ճիւնիի Հ. Մ. Ը. Մ. ի նորակազմ Մասնաճիւղի առաջին Վարչութեան անդամ:

— 1951ին, Լոնտոնի մէջ կայացած համաշխարհային մարմնամշակումի մըրցումներուն, Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի մարզիկներէն Լեւոն Հիմիտեան, իր դասակարգին մէջ կը գրաւէ երկրորդ դիրքը:

— 1949էն 1951, յաջորդաբար Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի ողիմպիականներուն եւ 1951ին, Հ. Մ. Ը. Մ. ի Միջմասնաճիւղային ողիմպիականի օրուայ ախոյեանութիւնները կը շահի Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի որակաւոր մարզիկ՝ ոսկի տղայ անուանուած Յարութիւն ինճէեան:

— 1952ին, Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի փինկ-փոնկի խումբը կը շահի Լիբանանի խմբական ախոյեանութիւնը: Հ. Մ. Ը. Մ. ի խումբը ախոյեանի տիտղոսը կը պահէ մինչև 1958:

— 1952էն սկսեալ, Լիբանանի հեծելարշակի մրցումներուն մէջ կը սկսի փայլիլ Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի հեծելանորդներէն Յովհաննէս Մատուրեան:

— 1953ին, 1958ին եւ 1959ին, Լեռնալիբանանի ֆութպոլի ախոյեանի տիտղոսին



Լեկոն ՀԻՄԻՑԵԱՆ



ՑԱՐՈՒԹԻՒՆ ԻՆՁԵԵԱՆ

Կը տիրանայ Պուրճ Համուտի Հ. Մ. Ը. Մ. ի խումբը:

— 1955ին, Յովհաննէս Մատուրեան Լիբանանի հեծելարշատի Դաշնակցութեան կազմակերպած հինգ մրցումներուն առաջնութիւն կը շահի:

— 1955ին, Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի Ա. խումբը վեցերորդ անգամ ըլլալով կը տիրանայ Լիբանանի ախոյեանի տիտղոսին:

— 1956ին, Պուրճ Համուտի Հ. Մ. Ը. Մ. ի խումբը կը տիրանայ Լիբանանի Բ. Դասակարգի ախոյեանի տիտղոսին:

— 1956ին, Գամիշիի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը կ'ունենայ նորակառոյց սեփական ակումբ: Շրջանի Հ. Մ. Ը. Մ. ի վերելքին սատարած են՝ ծանօթ գործիչ Ցակոր Մի-



Պեյրութի Հ. Մ. Ը. Մ. ի պասմեթառլի խումբը, Հալէպ 1952ին:



Հ. Մ. Ը. Մ. ի հեծելարշատի 1952ի խումբը:

Զախէն աջ՝ Հայկ Դաւիթիսան, Յովհաննես Քելչեսան, Վարուժան Պետքեսան, Ժան
Նալչյեսան (Լիբանանի ախոյեան), Ազատ Գափուչեսան, Վարուժան Պարսումեսան,
Յովհաննես Շատուրեսան, Զօհրապ Սվաճեսան, Օննիկ Պալըգնեսան:



Լեռնալիքանանի ֆութպոլի ախոյիսան՝ Պուրք Համուտի Հ. Մ. Լ. Մ. Ի խումբը, 1953ին Նստած, ձախէն աջ՝ Գեղրդ Ահարոնիսան, Լեւոն Վերիլիսան, Գրիգոր Գառլինիսան, Յակոպ Ապտալիսան:

Ուրի, ձախէն աջ՝ Զաքար Չորպանիսան (պատասխանատու վարիչ), Ռոպէր Պետոյիսան, Սարգիս Մանուկիսան, Մամա Քեհյանիսան, Կարպիս Դաւիթիսան, Ալպեր Էօրենիսան, Գրիգոր Պապոյիսան, Նիկողոս Գալայնիսան, ձողէփ Ճինպաշտիսան:

մոնի, Սերոբ Գալայնեան, Կարպիս Գալայնեան, Անդրանիկ Հեքիմեան, Գալուստեան եղբայրներ, Մարտիրոս Նալպանտեան եւ ուրիշներ:

— 1956ին, պաշտօնական բացումը կը կատարուի Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. Ի Մասնածիւղի պասքեթպոլի նոր դաշտին եւ տիպար ու արդիական սեփական ակումբին, Զոքաք էլ Պլաթ թաղին մէջ, «Ն. Փալանճեան» ձեմարանի արեւմտեան կողմը: Ներկայ կ'ըլլան Լիբանանի հանրապետութեան նախագահ Քամիլ Շամուն, վարչապետը եւ

նախարարներ: Այս առիթով, նախագահ Շամուն Լիբանանի Ա. Կարգի պատուանը շանով կը պարզեւատրէ Հ. Մ. Լ. Մ. Ի գործոն ու վարիչ անդամներէն Յովհաննէս Շահինեանը, Ժողէփ Նալպանտեանը եւ Յակոր Գատեանը:

Նոյն հանդիսութեան, Լիբանանի պատքեթպոլի Դաշնակցութիւնը յիշատակի մետալներով կը պատուէ 1950էն ի վեր Լիբանանի ախոյիսան՝ Հ. Մ. Լ. Մ. Ի պասքեթպոլի աղջկանց Ա. խումբի մարզիկուհիները: Խումբը ախոյիսանի տիտղոսը կը պահէ մինչեւ 1958, յաջորդաբար 7 տարի:



Հ. Մ. Ը. Մ. ի Գամիշլիի ֆութպողի խումբը 1958ին:

Նստած, ձախէն աջ՝ Ա. Կարապետեան, Ա. Առաքելեան, Ս. Կէնեյեան, Է. Կարապետեան, Յ. Պասմանեան:

Առարկ, ձախէն աջ՝ Ա. Նազգաշեան, Զ. Գասպարեան, Ս. Գալայնեան, Յ. Խաչատորեան,

Ա. Կիւրենեան, Յ. Կարապետեան, Յ. Արքահամեան, Ղ. Սեղրակեան:




Հալեպի Հ. Մ. Ը. Մ. ի 1958 և 1959 վարչութիւնները միասնաբար

Նստած, ձախէն աջ՝ տոքր. Ալպեն Տայրեան և Նշան Թիւյսիւզեան:

Բ. շարք, ստրկ՝ Խաչիկ Օհանեան, Գեղամ Չալեան, Կարպիս Նախանտեան,

Գեղրդ Տօնապետեան և Սուրեն Խաչարեան:

Գ. շարք, ստրկ՝ Ցովհաննես Խաչատորեան և Արմեն Մարգարեան:



Մերձաւոր Արիստիֆիլ Հ. Ա. Ը. Մ. կ 14րդ Պատգամաւորական Ժողովը, 1958ին, Պէյքուք:
Կեղոննը նստած՝ Պէյքուքի Հ. Ա. Ը. Մ. կ հիմնադիրներն՝ Յարութիւն Պէյքուքի հետան:



Հ. Մ. Ը. Մ. ի Պէյրութի պասէեթպոլի Ա. խումբը 1954ին:

— 1957ին, ձիւնիի Հ. Մ. Ը. Մ. ի պասքեթպոլի խումբը, Հալէպի մէջ, Միջ-մասնաճիւղային մրցումներուն Բ. Դասակարգի ախոյեան կը հռչակուի:

— 1957ին, տեղի կ'ունենայ Լաթաքիոյ Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի ակումբին բացումը:

— 1957ին, կը հիմնուի Գամիշլիի մօտ Ամուտայի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը:

— 1957ին, Այնձարի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի խումբը Հ. Մ. Ը. Մ. ի Միջ-մասնաճիւղային մրցումներուն կը տիրանայ Գ. Դասակարգի ախոյեանի տիտղոսին:

— 1957ին, Այնձարի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը իր միջոցներով կ'ունենայ ակումբ եւ սեփական դաշտ:

— 1957ին եւ 1958ին, յաջորդաբար, Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի մարզիկուհիներէն Նազիկ Յովհաննէսեան կը ւ իրանայ Լիբա-

նանի փինկ-փոնկի աղջկանց ախոյեանուհիի տիտղոսին:

— 1960ին, Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի Ա. խումբը եօթերորդ անգամ ըլլալով կը տիրանայ Լիբանանի ախոյեանի տիտղոսին:

— 1960ին, Մուշեղ Մստրեան իր շուրջ կը համախմբէ Պէյրութի Մար Միայէլ, Գարանթինա եւ Էշրէֆիէ Հայահոծ թաղամասերէն երկսեռ պատանիներ եւ կը կազմէ Բ. Դասակարգի պասքեթպոլի մանչերու եւ աղջիկներու, նաեւ ֆութպոլի խումբեր, որոնք իր ղեկավարութեամբ եւ Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի Վարչութեան հովանաւորութեամբ ամէն տարի մրցումներ կը կատարեն իրենց դասակարգի համապատասխան տեղական եւ Հ. Մ. Ը. Մ. ի այլ մասնաճիւղերու խումբերուն դէմ:

Ամէնուրեք, Հ. Մ. Ը. Մ. ի Գ. եւ Բ. դա-



Հայ ազգի կեանքին մեջ պատահած «հրաշք»ներէն մէկն է, անտարակոյս, կազմութիւնն ու գարգացումը Հ. Մ. Ը. Մ. ին:

Հ. Մ. Ը. Մ. ը չէ՝, եւ հետագային երբեք պէտք չէ ըլլայ հայ պատանիին միայն ֆիզիքական ուժին գարգացումին ազդակը. այլ՝ «առողջ մարմնին մեջ, առողջ հոգի»ին հետ պէտք է կերտէ անոր նկարագիրը, որուն դրոշմէ նաեւ, թիւրեղանման եւ անվիճելի հայկականութեան ազգային կնիքը:

ԶԱՐԵՀ Ա.

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ

«Սերունդներ ներշնչող եւ առաջնորդ մեծութիւն մըն է Հ. Մ. Ը. Մ. ը, եւ մեծութիւն մը պէտք չունի գնահատագրերու, աւելի եւս մեծնալու համար, երբ մէջտեղն է ինքը, այդ մեծութիւնը՝ իր բոլոր շեղութեամբը եւ բեղուն վաստակովը:

«Այս է իմ վկայութիւնը Հ. Մ. Ը. Մ. ի մասին»:

ԽՈՐԵՆ Ա.

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ



Զահլէի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպողի խումբը, 1947ին:



Զահլէի Հ. Մ. Ը. Մ. ի արենոյշներէն խումբ մը, 1948ին:



Ամմանի Հ.Մ.Ը. Մասնաճիւղի սկաուտներու խումբը, 1951ին:



Ամմանի Հ.Մ.Ը. Ա.Մ. գայլիկներու խումբը, 1951ին:



Ամուսայի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի խումբը, 1959ին:



Արար Փունարի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի խումբը:



Հոմանիշ Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի խումբը, 1959ին:



Ուսակի Այնի Հ. Մ. Ը. Մ. ի պասֆեթպոլի խումբը, 1959ին:



Լաբաթիոյ Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի խումբը:



Բագգայի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի խումբը, 1959ին:



Պուրճ Համուտի Հ.Մ.Լ.Մ.ի նուազախումբը:



Զահլեի Հ.Մ.Լ.Մ.ի ֆութպոլի խումբը, 1959ին:




Պէյրութի Հ.Մ.Ը.Մ. Քարանքինա թաղամասի սկառտները:



Լաբաֆիոյ Հ.Մ.Ը.Մ. մասնաճիւղի վարչական կազմը, 1959ին:

Նստած՝ ձախէն աջ, Հայկազ Մէսումսան, տոքք. Մելգոն
Էպլիդաբեան, Յակոր Մաքինանեան:

Ոտքի՝ ձախէն աջ, Գէորգ Թօփթեան, Անքուան Գալուստեան,
Յովհաննէս Մանոյեան, Յակոր Անոյեան:



ԿԱՐՈ ԳԱԶԱՆՃԵՍՆ

սակարգի խումբերէն է, որ լաւագոյն մարդարգի-մարզիկուհիները ընդունուած են Ա. Պատակարգի խումբերուն եւ անոնցմէ շատեր հետագային դարձած են Հ. Մ. Լ. Մ. ի գործօն անդամներ:

— 1961ին, Աւստրիոյ Սկաւուտութեան հիմնադրութեան 50րդ տարեդարձին

առիթով, Վիէննայի մօտ տեղի կ'ունենայ միջազգային ճեմպորի: Սուրիական սկառտական 50 հոգինոց պատուիրակութեան մաս կը կազմեն Հալէպի Հ. Մ. Լ. Մ. էն՝ Դանիէլ Թիւֆէնքճեան եւ Հրաչ Որբերեան, Դամասկոսի Հ. Մ. Լ. Մ. էն՝ Միհրան Շիմշիրեան եւ Զարեհ Էքմէքճեան:



1959ին, Հալեպի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի Միջ-Մասնաճիւղային մրցումներուն մասնակցած
Այնարի արենոյշներու խումբը:



Զախէն աջ՝ Զարեհ Էմիլինեան, Հրաչ Որբերեան,
Միհրան Շիմշիրեան, Դանիել Թիւֆէնքնեան:



1962, Հ. Մ. Ը. Մ. ի վերերան փութպոլիստներ:

Զախէն աջ՝ ժողկի Նալպանտեան, Սարգիս Աւագեան, Արմէն Արգարեան, Կիրակոս Գալայնեան, Եղիշէ Մանուկեան, Կարապետ Սաաբնեան, Վազգէն Տէր Ղուկասեան, Սարգիս Ազնաւորեան, Պետրոս Վեհիլեան:

— 1961ին Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի փութպոլի Ա. խումբը դարձեալ կը տիրանայ Պէյրութի քաղաքապետարանի բաժակին:

— 1962ին, Դամասկոսի Սկառտական Կեդր. Խորհուրդը կը կազմակերպէ ճատրակի սկառտական միջ-խմբային մրցումներ: Կը մասնակցին Սուրբիոյ բոլոր մարզական Միութիւններու սկառտական խումբերը: Առաջնութիւնը կը շահի Դամասկոսի Հ. Մ. Ը. Մ. ի սկառտական խումբը, կը հըռչակուի ախոյեան ու կը ստանայ բաժակ:

— Հ. Մ. Ը. Մ. ի Միջ-մասնաճիւղային մրցումներուն եւ Ողիմպիական խաղերուն, Լիրանանի եւ Սուրբիոյ աթլէթիք մրցումներուն փայլուն յաղթանակներ տարած մարզիկներէն են՝ Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. էն՝

Վարուժան Փամպուքճեան, Հրաչ Տատեան, Ցովհաննէս Շահինեան, Օննիկ Փիլիկեան, Հայկակ Տէր Մանուէլեան, Արմէն Գույումճեան, Կարօ Գազանճեան, Արրահամ Ուկերիչեան, Հալէպի Հ. Մ. Ը. Մ. էն՝ Տիգրան Նաճարեան, Ցակոր Չաղասեան, Ցարութիւն Մաթոսեան, Ճորճ Միսիրեան, Արսէն Փողահարեան, Սուրէն Պայընտըրեան, Երուանդ Գազանճեան, Մարտիրոս Վարդանեան, Ցովհաննէս Պասմաճեան, Վազգէն Տէր Ղուկասեան, Ցարութիւն ինձէեան, Սարգիս Երէցեան, Սարհատ Մերթիսանեան, Երուանդ Տէմիրճեան, Արթիւր Մաթոսեան, Ազէզի Հ. Մ. Ը. Մ. էն՝ Սիմոն Վարպետեան:

Վերոյիշեալ ախոյեան բոլոր մարզիկներն ալ, առանձնաբար արժանի են



Հ. Մ. Լ. Մ. Ի «Շանթ» պասիբերպոլի խումբը, 1960ին:

Ուռի, ձախէն աջ՝ Զօհրապ Սվանեան, Գևորգ Փիլիպոսեան, Լուտեր Կէյիկեան, Նշան

Համամենեան, Արիկ Սվանեան, Ալեքս Պէզիկեան, Մուշեղ Սնարեան (վարիչ):

**Ձախէն աջ՝ Միշէլ Խորոզեան, Վարուժան Ճէպէկեան, Շարլ Մխիթարեան, Զօհրապ
Զափարեան:**

յիշատակութեան, իրենց տարած փայլուն յաղթանակներուն համար, յատկապէս կարճ ու երկար վազքերու եւ արգելարչաւի մըրցումներուն:

— 1962ին, Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. Ի պասիբերպոլի աղջկանց խումբը Լիբանանի ախոյեանութեան մըցաշարքի եզրափակիչ մըրցումին պարտութեան մատնելով Հ. Ե. Լ. Ի «Անդրանիկ» խումբը, դարձեալ Լիբանանի ախոյեան կը հռչակուի:

— 1962ին, Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. Ի ֆութպոլի Ա. խումբը փայլուն յաղթանակներով կը տիրանայ՝

«Էտմոն Բըպէյզ» մըցաշարքի բաժակին:

«Հապիկ Ապի Շահլա» մըցաշարքի բաժակին:

Եւ երրորդ անգամ՝ Լիբանանի բաժակին:

— 1962ին, Դամասկոսի մէջ տեղի կ'ունենայ Սուրիոյ ֆութպոլի ախոյեանութեան աւարտական մըցումը հիւսիսային Սուրիոյ ախոյեան Հալէպի Հ. Մ. Լ. Մ. Ի եւ Դամասկոսի ախոյեան «Ֆհլի» խումբերուն միջեւ: Յաղթանակը կը տանի Հ. Մ. Լ. Մ. Ի խումբը: Ախոյեանի բաժակը Հ. Մ. Լ. Մ. Ի խմբապե-



Պուրճ Համուտի Հ. Մ. Ը. Մ. ի վարչութիւնը, 1964ին:
Նստած, ձախին աջ՝ Եփրեմ Քէնտիրնեան, Աւետիս Պալապանեան, Զաքար
Չորպանեան, Յակոբ Մինասեան:
Ձախին աջ՝ Ներսէս Գէորգեան, Արգար Արքինեան, Զօհրապ Այվազեան,
Կարպիս Համամեան, Վարդգէս Բարպինեան:

**ՄԻՒՆ ԿԸ յանձնէ Սուրիոյ հանրապետութեան
նախագահ նազըմ Քուտսուի:**

— 1962ին, նախաձեռնութեամբ լիբա-
նահայ Ազգ. Ռւսումնական Խորհուրդի եւ
կազմակերպութեամբ Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի
Մասնաճիւղի Վարչութեան, առաջին անգամ
ըլլալով Պէյրութի մէջ տեղի կ'ունենան
լիբանահայ միջ-վարժարանային
մրցումներ (ԼԵՎԱՄ) եւ ապա շքեղ
տողանցք, որ այնուհետեւ կը շարունակուի
ամէն տարի, եւ 1972էն սկսեալ Շրջ.
Վարչութեան կազմակերպութեամբ, բացի
քաղաքական ներքին տագնապներու հետե-
ւանքով ակամայ ընդհատումներէ:

— 1962ին, Սուրիոյ հեծելարշաւի ախո-
յեանութեան մրցումը կը շահի Հալէպի

**Հ. Մ. Ը. Մ. ի հեծելանորդներէն Սամուել
Ազարիկեան:**

— 1962ին, Լիբանանի հեծելարշաւի
ախոյեանութեան մրցումը կը շահի Պէյ-
րութի Հ. Մ. Ը. Մ. ի հեծելանորդներէն
Ազատ Գալայճեան:

— 1962ին, Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Վարչու-
թեան եւ Սկաուտական Խորհուրդի կազմա-
կերպութեամբ՝ Լիբանանի Շուէր գիւղաքա-
ղաքին մէջ տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի
Միջ-մասնաճիւղային սկաուտական երրորդ
բանակումը: Կը մասնակցին՝ Պէյրութի,
Պուրճ Համուտի, Այնձարի, Թրիփոլիի,
Զահլէի, Երուսաղէմի եւ Ամմանի Հ. Մ.
Ը. Մ. ի Մասնաճիւղերէն բարձրաստիճան
սկաուտներ:



Պուրճ Համուտի Հ. Մ. Ը. Մ. ի ախոյեան խումբը, 1960ին:



Հալէպի ծանօթ Հ. Մ. Ը. Մ. ականներ
Զախէն աջ՝ Լուտեր Մասպանանեան, ձեմիլ Սարգիսեան, տոնք. Յակոբ Գասապեան



Լիրանանի ախոյեան եւ «Հապիպ Ապի Շահլա» բաժակին տիրացած
Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. Ի ֆութպոլի Ա. խումբը, 1970ին:
Զարչն աջ, նստած՝ Վազգեն Գալայնեան, Զաւիկ Գալֆայեան, Արօ Նէնէնեան, Ցակոր (քերդապահ), Ցակոր
Գալֆայեան, Խաղեկ Շաբար, Սագո Նէնէնեան, Սուրիկ Պապոշեան, Գէորգ:
Զարչն աջ, ռուբի՝ Միկէ Մկրտիչեան, Խաչիկ Ճիկէրիմեան, Արօ Գասապեան, Հրայր Տէր Թորոսեան, Զաւէն,
Կարօ Օսմանեան, Սարգիս Սագայեան, Մըրուան:

— 1962ին, Լաթաքիոյ Հ. Մ. Լ. Մ. Ի պասքեթպոլի մանչերու Ա. եւ Բ. Դասակարգերու խումբերը պարտութեան մատնելով «Հուրրիէ» ակումբի Ա. եւ Բ. Դասակարգերու ախոյեան խումբերը, կը հոչակուին Լաթաքիոյ Ա. եւ Բ. Դասակարգի ախոյեան:


— 1962ին, Լիրանանի հեծելարշաւի խմբային ախոյեանութեան մրցումը կը շահի Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. Ի հեծելանորդներու խումբը:

— 1962ին, Պուրճ Համուտի Հ. Մ. Լ. Մ. Ի ֆութպոլի խումբը կը տիրանայ Լեռնալիքանանի բաժակին, աւարտական մրցումին պարտութեան մատնելով «Շարք» խումբը:

— 1962ին, Հալէպի մէջ, բազմահազար մարզասէրներու ներկայութեան, Հալէպի Հ. Մ. Լ. Մ. Ի ֆութպոլի Ա. խումբը կը յաղթէ իրաքեան ոստիկանական զօրաւոր խումբին:

— 1963ին, Լիրանանի անկախութեան՝ նոյեմբեր 22ի տարեղարձին առիթով, Լիրանանի Հ. Մ. Լ. Մ. Ի սկաուտական վերին խորհուրդի կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ ջահագնացութիւն:

Պուրճ Համուտի Հ. Մ. Լ. Մ. Ի նուազախումբի առաջնորդութեամբ, Հ. Մ. Լ. Մ. Ի սկաուտներուն, արենոյշներուն, գայլիկներուն եւ Լիբ. Օգն. Խաչի արծուիկներուն ջահագնաց թափօրը իր անցքին, ժողովրդային խանդավառ ծափերու կ'արժանանայ:



Զախէն աջ՝ յաջորդաբար Հալէպի, Դամակոսի եւ Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի վաստակաւոր նուիրեալներ՝ Լուտեր Մասպանանեան, Վահան Տօնապետեան, Ցովհաննես Շահինեան:

— 1963ին, Հալէպի մէջ, ի նպաստ ձմրան օժանդակութեան, տեղի կ'ունենայ ֆութպոլի բաժակի մրցում: Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի Ա. խումբը կը յաղթէ տեղւոյն «Ահլի» խումբին: Բաժակը Հ. Մ. Ը. Մ. ի խմբապետին կը յանձնէ հիւսիսային Սուրիոյ ընդհանուր հրամանատարը:

— 1963ին, Պէյրութի ֆութպոլի Ա. Դասակարգի վեց խումբերու միջեւ — «Սաֆա», «Սալամ», «Սազրաա», «Սաժէս», «Նըժմէ» եւ Հ. Մ. Ը. Մ. — տեղի կ'ունենայ մրցաշարք:

Ախոյեանութիւնը կը շահի Հ. Մ. Ը. Մ. ի խումբը, աւարտական մրցումին պարտութեան մատնելով «Նըժմէ» խումբը:

— 1963ին, Պէյրութի մէջ, երեւանի «Արարատ» ֆութպոլի խումբը երկու մրցում կը կատարէ Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի Ա. խումբին դէմ: Առաջին մրցումը վերջ կը գտնէ հաւասար արդիւնքով, երկրորդ մրցումին՝ կը յաղթէ Հ. Մ. Ը. Մ. ի խումբը:

— 1963ին, Պէյրութի մէջ, Հ. Մ. Ը. Մ. ի կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ մարզական շաբաթ:

Վազքի մրցումին առաջնութիւնը կը շահի ձիւնիի Հ. Մ. Ը. Մ. ը:

Դրօշարշաւի առաջնութիւնը կը շահի Պուրճ Համուտի Հ. Մ. Ը. Մ. ը:

Մարզական շաբաթի փակման աւարտական մրցումները եւ Պուրճ Համուտի Հ. Մ. Ը. Մ. ի սկառատական նուագախումբի առաջնորդութեամբ Հ. Մ. Ը. Մ. ական 1500 երկսեռ մարզիկներու եւ սկառատներու փառաշուրջ տողանցքը իրենց ներկայութեամբ կը պատուեն Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Խորէն Ա. Կաթողիկոսը եւ Լիբանանի հանրօգուտ շինութեանց նախարար Փիէռ Ճեմայէլ:

— 1963ին, Լիբանանի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերէն 27 սկառատներ Յունաստանի մէջ կը մասնակցին Մարաթոնի 11րդ միջազգային ճամբարին:

Հ. Մ. Ը. Մ. ի սկառատները իրենց օրինակելի կարգապահութեամբ, ճամբարի ղեկավարութեան եւ Լիբանանի արտաքին ու կրթական նախարարութեանց յատուկ գնահատանքին կ'արժանանան:

Մարաթոնի 11րդ միջազգային ճամբարին Սուրիոյ սկառատական պատուիրակութեան մաս կը կազմեն՝ Դամասկոսի



1967ին, Սրբուկ լաւագոյն պասեխթպոլիստուիի բաժակ կը ստանայ

Հ. Մ. Լ. Մ. էն՝ Ստեփան Քիւրքճեան, Մանուէլ Թէրզեան, Յակոբ Սազճեան, Նուպար Պաղպուտարեան, Միհրան Շիմշիրեան։ Պատուիրակութեան Սուրբիոյ դրօշակիրը կ'ըլլայ Միհրան Շիմշիրեան։

— 1963ին, Դամասկոսի մէջ տեղի կ'ունենան Սուրբիոյ թենիսի ախոյեանութեան մրցումները։ Առաջին անգամ ըլլալով կատարուող երկսեռ զոյգի մրցումներուն առաջնութիւնը կը շահի՝ Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ի ներկայացուցիչ զոյգը՝ Գրիգոր Մովսէսեան եւ Անի Ազկիւեան։

— Ամմանի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը մարզական եւ մշակութային գործունէութեամբ կը դառնայ ամմանահայ կեանքի արտայայտիչը։ Մասնաճիւղի հիմնադրութեան եւ բարգաւածման մէջ երախտաշատ գործ կը կատարեն՝ Յակոբ Գույումճեան, Գէորգ Գէորգեան, Բիւզանդ Տէգէճեան, Ալեքսանտր Խրլաքեան, Հրաչ Սարգիսեան, Միհրան Գասապեան, Օննիկ Գէորգեան, Յակոբ Խովունեան, Ասատուր Պօյաճեան, Նազար Ալաճաճեան, Յարէթ Սէրայտէրեան, տոքթ. Սուրէն էթեմէզեան եւ պետա-

կան շրջանակներու ծանօթ Յովիկ էթեմէզեան։

— Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի պասեխթպոլի աղջկանց Ա. խումբը 1960ական թուականներուն դարձեալ Լիբանանի լաւագոյն խումբերու շարքին է եւ անգամ մը եւս կը տիրանայ Լիբանանի ախոյեանի տիտղոսին։ Հ. Մ. Լ. Մ. ի խմբապետուհին՝ Սրբուկ Օհանեան-Սարգիսեան կը ճանչցուի Լիբանանի լաւագոյն պասեխթպոլիստուհին եւ մաս կազմելով Լիբանանի ազգային խումբին, իբրեւ խմբապետուհի կը մասնակցի արաբական երկիրներու, Թուրքիոյ, Պուլկարիոյ, Եռևանլաւիոյ, Զեխոսլովաքիոյ, Հունգարիոյ եւ Աւստրիոյ մէջ շուրջ երեք տասնեակ մրցումներու։

— 1963ին, Թրիփոլիի մէջ, Պուրճ Համուտի Հ. Մ. Լ. Մ. ի Փութպոլի խումբը կը յաղթէ Թրիփոլիի ախոյեան «Ահլի» խումբին։ Մրցումէն ետք, Պուրճ Համուտի Հ. Մ. Լ. Մ. ի սկաուտական նուագախումբի առաջնորդութեամբ, Հ. Մ. Լ. Մ. ի սկաուտները յաղթական տողանցք մը կը կատարեն։

— 1968ին, Հ. Մ. Լ. Մ. ի Մերձաւոր Արե-



Ծանօթ Հ. Մ. Ը. Մ. ականեր

Զախէն աջ՝ Կարապետ Աղբայիշան (Հալէյ), տոքթ. Արամ Պաղտասարեան եւ Յովհաննէս Շահինեան (Պէյրութ), տոքթ. Յակոբ Պէրպէրեան (Զահէ), Արշաւիր Կիտցինեան եւ ոտքի՝ Արշակունի Ռաֆայէլեան (Պուրճ Համուտ):

վելքի Շրջ. Վարչութեան ատենապետ Ցովհաննէս Շահինեան կը պարզեւատրուի Լիբանանեան Մայրիներու Ասպետի շքանշանով, ձեռամբ Հանրապետութեան նախագահ Շարլ Հելուի, լիբանանեան մարզական կեանքէն ներս իր կատարած ծառայութիւններուն համար:

— 1969ին, Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի Փութպոլի Ա. խումբը ութերորդ անգամ ըլլալով կը տիրանայ Լիբանանի Փութպոլի ախոյեանի տիտղոսին:

Լիբանանի Փութպոլի պատմութեան մէջ ոչ մէկ խումբ ութ անգամ ախոյեանութիւն շահած է:


Հ. Մ. Ը. Մ. էն ետք, առաւելագոյնը հինգ անգամ եւ աւելի նուազ՝ չորս, երեք, երկու եւ մէկ անգամ ախոյեանի տիտղոսին տիրացած են՝ երբեմնի զօրաւորագոյն եւ արդէն իսկ քանի մը տասնամեակէ ի վեր անցեալին պատկանող «Խընէսանս», ամե-

րիկեան համալսարանի «Վարսիթի», Տէ. Աշ. Փէ., «Հիլմի Սփոր» խումբերը, եւ ներկայիս գոյատեւող խումբերէն՝ Հ. Մ. Մ., «Ռասինկ Քլիւպ» եւ «Նըժմէ»:

— 1970ին, Լիբանանի 1969ի ախոյեան Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի Փութպոլի Ա. խումբը կը շահի «Հապիպ Ապի Շահլա» մրցաշարքին բաժակը, աւարտական մրցումին պարտութեան մատնելով այդ շրջանի զօրաւորագոյն խումբերէն «Անսար»ը, 2-1 արդիւնքով:

— 1971ին, Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի մարզիկուհիներէն Մարի Մուրատեան, առաջին անգամ ըլլալով Սուրիոյ պատմութեան մէջ կազմակերպուած թենիսի աղջկանց ախոյեանութեան մրցաշարքին, կը տիրանայ Սուրիոյ թենիսի ախոյեանուհիի տիտղոսին:

Մուրատեան ախոյեանուհիի տիտղոսը կը պահէ մինչեւ 1980:



Լիպարագուշ Հ. Ա. Ը. Մ. կ 19պետ Պատմական Ստուդիա, Պիտիաք, Պէլյասք, 1971ին:



Լիբանանի Հ. Մ. Ը. Մ. ի Շրջանային վարչութիւնը, 1971ին:

Նստած, ձախէն աջ՝ Երուանդ Տէմիրնեան, տռք. Միսաք Արզումանեան, Յովհաննէս Շահնեան, Վարդգէս Ալահայոյեան, Բիւզանդ Թորիկեան:

Ոտքի, ձախէն աջ՝ տռք. Յարութիւն Գագաննեան (Յ. Գեղարդ), Յովհաննէս Տէր Յարութիւնեան, Վարդական Յովհաննէսեան, Վարուժան Մուրատեան:



Սուրիոյ թենիսի ախոյեան Հ. Մ. Ը. Մ. ականներ՝
Զախէն աջ՝ Մարի Մուրատեան, Արրահամ Քէշիշեան, Շահէ Սրութեան:



Նազիկ Յովհաննէսեան եւ
Բաֆֆի Մունջօղլեան

— 1971-1972-1973 եւ 1974ին, Սուրիոյ թենիսի խառն զոյգի ախոյեանի տիտղոսին կը տիրանան՝ Հալէպի Հ.Մ.Լ.Մ.էն Մարի Մուրատեան եւ իր վաստակաւոր մարզիչը՝ Արահամ Քէշիշեան:

— 1972ին, Պէյրութի մէջ տեղի կ'ունենան Հ.Մ.Լ.Մ.ի Միջ-Մասնաճիւղային մրցումներ: Ֆութպոլի եւ պասքեթպոլի մրցումներուն կը մասնացին՝ Հ.Մ.Լ.Մ.ի Պէյրութի, Հալէպի, Լու Անճելըսի Մասնաճիւղերու եւ թեհրանի «Արարատ» մարզական կազմակերպութեան խումբերը:

— 1972ին, Պէյրութի Հ.Մ.Լ.Մ.ի մարզիկներէն Բաֆֆի Մունջօղլեան կը տիրանայ Լիրանանի փինկ-փոնկի կրտսերներու ախոյեանի տիտղոսին:

— 1972ին, Հալէպի Հ.Մ.Լ.Մ.ի մարզիկներէն նահանջան Սրուրեան կը տիրանայ Սուրիոյ թենիսի սկսնակ խաղացողներու ախոյեանի տիտղոսին:

— 1972ին, Սուրիոյ կառավարութիւնը կը պետականացնէ մարզական շարժումը եւ կը միաձուլէ Միութիւնները: Բացառաբար, Հ.Մ.Լ.Մ.ին կ'արտօնուի պահել իր հայկական դրոշմը: Այսուհանդերձ, Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղերը, բոլոր մարզական ակումբներու նման, կը ստանան նոր անուններ, օրինակ՝ Հալէպի Հ.Մ.Լ.Մ.ին կը տրուի «Եարմուք» անունը:

— 1974ին, Պէյրութի Հ.Մ.Լ.Մ.ի մարզիկներէն Բաֆֆի Մունջօղլեան կը տիրանայ Լիրանանի փինկ-փոնկի ախոյեանի տիտղոսին: Ան ախոյեանի իր տիտղոսը կը պահէ մինչեւ 1980:

— 1974ին, Լիրանանի Հանրապետութեան նախագահ Սիլէյման Ֆրենճիէ Հ.Մ.Լ.Մ.ը կը պատուէ Մայրիներու Արժանեաց շքանշանով, իբրեւ գնահատանք, Լիրանանի մարզական կեանքին Հ.Մ.Լ.Մ.ի բերած անսահման նպաստին: Շքանշանը կը ստանձնէ Հ.Մ.Լ.Մ.ի Պէյրութի Մասնաճիւղի Վարչութեան ատենապետ Բաֆֆի Պալեան:

— 1974ին, Պէյրութի Հ.Մ.Լ.Մ.ի փինկ-փոնկիստները կը տիրանան Լիրանանի զոյգերու ախոյեանի տիտղոսին:

— 1975ին, Հալէպի Քաղաքապետութիւնը Հ.Մ.Լ.Մ.ին կը նուիրէ 20 հազար քառ. մեթր տարածութեամբ հողաչերտ մը, Շէյխ Մաքսուտ շրջանին մօտերը:

— 1976-1977-1978 թուականներուն, Հալէպի Հ.Մ.Լ.Մ.ի պասքեթպոլի մինչեւ 18 տարեկան երիտասարդներու խումբը կը տիրանայ Հալէպի ախոյեանի տիտղոսին:

— 1978ին, Հալէպի մէջ, երկար դադարէ մը ետք, 25.000 մարզասէրներու ներկայութեամբ, տեղի կ'ունենան Հ.Մ.Լ.Մ.ի Միջ-Մասնաճիւղային նաւասարդեան Մարզախաղեր եւ փառահեղ տողանցք, առաջնորդութեամբ՝ Դամասկոսի Հ.Մ.



Լիբանանի Հ. Մ. Ը. Մ. ի Պատգամաւորական ժողովը, Պէյրութ, 1973ին:

Հ. Մ. ի Մասնաճիւղի նուագախումբին եւ մասնակցութեամբ՝ Հ. Մ. Ը. Մ. ի Լիբանանի, Հալէպի, Գամիշիի, Լաթաքիոյ, Դամասկոսի Մասնաճիւղերու 1500 եկուեռ մարզիկներու եւ սկաուտներու:

— 1978էն 1983 յաջորդաբար եւ 1986 թուականներուն, Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի մարզիկներէն Շահէ Սրուրեան կը տիրանայ Սուրիոյ թենիսի ախոյեանի տիտղոսին:

— 1971էն մինչեւ 1980 Սուրիոյ թենիսի անպարտելի ախոյեանուհին՝ Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի մարզիկուհիներէն Մարի Մուրատեան, 1980ին կը տիրանայ նաեւ Սուրիոյ լաւագոյն մարզիկուհիի տիտղոսին:

— 1979ին, Լիբանանի Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Սկաուտական Խորհուրդի կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ ընդհանուր բանակում կիպրոսի մէջ: Մասնակցողներու թիւ՝ 115, որոնցմէ 10ը՝ Ամմանի Մասնաճիւղէն:

— 1979ին, Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի պատքեթպոլի աղջկանց Ա. խումբը պարտութեան մատնելով Հալէպի լաւագոյն խում-

բերը, յատկապէս Սուրիոյ ախոյեան «Ճէլէ» (Սերքը Կաթոլիկ) խումբը, կը տիրանայ Հալէպի ախոյեանի տիտղոսին:

— 1979ին, Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի մարզիկները փինկ-փոնկի եւ հեծելարշակի մրցումներուն կը տիրանան Լիբանանի անկախութեան բաժակին:

— 1979ին, Սուրիոյ 1978ի ֆութպոլի Բ. Դասակարգի ախոյեան Գամիշիի Հ. Մ. Ը. Մ. ի խումբը («Ճիշատ»)՝ կը բարձրանայ Ա. Դասակարգ:

— 1979ին, Հ. Մ. Ը. Մ. ի Լիբանանի Շրջ. Սկաուտական Խորհուրդի նախաձեռնութեամբ եւ ղեկավարութեամբ վաստակաւոր խմբակետ Ցակոր Ռոկերիչեանի, չուրջ 150 որը աշակերտ ունեցող Ճիպէյլի (Լիբանան) «Թռչնոց Բոյն» հաստատութեան մէջ հիմը կը գրուի սկաուտական կորիզի մը:

— 1979ին, Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի պատքեթպոլի մանչերու Ա. խումբը կը տիրանայ Սուրիոյ ախոյեանի տիտղոսին եւ իրաւունք կը ստանայ մասնակցելու Բարձ-



Լիբանանի Հ. Մ. Ը. Մ. ի սկաուտական խմբապետական կազմը, 1979ին

րագոյն (Մումթէզ) Դասակարգի խումբերու ախոյեանութեան մրցումներուն։ Նոյն տարին, Սուրիոյ ախոյեանի տիտղոսին կը տիրանայ նաեւ Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի պասքեթպոլի կրտսերներու խումբը։

— 1979ին, Հալէպի մէջ տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. ի Միջմասնաճիւղային նաւասարդեան խաղեր եւ չքեղ տողանցք, մասնակցութեամբ Լիբանանի եւ Սուրիոյ վեց Մասնաճիւղերու՝ Պէյրութ, Հալէպ, Դամասկոս, Լաթաքիա, Գամիշլի եւ Քեսապ։

25,000 մարզասէրներու ներկայութեամբ, 2500 երկսեռ մարզիկներու եւ սկաուտներու տողանցքը կ'առաջնորդէ Դամասկոսի Հ. Մ. Ը. Մ. ի նուագախումբը։

Ֆութպոլի Ա. եւ Բ. Դասակարգերու ախոյեանի տիտղոսին եւ բաժակին կը տիրանան Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի խումբերը։ Փինկ-փոնկի ախոյեանի տիտղոսին կը տիրանայ Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի մարզիկներէն՝ Լիբանանի ախոյեան Բաֆֆի Մունջօղեան։

— 1979ին, Թրիփոլիի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը չքեղ հանդիսութեամբ կը տօնէ իր հիմնադրութեան յիսնամեակը։ Այս առիթով, Հ. Մ. Ը. Մ. ի Կեղը, Վարչութիւնը, ձեռամբ ատենապետ եւ օրուայ բանախօս Վարդգէս Տէր Կարապետեանի, յիշատակի մետալներ կը յանձնէ Մասնաճիւղի հիմնադիր անդամներէն Յովսէփ Առաքելեանի, առաջին սկաուտներէն Կարպիս Արծրունիի, առաջին անդամներէն Անդրանիկ Անուշեանի, Յարութիւն Զամբերթէնեանի եւ երէց Հ. Մ. Ը. Մ. ական Սիմոն Թերճանեանի։

— 1980ին, 20 տարիներու ընդմիջումէ ետք, կը վերակազմուի Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի սկաուտական նուագախումբը։

— 1980ին տեղի կ'ունենայ Լիբանանի Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Սկաուտական Խորհուրդի կազմակերպած աստիճանաւոր սկաուտներու եւ արենոյշներու շրջապտոյտը դէպի Ամման։

— 1980ին, Թրիփոլիի (Լիպիա) մէջ, Համարաբական սկաուտական 14րդ համա-



1980ին, Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի վերակազմուած նուագախումբը:

Խմբումին եւ բանակումին, Լիբանանի չորս անդամ պատուիրակութեան մաս կը կազմէ Հ. Մ. Ը. Մ. ի խմբակետներէն Միհրան Շիմշիրեան, իսկ բանակումին մասնակցող Լիբանանի 24 սկաուտներու շարքին կը գտնուին 3 Հ. Մ. Ը. Մ. ականներ:

— 1980ին, Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի մարզիկուհիներէն Արշօ Աստուրեան-Նահապետեան կը տիրանայ Հալէպի թենիսի ախոյեանուհիի տիտղոսին եւ բաժակին:

— 1980ին, Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի մարզիկներէն Շահէ Սրուրեան մեծերու մրցաշարքին եւ Դաւիթ Դաւիթեան կրտսերներու մրցաշարքին, կը տիրանան Հալէպի ախոյեանի տիտղոսին եւ բաժակին:

— 1980ին, Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի պատքեթպոլի աղջկանց Ա. Դասակարգի խումբը յաջորդաբար երկրորդ տարին ըլլալով, դարձեալ կը տիրանայ Հալէպի ախոյեանի տիտղոսին:

— 1980ին, Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի փինկ-փոնկի խումբը կը տիրանայ Լիբանանի անկախութեան մրցաշարքի բաժակին:

Անհատական մրցումներուն ախոյեանի տիտղոսին եւ բաժակին կը տիրանան՝

Բաֆֆի Մունջօղեան — անհատական մանչեր

Կասիկ Սարգիսեան — անհատական աղջիկներ


Կրէյս Սարգիսեան եւ Կասիկ Սարգիսեան — զոյգ աղջիկներ

Բաֆֆի Մունջօղեան եւ Ալէքս Աճէմեան — զոյգ մանչեր

Բաֆֆի Մունջօղեան եւ Կրէյս Սարգիսեան — խառն զոյգ:

— 1980ին, Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի մարզիկներէն Ասպետ Յովսէփեան կը տիրանայ Լիբանանի հեծելարշաւի կրտսերներու ախոյեանի տիտղոսին:

— 1980ին, Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի հե-



Դամասկոսի Հ. Մ. Ը. Մ. ի սկաուտական 65 հոգինոց հոչակաւոր նուագախումբը:

ծելանւորդներու խումբը կը տիրանայ Լիքանանի անկախութեան բաժակին, իսկ կրտսերներու խումբը՝ Լիքանանի կրտսերներու ախոյեանի տիտղոսին:

— 1981ին, Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի մարզիներէն Սեւակ Մկրտիչեան եւ մարզիկուհիներէն Արշօ Աստուրեան կը տիրանան Հալէպի թենիսի ախոյեանի եւ ախոյեանուհիի տիտղոսին:

— 1981ին, Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի պատրեթպոլի աղջկանց խումբը կը պահէ Հալէպի ախոյեանի տիտղոսը:

— 1981ին տեղի կ'ունենայ Լիքանանի Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Ներկայացուցչական 24րդ Ժողովը, մասնակցութեամբ՝ Պէյրութի, Պուրճ Համուտի, Ճատկյտէի, Անթիլիսի, Ճիւնիի, Թրիփոլիի, Զահլէի եւ Այնձարի Մասնաճիւղերու ներկայացուցիչներուն:

Ութ Մասնաճիւղերը միասնաբար ունէին 1411 երկսեռ անդամ՝ ու մարզիկ, իսկ սկաուտական կազմը կը հաշուէր 1475 հոգի: Ընդհանուր գումար՝ 2886:

— 1981ին, Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի պատրեթպոլի մանչերու խումբը երեք օր կը հիւրընկալուի հայաբնակ Այնձար գիւղաքաղաքին մէջ, ուր կը կատարէ մրցում մը Լիքանանի պասքեթպոլի ներկայացուցիչ խումբին դէմ եւ կը յաղթէ:

— 1981ին, Պուրճ Համուտի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղէն 41 արի-արենոյշներ տարեկան իրենց բանակումին համար կը մեկնին Քեսապ, ուր բանակավայր կ'ընտրեն Զախալճըխ լերան լանջը:

— 1981ին, Դամասկոսի Հ. Մ. Ը. Մ. ի 65 հոգինոց սկաուտական նուագախումբի առաջնորդութեամբ, տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի շքեղ տողանցք, Դամասկոսի «Զաւարեան» վարժարանի եւ Հ. Մ. Ը. Մ. ի ակումբի թաղամասերուն մէջ:

— 1981ին, Ամմանի Հ. Մ. Ը. Մ. ի պատրեթպոլի մանչերու խումբը կը տիրանայ՝ Ցորդանանի բոլոր ակումբներու մասնակցութեամբ Ամմանի մէջ կատարուած «Ազատ Արձակում»ի մրցաշարքի բաժակին:

— 1981ին, Լիքանանի Հ. Մ. Ը. Մ. ի ութ



Ճակատի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի Երեցներու փաղանգը, 1982ին:

Մասնաճիւղերու մասնակցութեամբ, Պուրճ Համուտի քաղաքապետարանի մարզադաշտին վրայ տեղի կ'ունենայ Մայիսեան մարզական փառատօն, նուիրուած՝ բազմավաստակ Հ. Մ. Ը. Մ. ական Յովհաննէս Շահինեանի յիշատակին:

— 1981ին, Անթիլիասի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը կ'ունենայ իր սեփական հողաշերտը, 3000 քառ. մեթր տարածութեամբ:

— 1982ին, տեղի կ'ունենայ Սուրիոյ Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Ներկայացուցչական երրորդ ժողովը, մասնակցութեամբ գործող Հինգ Մասնաճիւղերու ներկայացուցիչներուն, որոնք միասնաբար ունէին 3102 երկու անդամ, մարզիկ եւ սկաուտ: Հալէպ՝ 1858, Գամիլլի՝ 690, Դամասկոս՝ 362, Լամաքիա՝ 107, Քեսապ՝ 85:

— 1983ին, համաշխարհային սկաուտական 29րդ համագումարին, Տիֆրոյիթի մէջ, Լիբանանի Սկաուտական Դաշնակցութեան Դիւանի կողմէ կը մասնակցի Հ. Մ. Ը. Մ. ի Ներկայացուցիչ Միհրան Շիմշիրեան: Նոյն հանգամանքով, Շիմշիրեան 1979ին մասնակցած էր 27րդ համագումարին, Պիրմինկհամի (Անգլիա) մէջ եւ 1981ին՝ 28րդ

համագումարին, Տաքարի (Սինեկալ) մէջ:

— 1983ին, Դամասկոսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը զանազան ձեռնարկներով կը նշէ Հ. Մ. Ը. Մ. ի հիմնադրութեան 65ամեակը: Այս առիթով կազմակերպուած մարզական մրցումներուն իրենց մասնակցութիւնը կը բերեն՝ Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի Փութպոլի եւ պասքեթպոլի երկսեռ խումբերը:

— 1984ին, Պէյրութի Հ. Մ. Ը. Մ. ի փինկ-փոնկի խումբը դարձեալ կը տիրանայ Լիբանանի անհատական, զոյզի, խառն զոյզի եւ կրտսերներու ախոյեանի տիտղոսին:

— 1984ին, Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի թենիսի խումբը եւս կը տիրանայ Հալէպի եւ Սուրիոյ ախոյեանի տիտղոսներուն:

— 1985ին, Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի անուանի Փութպոլիստներէն Աւետիս Գավլաքեան կը նշանակուի Սուրիոյ Ազգային եւ Բանակի խումբերուն աւագ մարզիչ:

— 1985ին, Հալէպի մէջ տեղի կ'ունենայ Սուրիոյ շրջանի Հ. Մ. Ը. Մ. ի 56րդ նաւասարդեան Փառատօնը, 20 հազար հանդիսականներուն ներկայութեամբ:

Հալէպի, Գամիլլիի, Դամասկոսի, Լամաքիոյ, Ռաքքայի, Քեսապի եւ Լիբանանի



Լիբանանի ախոյեանութեան 9 առաջնութիւններ շահած Հ. Մ. Լ. Մ. ի արլեքները:

Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղերէն 2500 երկսեռ մարզիկներու, սկառուտական կազմերու եւ Սուրբահայ Օգնութեան Խաչի արծուիկներու փառահեղ տողանցքը կ'առաջնորդեն՝ Հալէպի, Դամասկոսի եւ Գամիլլիի Հ. Մ. Լ. Մ. ի սկառուտական նուազախումբերը:

Եղեռնի 70ամեակին եւ Մայիս նի Նահատակաց Օրուայ առիթով, հայ եւ արար նահատակներու յիշատակին, ջահը դաշտ կը բերէ եւ կաթսան կը վառէ Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ի մարզիկներէն՝ Հալէպի եւ Սուրբիոյ մէկ եւ երեք քայլ ոստումի ախոյեան Ցովսէփ Պարսումեան:

Ֆութապոլի եւ պասքեթապոլի մէջ կը յաղթեն Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ի Ա. եւ Բ. Դասակարգերու խումբերը:

Փինկ-փոնկի մէջ՝ Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի մարզիկները:

— 1985ին, Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի փինկ-փոնկի խումբը անգամ մը եւս կը տիրանայ Լիբանանի անհատական եւ զոյգի ախոյեանի տիտղոսներուն:

— 1985ին, Սուրբիոյ Հ. Մ. Լ. Մ. ի Շրջ.

Սկառուտական Խորհուրդի կազմակերպութեամբ, Քեսապի մէջ տեղի կ'ունենայ Ա. Կարգի սկառուտական հինգօրեայ դպրոցբանակում, մասնակցութեամբ Հ. Մ. Լ. Մ. ի Սուրբիոյ հինգ Մասնաճիւղերէն 73 արիարենոյշներու:

— 1985ին, Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի հեծելարշաւի խումբը կը տիրանայ Լիբանանի անկախութեան թէ՛ անհատական եւ թէ խմբային մրցումներու ախոյեանի տիտղոսին եւ բաժակին:

— 1986ին, Լիբանանի աթլէթիզմի Դաշնակցութեան կազմակերպած մրցումներուն, Հ. Մ. Լ. Մ. ի երկսեռ մարզիկները կ'արձանագրեն պատուաբեր արդիւնքներ:

Ընդհանուր դասաւորման մէջ, Հ. Մ. Լ. Մ. ի մանչերու եւ աղջիկներու խումբերը կը գրաւեն խմբային առաջնութեան առաջին դիրքը:

— 1986ին, Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի սկառուտական կազմէն 18 երէցներ, Ապրիլ 24ի Եղեռնի նահատակաց ի յարգանս, Անթիլիասի Մայրավանքէն դէպի Պիքֆա-



Ապրիլ 24ին, Հ.Մ.Ը.Մ.ի Արի-Արենոյշները Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան
Ամբիլիասի Մայրավանքի Մայր Տաճարին եւ Նահատակաց Յուշարձանին առջեւ:

յայի Նահատակաց Յուշարձան քայլարշաւ
կը կատարեն եւ ծաղկեպսակ կը զետեղեն:

Նոյն օրը, Պէյրութի էշրէֆիէ թաղա-
մասին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի շուրջ 100 սկաուտ-
ներ, Նուագախումբի առաջնորդութեամբ
եւ տողանցքով կ'երթան Կաթողիկէ Հայոց
Պատրիարքարան եւ ծաղկեպսակ կը զե-
տեղեն Նահատակաց Յուշարձանին վրայ:

— 1986ին, Զահէի Հ.Մ.Ը.Մ.ի սկաու-
տական շարքերը կը վերակազմուին ու կը
կազմակերպեն բանակում, Այնձարի մէջ,
55 նորագիրներու մասնակցութեամբ:

— 1987ին, Լիբանանի ներքին տագնա-
պին բերումով, Պաթրուն գիւղաքաղաքին
մէջ հաստատուած շուրջ 30 հայ ընտանիք-
ներու նախաձեռնութեամբ, կը հիմնուի
Պաթրունի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղը:



Եթէ հարցնելք փրկութեան նանապարհը
— աչքերս կ'ուղուին Հ.Մ.Ը.Մ.ին: Միակը
չէ այն, որ կրնայ ու պէտք է կոռուի օտա-
րութենէ ներմուծուած որոմին դէմ: Կան
ուրիշ հաստատութիւններ եւս: Բայց ոչ
նոյնիքան յարմար ու ազդու՝ բան Հ.Մ.
Ը.Մ.ը:

ՀԱՅՐ ՍՍՀԱԿ ԿՈԳԵԱՆ





Այնարի Հ. Մ. Ը. Մ. ի Խմբապետական կազմը Եղեռնի աթիւններուն մօտ, 1985ին :

— 1987ին, Եաֆայի մէջ, 26 հիմնադիր անդամներու եւ Երուսաղէմի ու Հայֆայի Հ. Մ. Ը. Մ. ի Վարչութեանց ներկայութեամբ, կը հիմնուի Հ. Մ. Ը. Մ.-Հայկաշէն Մասնաճիւղը:

1970ական թուականներու սկիզբէն ի վեր, իշխանութիւններու կողմէ Հայկաշէն Միութեան փակումէն ետք, Եաֆայի հայութիւնը զուրկ էր միութենական եւ հայկական ընկերային կեանքէ:

Եաֆայի նորակազմ Հ. Մ. Ը. Մ.-Հայկաշէն Մասնաճիւղի առաջին Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Պօղոս Ղուկասեան, Սերոբ Շոթիկեան, Գրիգոր Գալլալեան, Եղիա Լափաճեան, Վրէժ Թորոսեան, Յակոբ Վանայեան, Տիգրան Տարագճեան:

— 1987ին, Լիբանանի Անկախութեան տօնին եւ Հ. Մ. Ը. Մ. ի հիմնադրութեան 69րդ տարեդարձին առիթով, Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերու սկաուտներ, արենոյշներ եւ գայլիկներ ջահագնացութեամբ տպաւորիչ տողանցք կը կատարեն Պուրճ Համուտի հայահոծ թաղերուն մէջ:

— Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերը՝ Երուսաղէմի, Հայֆայի, Եաֆայի եւ Ամմանի մէջ, վերանորոգուած կազմակերպութեամբ, ուշագրաւ ու խանդավառող ներկայութիւն են գաղութահայ կեանքէն ներս՝ ազգային-կրօնական տօնակատարութիւններուն մասնակցելով, ընկերային եւ մշակութային ձեռնարկներ կազմակերպելով, Միջ-մասնաճիւղային եւ տեղական խումբերու դէմ մրցումներ կատարելով եւ ջերմօրէն հիւրընկալելով հեռաւոր Մասնաճիւղերէ Հ. Մ. Ը. Մ. ի մարզախումբերը եւ բանակող սկաուտական խումբերը:

Արաբ-իսրայէլեան պատերազմի եւ քաղաքական կոիւններու հարկադրանքին տակ, Հ. Մ. Ը. Մ. ականներ զինեալ պահակները կ'ըլլան Երուսաղէմի հայոց Սրբոց Յակոբեանց Միաբանութեան վանքապատման կալուածներու, սրբավայրերու եւ անձնուիրաբար հայաբնակ թաղերու ինքնապաշտպանութեան առաջին գծի վրայ կը գտնուին:

— Սուրիոյ մէջ մարզական գործունէութիւնը պետականացած է: Այսուհան-

Հ. Մ. Ը. Մ. ի 70ԱՄԵԱԿ — ՑՈՒՇԱՏԵՏՐ

ԼԻԲԱՆԱՆԻ Հ. Մ. Ը. Մ. ի ՄԱՍՆԱՑԻՒՂԵՐԵՆ՝ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԵՐ



Պուրճ Համուտի խումբը



Պուրճ Համուտի խումբը



Ճիւթի խումբը



Թրիփոլիի խումբը



Ճտէյտէի խումբը



Անդիլիասի խումբը

Հ. Մ. Ը. Մ.-ի 70ԱՄԵԱԿ — ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՍՈՒՐԻՈՑ Հ. Մ. Ը. Մ.-ի ՄԱՍՆԱՑԻՂԵՐԵՆ՝



Դամակոսի պասիբեթպոլի խումբը



Դամակոսի ֆութպոլի խումբը



Լաբաքինյ պասիբեթպոլի խումբը



Լաբաքինյ ֆութպոլի խումբը



Գամիշլիի ֆութպոլի խումբը



Գամիշլիի պասիբեթպոլի խումբը

Հ. Մ. Ը. Մ. ի 70ԱՄԵԱԿ — ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՍՈՒՐԵՈՑ Հ. Մ. Ը. Մ. ի ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ-ԲԱՆԱԿՈՒՄ՝ ՔԵՍԱՊԻ ՄԷՋ, 1985ԻՆ:



Բանակումի ղեկավար կազմը Լաբաթիոյ ներկայացուցիչներուն հետ



Գամիշլիի ներկայացուցիչներուն հետ



Քեսապի ներկայացուցիչներուն հետ:



Հալեպի ներկայացուցիչներուն հետ

Հ. Մ. Ը. Մ. ի Ա. ՐԻ-Ա. ՐԵՆՈՅԵՐԼ ԿԸ ՏՈՂԱՆՑԵՆ՝
ՀԱՅԱԲՆԱԿ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԵջ (Լիբանան)



դերձ, Հալէպի Հ. Մ. Լ. Մ.ը կը շարունակէ իր առաքելութիւնը, ու եթէ ակամայ չունի իր նախկին փայլուն ամբողջականութիւնը, սակայն կը գոյատեւէ իր ազգային պարտականութիւններու վսեմ պատնէշին վրայ:

Միւս Մասնաճիւղերը՝ Դամասկոսի, Լաթաքիոյ, Գամիլլիի, Քեսապի, կը գործեն ու կը գոյատեւն իրերւ Հ. Մ. Լ. Մ.ի շարքերուն առանցքը կազմող սկառտական կազմակերպութիւններ:

Ազգային հպարտութիւն ներշնչած անմոռանալի յիշատակներով կապուած է Հ. Մ. Լ. Մ.ին սուրիահայութիւնը, մանաւանդ Հալէպի, «Հայնոց Հալէպի», ինչպէս ըսած էր Շաւարչ Միսաքեան, երբ 1948ին ականատես եղած էր Հ. Մ. Լ. Մ.ի Միջ-Մասնաճիւղային ողիմպիական մրցումներու կազմակերպչական եռանդուն աշխատանքներուն եւ 20,000 հանդիսականներու ներկայութեան, 3000 Հ. Մ. Լ. Մ. ականներու փառահեղ տողանցքին: Նոյն այդ օրերուն իր յորելեանին առիթով ներկայ եղած էր եւ իր հիացումը յայտնած էր նաեւ մերժանուն գրագէտ-քննադատը՝ Ցակոր Օշական:

Հ. Մ. Լ. Մ.ի տարեգրութեան մէջ որքա՞ն սրտաշարժ դրուագներ կան: Ցուզումի ի՞նչ պահեր ապրուած են, երբ ոճրածին թուրքի ճիրաններէն ազատագրուած անչափահաս բեկորներ՝ արար հիւրընկալ ու բարեսիրտ ընտանիքներու մէջ հասակ առնելէ ետք, անսալով իրենց սրտի զարկերակին, դիմած են Հ. Մ. Լ. Մ.ին, յատկապէս Սուրիոյ Մասնաճիւղերուն, ուր գրկաբաց ընդունուած են եւ ուր Հ. Մ. Լ. Մ.ի ստեղծած հայաբոյր մթնոլորտին մէջ վերագտած են իրենց ցեղային ինքնութիւնը:

Ամէնուրեք ազգային զգացումն է որ

մարզիկները կապած է Հ. Մ. Լ. Մ.ին: Այդ ոգիով է որ գործած են ու կը շարունակեն գործել Հ. Մ. Լ. Մ. ականները Սուրիոյ մէջ, ինչպէս հաստատած են Միջ-մասնաճիւղային մրցումներուն եւ տողանցքին ներկայ եղած մեր ազգային եւ քաղաքական ղեկավար դէմքերը՝ զօր. Դրօ, Սիմոն Վրացեան եւ ուրիշներ:

— Հ. Մ. Լ. Մ.ը Լիբանանի մէջ, հակառակ 1975էն սկսեալ եւ 13 տարիներէ ի վեր շարունակուող քաղաքացիական ներքին կոիւներուն եւ տնտեսական տագնապին, կը շարունակէ իր առաքելութիւնը հին ու նոր Մասնաճիւղերով՝ Պէյրութի, Պուրճ Համուսի, Ճտէյտէի, Անթիլիասի, Ճիւնիի, Պաթրունի, Թրիփոլիի, Զահէի եւ Այնձարի:

Հ. Մ. Լ. Մ. ականներ՝ ղեկավար, անդամ, մարզիկ եւ սկառտական կազմեր, ամբողջական նուիրումով իրենց մասնակցութիւնը բերին, կը բերեն հայկական թաղերու եւ ակումբներու հսկողութեան, ժողովուրդի մատակարարման, վիրաւորներու օգնութեան հասնելու եւ այլ բազմատեսակ զոհողութիւն պահանջող աշխատանքներուն:

Հ. Մ. Լ. Մ.ը կը մնայ նաեւ մարզական ոգին Լիբանանի: Գրեթէ բոլոր մարզախաղերու գլխաւոր մրցակիցը Լիբանանի համայնքները ներկայացնող մարզական բոլոր ակումբներուն, մանաւանդ անոնց միջեւ գործակցութիւն ստեղծողը, առաջին մրցակիցը, այլապէս, ինչպէս յաճախ հաստատուած է մարզական եւ պետական ղեկավարներու կողմէ, առանց Հ. Մ. Լ. Մ.ի տժգոյն կը մնար, տժգոյն կը մնայ Լիբանանի մարզական կեանքը:



ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Հ. Մ. Լ. Մ. հայ արիներ,
Հերոսներու վերջին ժառանգ,
Առողջ, զուարք ու անվեհեր,
Մենք կը կերտենք մարմին ու կամք:

Օտար աշխարհ, օտար դաշտեր,
Բայց հայրենի վեհ դրօշին տակ.
Պատիւն հայուն բոնած միշտ վեր՝
Կը շահինք փառք ու յաղթանակ:

Հ. Մ. Լ. Մ. Յոյսի սերունդ
Չունինք դադար, չունինք նահանջ,
Դէպի լեռներ լուսածնունդ
Մենք յաղթաքայլ կ'երթանք յառաջ:

Մ. ԻՇԽԱՆ

ԵՐԳ ՇՔԵՐԹԻ

(Հ. Մ. Լ. Մ. ի Սերունդին)

Անցէ՞ք հպարտ, անցէ՞ք խրոխտ ու ժպտուն,
Դուք ժառանգներ մեր փառապանծ անցեալին,
Զեզմով հիմա, ձեր շարքերուն հետ եռուն
Կը տողանցէ երազն անմահ հայ ցեղին:

Պայքարներու եւ խոյանքի ախոյեան՝
Ձեզ կ'ողջունեն սրտերը մեր բոցավառ.
Յաղթանակի լոյս դափնիներ բազմազան
Կը պսակեն ձեր նակատները պայծառ:

Դո՞ւք էք ներկան, ձեր հաւատքով տիրական
Գարնանային ձեր ծաղկումով յորդառատ.
Դո՞ւք էք նաև մեր երջանիկ ապագան՝
Փառքէ ի փառք ձեր վերելքով անվհատ:

Դարձէք բանակ, դարձէք հեղեղ ու անցէք
Օտարութեան նամրաներէն այս բոլոր.
Զմոլորի եւ չկասի՛ թող երբե՛ք
Յառաջընթաց երթը կեանքին ձեր հզօր:



ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ

Բանաստեղծ, դաստիարակ: Մանկութենէն
Հ. Մ. Լ. Մ. ական: Ան Հ. Մ. Լ. Մ. ին նուիրեց
Երկու բանաստեղծութիւնները:

Մ. ԻՇԽԱՆ



Գարեգին Բ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ

Եօթանասունամեակը պիտի շարունակուի: Նոր թուանշաններ պիտի գան աւելնալու եօթանասունին վրայ: Զգիտեմ, ո՞ր թիւին պիտի հասնի Հ.Մ.Լ.Մ.ի յառաջգնացութիւնը: Վստահաբար, շա՞տ աւելի բարձր թիւերով պիտի հանգրուանուի ան, առանց սակայն վերջակիտուելու...:

Այնքան ատեն, որքան իբրեւ հայ կ'ապրինք եւ մանաւանդ որոշած ենք հայօրէն ապրիլ՝ անպայման Հ.Մ.Լ.Մ.ը եւ անոր նման երիտասարդութիւն կազմաւորելու արուեստին սպասարկու միութիւնները պիտի ապրին մեր մէջ: Որովհետեւ, Հ.Մ.Լ.Մ.ը հայ երիտասարդութեան մէջ կը սաղմնաւորէ եւ կը կերպաւորէ՝

ա) Կարգի ու կանոնի կենցաղակերպը:

Եւ չմոռնանք, որ առանց կարգի ու կանոնի ամրաշէն ազդակներուն՝ մարդիկ չեն կրնար ազգ կազմել:

բ) Պարտականութեան եւ պատասխանատութեան գիտակցութիւնը:

Եւ չմոռնանք, որ առանց անոր՝ ոեւէ հաւաքականութիւն թոյլ ընկերութեան մը կը վերածուի:

գ) Ազգային արժանապատութեան զգացումը:

Եւ չմոռնանք, որ առանց անոր՝ կամ սին հպարտութեան եւ կամ անտարբեր, տժգոյն հանրութեան մը կը վերածուի մեր ազգութիւնը:

դ) Արիութեան եւ ասպետականութեան ոգին:

Եւ չմոռնանք, որ առանց անոր՝ տերեւի նման շարժող եւ ամէն հովի առջեւ տատանող գոյութեան մը կը դատապարտուի հայութիւնը:

ե) Ծառայութեան եւ նուիրումի պատրաստակամութիւնն ու յանձնառումը:

Եւ չմոռնանք, որ առանց անոր՝ անբովանդակ, կամապաշտ ու անձնակեղրոն անձերու գումարի մը կը վերածուի հայկազեան ցեղը:

զ) Բարձրանալու եւ բարձրացնելու նախանձախնդրութիւնը:

Եւ չմոռնանք, որ առանց անոր՝ գետնաքարչ, տափակ եւ յետսագնաց ընկերութեան մը պատկերին կը սահմանուի թորգումայ ազգը:

է) Աստուծոյ եւ հայրենիքի գերազանցութեան ըմբռնումը:

Եւ չմոռնանք, որ առանց անոր՝ ուժաքամ ու դատարկ խաժամութի մը կը փոխակերպուի Լուսաւորչի եւ Վարդանի սերունդը:

Ահա թէ ինչո՞ւ Հ.Մ.Լ.Մ.ի եօթանասունամեակը վերստին մկրտութեան աւագան մը պէտք է դառնայ, եւ որուն ջուրին մէջ խառնուած պէտք է ըլլայ եօթնազան հոգի-հիւթերով շինուած այն միւռոնը, որ մեր ազգի հոգիին հարազատ կաթն է:

ԳԱՐԵԳԻՆ Բ.
Կաթողիկոս Մեծի Տանն Կիւիկիոյ

Ի Ր Ա Փ

— 1942էն ի վեր, իրաքի մէջ գոյութիւն ունեցած են մարզական խումբեր, Հայ Կարօտելոց ինսամակալութեան հսկողութեան տակ:

Հ.Մ.Լ.Մ.ը կը հիմնուի 1948ին, մայրաքաղաք Պաղտատի արուարձաններէն հայաբնակ Նորաշէն աւանին մէջ, մանչերու եւ աղջիկներու Մասնաճիւղերով: Ժամանակ մը յետոյ, նոյնանման երկու Մասնաճիւղեր կը հիմնուին նաեւ մայրաքաղաքին մէջ:

Հիմնադրութենէն ի վեր, Հ.Մ.Լ.Մ.ը Պաղտատի մէջ ունի ֆութպոլի, պասքեթպոլի, վոլիվոլի խումբեր եւ դաշտային խաղերու մասնակցող մարզիկներ:

Հ.Մ.Լ.Մ.ի խումբերը բարձաթիւ յաղթանակներ տարած են տեղական, պետական եւ զինուորական խումբերու դէմ եւ լաւագոյն մարզիկները ընդունուած են պետական եւ յատկապէս զինուորական խումբերու մէջ:

— 1960-61 թուականներէն սկսեալ մինչեւ իրաք-իրան պատերազմի սկսիլը, Հ.Մ.Լ.Մ.ը Մասնաճիւղեր ունէր նաեւ հայաբնակ Մուսուլ եւ Քերքուկ քաղաքներուն մէջ:

Մուսուլի Մասնաճիւղը ունեցած է 150էն մինչեւ 200 անդամ, իսկ Քերքուկի Մասնաճիւղը՝ 100 անդամ: Երկու Մասնաճիւղերն ալ ունեցած են ակումբ եւ պաս-



Պաղտատի Հ.Մ.Լ.Մ.ի պասքեթպոլի խումբը, 1960ին:
Զախէն աջ՝ Հայրապետ Շահոյեան, Նորայր Աւագեան (մարզական պատասխանատու), Ռազմիկ Աւագեան, Հիմաք Մուհամատ (պասքեթպոլի մարզիչ), Վարանդ Մարգարեան, Բարգէն Ասատուրեան, Սերոք Տէր Պողոսեան, Ճագ Ստեփանեան, Խուտիկ Շահոյեան, Պերճ Ցովակիմեան:



Պաղտատի Հ. Մ. Ը. Մ. ի վոլիպոլի աղջկանց խումբը, 1960ին:



Պաղտատի Հ. Մ. Ը. Մ. ի պասխեթպոլի մանչերու Ա. դասակարգի խումբը,
1963ին:



Պաղտատի Հ.Մ.Լ.Մ.ի առաջին Սկաուտական Խորհուրդը, 1968ին:
Նստած, ձախէն աջ՝ Երջանիկ Պապայեան, Յարութիւն Բարսեղեան, Վարդգես
Օհաննեսեան:

Ոտքի, ձախէն աջ՝ Սողոմոն Իշխանեան, Աննա Քիւրքնեան, Հրայր Արզումանեան:

Քեթպոլի, վոլիսպոլի եւ ֆութպոլի խումբեր:

— 1960ին, Պաղտատի մէջ Հ.Մ.Լ.Մ.ը նախ կ'ունենայ սկաուտական երէցներու խումբ: Այնուհետեւ կ'ունենայ Սկաուտական Խորհուրդը ու կը կազմուին սկաուտներու, գայլիկներու եւ մրջնիկներու միաւորներ, որոնք ակումբէն ներս կ'ունենան սկաուտական եռուն գործունչութիւն, կը կազմակերպեն խարոյկահանդէսներ եւ բանակումներ:

— 1960էն սկսեալ, ամէն տարի, Պաղտատի մէջ տեղի կ'ունենան Միջ-մասնաճիւղային մրցումներ, մասնակցութեամբ՝ Պաղտատի, Մուսուլի եւ Քերքուկի Մասնաճիւղերու երկսեռ մարզիկներուն: Կը կատարուին պասքեթպոլի եւ վոլիսպոլի մանչերու եւ աղջիկներու խումբերու, փինկ-փոնկի եւ թեթեւ աթլէթի երկսեռ մարզիկներու եւ ֆութպոլի խումբերու մրցումներ, որոնք վերջ կը գտնեն մասնակցող Հ.Մ.Լ.Մ.ական երկսեռ մար-

զիկներու եւ սկաուտական կազմերու չքեղ տողանցքով:

— 1962ին, Պաղտատի Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտական կազմէն 10 երէց սկաուտներ կրմասնակցին Լիրանանի Հ.Մ.Լ.Մ.ի Շրջ. Վարչութեան եւ Սկաուտական Խորհուրդի Լեռնալիրանանի մէջ կազմակերպած Միջմասնաճիւղային բանակումին:

— 1972ին, Պաղտատի մէջ տեղի կ'ունենայ համաարաբական երկիրներու ճեմպորի, ուր իրաքի, Սոււրիոյ եւ Լիրանանի սկաուտական պատուիրակութեանց մաս կազմած Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտները իրենց կարգապահութեամբ եւ սկաուտական գիտելիքներով ուշագրաւ ներկայութիւն կ'ըլլան եւ կ'արժանանան յատուկ գնահատանքի ընդհանուր խմբապետութեան կողմէ:


— 1974էն մինչեւ 1985, Հ.Մ.Լ.Մ.ր իրաքեան կառավարութեան կողմէ կ'անուանուի «Մաստուն»:

— Հ. Մ. Ը. Մ. Ի Պաղտատի մէջ ունի իր սեփական ակումբը, գրադարանով: 1959ին, անդամներուն թիւը հասած է 500ի եւ ապա մինչեւ 600ի:

Ազգային կեանքէն ներս, Պաղտատի հայոց ոգին հանդիսացող Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան առընթեր, բեղուն եղած է Հ. Մ. Ը. Մ. Ի գործունէութիւնը: Միրայօժար ընդունած է ազգային վարժարաններու մարմնամարզութեան դասաւանդութիւնը, կազմակերպած է հրապարակային եւ ընկերային ձեռնարկներ, տուած է թատե-

րական ներկայացումներ եւ իր բոլոր ձեռնարկներուն հասոյթը յատկացուցած է հայ չքաւոր սաներու կրթաթոշակին:

Ներկայիս, Պաղտատի մէջ, Հ. Մ. Ը. Մ. Ի իբրեւ Մեկուսի շրջան, բացի իր սեփական ակումբէն, ունի ընդարձակ հողամաս մը, նուիրուած՝ կառավարութեան կողմէ: Վարչութիւնը եւ նուիրեալ անդամներ եռանդուն գործի լծուած են հողամասը վերածելու նորահաս սերունդներն ու երիտասարդութիւնը համախմբող հայատրոփ մարզավայրի մը:



ՔՈՒԵՅԹ

— 1965էն սկսեալ, Քուէյթ հաստատուած Հ. Մ. Ը. Մ. ական խումբ մը հայ մարզիկներ կը կազմեն ֆութպոլի խումբ, որ փայլուն յաղթանակներ կը տանի անդիհական խումբերու դէմ: Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի հիմնումէն ետք, խումբը հին ու նոր մարզիկներով կը միանայ Հ. Մ. Ը. Մ. ին:

— Քուէյթի մէջ, Հ. Մ. Ը. Մ. ի կազմակերպումը սկսած է 1970ական թուականներուն, Սուրիայէն եւ Լիբանանէն Քուէյթ հաստատուած նախկին Հ. Մ. Ը. Մ. ականներու նախաձեռնութեամբ, Ազգային Վարժարանի մէջ սկաուտական խումբերու կազմութեամբ: Սակայն, պետական պարտաւո-



Հ. Մ. Ը. Մ. ական ֆութպոլիստներու նախաձեռնութեամբ կազմուած,
Քուէյթի հայ մարզիկներու ֆութպոլի խումբը, 1965ին:



Քուէյթի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի ֆութպոլի խումբը, 1988ին:

բութեամբ, շարժումը կոչուած է Քուէյթի Հայ Արիներու եւ Արենոյշներու Միութիւն, որ կարձ ժամանակի մէջ ունեցած է աւելի քան 300 անդամ:

— 1978ին, Միութիւնը ընդունուելով Հ. Մ. Ը. Մ. ի ընտանիքէն ներս, Արի-Արենոյշներով իր մասնակցութիւնը կը բերէ Յունաստանի մէջ Հ. Մ. Ը. Մ. ի Համագաղութային Սկառուտական Ա. Ընդհ. Բանակումին, 1980ին՝ Փարիզի մէջ, Համագաղութային Սկառուտական Բ. Ընդհ. Բանակումին:

— Այսուհանդերձ, Հ. Մ. Ը. Մ. ը իբրեւ երիտասարդութեան պահանջք, իբրեւ հայապահանման եւ հայակերտման շղթային թանկագին օղակներէն մին, պատկան իշխանութեանց քաջալերանքով, նախապատրաստական աշխատանքներէ ետք, 1983ին կը գումարուի Քուէյթի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի հիմնադիր ժողովը, 150 անդամ-անդամուհիներու մասնակցութեամբ:

— Քուէյթի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի

առաջին Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Մարտիրոս Աւետիսեան, Մանուէլ Զարշաֆեան, Անդրանիկ Գոճապաշեան, Ներսէս Քիլիճեան, Սարգիս Խաչատուրեան, Յարութիւն Քէօսէյեան, Արրահամ Մարտիրոսեան, Անդրանիկ Քէօշկէրեան, Ներսէս Խաչատուրեան:

Տարի մը յետոյ, 1984ին, կ'ունենայ ֆութպոլի եւ պասքեթպոլի մանչերու եւ աղջկներու խումբեր եւ 325 գայլիկ, արի, արենոյշ:

— 1986ին, Քուէյթի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղէն Արի-Արենոյշներ կը մասնակցին, Լոնտոնի մէջ, Հ. Մ. Ը. Մ. ի Համագաղութային Սկառուտական Գ. Ընդհ. Բանակումին:

— 1983էն ի վեր, իբրեւ Մեկուսի շրջան, Քուէյթի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը սկառուտական կազմով եւ երկսեռ մարզիկներով ու անդամներով, իր գործօն մասնակցութիւնը կը բերէ քուէյթահայ գաղութի ազգային կեանքին:

Ի Ր Ա Ն

— Իրանահայ սկաուտական առաջին կազմակերպութիւնը կը հիմնուի 1919ին, նոր Զուղայի մէջ, նախաձեռնութեամբ Կալկաթայի Մարդասիրական Ճեմարանէն շրջանաւարտ, սկաուտապետ Յովսէփ Արգարեանի:

— 1919ին, Երեւանէն Թաւրիզ կուզայ սկաուտ աստիճանաւոր Համլէթ Նազարեան, ու կը կազմէ սկաուտական միաւոր: Սակայն, քաղաքական պայմաններու բերումով, միաւորը կարելիութիւն չունենար կազմակերպութեան վերածուելու:

— 1923ին, Յովսէփ Արգարեան սկաուտական կազմակերպութիւն կը ստեղծէ նաեւ Սովորանարադի մէջ, այժմ Արաք: Եւ այնուհետեւ, սկաուտական միաւորներ կը

կազմուին եւ կազմակերպութիւններու կը վերածուին Իրանի գրեթէ բոլոր հայաշատ քաղաքներու մէջ: 1923էն տասնամեակ մը յետոյ, Արաքի մէջ կազմակերպական նուիրեալ աշխատանք կը տանին նաեւ Լեւոն Մեհմերեան, Անուշաւան Գրիգորեան եւ Կարապետ Ոսկանեան:

— 1924ին, Թաւրիզի մէջ, Հայոց Կուլտուրական Միութեան նախագահ Արամ Ալ-



ՅՈՎՍԷՓ ԱՐԳԱՐԵԱՆ



ԱՐԱՄ ԱԼՅԱՌԵԱՆ



Թաւրիզի սկաուտական խումբը, 1926ին: Կեդրոնը նստած՝ Արամ Ալչուջեան:

չուջեան կը կազմէ սկաուտական միութիւն, որ կը դառնայ թաւրիզի Հայ Արիներու կազմակերպութեան կորիզը, որուն շուրջ բոլորուած խումբ մը նուիրեալներ աշխատանք կը տանին եւ 1926ին տեղի կ'ունենայ երդման արարողութիւն եւ մարզահանդէս: Սկաուտական գօտիին վրայ կը գրուի Հ. Մ. Լ. Մ. ի «Բարձրածի՛ր, Բարձրացու՛ր» վեհ նշանաբանը:

Այնուհետեւ, 1925էն սկսեալ, Հ. Մ. Լ. Մ. ի կը սկսի ճանչցուիլ իրրեւ ազգային մարզական կազմակերպութիւն:

— 1930ին, Նոր Ջուղայի մէջ սկաուտական նոր շարժումը կը դեկավարէ Պարթեւ Մանգասարեան: Կը պատրաստէ սկաուտ աստիճանաւորներ, կը կազմակերպէ երդման արարողութիւն, նուազախումբ, ֆութապոլի խումբեր, Արենոյշներու խումբեր եւ բանակում-զբօսարշաւներ Ապահան քաղաքի շրջակայքը, դէպի Շահրեսիմանաք, Զեշմոլթանի, Նաջաֆաբադ եւ Փերիոյ զաւաոր:

— Արի-Արենոյշներու կազմակերպութեան մէջ բեղուն գործունէութիւն կ'ունենան՝ Խաչատուր Գրիգորեան, Գասպար Յակոբեան, Արմենակ Աֆթանդիլեան, Գագիկ Բարխուդարեան, Միքայէլ Ստեփանեան, Ժորէս Ռոկանեան, Ռուբիկ Գրիգորեան (Հանրայայտ երաժիշտը), Էմիլ Աֆրիկեան, Փութպոլիստ եւ ակրոպատ խումբի պետ Ռաֆֆի Բարխուդարեան, Վարդան Մեհրաբեան եւ ուրիշներ:

— 1929ին, Արամ Ալչուջեանի հրաւերով եւ նախագահութեամբ կը կայանայ ժողով մը, նպատակ ունենալով՝ թաւրիզի մէջ կազմել Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղ, նկատի ունենալով, որ Արի-Արենոյշներու կազմակերպութիւնը միայն դպրոցականներ կ'ընդունէր իր շարքերուն մէջ: Դպրոցական տարիքէն վեր եղողները եւ արհեստաւորները դուրս կը մնային:

Ժողովին կը մասնակցին եօթը նախկին սկաուտներ: Կը կազմուի Յ Հոգինոց յանձնախումբ մը, արձանագրութիւններ կատարելու համար:



ՌՈՒԲԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Երկրորդ ժողովին կը մասնակցին 15 հոգի: Կ'ընտրուի Թաւրիզի Հ.Մ.Լ.Մ.ի նորակազմ Մասնաճիւղի առաջին Վարչութիւնը — Աշոտ Պետրոսեան, Բարգէն Յարութիւնեան, Ստեփան Թունեան, Էսպերո Տէր Յովհաննիսեան եւ Արմենակ Զարգարեան: Վարչութեան մաս կազմելու կը հրաւիրուի նաեւ Խաչիկ Թովմասեան, փոխարինելով զինուորական ծառայութեան կանչուած Աշոտ Պետրոսեանը:

— 1930ին, Թաւրիզի Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղը կը գումարէ իր երկրորդ Ընդհ. Ժողովը, 41 անդամներու մասնակցութեամբ: Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Խաչիկ Թովմասեան, Բարգէն Յարութիւնեան, Ստեփան Թունեան, Էսպերո Տէր Յովհաննիսեան, Լեւոն Բաբայեան, Երուանդ Յովսէփեան, Արամ Ալչուջեան:

Նորընտիր Վարչութիւնը կապ կը պահէ Փարիզի Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղին հետ:

— 1930ին, Փարիզի մէջ կը գումարուի Հ.Մ.Լ.Մ.ի Պատգամաւորական Ընդհ. Ժողով: Ընդհանուր կենդրոն մը ստեղծելու նպատակով, պատգամաւորի իրաւունքով ժողովին կը մասնակցի եւ Թաւրիզի Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղը կը ներկայացնէ Ֆրանսահայ գրագէտ Շաւարչ Նարդունի:



ՇԱՒԱՐՉ ՆԱՐԴՈՒՆԻ

— Թաւրիզի Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղը կը գործէ պատուոյ հովանաւորութեամբ Ասրպատականի Հայոց Թեմի առաջնորդ Ներսէս արքեպակ. Մելիք Թանգեանի:

— 1930ին, Ա. Արզումանեանի ջանքերով, Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղ կը հիմնուի Ռաշտի մէջ, որ կը կապուի Թաւրիզի Հ.Մ.Լ.Մ.ին ու կը գործէ անոր հետ խորհրդակցար: Աշխատանքներ կը տարուին Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղեր հիմնելու նաեւ Թեհրանի, Սպահանի, Մաշաղի, Համատանի եւ Քիրմանշահի մէջ:

— Ռաշտի Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղը Աշոտ Սաղադելեանի, Համազասպ Նազարեանի եւ այլոց աշխատանքով կը գործէ մինչեւ 1936, մինչեւ հայ դպրոցներու փակումը:

— Թաւրիզի Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղը իր հիմնումէն սկսեալ կ'ունենայ ֆութպոլի եւ պասքեթպոլի խումբեր եւ մարմնամարզի ու թեթեւ աթլէթի հետեւող մարզիկներ: Ֆութպոլի Ա. խումբը լաւագոյն դիրքը կը գրաւէ Թաւրիզի ֆութպոլի խումբերու դասաւորման մէջ:

— 1931ին, Թաւրիզի Հ.Մ.Լ.Մ.ի անդամներուն թիւը կը հասնի 82ի: 1933էն սկսեալ, Վարչութեան առընթեր կը գործեն

Սկառուտական բաժանմունքի եւ Մարզական բաժանմունքի Վարչութիւններ:

— 1933ին, Թաւրիզի Հայ Արիներու Կազմակերպութեան կեղը. Վարչութիւնը — Սարգիս Յարութիւննեան, Ռուբիկ Գրիգորեան, Վարդան Մեհրաբեան, Վահագն Յարութիւննեան, Դերիկ Արքահամեան, Անդրանիկ Գալստեան, Բարգէն Թ. Եղիա-

զարեան — կապի մէջ կը մտնէ Թաւրիզի Հ. Մ. Ը. Մ. ի Վարչութեան հետ եւ պաշտօնապէս կը դառնայ Հ. Մ. Ը. Մ. ի Ատրպատականի Մասնաճիւղ:

Հայ Արիներու Կազմակերպութեան արի-արենոյշներու թիւն էր՝ 342, վարիչ-խմբապետներու կազմը՝ 47: Գումար՝ 389:

— 1932ին, Թաւրիզի Հայ Արիներու



Թաւրիզի Հ. Մ. Ը. Մ. ի Վարչութիւնը, 1930ին:
Զախէն աջ՝ Ստեփան Թունեան, Երուանդ Ցովսէկիեան, Էսպիր Տէր Ցովհաննիսեան,
Արամ Ալշուցեան, Խաչիկ Թովմասեան, Բարգէն Յարութիւննեան, Լեւն Բարայեան:



Թաւրիզի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի պատույ հովանաւոր Առրաջատականի
Հայոց առաջնորդ Ներսէս արքեպիսկ. Մելիք Թանգեան, հիմնադիր ու
երեց անդամներ, վարչականներ, խմբապետներ, օգնականներ եւ տասնապետներ:



ՆԵՐՍԻՍ ԱՐՔ. ՄԵԼԻՔ ԹԱՆԳԵԱՆ

Կազմակերպութենէն եւ Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղէն խումբ մը մարզիկներ, Խաչատուր Գրիգորեանի ղեկավարութեամբ, քառասնօրեայ շրջապտոյտ մը կը կատարեն դէպի Ղարադաղ:

Խումբը յաջորդաբար կ'այցելէ Մեշափարա եւ Մնջան շրջաններու հայաբնակ մեծ ու փոքր գիւղերը — Նորաշէն, Լիւմա, Ողան, Վինան, Քարագլուխ, Սեւահող, Նեփըշտ, այնուհետեւ Դղմարի շրջանի Խանագեան, Ղուլլուղի, Սարգու, Ղվաղ, Ուրգիւթուն, Աղաղան եւ Աղամուք գիւղերը, ապա Մուժանրար ամարանոցը ու անկէ վերադարձ՝ թաւրիդ:

— 1935ին, արեւելեան Ատրպատականի կրթական նախարարութեան յարուցած դժուարութիւններուն հետեւանքով, հար-

կադրաբար, թաւրիդի Հ. Մ. Ը. Մ. ի կը դադրի իր առաքելութիւնը շարունակելէ:

— 1930էն 1935, թաւրիդի Հ. Մ. Ը. Մ. ի յաջորդական Վարչութիւններուն մէջ աշխատանք կը տանին նաեւ՝ Ժիրայր Մարտիրոսեան, Արշաւիր Ռոկանեան, Սուրէն Մամեան, Արտաւազդ Տէր Յարութիւննեան, Նաւասարդ Նազարեան, Ռուբիկ Գրիգորեան, Վահագն Յարութիւննեան, Անդրանիկ Գալստեան, Եփրեմ Մ. Գասպարեան, Բաբգէն Թ. Եղիազարեան, Դերիկ Արքահամեան, Արսէն Մամեան, Արտեմ Բեջաննեան, Զարեհ Սարաճեան, Բաֆֆի Բարդուդարեան, Նորայր Յարութիւննեան, Աւետիս Ստեփաննեան, Էղուարդ Աստուածատրեան, Սարգիս Յարութիւննեան, Վարդան Մեհրաբեան, Գարեգին Շահնազարեան, Օշին Յակոբեան, Յարութիւն Զաքարեան, Սուրէն Եգաննեան եւ ուրիշներ:

— 1929-1930 տարեշրջանին, թաւրիդէն թեհրան կը հրաւիրուի սկառուտ խմբապետ Բաբգէն Դ. Եղիազարեան, «Հայկազեան» վարժարանի Հոգաբարձութեան կողմէ, պաշտօնավարելու իրրեւ մարզանքի ուսուցիչ, նաեւ կազմելու սկառուտական խումբեր եւ պատրաստելու աստիճանաւորներ:

— Բաբգէն Դ. Եղիազարեանի խմբապետութեամբ՝ «Հայկազեան» վարժարանի աշակերտներէ եւ արտադպրոցականներէ սկառուտական խումբեր կը կազմուին, որոնք կ'ունենան սկառուտական համազգեստ, գօտիներու վրայ կը գրուին Հ. Մ. Ը. Մ. ի «Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր» նշանաբանը:

— Խմբապետի ղեկավարութեամբ, տեղի կ'ունենան 300 արի-արենոյշներու երգման հանդիսաւոր արարողութիւն, մարզահանդիսներ, շրջապտոյտներ, մինչեւ անգամ սկառուտները օգնութեան կը փութան Սալմաստի երկրաշարժի աղէտեալներուն:

— 1931ին, Բաբգէն Դ. Եղիազարեանի նախաձեռնութեամբ, թեհրանի մէջ կը կազմուի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղ:

Նորակազմ Մասնաճիւղը առաջին իսկ տարին կ'ունենայ 35 մարզիկ: Վարչութեան նախազահ կ'ընտրուի Բաֆֆի Ներսիսեան,



Թաւրիգի Հ. Մ. Լ. Մ.ի ֆութպոլի Ա. խումբը, 1935ին:
Նստած, ձախէն աջ՝ Վահագն Յարութիւնեան, Յովսէփ Եւ Սուրէն:
Մունկի, ձախէն աջ՝ Արսէն Մամեան, Արշաւիր, Զարեհ Սարանեան:
Ոտքի, ձախէն աջ՝ Ռուրիկ Պատմագրեան, Հոմեր Յովսէփեան, Սուրէն, Պասկիեւիչ,
Բաֆֆի Բարիխուղարեան:

քարտուղար՝ Արծրունի Մկրտչեան, գանձապահ՝ Գուրգէն Մինասեան: Ակառւտական գործի ղեկավարութիւնը կը ստանձնէ Բարգէն Եղիազարեան:

— Թեհրանի Հ. Մ. Լ. Մ.ի Վարչութիւնը կապի մէջ կը մտնէ Փարիզի Հ. Մ. Լ. Մ.ի Վարչութեան հետ, իբրեւ կեղրոնի, պաշտօնապէս ճանաչում ստանալու համար, կապի մէջ կը մտնէ նաեւ Թաւրիգի Հ. Մ. Լ. Մ.ի Մասնաճիւղի Վարչութեան հետ, գործակցելու համար:

— 1932ին, Թեհրանի Հ. Մ. Լ. Մ.ի Մասնաճիւղի Վարչութեան եւ Արիներու Խորհուրդի կազմակերպութեամբ եւ ղեկավարութեամբ ընդհանուր սկառւտապետ Բաբգէն Եղիազարեանի, տեղի կ'ունենայ արշաւ-շրջապտոյտ դէպի Թեհրանէն հիւսիս, 5 մղոն հեռաւորութեամբ՝ Նիաւարան գիւղը:

— Թեհրանի Հ. Մ. Լ. Մ.ի Մասնաճիւղը բեղուն գործունէութիւն կ'ունենայ մինչեւ 1936, երբ պետական հրահանգով՝ Պարս-



ԲԱԲԳԻՆ Դ. ԵՂԻՍԱԲԵՏ

կաստանի մէջ կը փակուին հայկական Միութիւններն ու դպրոցները:

— 1944ին, Պէյրութի մէջ ծառայած սկառուտապետ եւ մարզիչ Արտաւագդ Հաճեան, Հ. Մ. Լ. Մ. ը վերակազմելու յամառ աշխատանք կը տանի Թեհրանի մէջ եւ հակառակ իրանի ներքին քաղաքական պայմաններու յարուցած դժուարութիւններուն, քանի մը տարի բեղուն գործունէութիւն կ'ունենայ, կազմակերպելով հրապարակային հանդէսներ, մանաւանդ Հ. Մ. Լ. Մ. ի Հիմնադրութեան 30ամեակի շքեղ տօնակատարութիւնը:

— 1948ին, Արտաւագդ Հաճեան թաւրիդ կը մեկնի, հոն եւս կարճ ժամանակամիջոց մը կը վերակազմէ Հ. Մ. Լ. Մ. ը ու կը կազմակերպէ հրապարակային հանդէսներ:

— 1950ին, իրանի կառավարութիւնը կը լուծէ բոլոր Միութիւնները եւ կրթական նախարարութեան մէջ կը հաստատէ իրանի Մարմնակրթութեան Հիմնարկութիւնը: Այնուհետեւ, ակամայ պարսկական ակումբներ յաճախող հայ մարզիկներու ցանկութեան ընդառաջելով, բանակի մէջ սպայի աստիճանով ծառայող եւ մարզիկ Սեւակ Սագինեան, Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի Վարչութեան համաձայնութեամբ, դիմում կը կատարէ նորակազմ Մարմնակրթական Հիմնարկութեան, Հ. Մ. Լ. Մ. ը վերակազմելու նոր արտօնութիւն ստանալու համար: Կը մերժուի, այն պատճառաբանութեամբ, որ անպատուաբեր է պարսկահայերու մարզական Միութեան մը ենթակայ ըլլալը օտար երկրի մը կազմակերպութեան:

— իրանի Մարմնակրթական Հիմնարկութիւնը ի վերջոյ արտօնութիւն կու տայ կազմակերպելու անկախ հայկական Միութիւն մը, «Արարատ» անունով, որ կը դառնայ Հ. Մ. Լ. Մ. ի նպատակին ծառայող կազմակերպութիւն մը:

— 1951ին, Թեհրանի Հայ Երիտասարդաց Մշակութային Միութեան Վարչութիւնը, «Արարատ» Միութեան եւ Մասնաճիւղերու արտօնատէր եւ սկառուտապետ կը նշանակէ Սեւակ Սագինեանը:

— Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան թեհրանի «Արարատ» հոյակապ մարզաւանը իրանահայութեան պատուաբեր իրագործումներէն է, որ մինչեւ այսօր կը շարունակէ ծառայել հայ երկսեռ երիտասարդութեան, հակառակ յարուցուած բազմատեսակ դժուարութիւններուն:

— Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան մէջ կը գործեն՝ Երէցներու, Արուեստից, Մարզական եւ Սկառուտական Միութիւններ, որոնք 1984ին միասնաբար ունէին 1500 երկսեռ անդամ:

— Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութիւնը Մասնաճիւղեր ունի թաւրիդ, Ուրմիա եւ Գեարդաբատ:



Սկաուտական նուազախումբը Ռ. Գրիգորեանի ղեկավարութեամբ

— Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան ֆութպոլը լրիւ իրանի մակարդակին վրայ է եւ միշտ լաւ դիրք ունեցած է: Բացի ֆութպոլէն, կազմակերպութեան մէջ կը կիրարկուին՝ պասքեթպոլ, վոլիպոլ, թեթեւ աթլէթիզմ, փինկ-փոնկ, քարաթէ, ծանրաբարձութիւն եւ լեռնագնացութիւն:

— Բացի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութենէն, իրանի մէջ գործող հայ մարզական Միութիւններ են՝ «Սիփան»ը, «Զարմահալ»ը, «Նայիրի»ն եւ Համալսարանականներու Միութիւնը, որոնք գաղափարակից կազմակերպութիւններ են եւ նոյն նպատակին կը ծառայեն:

— Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան ամէնէն մեծ ձեռնարկը համահայկական մրցումներն են, որոնց կրմասնակցին 40 հայկական Միութիւններ եւ խումբեր, միասնաբար՝ աւելի քան 2200


երկսեռ մարզիկներ: Շուրջ 400 մարզիկներ կուգան տարրեր գաւառներէ՝ Նոր Ջուղայէն, Թաւրիզէն, Քիրմանշահէն, Մաշադէն, Ռումիայէն, Շիրազէն, Գեարդաբատէն, Գուրգանէն, Ռաշտէն, Էնգէլիէն, Արուազէն:

— Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութիւնը ունի Հայ Դատ գրասենեակը, որ կը գտնուի իր կեղրոնատեղիին մէջ, նովագահար:

— Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութիւնը Հ. Մ. Ը. Մ. ի Միջ-մասնաճիւղային մրցումներուն իր մասնակցութիւնը բերաւ՝ Պէյրութի մէջ, 1963ին, ֆութպոլի խումբով, 1972ին՝ ֆութպոլի եւ պասքեթպոլի մանչերու եւ աղջիկներու խումբերով, 1977ին՝ Լոս Անձելըսի մէջ, Նաւասարդեան Բ. Մարզախաղերուն պասքեթպոլի մանչերու եւ աղջիկներու խումբերով:



Հ. Ա. Ը. Մ. կ 70ԱՄԵՐԻԿԱ — ՑՈՒՇԱՏԱՏՐ



Հ. Մ. Ը. Մ. թարիզի Մասնաթիղի Վարչութիւնը, 1933-1934ին:
Կերէն վար, Ա. Հարգք՝ Յ. Սարգսյան, Ներսէս արք. Մելիք թանգարան, Բ. Եղիազարյան,
Բ. Հարգք, Ս. Յարութիւնյան, Խ. Գրիգորյան, Ա. Գալստյան:
Գ. Հարգք՝ Վ. Յարութիւնյան, Ի. Գրիգորյան, Կ. Մեհրաբյան, Դ. Արքականյան:



ԱՐՏՍԻԱԶԴԻ ՀԱՃԵԱՆ



ՍԵՎԻԱԿ ՍԱԳԻՆԵԱՆ



Թեհրանի «Արարատ» ֆութպոլի խումբը, 1963ին, Պէյրութի մէջ:

— Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութիւնը իր մասնակցութիւնը բերաւ Հ. Մ. Ը. Մ. ի համագաղութային կառոյցի հիմնադիր Պատգմ. Ա. Լնդհ. ժողովին, գումարուած՝ Պէյրութի մէջ, 1974ին: Պատգամաւորի իրաւունքով ժողովին մասնակցող իր ներկայացուցիչն էր՝ Ռուբիկ Գիւրջեան:

— Քաղաքական պայմաններու բերումով իրանէն գաղթած Հայ Մշակութային

«Արարատ» կազմակերպութեան երկսեռ անդամներ, մարզիկներ, արի-արենոյշներ, եւրոպայի թէ Ամերիկայի մէջ, բոլորուած են Հ. Մ. Ը. Մ. ի դրօշին տակ եւ իրենց գործոն մասնակցութիւնը կը բերեն Հ. Մ. Ը. Մ. ի հայապահպանման եւ Հայ Դատի հետապընդման վսեմ նպատակներուն: Նպատակներ՝ որոնց կը շարունակէ ամբողջական նուիրումով ծառայել Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութիւնը, իրանի մէջ:

ԵԳԻՊՏՈՍ


— 1911ին, մեր հին ու լաւ կազմակերպուած գաղութներէն Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մէջ, դպրոցական շրջանակներէն սկսեալ, մարմնակրթանքը իր լայն ընդունելութիւնը կը գտնէ:

— 1912ին, Աղեքսանդրիոյ «Պօղոսեան» ազգ. վարժարանի մէջ, մարզիչ Ստեփան Խանճեան կը կազմակերպէ հեծելարշատի մրցում եւ հայկական առաջին երկսեռ մարզահանդէսը, որուն ներկայ կ'ըլլայ մարմնակրթանքի ուահվիրայ Շաւարչ Քրիսեան:

Դպրոցի շրջափակէն դուրս, երիտասարդութեան եւս մարմնակրթանքի բաւարարութիւն տալու համար, Բարսեղ Օհանեանի գլխաւորութեամբ, 28 երիտասարդներ կը դիմեն Աղեքսանդրիոյ Ազգ. Քաղաքական Ժողովին, հայկական մարզաւան մը ունենալու առաջարկով: Ժողովը միաձայնութեամբ կը տրամադրէ հայոց եկեղեցւոյ կից ազգապատկան հողը, որուն վրայ երիտասարդները ամբողջ վեց ամիս աշխատելէ ետք, զայն կը վերածեն ներկայանալի մարզավայրի մը:

1912ի Օգոստոսին, երիտասարդները կը գումարեն իրենց առաջին ժողովը, Քաղաքական Ժողովի ատենապետ տոքթ. Միսաք Ժամկոչեանի նախագահութեամբ: Կը կազմուի Վարչութիւն, բաղկացած՝ Պերճ Օհանեանէ, Բարսեղ Օհանեանէ, Միհրան Թէլեանէ եւ Ազնաւորեանէ: Կը մշակուի Շրագիր-Կանոնագիր, կը կատարուի անդամագրութիւն:

Շաւարչ Քրիսեան գնահատելով երիտա-



ԲԱՐՍԵՂ ՕՀԱՆԵԱՆ

սարդներու գոհողութեան ոգին եւ թափած ճիգը, կը թելազրէ նորակազմ Միութեան տալ Կամք անունը եւ մարզարանը կը կնքուի Կամք Մարմնամարզական Ակումբ անունով: 50 երիտասարդներ կը մասնակցին անդամական առաջին ժողովին:

— 1913ին, Կամք Մարմնամարզական Ակումբը կը կազմակերպէ իր առաջին աթլէթիք մրցումները: Այնուհետեւ, ամէն տարի, աւանդաբար կը կազմակերպուին աթլէթիք մրցումները:



«Կամք»ի աբլեթիզմի առաջին խումբը, 1912ին:

— 1914ին, Գահիրէի մէջ, խումբ մը մարզասէր երիտասարդներու կողմէ հիմը կը դրուի «Արարատ» Մարզական Միութեան, որ սկզբնական շրջանին, իրեւ մարզավայր կ'օգտագործէ «Գալուստեան» ազգ. վարժարանի դաշտը:

— Աղեքսանդրիոյ Կամք Մարզական Ակումբը պատուաբեր գործունէութիւն կ'ունենայ Եգիպտահայ մարզական կեանքի պատմութեան մէջ: Իր մարզիկները կը շահին հարիւրաւոր բաժակներ:

— Եգիպտահայ աթլէթիք մրցումներուն, Աղեքսանդրիոյ Կամք Մարզական Ակումբի մարզիկներէն մրցանիշ կը հաստատեն եւ ախոյեանի տիտղոսին կը տիրանան՝ Համօ Դարմանեան, Զաւէն Բրուտեան, Ալէքս Զարմանեան, Արմենակ Ասլանեան, Գէորգ Տէր Սիմոնեան, Վարդգէս Աստուածատուր, Կարօ Մոմճեան:

— 1915ին, նախաձեռնութեամբ Աղեքսանդրիոյ Ազգ. Քաղաքական Ժողովի, հիմը կը դրուի Հայ Հետազոտիչներու Ընկերութեան:

— 1928ին 1936, Գահիրէի «Արարատ» Մարզական Միութիւնը բեղուն շրջան մը կը բոլորէ, չնորհիւ Շուպրա Պէլէտի մէջ

գտնուող Կարապետեանի ընդարձակ մարզադաշտին ընծայած լայն հնարաւորութիւններուն: Զարկ կը տրուի ֆութպոլի, թենիսի եւ այլ մարզախաղներու, նաեւ սկառուտական շարժման:

— Գահիրէի «Արարատ» Մարզական Միութեան մարզիկները կը սկսին Եգիպտոսի միջազգային մրցումներուն ախոյեանութիւններ շահիլ: Միութիւնը, սակայն, որոշ շրջան մը կ'ընկրկի եւ անջատողական ողի սնուցանող կարգ մը անձեր բաժնուելով, կը կազմեն այլ անունով Միութիւն մը:

Այսուհանդերձ, հաւատարիմ անդամներէն Վարդան Գաղանճեան, Ստեփան Ամիրայեան, Թորոս Խաչատուրեան, Զարեհ Սագայեան, Բիւզանդ Մինասեան, Սարգիս Մեսրոպեան, Յակոբ Պալըգճեան, Շամլեան եղբայրներ եւ ուրիշներ, ամէն ճիգ կը թափին, կը վարձեն դաշտ մը, կը վերածեն մարզարանի եւ զայն կը դարձնեն Գահիրէի մարզասէր երիտասարդութեան կեղրոնը:

— 1936էն սկսեալ, Գահիրէի «Արարատ» Մարզական Միութիւնը կ'ունենայ պասքեթպոլի ներկայանալի խումբեր, որոնք յաճախ Ա. Դասակարգի խումբերու դէմ մրցելով, կը տիրանան ախոյեանի տիտղոսին եւ իրա-



«Արարատ»ի Վարչական կազմը, 1934ին:
Նստած, ձախէն աջ՝ Բարգէն Քեհեայեան, Գրիգոր Զագրենեան, Ստեփան Ամիրայեան,
Սարգիս Միքայէլեան:
Առարի, ձախէն աջ՝ Գարեգին Շամլեան, Թորոս Խաչատուրեան, Վարդան Գազանթեան,
Ա. Պետրեան, Փայտակ Շահրօղեան:



«Կամիկ»ի ֆութպոլի խումբը, 1935ին:



Հ. Մ. Ը. Մ. «Արարատ»ի Վարչական կազմը, 1958ին:
Նոստած, ձախէն աջ՝ Պարոյը Թէցերեան, Վարուժան Մինասեան, Գարեգին Շամլեան, Գրիգոր
Նիգիպիեան :
Ոտքի, ձախէն աջ՝ Կարօ Մոմբեան, Նազարեթ Գալուստեան, Մարտիրոս Քէշիշեան, Հայկ
Պէյերեան :

ւունք կը ստանան «Եխտլանս» դասակարգին մաս կազմելու:

— Եղիպտոսի մէջ, հեծելարշաւի առաջին մրցումները կը կազմակերպէ Գահիրէի «Արարատ» Մարզական Միութիւնը: Իր մարզիկները միջազգային մրցումներուն կը մասնակցին Եռագոյն շապիկներով:

— Գահիրէի «Արարատ» Մարզական Միութիւնը միջազգային չափանիշով բազմաթիւ մարզիկներ ունեցած է: Լաւագոյններէն կը նշուին՝ Եղիպտոսի վազքի ախոյեաններ Անտոն Յովսէկիեան, Արսէն Շամլեան, Կոփամարտի միջազգային ախոյեան Հայկ Ասատուրեան, հեծելարշաւի ախոյեան Յակոբ Ղազարեան:

— Աղեքսանդրիոյ Կամք Մարզական Ակումբի ֆութապոլի խումբը տարիներ շարունակ պատուաբեր յաղթանակներով պանծացուցած է իր Ակումբին անունը: Ուշագրաւ յաղթանակներ տարած է նաև պասքեթպոլի մանչերու խումբը:

— Աղեքսանդրիոյ Կամք Մարզական Ակումբի սկառուտական խումբերը բեղուն գործունէութիւն ունեցած են, կազմակերպելով շրջապտոյտներ, դաշտահանդէսներ, խմբային բանակումներ, մասնակցած են նաև եղիպտական սկառուտական բոյոր ձեռ-

նարկներուն եւ տողանցքներուն՝ մեր ազգային դրօշով:

— 1944ին, Գահիրէի «Արարատ» Մարզական Միութիւնը կը տօնէ իր հիմնադրութեան 30ամեակը: Այս առիթով կը կազմակերպէ եղիպտահայ աթլէթիք մրցումներ, որոնք տեղի կ'ունենան Գահիրէի «Նասիոնալ» դաշտին վրայ: Կը մասնակցին եղիպտահայ բոլոր մարզական Միութիւնները, Հայ Արիները եւ Հայ Կատրերը:

— 1946ին, Հելիոպոլսոյ Հ. Մ. Ը. Մ. ի վարիչները, գլխաւորութեամբ Հ. Մ. Ը. Մ. ի հիմնադիրներէն Հայկ Ճիզմէճեանի եւ «Արարատ» Մարզական Միութեան վարիչները՝ Ստեփան Ամիրայեան, մարզիչ Գրիգոր Նիգիպիեան, Գարեգին Շամլեան, Թորոս Խաչատուրեան, Վարդան Գագանձեան, կ'որոշեն միանալ եւ հանրութեան ներկայանալ Հ. Մ. Ը. Մ. «Արարատ» անունով:

Այս համագործակցութիւնը, սակայն, երկար չի տեւեր. հրապարակ կու գայ Հ. Մ. Ը. Մ. «Նուպար» Միացեալ Մարզական Միութիւնը: Այսուհանդերձ, Հ. Մ. Ը. Մ. «Արարատ» հաւատարիմ կը մնայ Հ. Մ. Ը. Մ. ին ու կը գործադրէ անոր Ծրագիրկանոնագիրը:



Հ.Մ.Ը. «Արարատ»ի Սկաուտական Շրջանային Խորհուրդը, 1958ին:
Նստած, ձախէն աջ՝ Օննիկ Դավիթեան, Անդրանիկ Արքիմեան, Մկրտիչ
Թիւրիւննեան:
Ոտքի, ձախէն աջ՝ Մարտիրոս Քէշիշեան, Հայկ Պէյլերեան, Կարօ Նշանեան:



Հ.Մ.Ը. «Արարատ»ի աղջկանց պասֆեթպոլի խումբը:



«Կամք»ի Վարչական կազմը, 1958ին:
Նստած, ձախէն աջ՝ Վահան Գավութեան, Գարեգին Մելքոնեան, Վազգէն
Նսայեան:
Ոտքի, ձախէն աջ՝ Յակոբ Տէր Պետրոսեան, Բիւզանդ Մուրատեան, Մարտիրոս
Շատախցեան, Նշան Պետրոսեան, Նշան Գրիգորեան:

— Համաշխարհային Բ. պատերազմի ըրջանին, Աղեքսանդրիոյ «Կամք» Մարմնամարզական Ակումբին կը միանայ Հայ Հետազոտիչներու Ընկերակցութիւնը:

— 1950ին, Գահիրէի Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»ի Վարչութիւնը կը հրաւիրէ Լիբանանի պասքեթպոլի մանչերու ախոյեան Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի խումբը, որ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մէջ իր կատարած միջազգային պատուաբեր մրցումներով, մեծ խանդավառութիւն կը ստեղծէ:

Եգիպտահայութիւնը առիթը կ'ունենայ մօտէն ճանչնալու Հ. Մ. Լ. Մ. ի մարզիկներով եւ վարիչներով:

— 1951ին, Հալէպի մէջ, Հ. Մ. Լ. Մ. ի Լիբանանի, Սուրբիոյ եւ Յորդանանի Մասնաճիւղերու 11րդ Շրջ. ժողովին, խորհրդակցական ձայնով կը մասնակցի Գահիրէի Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»ի ներկայացուցիչ՝ մարզական ընդհանուր պատասխանատու Գրիգոր Նիզիպլեան:

— 1951ին, Գահիրէի Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»ի Վարչութիւնը Եգիպտոս կը հրաւիրէ նաեւ Լիբանանի պասքեթպոլի աղջկանց ախոյեան Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի խումբը, որ իր կատարած միջազգային մրցումներով կը պանծացնէ Հայ մարզիկուհին անունը:

— 1946էն 1958, Գահիրէի Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»ի մարզիկները դարձեալ պատուաբեր տեղ կը գրաւեն Եգիպտոսի աթլէթիք մրցումներուն:

Վազգի մէջ նոր մրցանիշեր կը հաստատեն եւ ախոյեանի տիտղոսին կը տիրանան՝ Գեղամ Քիւտներեան եւ Ճիմի Լաշինեան:

— 1954ին, Գահիրէի Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»ը կը տօնէ իր հիմնադրութեան 40ամեակը, կազմակերպելով Եգիպտահայ աթլէթիք մրցումներ։ Կը մասնակցին Եգիպտահայ մարզական բոլոր Միութիւնները։

— 1955ին, Գահիրէի Հ. Մ. Լ. Մ. «Արարա-



«Կամի»ի դրոշաբարձրական աղջկանց խումբը:



«Կամի»ի ֆութպոլի խումբը, 1958ին:



«Կամք»ի պասբեթպոլի խումբը, 1958ին:

րատ»ի պասբեթպոլի մանչերու խումբը, Հ. Մ. Լ. Մ. ի Մերձաւոր Արեւելքի Շրջ. Վարչութեան հրաւերով, Հալէպի մէջ կը մասնակցի Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-Մասնաճիւղային մրցումներուն:

Այնուհետեւ, Գահիրէի Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»ը, երբ պայմանները կը թոյ-լատրեն, իր մասնակցութիւնը կը բերէ Պէյրութի, Հալէպի եւ Յունաստանի մէջ կազմակերպուած Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-Մասնաճիւղային մրցումներուն:

— 1957ին, Գահիրէի Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»ը եւ Հայ Արիները կ'որոշեն միանալ եւ կը կազմեն մէկ ուժ՝ Հ. Մ. Լ. Մ. «Արարատ» եւ Հայ Արիներու Ընկերակցութիւն անունով:

— 1958ին, Հ. Մ. Լ. Մ. «Արարատ» եւ Հայ Արիներու Ընկերակցութիւնը մեծ շուրջով կը տօնեն Հ. Մ. Լ. Մ. ի հիմնադրութեան 40ամեակը, Գահիրէի «Նասիռնալ» դաշտին վրայ: Կը մասնակցին եգիպտահայ մարզական բոլոր Միութիւնները:

— 1958ին, Գահիրէի Հ. Մ. Լ. Մ. «Արարատ» եւ Հայ Արիներու Ընկերակցութիւնը Եգիպտոս կը հրաւերեն Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ի ֆութպոլի Ա. խումբը, որ իր կատարած

միջազգային տպաւորիչ եւ բարձրորակ մըրցումներով, պատիւ կը բերէ Հ. Մ. Լ. Մ. ին եւ Հայ անունին:

1974ին, Հ. Մ. Լ. Մ. ի համագաղութային վարչական նոր կառոյցով, Գահիրէի Հ. Մ. Լ. Մ. «Արարատ» եւ Հայ Արիներու Ընկերակցութիւնը եւ Աղեքսանդրիոյ «Կամք» Մարմնամարզական Ակումբը եւ Հայ Հետազոտիչներու Ընկերակցութիւնը կը դառնան Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղեր՝ Հ. Մ. Լ. Մ. «Արարատ» եւ Հ. Մ. Լ. Մ. «Կամք» անուններով:

— 1981ին, Գահիրէի Հ. Մ. Լ. Մ. «Արարատ» Մասնաճիւղը, յաջորդաբար չորրորդ տարին ըլլալով, կը տիրանայ իր կազմակերպած եգիպտահայ միջ-ակումբային պասբեթպոլի մրցաշարքի ախոյեանի տիտղոսին եւ բաժակին:

Հելիոպոլսոյ Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»ի դաշտին վրայ կատարուած եորեայ այս մրցաշարքին կը մասնակցին՝ Գահիրէին «Նիւր-Իսթ», Հ. Մ. Լ. Մ. «Նուպար», Հայ կաթողիկէ «Ս. Թերեզա» եւ Հ. Մ. Լ. Մ. «Արարատ», Աղեքսանդրիայէն Հ. Մ. Լ. Մ. «Կամք» ակումբներու խումբերը:

— 1981ին, Գահիրէի Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»ը կը տիրանայ նաեւ Հելիոպոլսոյ հայ կաթողիկէ «Ս. Թերազա» ակումբի կազմակերպած եգիպտահայ վեց ակումբներու միջեւ կատարուած պասքեթպոլի մրցաշարքի ախոյեանի տիտղոսին եւ բաժակին:

— 1983ին, Գահիրէի Հ. Մ. Լ. Մ. «Արարատ» Մասնաճիւղի Վարչութեան կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ. ի հիմնադրութեան 65ամեակին նուիրուած յորելինական մրցաշարք, Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»ի Հելիոպոլսոյ մարզադաշտին վրայ:

Գահիրէի «Նիւր-իսթ», «Ս. Թերեզա» եւ Հ. Մ. Լ. Մ. «Արարատ», իսկ Աղեքսանդրիայէն՝ Հ. Մ. Լ. Մ. «Նուպար» եւ Հ. Մ. Լ. Մ. «Կամք» ակումբներու խումբերուն միջեւ կատարուած մրցաշարքին յաղթանակը կը տանի եւ բաժակին կը տիրանայ Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»:

— 1984ին, Աղեքսանդրիոյ մէջ, Հ. Մ. Լ. Մ. «Կամք»ի կազմակերպութեամբ, այնուհետեւ՝ Գահիրէի մէջ, նախ տեղույն Հ. Մ. Լ. Մ. «Նուպար»ի, ապա Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»ի կազմակերպութեամբ եգիպտահայ միջ-ակումբային պասքեթպոլի մրցաշարքերուն ախոյեանի տիտղոսին եւ բաժակին կը տիրանայ Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»ի մանչերու խումբը:

Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»ի կազմակերպած մրցաշարքը կը նուիրուի հայադրոշմ այս ակումբի հիմնադրութեան 70ամեակին: Յորելինական մրցաշարքին կը կատարուին նաեւ աղջիկներու եւ կրտսերներու պասքեթպոլի խումբերու մրցումները: Յաղթանակները կը տանին եւ բաժակի կը տիրանան Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»ի խումբերը:

— 1985ին, Գահիրէի Հ. Մ. Լ. Մ. «Արարատ» Մասնաճիւղի Հայ Արիներու վերակազմութեան առիթով, տեղի կ'ունենայ խարոյկահանդէս, Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»ի մարզադաշտին վրայ:

Եգիպտոսէն հայութիւնը երբ կը սկսի հոծ թիւով գաղթել, միաժամանակ կը դադրին հրապարակային հայաշունչ ելոյթները: Ներկաները, հիւրեր եւ ծնողներ, կարօ-



ՎԱՀԱՆ ԳԱՎՈՒՅԹՅԱՆ

տով, խանդաղատանքով եւ մեծ հետաքըրք-րութեամբ կը հետեւին տողանցքով սկսած խարոյկահանդէսին, երդման արարողութեան, խաղերուն եւ հիւրասիրութեան:

— 1985-1986ին, Գահիրէի Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»ի սկաուտական կազմը ուշագրաւ գործունէութիւն կ'ունենայ կազմակերպելով արշաւ, սկաուտական ձեռակերտներու ցուցահանդէս, Ս. Ծնունդի մասնակցութիւն, տողանցք եւ քննական արշաւ դէպի բուրգերու, տաճարներու եւ այլ հնութիւններու շրջանը՝ Սաքքարա:

— 1986ին, Գահիրէի մէջ բացումը կը կատարուի Հ. Մ. Լ. Մ. «Արարատ» Մասնաճիւղի «Արմենակ Մէօթէմէտեան» վերանորոգուած մարզարանի եւ հաւաքավայրուահի:

— 1986ին, Աղեքսանդրիոյ Հ. Մ. Լ. Մ. «Կամք» Մասնաճիւղի Խամլէի մարզադաշտը եւ իր յարակից բաժինները հիմնովին կը վերանորոգուին:



Գահիրէի Հ. Մ. Ը. Մ. «Արարատ»ի պասկեթպոլի մանչերու խումբը, 1983ին:



Գահիրէի Հ. Մ. Ը. Մ. «Արարատ»ի Վարչութիւնը, 1985ին:
Նստած, ձախէն աջ՝ Խոսրով Զաքարիան, Անահիտ Թումայեանց, Վարուժան
Գաղանեան, Վրէժ Քեօհնելիան, Պետրոս Մխտիկեան:
Ոտքի, ձախէն աջ՝ Պերճ Ասատուրեան, Ֆրէտի Գարակէօգեան, Սոնիկ Սուրէն
Պայրամեան, Յակոբ Ոսկերիչեան, Էտի Գարակէօգեան, Վաղարշ Զաքարիան:



Գահիրէի Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»ի աղջկանց պասէեթպոլի խումբը, 18 տարեկանէն վար:

Ոտքի, ձախէն աչ՝ Վարուժան Գագաննեան, Խոսրով Գագաննեան, Նորա Մելիքեան, Նեվին Պողոսեան, Սուև Պայրամեան, Նորա Միստիկեան, Սիւզի

Սամիր, Գարմէն Գարամաննեան, Պերճ Ասատուրեան, Գեղրդ Բրուտեան:

Ծունդի, ձախէն աչ՝ Ռիթա Սագայեան, Շաբէ Ասատուրեան, Կասիա Զիլինկիրեան, Սիլվա Պայրամեան, Թալին Կապէյեան եւ Նուարդ Եանըգեան:

— 1986ին, Աղեքսանդրիոյ Հ. Մ. Լ. Մ. «Կամք»ի Ռամէի, ապա Գահիրէի Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»ի Հելիոպոլսոյ մարզադաշտերուն վրայ տեղի կ'ունենան Հ. Մ. Լ. Մ. «Կամք»ի եւ Հ. Մ. Լ. Մ. «Արարատ»ի Միջ-Մասնաճիւղային մանչերու, աղջիկներու եւ կրտսերներու պասքեթպոլի խումբերու բաժակի հետաքրքրական մրցումներ:

— 1986ին, Հ. Մ. Լ. Մ. «Արարատ» Մասնաճիւղի Սկառուտական Խորհուրդի կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ հնգօրեայ բանակում, Կարմիր ծովի շրջանին մէջ:

— 1987ին, Հ. Մ. Լ. Մ. «Արարատ» Մասնաճիւղի սկառուտները եւ արենոյշները քըննական արշաւ մը կը կատարեն Գահիրէն

400 քլմ. հեռու, Սինայի թերակղզիի հարաւային կեդրոնը գտնուող լեռներու ամէնէն բարձր գագաթ Ս. Քաթէրին լեռը եւ համանուն մենաստանը իր հոչակաւոր վանքով եւ նշանաւոր «Մովսէս» լեռով:

— Գահիրէի Հ. Մ. Լ. Մ. «Արարատ» եւ Աղեքսանդրիոյ Հ. Մ. Լ. Մ. «Կամք» Մասնաճիւղերը, եղիպտահայ աղգային կեանքէն ներս, մարզական եւ սկառուտական վերաշխուժացման եւ վերանորոգման առաջընթացով, խանգավառող ներկայութեամբ ու հետաքրքրական ելոյթներով, կը շարունակեն հայապահպանման եւ հայակերտման իրենց նուիրական առաքելութիւնը:



Կ Ի Պ Ր Ո Ս

— 1927ին, Օննիկ Եազմաճեանի ճիգերով, կը հիմնուի Նիկոսիոյ Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղը:

Նոյն տարին, Ս. Գազանճեանի նախաձեռնութեամբ, կը հիմնուի նաեւ Լառնաքայի Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղը, որուն կը միանան տեղույն Ազգային Վարժարանի սկառուտական խումբի անդամները:

— Նիկոսիոյ եւ Լառնաքայի Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղերու ֆութպոլի խումբերը, Կիպրոսի յոյն եւ թուրք խումբերու դէմ իրենց կատարած մրցումներուն, միշտ արձանագրած են պատուաբեր արդիւնքներ:

— Հ.Մ.Լ.Մ.ի երկու Մասնաճիւղերու գործունէութիւնները, գաղթերու եւ տեղական անհասկացողութեանց պատճառով, մերթ ընդ մերթ կը դադրին եւ ի վերջոյ չեն շարունակուիր:

— 1936ին հիմնուած եւ Կիպրոսի հայ ազգային կեանքին մէջ իր հանրանուէր եւ գաղափարապաշտ գործունէութեամբ ծանօթ Հայ Երիտասարդաց Միութիւնը, 1978ին ստանձնելով երբեմնի Հ.Մ.Լ.Մ.ի գործունէութեան շարունակութիւնը, մաս կը կազմէ Հ.Մ.Լ.Մ.ի համազաղութային կառոյցին, իբրեւ Մեկուսի Մասնաճիւղ:



Հ.Մ.Լ.Մ.ի գործունէութեան մէջ տեղ մը հասած ըլլալ գոյութիւն չունի, այլ միայն կայ միասնարար աւելի բարձրին, աւելի լաւին, աւելի կատարեալին հասնելու ձգուում:



Հ.Մ.Լ.Մ.ը հաւաքականութիւն է, գաղափար է, հաւատամք է: Ան սեփականութիւնն է ամբողջին. հոն անձնականը տեղի կու տայ հաւաքականութեան առջեւ:



ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

— 1922ին, առաւելաբար Պոլսոյ եւ իզմիրի շրջաններէն բազմահազար հայեր կը գաղթեն ու կը հաստատուին Յունաստան:

Հ. Մ. Լ. Մ. ի Կեդր. Վարչութիւնը, Հ. Մ. Լ. Մ. ը լուծարքի ենթարկելէ ետք Թուրքիոյ մէջ, կ'որոշէ օգնութեան հասնիլ Յունաստանի հայ գաղթականներուն եւ կը կազմէ օգնութեան յատուկ Մարմին մը:

— Գաղթական Հ. Մ. Լ. Մ. ականներ, իրենց հաստատուած վայրերուն մէջ կը հիմնեն Հ. Մ. Լ. Մ. ի կորիզներ եւ կը ստեղծեն մարզական եւ սկաուտական կեանք:

— 1924ին, Հ. Մ. Լ. Մ. ի գործիչ եւ սկաուտ խմբապետ Մկրտիչ Մալումեան կը կազմէ Սկաուտական Յանձնախումբ մը, որուն անդամները՝ Պետրոս Գայեան, Հայկ Տէտէեան, Գասպար Առաքելեան, Յակոբ Աւագեան եւ Յարութիւն Առաքելեան մար-

զական կապակցութիւն մը կը ստեղծեն հայ մարզիկին եւ սկաուտին միջեւ:

— 1924ին, կը հիմնուի Յունաստանի Հ. Մ. Լ. Մ. ը: Մասնաճիւղերը համադրելու եւ ղեկավարելու համար կ'ընտրուի Կեդր. Վարչութիւն մը:

Սկաուտական Յանձնախումբի անդամներէն բացի, Յունաստանի Հ. Մ. Լ. Մ. ի հիմնադրութեան շրջանին վարչական աշխատանք կը տանին՝ Առաքել Պետրոսեան, Արամ Յովհաննէսեան, Պատուելի Յովհաննէս Աճէմեան, Ստեփան Տամլամայեան, Գէորգ Յարէթեան, Արտաշէս Յակոբեան, Հայկ Տէտէեան, Սեդրակ Նիկողոսեան, Ահարոն Եսայեան, Յարութիւն Գըլըճեան, Մկրտիչ Մալումեան, Պետրոս Գայեան եւ ուրիշներ:

— 1926ին, Հ. Մ. Լ. Մ. ը կը վաւերացուի Հելլէն դատարանի կողմէ:



Յունաստանի Հ. Մ. Լ. Մ. ի առաջին Շրջ. Վարչութիւնը, 1927ին:
Նստած, ձախէն աջ՝ Պատ. Յովհաննէս Աթէմեան, Առաքել Պետրոսեան,
Ստեփան Տամլամայեան, Գէորգ Յարէթեան:
Ոտքի, ձախէն աջ՝ Ա. Ա. Յակոբեան, Հայկ Տէտէեան, Մկրտիչ Մալումեան,
Պետրոս Գայեան, Սեդրակ Նիկողոսեան:



Ցիքսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի ֆութպոլի խումբը,
1929ին:



Գոյինիոյ Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի սկառւտ աստիճանաւորներու կազմը, 1948ին:

— Յունաստանի Հ. Մ. Լ. Մ. ը Մասնա-
ճիւղեր կ'ունենայ Աթէնք, Ֆիքս, Սինկ-
րու, Լիփազմա, Գոքինիա, Նէօ Ֆալէրոն,
Կրետէ, Միտիլի, Սելանիկ, Թէսաղոնիկէ,
Գարէա, Իրաքլիօ, Բաթրոս, Ռեթեմնօ,
Աղեքսանդրուպոլիս, Տրամայա Գավալա եւ
այլ շրջաններու մէջ:

— 1926ին, Սելանիկի մէջ, Հ. Մ. Լ. Մ. ի
Մասնաճիւղը կը հիմնեն Համօ Մեհրապեան
(այժմ՝ Շաւարչ Քահանայ), Յակոբ Հէլվա-
ճեան եւ Կարպիս Ահարոննեան, իսկ Տէտէ
Աղաճի մէջ՝ Արսէն Պալեան, աջակցու-
թեամբը՝ Վահան Ճլկունիի:

— 1927ին կը գումարուի Յունաստա-
նի Հ. Մ. Լ. Մ. ի առաջին Պատգմ. ժողովը,
մասնակցութեամբ շրջանի Մասնաճիւղե-
րէն 36 լիազօր ներկայացուցիչներու:

Մասնաճիւղերու յաւելումով, Աթէնքի
Կեդր. Վարչութիւնը կը փոխարինուի Շրջ.
Վարչութեամբ:

— Յունաստանի Հ. Մ. Լ. Մ. ի սկաուտ-
ները կը մասնակցին Յունաստանի անկա-
խութեան տօնակատարութեան տողանցքին,
միջազգային բանակումներուն, արժանա-
նալով Յունաստանի եւ օտար պետութեանց
բարձրաստիճան պաշտօնատարներու գնա-
հատանքին:

— 1929ին, Աթէնքի Մասնաճիւղը կը
կազմակերպէ Յունաստանի Հ. Մ. Լ. Մ. ի
առաջին Ողիմպիականը:

— 1934ին, Յունաստանի Հ. Մ. Լ. Մ. ի
երկսեռ երէց անդամներ կը կազմեն Հ. Մ.
Լ. Մ. ի «Բնութենասէրներու» Մասնաճիւ-
ղը, որ պետութեան կողմէ կը վաւերացուի
ու կը ճանչուի իբրեւ «Հայ Լեռնագնաց
Բնութենասէրներու Միութիւն» անունով:

— 1945ին, Յունաստանի Հ. Մ. Լ. Մ. ի
Վարչութեան հովանաւորութեամբ տեղի
կ'ունենան Հ. Մ. Լ. Մ. ի յետ-պատերազ-
մեան առաջին նաւասարդեան Մարզախաղե-
րը եւ տողանցքը, 400 երկսեռ մարզիկնե-
րու եւ սկաուտներու մասնակցութեամբ:

— 1951ին, Յունաստանի Հ. Մ. Լ. Մ. ի
Մասնաճիւղերուն կողմէ լիազօր պատգա-
մաւոր մը կը մասնակցի Հ. Մ. Լ. Մ. ի Լիբա-
նանի, Սուրիոյ եւ Յորդանանի 11րդ Շրջ.
Ժողովին:

— 1952ին, Յունաստանի Հ. Մ. Լ. Մ. ի
ֆութպոլի Ա. Դասակարգի խումբը կը մաս-
նակցի Հ. Մ. Լ. Մ. ի Լիբանանի, Սուրիոյ եւ
Յորդանանի միջ-մասնաճիւղային մրցում-
ներուն:

— 1958ին, Յունաստանի Հ. Մ. Լ. Մ. ը
ունէր 7 Մասնաճիւղ, 700 երկսեռ անդամ-
ներով:

— Յունաստանի Հ. Մ. Լ. Մ. ը իր հիմ-
նադրութեան թուականէն՝ 1924ին սկսեալ,
կ'ունենայ ֆութպոլի զօրաւոր խումբ:
1925-1926 տարեշրջանին, Աթէնքի ֆութ-
պոլի առաջնակարգ խումբերու ախոյեա-
նութեան մրցումներուն, Հ. Մ. Լ. Մ. ի ներ-
կայացուցիչ խումբը կը գրաւէ պատուաբեր
երկրորդ դիրքը:

— Յունաստանի Հ. Մ. Լ. Մ. ի ֆութպոլի
անուանի մարզիկներէն Դանիէլ Դանիէլեան
մաս կը կազմէ Յունաստանի ֆութպոլի ազ-
գային խումբին եւ Սելանիկի խառն խում-
բին, իսկ Վահագն Աբրահամեան մաս կը
կազմէ Սելանիկի բազմամեայ ախոյեան
«Արիս» խումբին:

— Յունաստանի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնա-
ճիւղերուն մէջ բացի ֆութպոլէն, կը կի-
րարկուին նաեւ պասքեթպոլ, վոլիպոլ,
ֆինկ-փոնկ եւ աթլէթիք խաղեր:

— 1978ին, Թէսաղոնիկէի Հ. Մ. Լ. Մ. ը
օր. Մարկօ Ասլանեանի նուիրատուութեամբ
կ'ունենայ 5000 քառ. մեթր տարածութեամբ
եւ բոլոր յարմարութիւններով մարզավայ-
րի վերածուելու կարելիութիւններ ունեցող
հողամաս մը:

— 1979-1980 տարեշրջանին, Թէսաղո-
նիկէի (Սելանիկ) Հ. Մ. Լ. Մ. ի պասքեթպոլի
մանչերու խումբը տեղւոյն Գ. Դասակարգի
խումբերու ախոյեանութեան մրցաշարքին
անպարտելի, կը տիրանայ ախոյեանի տիտ-
ղոսին եւ բաժակին ու կը բարձրանայ Բ.
Դասակարգ:

Նոյն տարեշրջանին, Մասնաճիւղի
պասքեթպոլի աղջկանց խումբը ախոյեանու-
թեան մրցաշարքին իր օրինակելի վարկին
համար գնահատանքի կ'արժանանայ ու կը
ստանայ բաժակ:



Արէնի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտ աստիճանաւորներու կազմը, 1949ին:



Սելանիկի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի պասֆեթպոլի մանչերու խումբը, 1956ին:



Յունաստանի Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Վարչութիւնը, 1958ին:
Նստած, ձախէն աջ՝ Դանիէլ Դանիէլեան, Պատրիկ Սարգսիսեան, Համբարձում
Կիւտէնեան:
Ոտքի, ձախէն աջ՝ Լեւոն Գայեան, Յարութիւն Սվագլեան, Ստեփան Նշանեան,
Աւետ Խաչատրյան:



Յունաստանի Հ. Մ. Ը. Մ. ի 45րդ Պատգամաւորական ժողովը, 1980ին:



Ֆիքսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաթիւղի ֆութպոլի խումբը,
1981ին:



Ֆիքսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաթիւղի պատմեթպոլի
աղջկանց խումբը, 1981ին:



Ֆիքսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաթիւղի Վարչութիւնը, 1979-1981 տարեշրջանին:
Նստած, ձախէն աջ՝ Յ. Քիւրտօղյան, Վարուժան Նշանեան, Կարպիս
Գույումնեան (Շրջ. Վարչութեան ներկայացուցիչ), Խաչիկ Աղապապեան,
Թագուր Շիրակեան:

Ուրքի, ձախէն աջ՝ Կարպիս Զանիկեան, Համբարձում Պերպէրեան, Գրիգոր
Զաքարեան, Կարպիս Պէտքէնեան, Յակոբ Եթիմեան, Ֆիլիփ Ծերոնեան,
Մուրատ Քիւրտօղյան:



Թեսաղոնիկէի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի մանչերու պասխեթպոլի խումբը,
1981ին:



Թեսաղոնիկէի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի աղջկանց պասխեթպոլի խումբը,
1981ին:

Բաժակները Հ. Մ. Ը. Մ. ի խումբերուն կը յանձնէ թեսաղոնիկէի պասքեթպոլի կեղրոնական Մարմինը, հրապարակային հանդիսութեամբ:

— 1980ին, կը կազմուի Հ. Մ. Ը. Մ. ի ֆիքսի Մասնաճիւղի պարման-պարմանուհիներու լողորդութեան խումբը, որ յունական խումբերու դէմ մրցումներուն կ'արձանագրէ փայլուն յաղթանակներ:

— 1980ին, Աթէնքի մէջ տեղի կ'ունենայ Յունաստանի Հ. Մ. Ը. Մ. ի 45րդ Պատգմ. ֆողովը, իսկ 1982ին՝ 46րդ Պատգմ. ֆողովը, մասնակցութեամբ՝ ֆիքսի, Գոքինիայի, Գարէայի եւ Թեսաղոնիկէի Մասնաճիւղերու ներկայացուցիչներուն եւ սկառտական կազմերու խմբապետներուն:

— Յունաստանի Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ.

Վարչութեան կազմակերպած Զատկուայ միջ-մասնաճիւղային աւանդական հանդիպումները տեղի կ'ունենան Աթէնքի կամ թեսաղոնիկէի մէջ։ Յաճախ իրենց մասնակցութիւնը կը բերեն նաեւ Գահիրէի Հ. Մ. Ը. Մ. -«Արարատ» Մասնաճիւղի խումբերը։

— 1981ին, թեսաղոնիկէի Հ. Մ. Ը. Մ. ի պասքեթպոլի մանչերու խումբը տեղւոյն Բ. Դասակարգի խումբերու ախոյեանութեան մրցաշարքին կը տիրանայ ախոյեանի տիտղոսին ու բաժակին եւ կը բարձրանայ Ա. Դասակարգ։

— 1981ին, թեսաղոնիկէի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղին նուիրուած հողամասը վերածուելով մարզավայրի, նուիրատուին անունով կ'անուանուի՝ «Մարկօ Ասլանեան մարզավայր»։



Գործինիոյ Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի սկաուտները եւ գայլիկները, 1981ին:



Գործինիոյ Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի սկաուտական կազմը, 1981ին:



Արենի Հ.Մ.Լ.Մ.Ի Ֆիքսի Մասնաճիւղի աղջկանց պատմեթպոլի խումբը,
1981ին:



Արենի Հ.Մ.Լ.Մ.Ի Ֆիքսի Մասնաճիւղի ֆութպոլի խումբը, 1981ին:

— 1986ին, Գոքինիոյ Հ.Մ.Լ.Մ.Ի սկառուտական կազմը համաշխարհային Բ.պատերազմէն ետք ունեցած իր բեղուն գործունէութեան համար, նաեւ հելլէն սկառուտական բացառիկ խումբերու շարքին դասուելով, Հելլէն Սկառուտական Խնամակալութեան կողմէ կ'արժանանայ զնահատական վկայականի եւ մետալի:

— 1986ին, կը գումարուի Յունաստանի Հ.Մ.Լ.Մ.Ի 48րդ Շրջ. Ներկայացուցչական Ժողովը, հիւսիսային Յունաստանի մայրաքաղաք Թեսաղոնիկէի մէջ, մասնակցութեամբ՝ Աթէնքի (Ֆիքս), Գոքինիոյ (Բիրէայի շրջան) եւ Թեսաղոնիկէի Մասնաճիւղերու ներկայացուցիչներուն:

Երեք Մասնաճիւղերը միասնաբար ունէին 509 երկսեռ անդամ, ներառեալ սկառուտական կազմերը:

Ֆիքսի Հ.Մ.Լ.Մ.ը Աթէնքի «Յակոբեան» վարժարանի բակէն ներս ունի զոյգ ակումբներ, ժողովատեղի, սկառուտական հաւաքատեղի եւ կ'օգտագործէ պասքեթպոլի դաշտը: Ունի ֆութպոլի, պասքեթպոլի մանչերու եւ աղջիկներու խումբեր եւ լողորդներու երկսեռ խումբ:

Գոքինիոյ Հ.Մ.Լ.Մ.ը կ'օգտագործէ «Զաւարեան» ակումբի մարզադաշտը եւ ժողովասրահները: Ունի ֆութպոլի եւ վոլլապոլի խումբեր:

Թեսաղոնիկէի Հ.Մ.Լ.Մ.ը ունի 5000



Ֆիքսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի սկաուտներու և արենյշներու խմբավետական կազմը, 1982ին:



Գորինիոյ Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի արիներու նուագախումբը և արիները կը տողանցեն, 1984ին:



Գոփինոյ Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի արծուիկները, 1984ին:



Գոփինոյ Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի ֆութպոլի խումբը, 1985ին:



Արեգի Հ. Մ. Ը. Մ. ի ֆիքսի Մասնաճիւղի ֆութպոլի խումբը, 1985ին:



Գոյինիոյ Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի ֆութպոլի խումբը, 1986ին:



Արենի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաթիւղի կրտսերներու ֆութպոլի խումբերը, 1986ին:



ԴԱՆԻԵԼ, ԴԱՆԻԵԼԵԱՆ ԵՒ
ՇԱԽԱՐԾ ՔՀՆՅ. ՄԵՀՐԱՊԵԱՆ, 1951ին:

քառ. մեթր տարածութեամբ սեփական նորակառոյց մարզադաշտ։ Ունի պասքեթ-պոլի մանչերու, աղջիկներու եւ պատանիներու խումբեր։

Երեք Մասնաճիւղերու խումբերն ալ, իրենց շրջաններուն մէջ, կը մասնակցին ախոյեանութեան մրցաշարքերուն։

— 1987ին, Աթէնքի մէջ կը տօնակատարուի Աթէնքի Հ. Մ. Ը. Մ. ի սկառտական կազմի հիմնադրութեան 65ամեակը, հովանաւորութեամբ Շրջ. Վարչութեան։ Այս առիթով, Հ. Մ. Ը. Մ. ի ծառայութեան շքանշանով կը պարգեւատրուի Մասնաճիւղի հիմնադիրներէն Պետրոս Գայեան։

— 1974ին, Հ. Մ. Ը. Մ. ի համագաղութային կառոյցի ստեղծումէն ետք, Ցունաստանի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերը ջերմ սիրով ընդունած են եւ հիւրընկալած՝ Ցունաստանի մէջ կայացած Հ. Մ. Ը. Մ. ի համագաղութային սկառտական ընդհ. բանա-

կումին, սկառտական համագումարին, Հ. Մ. Ը. Մ. ի Պատգ. Ընդհ. ֆողովներուն մասնակցած Հ. Մ. Ը. Մ. ականները։

— Ցունաստանի Հ. Մ. Ը. Մ. ր իր հիմնադրութենէն սկսեալ, իր հանրանուէր գործունէութեամբ եղած է կազմակերպուած ու կենսունակ շրջան մը։ Իր ամբողջական եւ նուիրեալ օժանդակութիւնը բերած է 1946ին եւ 1947ին Հայաստան ներգաղթած յունահայերուն, հայաշունչ մթնոլորտի մէջ կատարուած են ամանորեայ աւանդական հանդիպումները, սկառտական եւ մարզական ձեռնարկները, բանակումները, իր ներկայութիւնն ու մասնակցութիւնը խանդավառող եղած է ազգային տօնակատարութիւններուն, տպաւորիչ՝ յարգանքի յուշահանդէսներուն։

Հ. Մ. Ը. Մ. ի առաքելութեան հանդէպ հաւատքով գործած են ու կը շարունակեն գործել Ցունաստանի Հ. Մ. Ը. Մ. ականները։

ՊՈՒԼԿԱՐԻԱ

— 1921էն սկսեալ, Պուլկարիոյ հայաշատ քաղաքներու մէջ կը հիմնուին Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղեր:

— 1924ին, Ֆիլիպէի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի նախաձեռնութեամբ, կը գումարուի Պուլկարիոյ Հ. Մ. Ը. Մ. ի Պատգմ. Ա. Ժողով, Ֆիլիպէի մէջ, մասնակցութեամբ՝ Հ. Մ. Ը. Մ. ի Սոֆիայի, Վառնայի, Պազարճըգի, Զակորայի եւ Ֆիլիպէի Մասնաճիւղերու պատգամաւորներուն:

— Պատգմ. Ա. Ժողովէն ետք, Հ. Մ. Ը. Մ. ը իբրեւ կազմակերպուած մարզական Միութիւն, բաղդատած գոյութիւն ունեցող հայ մարզական անջատ կազմակերպութիւններու, կը դառնայ Պուլկարիոյ հայ մար-

զական կեղրոնական Միութիւնը, որուն կը միանայ նաև Ֆիլիպէի «Շանթ» մարզական Միութիւնը:

— Պուլկարիոյ Հ. Մ. Ը. Մ. ի Պատգմ. Ա. Ժողովէն ընտրուած Շրջ. Վարչութիւնը, ատենապետութեամբ տոքթ. թ. Թովմասեանի, կը մշակէ Ծրագիր-Կանոնագիր, որ կը վաւերացուի կառավարութեան կողմէ եւ գործադրութեան կը յանձնուի բոլոր Մասնաճիւղերուն:

— Պուլկարիոյ Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Վարչութեան կեղրոնակայր քաղաքները եղած են՝ Ֆիլիպէ (1924-1934), Սոֆիա (1934-1935) եւ Վառնա (1936):



Ոռումանիոյ եւ Պուլկարիոյ շրջաններու Հ. Մ. Ը. Մ. ի պատգամաւորներու խորհրդաժողովէն խմբանկար մը, 1926ին:
Նստած, ձախէն աջ՝ Թագւոր Թագւորեան, Յ. Ճ. Սիրունի եւ Կարօ Ղազարոսեան
(Կարօ Մեհեան):



Վառնայի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի գայլիկներէն խումբ մը:



Խումանիոյ եւ Պուլկարիոյ շրջաններու Հ. Մ. Ը. Մ. ի խորհրդաժողովին
առիթով խմբանկար մը, 1926ին:



Բուսնուֆի Հ.Մ.Ը.Մ. Մասնաճիւղի մարզիկները, 1927ին:



Սոփիայի Հ.Մ.Ը.Մ. Մասնաճիւղի սկառտները, Սոփիայի Տրալեւցի վանքին
առջեւ:

— Ֆիլիպէի եւ Սոֆիայի մէջ, Հ. Մ. Լ. Մ. ի Շրջ. Վարչութեան ատենապետութիւնը կը վարեն՝ Կ. Ղազարոսեան (Կարօ Մեհեան), որ կը խմբագրէ նաեւ Միութեան «Հ. Մ. Լ. Մ.» պաշտօնաթերթը, Յ. Մալխասեան, Ն. Աստուածատուրեան, բժ. Թ. Սեղրակեան, իսկ Վառնայի մէջ Վարչութեան մաս կազմած են՝ տոքթ. Պերճ Հաճոլեան, Բարթող Մինասեան, Յովսէփ Մինասեան, Արշակ Զաքէեան, Կարօ Զիհնձեան:

— 1926 Նոյեմբեր 21-24, Ռուսակութի մէջ կը գումարուի Պուլկարիոյ եւ Ռումանիոյ Հ. Մ. Լ. Մ. ի վարիչ Մարմիններու խորհրդաժողով: Կ'որոշուի՝

Երկու երկիրներու մէջ հրատարակուող Հ. Մ. Լ. Մ. ի պաշտօնաթերթերը՝ Ռումանիոյ «Արի» եւ Պուլկարիոյ «Հ. Մ. Լ. Մ.», միացնել:

Մարմնակրթանքը պարտաւորիչ դարձընել հայ դպրոցներէն ներս:

Կազմակերպել միացեալ դաշտահանդէս:

Պատրաստել սկաուտական եւ մարզական ուղեցոյցներ:

Իրականացնել հայկական ընդհանուր ողիմպիական խաղեր:

Հնտրել Կեդր. Մարմին:

— «Հ. Մ. Լ. Մ. ի Օր»ը առաջին անգամ կը տօնակատարուի Պուլկարիոյ Ֆիլիպէ, Սոֆիա, Ռուսակութի, Հասքով եւ Պազարձրգաղաքներու մէջ:

— 1926ի Ս. Զատիկին, Պազարձրգի մէջ տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ. ի 24 նորընծաներու երդման տպաւորիչ արարողութիւն, որուն պաշտօնապէս ներկայ կ'ըլլան պուլկար սկաուտներ:

— Պուլկարիոյ Հ. Մ. Լ. Մ. ը առաջին տասնամեակին կ'ունենայ տասը Մասնաճիւղեր, որոնք միասնաբար կ'ունենան մօտ 1000 գործօն անդամներ:

— Պուլկարիոյ Հ. Մ. Լ. Մ. ի Շրջ. Վարչութիւնը մինչեւ 1936, կազմակերպած է Միջ-Մասնաճիւղային ինը Ողիմպիական Խաղեր, որոնցմէ եօթը՝ Ֆիլիպէի, մէկը՝



ԿԱՐՈ ՄԵՀԵԱՆ

Սոֆիայի եւ վերջինը՝ 1936ին, Վառնայի մէջ:

— Պուլկարիոյ Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-Մասնաճիւղային Ողիմպիական Խաղերու ախոյեանի տիտղոսը միշտ շահած է Ֆիլիպէի Մասնաճիւղը եւ իր մօտ պահած է ախոյեանի «Վարազդատ Արշակունի» բաժակը:

— Պուլկարիոյ Հ. Մ. Լ. Մ. ի մարզիկներէն Յովսէփ Երեմեան, Վառնայի թենիսի միջազգային մրցաշարքին կը տիրանայ ախոյեանի տիտղոսին: Յ. Երեմեան եղած է նաեւ վազքի ախոյեան:

— Պուլկարիոյ Հ. Մ. Լ. Մ. ի մարզիկներէն Հրայր Մրապեան եւ Եփրատ Յակոբեան, Աթէնքի մէջ տեղի ունեցած միջ-պալքանեան երկիրներու ախոյեանութեան վազքի մրցումներուն կը տիրանան ախոյեանի պատուաբեր տիտղոսին:

— Պուլկարիոյ Հ. Մ. Լ. Մ. ի լաւագոյն ֆութպոլիստներէն եղած են՝ Պետրոս Գաղանճեան, Թորգոմ Գալիփաքճեան, Հրայր Մրապեան, Եր. Քեպապճեան, Յ. Երեմեան:

— Վառնայի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի Փութպոլի խումբը եղած է Պուկարիոյ հայ խումբերու ախոյեանը եւ միշտ իր մօտ պահած է ախոյեանի «Մեծն Տիգրան» բաժակը: Խումբին լաւագոյն Փութպոլիստներէն եղած են՝ Օննիկ Ղարիպեան եւ Կարօ Կարապետեան:

— 1924էն սկսեալ, Սոֆիայի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղին մէջ սկառուտական նուիրեալ աշխատանք տարած է սկառուտապետ Լեւոն Գազանճեան, որուն գործը շարունակած են աքելլա Վարդան Պալթայեան եւ ուրիշ անձնուէր Հ. Մ. Ը. Մ. ականներ:

— Պուկարիոյ մէջ, Հ. Մ. Ը. Մ. ը եղած է

կենսունակ կազմակերպութիւն մը: Մասնաճիւղերու սկառուտական եւ մարզական բոլոր ձեռնարկները իրագործուած են հպարտանք եւ ազգային ոգի ներշնչող մթնոլորտի մէջ:

— Պուկարիոյ մէջ Հ. Մ. Ը. Մ. ը իր առաքելութեան ծառայած է մինչեւ Համաշխարհային Բ. պատերազմի սկիզբը: Այնուհետեւ, թէեւ դադրած չէ գործելէ, սակայն, 1944ին, քաղաքական ծանօթ պայմաններու բերումով, ակամայ լուծուած է եւ Հ. Մ. Ը. Մ. ի ծառայութեան մէջ նուիրեալ ղեկավարներէն շատեր աքսորուած են Սիպերիա, ուր ոմանք կնքած են իրենց մահկանացուն, իսկ ուրիշներ, հետագային ազատ արձակուած են:

Հ. Մ. Ը. Մ. ի ԱՆԴԱՄԻՆ ԵՐԴՈՒՄԸ

«Պատւոյս վրայ կը խոստանամ տառացի կերպով գործադիրել Հ. Մ. Ը. Մ. ի Մրագիր-Կանոնագիրը եւ Հ. Մ. Ը. Մ. ի միշոցաւ հաւատարմօրէն ծառայել ազգիս եւ հայրենիքիս:



Հ. Մ. Ը. Մ. ի ՍԿԱՌԻՏԻՆ ԵՐԴՈՒՄԸ

Պատւոյս վրայ կ'երդնում ըլլալ հաւատարիմ Աստուծոյս եւ ծառայել հայրենիքիս ու ազգիս:

Միշտ օգնել ուրիշին եւ գործել իբրեւ պարտականութեան գիտակից արի եւ վեհանձն մարդ:

Հնազանդիլ հայ սկառուտի Դաւանանքին:

ՌՈՒՄԱՆԻԱ

— 1921ին, Պուքրէշի մէջ, խումբ մը հայ երիտասարդներ կը կազմեն սկառտական միաւոր մը, Երուանդ Սմսարեանի խմբապետութեամբ:

— Սկառտական միաւորին շարքերը օրէ օր կը խտանան: Դեռ տարի մը չբոլորած, միաւորին Վարչութիւնը կը դիմէ Պոլիս, Հ. Մ. Ը. Մ. ի Կեղը. Վարչութեան, մաս կազմելու Հ. Մ. Ը. Մ. ին:

— 1922 Փետրուար 22ին, Հ. Մ. Ը. Մ. ի Կեղը. Վարչութիւնը ընդառաջելով դիմումին, կը վաւերացնէ սկառտական միաւորը եւ հիմը կը դրուի Հ. Մ. Ը. Մ. ի 34րդ՝ Պուքրէշի Մասնաճիւղին:

— Պուքրէշի Հ. Մ. Ը. Մ. ի նորակազմ Մասնաճիւղի Վարչութիւնը եւ իր շուրջ բոլորուած գործօն անդամները՝ Յ. Պղտիկեան, Կ. Փոլատեան, Ղ. Կոնիկեան, Յ. Պասմաճեան, Ա. Սայեան, Գ. Քեստանեան, Յ. Շնորհոքեան, տոքթ. Ա. Տիրացեան, տոքթ. Ուզունեան եւ ուրիշներ, նուիրումով կ'աշխատին Մասնաճիւղի բարգաւաճումին համար, նաեւ նախաձեռնարկ կ'ըլլան եւ Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղեր կը հիմնեն Քոնսթանցայի, Սիլիստրէի եւ Պազարճըի մէջ:

— Քոնսթանցայի մէջ, Հ. Մ. Ը. Մ. ին կը միանայ «Արծիւ» մարմնակրթական ակումբը, իր Փութպոլի խումբերով:

— Պազարճըի մէջ, Հ. Մ. Ը. Մ. ին կը միանայ «Փայլակ» մարմնակրթական Միութիւնը:

— 1923 Օգոստոսին, Քոնսթանցայի մէջ տեղի կ'ունենայ Ռումանիոյ Հ. Մ. Ը. Մ. ի սկառտական առաջին ընդհանուր բանակումը, որուն կը մասնակցին՝ Պուք-

րէշի, Քոնսթանցայի, Պազարճըի եւ Սիլիստրէի Մասնաճիւղերու սկառտական կազմերը:

— 1923ի Սեպտեմբերին, Պուքրէշի Հ. Մ. Ը. Մ. Մ. ի Մասնաճիւղին նախաձեռնութեամբ, կը գումարուի Ռումանիոյ շրջանի Հ. Մ. Ը. Մ. Մ. ի Պատգմ. Ա. Ժողովը: Շրջ. Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ տոքթ. Սալբի, Շ. Կիւրճեան, Վահէ Տիրատուրեան, Յ. Գ. Աթանասեան ե Յ. Ճ. Սիրունի:

— 1924 Փետրուարին, Ռումանիոյ Հ. Մ. Ը. Մ. Մ. ի Շրջ. Վարչութիւնը լոյս կ'ընծայէ «Արի» պաշտօնաթերթը, որ երեք տարի հրատարակուելէ ետք, կը միանայ Ֆիլիպէի մէջ (Պուլկարիա) լոյս տեսնող «Հ. Մ. Ը. Մ.» պաշտօնաթերթին:

— Ռումանիոյ Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերու Փութպոլի, պասքեթպոլի եւ վոլիպոլի խումբերը մաս կազմած են իրենց շրջանի ֆետերասիոններուն եւ մրցումներ կատարած են տեղական խումբերու հետ: Մասնաճիւղերը ունեցած են նաեւ աթլեթիք խաղերու հետեւող մարզիկներ:

— Պուքրէշի եւ Քոնսթանցայի Հ. Մ. Ը. Մ. Մ. ի Մասնաճիւղերը ունէին իրենց մարզադաշտերը:

— 1924 Յունիսին, Պուքրէշի մէջ տեղի կ'ունենան Ռումանիոյ Հ. Մ. Ը. Մ. ի Միջմասնաճիւղային Ա. Ռումանիական Խաղերը: Առաջնութիւնը կը շահին Պուքրէշի Հ. Մ. Ը. Մ. ի մարզիկները, ղեկավարութեամբ՝ մարզիչ Ս. Պապիկեանի:

— 1924ին, Պուքրէշի Հ. Մ. Ը. Մ. ի սկառտական կազմը բեղուն գործունէութիւն կ'ունենայ, Գ. Նազարեանի խմբապետութեամբ: Նոյն տարին կը կազմուի



Պուլքի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի սկաուտ առաջնորդները, 1925ին:

Ութի, աջն երրորդը՝ Կարապետ Լեւոն Պալենեան (ապա՝
Վազգեն Ա. Կաբոդիկոս Ամենայն Հայոց):

Նաեւ գայլիկներու վոհմակը, որուն առաջին աքելլան կ'ըլլայ Յ. Միրիմանեան:
— 1924 Օգոստոսին, Քոնսթանցայի մէջ կը գումարուի Ծումանիոյ շրջանի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղերու Պարգմ. Բ. Ժողովը: Շրջ. Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Յ. Ճ. Միրունի, Յ. Նշանեան, Վ. Տիրատուրեան, տոքթ. Սալբի եւ Վահան Ալթունեան:

— Սթրունկայի մէջ, Շրջ. Վարչութեան ներկայացուցիչներ Յ. Նշանեանի, Յ. Պըգտիկեանի եւ Սթրունկայի որբանոցի մարդանքի ուսուցիչ Յ. Թոքաթլեանի ջանքե-

րով, որբանոցի հայորդիներու անդամագրութեամբ կը հիմնուի Սթրունկայի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը:


— Կալացի մէջ, Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղ կը հիմնուի տոքթ. Սալբիի ջանքերով:

— 1924 Օգոստոսին, Քոնսթանցայի մէջ տեղի կ'ունենայ Ծումանիոյ շրջանի Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-մասնաճիւղային սկաուտական Բ. բանակումը:

— 1925ի Ս. Զատկի տօնական օրերուն, Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ, Պուլքի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղին պատուիրակութիւններ կ'երթան դէպի



Քոնսթանցայի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի սկաուտական կազմը, 1925ին:



Պուլքի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի գայլիկներու խումբը, 1925ին:



Ուժամբիոյ Հ. Մ. Լ. Մ. ի Սկաուտական Բ. Համագումարին մասնակցողներէն խմբանկար մը, 1929ին:
Նստած, ձախէն աջ՝ Համազասպ Թումանեան, Կարպիս Յակոբեան, Յ. Նշանեան, Վահան Կեմինեան,

Ժիրայր Զադաշպանեան, Յակոբ Պատիկեան, Խաչիկ Քերիխեան:

Ոտքի, ձախէն աջ՝ Ժիրայր Գարագաշեան, Անդրանիկ Գարագաշեան, Կարապետ Լեւոն Պալնեան (ապա՝ Վազգէն Ա. Կարողիկոս Ամենայն Հայոց), Պարոյր Տիրապետիրեան, Նազարէք Գագագեան, Կարօ Գուն-
տաքնեան, Վահրամ Շիրինեան, Արշակ Տիրացեան, Արտաշ Տիրապետիրեան:

**Քիշնեւ, Սթրունկա եւ Թրանսիլվանիոյ
հայակերտ հին քաղաք Կեռլա:**

— 1925ին, Սթրունկայի որբանոցի ցրւումով, Հ. Մ. Լ. Մ. ի Շրջ. Վարչութիւնը, որբանոցի Խնամակալութեան հետ համա-
խորհուրդ, կ'որոշէ որբերը համախմբել Հ. Մ. Լ. Մ. ի գրոշին ներքեւ:


— 1925ին, Պուքրէշի մէջ Սթրունկայի որբանոցէն 35 որբեր, որբանոցի իրենց տնօրէնին՝ Սարգիս Սրենցի ներկայու-

**թեամբ, կը կատարեն երդման արարողու-
թիւն ու կը միանան Հ. Մ. Լ. Մ. ի շարքերուն:**

— 1925ին, երբեմնի հայաքաղաք Կեռ-
լա մեկնած Հ. Մ. Լ. Մ. ի 50 հոգինոց պատ-
ուիրակութիւնը, դարերէ ի վեր անտես-
ուած եւ այլասերած կարծուած հայ գաղու-
թի կողմէ ջերմ ընդունելութեան կ'արժա-
նանայ: Հայերէնով բարի գալուստի խօսքը
կ'ըսէ տոքթ. Մարտիրոս Քոփսթան:



Պուլքի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի Կայտերու խումբին առաջնորդուհիները:
Զախէն աջ՝ Սիրան Պոտուրեան, Սրբուհի Էրգեյեան, Տիրուհի Ապակեան,
Էլպիս Գարաբաշեան:



Քննութանցայի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի սկաուտական կազմը, 1930ին:



1931ին՝ Վըլէն տէ Մունքէ բանակավայր:
Նստած՝ Յ. Ճ. Սիրունի: Ռաքի, ճախէն աջ՝ Ժիրայր Զաղացպանեան, Յակոբ
Պղտիկեան, Գեղամ Խաշխաշեան, Ցովսէփ Ապազեան, Արտաշ Տիարպէֆիրեան:



Քոնսթանցայի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնանիւդի սկաուտական կազմը, 1931ին:



Ռումանիոյ Հ. Մ. Լ. Մ. ի սկառտներ, խմբանկարուած՝ Վիլեն տէ Մունքէ,
բանակավայրին մէջ, 1931ին:
Ոտքի, աջէն ձախ երրորդը՝ Յ. Ճ. Սիրունի:

Հ. Մ. Լ. Մ. ի պատուիրակութեան մաս
կը կազմեն՝ Շրջ. Վարչութեան ատենապետ
Յ. Ճ. Սիրունի, մարմնակրթանքի յանձնա-
խումբի անդամներէն Յ. Ապազեան, Կ.
Արսլանեան, Օ. Սինանեան, Պ. Տէյիրմէն-
ճեան, տիկ. Սիրունի, օր. Ապրիլեան, օր.
Թերզեան, Հայր Մկրտիչ Պոտուրեան, քե-
մանչիստ Ռուբէն, սկառտներ եւ մար-
զիկներ:

Մեծ խանդավառութիւն կը ստեղծուի,
կը մատուցուի Ս. Պատարագ, տեղի կ'ու-
նենայ հաւաքական ճաշկերոյթ, կը նուագէ
քեմանչիստ Ռուբէն, կ'երգէ օր. Արմե-
նուհի թերզեան: Կը կատարուի Փութպոլի
մրցում, տեղւոյն «Սփարթա» խումբին դէմ:

Տոքթ. Փափ Կիւրովի բնակարանին մէջ,
մասնակցութեամբ Հ. Մ. Լ. Մ. ի պատուիրա-
կութեան ներկայացուցիչներուն եւ Կեռ-
լայի մարզական շարժման ղեկավարներէն
տոքթ. Փոնկրապ էրնէսի, տեղի կ'ունենայ
խորհրդաժողով եւ հիմը կը դրուի Կեռլայի
Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղին:

— 1925 Յուլիսին, Պուքրէշի մէջ
տեղի կ'ունենան Ռումանիոյ շրջանի Հ. Մ.
Լ. Մ. ի Միջ-մասնաճիւղային Բ. Ողիմպիա-
կան Խաղեր: Օրուան ախոյեան մարզիկը
կ'ըլլայ Վահրամ Մերճանեան, իսկ ախո-
յեան Մասնաճիւղը՝ Պուքրէշ:

— Տեղի կ'ունենայ Պուքրէշի Հ. Մ.
Լ. Մ. ի սեփական ակումբի բացումը:

— 1925ին, տեղի կ'ունենայ Պուքրէշի
Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի մարզիկներուն
եւ սկառտներուն բանակումը, Պարչըքի
մէջ:

Բանակումէն վերադարձին, սկառտ-
ները կը բաժնուին երկու խումբերու: Խըմ-
բապետ կը նշանակուին՝ Յ. Սիրիճանեան
եւ Մ. Շլուկեան, իսկ գայլիկները կը յանձ-
նուին Լ. Շալճեանին:

— 1926ի Մայիսին, Ռումանիոյ աշխա-
տանքի հայազգի նախարար Գրիգոր Թրան-
քու եալ կ'ընտրուի Ռումանիոյ Հ. Մ. Լ. Մ. ի
պատուոյ նախագահ:

— 1926ի Յուլիսին, Կալացի մէջ տեղի
կ'ունենան միջազգային Ողիմպիական Խա-



Պուլքի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի դահուկարշաւի խումբը, 1940-41ին:

ղեր: Առաջնութիւններ կը շահին Հ. Մ. Լ. Մ. ի մարզիկներէն Ն. Մկրեան, Յ. Պետոյեան, Վ. Արգուեան եւ Ա. Խաչիսաշեան:

— 1926ի Սեպտեմբերին տեղի կ'ունեան Ռումանիոյ Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-մասնաճիւղին Գ. Ողիմպիական Խաղեր: Օրուան ախոյեան մարզիկը կ'ըլլայ Մովսէս Շլուկեան, ախոյեան Մասնաճիւղը՝ Պուլքի:

— 1927ին, Պուլքի Հ. Մ. Լ. Մ. ի սկառտական ճիւղէն ներս երկու խումբեր եւս կը կազմուին: Մէկը՝ կայտերու, Վիք-թորիա Օտապաշեանի ղեկավարութեամբ,

երկրորդը՝ երէց սկառտաներու, Յովսէփ Ապաղեանի խմբապետութեամբ:

Վարիչներու շարքին կ'աւելնան նոր երիտասարդներ՝ Ժ. Գարագաշեան, Հ. Թումաճանեան եւ Ա. էրզէեան:

— 1927-1929 տարեշրջաններու համար, Ռումանիոյ նախկին նախարարներէն Ի. Թ. Ֆլորէսքու, Պուլքի Հ. Մ. Լ. Մ. ի տրամադրութեան տակ կը դնէ գաշտ մը:

Նոյն շրջանին, կը ստեղծուի մարզիկուհիներու խումբ մը, օր. Ս. Սվաճեանի ղեկավարութեամբ, իսկ մարզական ճիւղը Ս. Պապիկեանի կողքին ղեկավար ու խըմ-



Պուբլիկայի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի Ալպինիստներու խումբը, 1946ին:

բապետ կ'ունենայ Յ. Փիրանեանը, Յ. Աս-
րագեանը, Ա. Խաչիսաշեանը եւ ուրիշներ:

— 1931ին, Ռումանիոյ Հ. Մ. Ը. Մ. ի
Մասնաճիւղերու սկառտական կազմերը,
Շրջ. Վարչութեան եւ սկառտ-խմբապետ
Ա. Խաչիսաշեանի նախաձեռնութեամբ, կը
վաւերացուին եւ կ'ընդունուին անդամ
ուումէն սկառտական կազմակերպութեան:

— 1931ին, Ռումանիոյ վարչապետ
փրոֆ. Նիքոլայէ Ենորկայի հրաւէրով,
Պուբլիկայի եւ Քոնսմանցայի Հ. Մ. Ը. Մ. ի
սկառտական կազմերը կը հրաւիրուին բա-
նակումի, Վըլէն տէ Մունիթէ: Վարչապետը
կը հետաքրքրուի բանակողներով եւ ան-
ձամբ կ'այցելէ բանակավայր:

— 1932ին, Հ. Մ. Ը. Մ. ի սկառտները
կը մասնակցին Ռումանիոյ սկառտական
ազգային մեծ բանակումին, Սիպուի մէջ,
եւ կ'արժանան գնահատանքի:

— Ռումանիոյ Հ. Մ. Ը. Մ. ի սկառտ
խմբապետներուն մեծ մասը վկայուած է
Պրէազայի սկառտ պետերու մարզարան-
դպրոցէն:

— Ռումանիոյ Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւ-
ղերը ընթացիկ ծրագրով կազմակերպած են
Ս. Ծնունդի Աւետիսի այցելութիւններ,
ծնողական հանդիպումներ, դաստիարակ-
չական արշաւներ, շրջապտոյտներ, այցե-
լութիւններ, նոյեմբեր ամսուն՝ Հ. Մ. Ը. Մ. ի
Օրուան նուիրուած ձեռնարկներ,
ակումբներէն ներս սկառտական, մարզա-
կան եւ մշակութային դասախոսութիւններ:

— Ռումանիոյ Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւ-
ղերուն մէջ, Հ. Մ. Ը. Մ. ականներ տոգոր-
ուած ազգային վառ ու հարազատ ոգիով,
գործած են նուիրումով, կարգապահու-
թեամբ, բարձր պահելով ազգային արժա-
նապատուութիւնը:



Պուբլէշի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի խումբը, 1938ին:



Պուբլէշի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի խումբը, 1939ին:



Քննաթանգայի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի խումբը, 1944ին:



Պուբլէշի եւ Քննաթանգայի Հ. Մ. Ը. Մ. ի
Մասնաճիւղերու ֆինկ-ֆոնկի խումբերը, 1945ին:



Պուբլէշի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի խումբը, 1945-1946ին:



Պուբլէշի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի խումբը, 1948ին:



Վ.Ա.ԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

— 1944 Օգոստոս 23ին, Ռումանիա զինադադարի դաշինք կը կնքէ Խորհրդային Միութեան հետ։ Զախակողմեան «Հայաստանեան ձակատ» կազմակերպութիւնը հաշուեյարդարի կ'ենթարկէ ռումանահայ կազմակերպութիւններն ու Միութիւնները, որոնց շարքին նաեւ՝ Հ. Մ. Լ. Մ.ը։

Բազմաթիւ Հ. Մ. Լ. Մ. ական ղեկավարներ, նաեւ ռումանահայ ազգային գործիչներ, կ'աքսորուին Սիսիրիա, ուր ոմանք կը կնքեն իրենց մահկանացուն, ուրիշներ, հետագային, ազատ կ'արձակուին ու կը վերադառնան։

— 1956ին, Վազգէն Ա. Կաթողիկոս, որ Պուքքչի մէջ, աւագանի անունով Կա-

րապետ Լ. Պալճեան, Հ. Մ. Լ. Մ.ի սկառուտ վարիչ առաջնորդ եղած էր, Անթիլիասի (Լիբանան) Կաթողիկոսարան իր այցելութեան, ընդունելով Հ. Մ. Լ. Մ.ի Լիբանանի, Սուրբիոյ եւ Յորդանանի նորջ. Վարչութեան անդամները եւ խումբ մը Հ. Մ. Լ. Մ. ականներ, մօտէն կը հետաքրքրուի Հ. Մ. Լ. Մ.ի գոյավիճակով, յատկապէս իր գոհունակութիւնը կը յայտնէ սկառուտական կազմերու բեղուն գործունէութեան համար, ընդգը-ծելով, որ Հ. Մ. Լ. Մ.ի սկառուտական կազմերէն հասնող մեր երիտասարդութիւնը հայ հանրային կեանքի մէջ ամենապիտանի եւ արժէքաւոր մարդիկը եղած են։

ՊԵԼՃԻՔԱ

— 1925ին, Պելճիքայի մայրաքաղաք Պրիւքսէլի մէջ, Գովանի եւ Գույումճեան եղբայրներու նախաձեռնութեամբ, հիմը կը դրուի Պրիւքսէլի Հ.Մ.Ը.Պ.ի Մասնածիւղին:

— Պրիւքսէլի Հ.Մ.Ը.Ը. իր հիմնադրութեան առաջին իսկ տարին կ'ունենայ ֆութպոլի բարձրորակ կազմով եւ ինքզինք պարտադրող խումբ մը, գլխաւոր մրցակիցը՝ Պելճիքայի «Ալիանս Խւնիոն», «Պրիւքսէլուա» եւ «Վուայաժէօր» ֆութպոլի ակումբի խումբերուն:

— Պրիւքսէլի Հ.Մ.Ը.Պ.ի ֆութպոլի խումբը յաջորդաբար չորս տարի կը մաս-

նակցի Պելճիքայի ախոյեանութեան մըրցումներուն։ Խումբի ֆութպոլիստներէն Պագըրճեանի, Մաճառեանի եւ Մասեհեանի մասին, պելճիքական թերթերը միշտ գովասանքով կ'արտայայտուին։

— Պելճիքայի Հ.Մ.Ը.Պ.ի Մասնածիւղին նիւթապէս զօրավիզ կ'ըլլան՝ Մարեան եւ Զամքէրթէն ընտանիքները, իսկ Մասնածիւղի ծառայութեան մէջ նուիրեալ աշխատանք կը տանին՝ կ. Գույումճեան, Պ. Մուրատեան եւ Մ. Մալճեան։ Այսուհանդերձ, գաղութի փոքրաթիւ գոյավիճակին բերումով, կարճատեւ կ'ըլլայ Հ.Մ.Ը.Պ.ի գործունէութիւնը Պրիւքսէլի մէջ։



Հ.Մ.Ը.Պ.ի ՆՇԱՆԱԲԱՆԸ

Հ.Մ.Ը.Պ.ի սկառուտութեան նշանաբանն է՝
«ԲԱՐՁՐԱՑԻՌ, ԲԱՐՁՐԱՑՈՒՐ»։

Հ.Մ.Ը.Պ.ի սկառուտը իր գլխարկին եւ գօտիին վրայ կը կրէ այս խորիմաստ նշանաբանը, որուն յղացողը եղած է մեծանուն թուաբանագէտ Պետրոս Ատրունի։

Կա՞յ աւելի նշանակալից խօսք, քան
«ԲարձրացիՌ, ԲարձրացոՒՐ»։

ՖՐԱՆՍԱ

— 1920ին Փարիզի մէջ, խումբ մը մարդասէր երիտասարդներու նախաձեռնութեամբ, հիմը կը գրուի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղին:

— Իզմիրի աղէտէն ետք, 1922ին, Ֆրանսայի հայ գաղութը եւս կը խտանայ Պոլիսէն եւ իզմիրէն գաղթական հայերով եւ Փարիզի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը ընդունելով երիտասարդ ու փորձառու նոր անդամներ, կ'ընդարձակէ իր գործունէութեան դաշտը:

— 1924ին, Փարիզ կու գան Հ. Մ. Լ. Մ. ի նախկին մարզիչներ ու մարզիկներ եւ Մասնաճիւղը աւելի կը հիմնաւորուի:

— Այս շրջանին, Ա. Պէյլէրեանի նախաձեռնութեամբ, կը կազմակերպուին սկառտական խումբեր: Մասնաճիւղը կ'ունենայ նաեւ ֆութպոլի հինգ խումբ, իսկ

անդամներուն թիւը կը հասնի 300ի:

— Փարիզի Հ. Մ. Լ. Մ. ի ֆութպոլի Ա. խումբը, Պօղոս Ֆրէնկեանի անխոնջ ջանքերուն շնորհիւ, փայլուն յաղթանակներ կը տանի տեղական եւ օտար խումբերու դէմ, իսկ Հ. Մ. Լ. Մ. ի բոլոր ձեռնարկները կ'արժանանան փարիզահայ գաղութի անվերապահ քաջալերանքին:

— Փարիզի Հ. Մ. Լ. Մ. ի վարիչներուն քաջալերանքով, լայն ցանցով մը, Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղեր կը հիմնուին նաեւ Փարիզի հայաբնակ արուարձաններուն մէջ՝ Պուա տը Քոլոմպ, իր շրջանակներով, Ալֆորվիլ, Սարսէլ, Արնովիլ լը Կոնէս, Անկիէն, Ռոնի, Ռէնսի, Պէլվիլ, Իթալի, իսի լը Մուլինօ, Գարակէօզեան, Շաւիլ, Ժուանվիլ:

— 1924ին, Վազգէն Անդրէասեանի նա-



ՀԱՅԿԱԶՆ ԱԲԷԼԵԱՆ



ՎԱԶԳԵՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ



Փարիզի Հ. Մ. Լ. Մ. ի ֆութպոլի համբաւաւոր խումբը, 1925ին:

իսածեռնութեամբ, Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղ
կը հիմնուի նաեւ Մարսէլլի մէջ:

— 1926ին տեղի կ'ունենայ Փարիզի եւ
շրջակայքի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղերու
Պատգմ. Ա. Ժողովը: Կ'ընտրուի Շրջ.
Վարչութիւն: Տարի մը յետոյ կ'ընտրուի
նոր Շրջ. Վարչութիւն:

— Փարիզի եւ Մարսէլլի Մասնաճիւղե-
րու նախաճեռնութեամբ, Փարիզի մէջ կը
գումարուի Պատգմ. Ժողով, մասնակցու-
թեամբ՝ Ֆրանսայի Լիոն, Տէսին, Վալանս,
Վիէն քաղաքներու Հ. Մ. Լ. Մ. ի նորակազմ
եւ Փարիզի, Մարսէլլի ու Պրիւքսէլի (Պել-
ճիքա) Մասնաճիւղու, նաեւ Փարիզի կարգ
մը անջատ կազմակերպութիւններու ներ-
կայացուցիչ պատգամաւորներու: Կ'ըն-
տրուի Արեւմտեան Եւրոպայի Շրջ. Վար-
չութիւն, որ սակայն երկար կեանք չու-
նենար:

— Ֆրանսայի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւ-
ղերէն ներս եւ յատկապէս Վարչութեանց
մէջ գործած են տարբեր գաղափարներու

հետեւող անդամներ, որմէ տուժած է Հ. Մ.
Լ. Մ. ը եւ ընդհանրապէս կազմակերպչական
կեանքը վարչական տագնապ եղած է:

— Այսուհանդերձ, նոր սերունդի ապա-
գայով նախանձախնդիր Հ. Մ. Լ. Մ. ական-
ներ, կը կազմեն սկաուտական Յանձնա-
խումբ մը, կը գումարեն Պատգմ. Ժողով,
Կ'ընտրեն Շրջ. Վարչութիւն, նախագահու-
թեամբ Ներսէս Օհանեանի եւ կը հրատարա-
կեն «Հայ Սկաուտ» պաշտօնաթերթը, Կարօ
Ռւշագլեանի խմբագրութեամբ: Փարիզի
շրջանին մէջ, սկաուտներու թիւը կ'անցնի
500ը, կը կազմակերպուին դաշտահանդէս-
ներ, մարզահանդէսներ, որոնք նոր
եռանդ ու աւիւն կը բերեն Հ. Մ. Լ. Մ. ի
շարքերուն:

— 1926ին, Մարսէլլի Հ. Մ. Լ. Մ. ի Մաս-
նաճիւղը կ'ունենայ իր սեփական դաշտը,
ուր տեղի կ'ունենան ֆութպոլի միջազգա-
յին ախոյեանութեան մրցումներ՝ յոյնե-
րու, սպանացիներու, պելճիքացիներու,
իտալացիներու, գուիցերիացիներու եւ



Մարսէլի Հ. Մ. Լ. Մ. ի ֆութպոլի Ա. Խումբը, 1927ին:

Հայերու միջեւ: Հ. Մ. Լ. Մ. ի խումբը իր տարած փայլուն յաղթանակներով մեծ ոգեւորութիւն կը ստեղծէ եւ կը հռչակուի ախոյեան:

— 1930ին, Հ. Մ. Լ. Մ. ի համագաղութային կեղր. Մարմին մը ստեղծելու առաջադրութեամբ, Փարիզի մէջ կը գումարուի Պատգմ. ժողով, մասնակցութեամբ՝ Սուրբիոյ, Լիբանանի, Պալքանեան երկիրներու, Հարաւային եւ Հիւսիսային Ամերիկաներու, Եգիպտոսի, Թաւրիզի եւ Ֆրանսայի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղերը ներկայացնող պատգամաւորներու:

Երկու ամիս կը տեւէ ժողովը: Կը մըշակուի սկաուտական Ծրագիր-Կանոնագիր:

Կեղր. Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Լ. Կիւմիւշկերտանեան, Լ. Բաշալեան, տոքթ. Կ. Գրիգորեան, Զ. Խանզատեան, Ն. Օհանեան, Ն. Գարայեան եւ Ա. Զաքրեան:

Սկաուտական Վերին Մարմնի անդամ կ'ընտրուին՝ ազգ. սկաուտապետ Գրիգոր Յակոբեան, Վահան Փաստըմանեան, Օ. Եղմանեան, Յ. Յովհաննէսեան, տիկ. Հլիէն Բիւզանդ, Յովհ. Պապէսեան եւ շրջա-

նային սկաուտապետ Հայկազն Աբէլեան:

Կեղր. Վարչութիւնը հազիւ տարի մը կեանք կ'ունենայ: Աշխատանքը կը շարունակէ սկաուտական Վերին Մարմինը, մինչեւ 1933: Ապա կ'ընտրուի նոր Շրջ. Վարչութիւն, որ չուտով կը հրաժարի, այս անգամ Ֆրանսայի տնտեսական եւ քաղաքական աննպաստ պայմաններու հարկադրանքի տակ:

— 1934ին, Ներսէս Օհանեան, ազգային սկաուտապետ Գրիգոր Յակոբեան, Հ. Մ. Լ. Մ. ի վարիչներ ու խմբապետներ լիազօրութիւն կուտան Վազգէն Անդրէասեանին, վերակազմելու Ֆրանսայի Շրջ. Վարչութիւնը .եւ սկաուտական Վերին Մարմինը:

— Նորակազմ սկաուտական Վերին Մարմնի որոշումով, սկաուտական պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ Գրիգոր Յակոբեանի, կ'այցելէ Ֆրանսայի կեղրոնական քաղաքներն ու Մարսէլ: Մեծ ոգեւորութիւն կը ստեղծուի, կը գումարուի Պատգմ. ժողով եւ նոր Շրջ. Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Առաքել Զաքրեան, Ս. Տէր Թորոսեան, Վազգէն



Մարսելի Հ. Մ. Ը. Մ. ի պատանիներու ֆութպոլի խումբը, 1956-57ին:

Անդրէասեան, Փափազեան, Խուպրիկեան, Արէլեան, Ասատուրեան եւ Սարաֆեան:

Այս շրջանին, Ֆրանսայի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերը սկառտական եւ մարզական գործունէութեամբ մեծ վերելք կ'արձանագրեն:

— 1945-1946 տարեշրջանին, Մարսէլի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի Ա. Դասակարգի խումբը, Ֆրանսայի Ֆութպոլի Դաշնակցութեան Մարսէլի ենթաշրջանի ախոյեանութեան մրցումներուն կը տիրանայ ախոյեանի տիտղոսին:

— Հ. Մ. Ը. Մ. ի Մարսէլի, Լիոնի, Վիէնի եւ Փարիզի ֆութպոլի խումբերու մասնակցութեամբ, ամէն տարի կը կազմակերպուին Հ. Մ. Ը. Մ. ի միջ-մասնաճիւղային մրցաշարքեր, որոնք տեղի կ'ունենան Մարսէլի, Վիէնի կամ Լիոնի մէջ:

— Հ. Մ. Ը. Մ. ական իրաւարար Վրամշապուհ (Ֆրանսուա) Էօրտէքեան, Մարսէլի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղէն, իրաւարար Կ'ըլլայ ֆութպոլի անուանի խումբերու, նաեւ Ֆրանսայի ազգային խումբի մրցումներուն:

— Կեդրոնական եւ հարաւային ֆրանսայի Լիոն, Կրընոպլ, Տէսին, Վալանս, Նիս քաղաքներու Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերը, առաւել կամ նուազ չափով կ'ունենան կազմակերպուած գործունէութիւն: Ամէնէն աւելի աչքի կը զարնէ՝ Գուլէլիի որբանոցի սկառտաներէն Կօշկակարեանի ջանքերով 1925ին հիմնուած Վալանսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը, իր կազմակերպած ֆութպոլի եւ հեծելարշաւի մրցումներով եւ սկառտական կազմով:

— 1977ին, Պէյրութէն Փարիզ հաստատուած սկառտ-խմբապետ Սուրէն Մուրատեան քանի մը նախկին Հ. Մ. Ը. Մ.-ականներով կը վերակազմէ Փարիզի երեմնի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը, որ պետական ճանաչումով կը կոչուի Հ. Մ. Ը. Մ. ֆրանս:

— 1978ին, Փարիզի Հ. Մ. Ը. Մ. ի նորակազմ Մասնաճիւղի եւ յատկապէս Սուրէն Մուրատեանի ճիգերով եւ ի նշան երախտագիտութեան, գեղեցիկ շիրմաքար մը կը զետեղուի Հ. Մ. Ը. Մ. ի հիմնադիրներէն Գրիգոր Յակոբեանի գերեզմանին վրայ, Փարիզի թիէի գերեզմանատան մէջ:



Ոտքի, ձախէն աջ՝ Սուրէն Մուրատեան, Կարպիս Թէլեան, Յակոբ
Կարապետեան, նստած՝ սոնք. Յ. Պէրպէրեան:



Գրիգոր Յակոբեանի շիրմաքարը
Փարիզի թիեհի գերեզմանատան մէջ:

— 1980ի Օգոստոսին, Փարիզի մօտ Քլամար հայաշատ արուարձանին մէջ, Հ. Մ. Լ. Մ.-Ֆրանս Մասնաճիւղը հիւրընկալը կ'ըլլայ Հ. Մ. Լ. Մ. ի համագաղութային սկառտական Բ. ընդհանուր բանակումին։ Սուրէն Մուրատեան կը նշանակուի բանակումի ընդհանուր խմբապետ։

— 1982ին, Փարիզի Հ. Մ. Լ. Մ. ի պատքանութիւն մանչերու խումբը, Փարիզի միջնանային ախոյեանութեան մրցաշարքին կը տիրանայ ախոյեանի տիտղոսին եւ կը մտնէ մէկ աստիճան բարձր՝ «Պատուոյ Բաժանմունք»էն ներս։

— 1983ին, կը վերակազմուի Վալանսի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը։

— 1983-1984 տարեշրջանին, Փարիզի Հ. Մ. Լ. Մ.-Ֆրանս Մասնաճիւղի ֆութպոլի խումբը իր դասակարգի մրցաշարքին առաջին դիրքը գրաւելով, կ'անցնի աւելի բարձր դասակարգ։ Մասնաճիւղի պասքեթպոլի մանչերու խումբը եւս, Փարիզի եւ շրջակայքի բաժանելի մրցաշարքին յաղթական, կը տիրանայ բաժանին։

— Ֆրանսահայ մարզական կեանքը կը յատկանշուի մասնաւորաբար ֆութպոլի



Փարիզի Հ. Մ. Ը. Մ. — Ֆրանս Մասնաճիւղի ֆութպոլի խումբը, 1983-1984ին:



Փարիզի Հ. Մ. Ը. Մ. — Ֆրանս Մասնաճիւղի պասէթպոլի խումբը, 1983-1984ին:

*Զախէն աջ՝ Վարդան Էքմէքնեան, Տիգրան Շահմիրեան, Յարութիւն Մղտեսեան,
Վարանդ Պաղտասարեան, Աւո Խշվանեան, Վիգէն Մազմանեան, Հրաչիկ Նրեմեան,
Հրաչ Սիսեռեան:*



Վալանսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի ֆութպոլի խումբը, 1986ին:
Մունկի, ձախէն աջ՝ Յարութ Մալեան, Ասատուր Գուլբուժեան, Մուրատ
Ճերմակեան, Ժողեկ Պետիկեան, Պողոս Տերտէրեան:
Ոտքի, ձախէն աջ՝ Հրայր Տէֆիրմէնեան, Թիէրի Շատուրեան, Վահէ
Կօշկարեան, Յակոբ Գուլբուժեան, Աւետիս Անտէզեան, Յակոբ Ենպէֆեան:



Վալանսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի «Կակուղ բարիկ»ներու
ֆութպոլի խումբը, 1986-1987ին:



Վալանսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի «Ճուտիկ»ներու
ֆութպոլի խումբը, 1986-1987ին:



Փարիզի Հ. Մ. Ը. Մ. — Ֆրանս Մասնաճիւղի ֆութպոլի Ա. և Բ.
խումբերը, 1987ին:

խումբերով, որոնց մակարդակը, բաղդատած տեղական խումբերու, կը մնայ տեղական եւ շրջանային լիկերու աստիճանին վրայ: Քանի մը տարեշրջաններ, հայկական խումբերէն ոմանք յաջողած են մասնակցիլ Դ. դասակարգի խումբերու ախոյեանութեան մրցումներուն կամ հասնիլ ֆրանսայի բաժակի մէկ ութերորդ մրցաշարքին:

Հայանուն 10է աւելի ակումբներէն 50էն մինչեւ 60 եւ երրեմն 70 խումբեր կը մասնակցին տեղական կամ շրջանային լիկերու գանգան դասակարգի ախոյեանութեան մրցումներուն:

Հ. Մ. Ը. Մ. ի անունով կը մասնակցին՝ Փարիզի եւ Վալանսի Մասնաճիւղերու, Լիոն-Տեսինի, Վիէնի (Հ. Մ. Ը. Մ. միացեալ՝ Հայ Մարզական Միութիւն) եւ չուրջ 20 տարի առաջ Մարսէլի Հ. Մ. Ը. Մ. ի եւ «Արծիւ» Մարզական Միութեան միացեալ ակումբի խումբերը:

Ֆրանսահայ խումբերը ընդհանրապէս կազմուած են երկու երրորդը օտար եւ մէկ երրորդը հայ ֆութպոլիսներով: Այսուհանդերձ, ֆրանսահայ դադութիւն համար, հայանուն խումբերու գոյութիւնը ազգային

հպարտանք է: Պէտք է նշել նաեւ, որ Փարիզի եւ Վալանսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերը, Տեսինի Հայ Մշակոյթի Տունը կամ Մարսէլի Հ. Մ. Ը. Մ.-«Արծիւ»ը, օրինակ, կը ջանան մրցումներուն ներկայացնել միայն հայ մարզիկներով կազմուած խումբեր:

— 1984ին, Վալանսի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի խումբը, իր դասակարգի 120 խումբերու մրցաշարքին անպարտելի, կը գրաւէ առաջին դիրքը: Իրենց դասակարգերու բաժանումներուն մէջ առաջին դիրքը գրաւած 6 խումբերու միջեւ մրցաշարքին եւս յաղթական, Վալանսի Հ. Մ. Ը. Մ. ի խումբը կը տիրանայ ախոյեանի տիտղոսին:

— 1985ին, Փարիզի Հ. Մ. Ը. Մ.-ֆրանս Մասնաճիւղի Վարչութիւնը կը կազմակերպէ Սուրէն Մուրատեանի յիշատակին նուիրուած պասքեթպոլի բաժակի մրցաշարք, որուն կը մասնակցին Լոնտոնի, Վալանսի եւ Փարիզի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերու պասքեթպոլի խումբերը: Կ'որոշուի «Սուրէն Մուրատեան» բաժակի մրցաշարքը կազմակերպէլ ամէն տարի:

— 1986ին, Վալանսի Հ. Մ. Ը. Մ. ի Մաս-



Փարիզի Հ. Մ. Ը. Մ.-Ֆրանս Մասնաճիւղի սկաուտներու տողանցքը, 1987ին:



Վալանսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի պատմեթպոլի խումբը, 1987ին:

նաճիւղը կը կազմակերպէ, Զատկուայ առիթով, Եւրոպայի Հ. Մ. Ը. Մ. ի Միջ-Մասնաճիւղային Բ. հանդիպումը։ Հայաշունչ մթնոլորտի մէջ, բացման շքեղ տողանցքէն ետք, Փութպոլի եւ պասքեթպոլի մրցումներուն կը մասնակցին՝ Փարիզի, Միլանոյի (Իտալիա), Վալանսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերու եւ Զուլիցերիոյ «Մասիս» ակումբի խումբերը։

— 1988ին, «Սուրէն Մուրատեան» պասքեթպոլի բաժակի մրցաշարքին կը մասնակցին՝ Միլանոյի, Լոնտոնի, Փարիզի եւ Վալանսի Հ. Մ. Ը. Մ. ի խումբերը, նաեւ Փարիզի Հայկական Ընդհանուր Միութեան երկու խումբերը։

— 1987ին, Վալանսի Հ. Մ. Ը. Մ. ի պատմեթպոլի խումբը իր դասակարգի ախոյեան, կը բարձրանայ մէկ աստիճան բարձր դասակարգ։

— 1987ին, Փարիզի Հ. Մ. Ը. Մ.-Ֆրանս Մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան 10ամեակը, իսի լէ Մուլինոյի մարզադաշտին վրայ։ Ֆութպոլի եւ պասքեթպոլի մրցումներուն եւ սկաուտներու առաջնորդութեամբ տպաւորիչ տողանցքին կը մասնակցին՝ Միլանոյի, Յունաստանի, Լոնտոնի, Վալանսի եւ Փարիզի Հ. Մ. Ը. Մ. ի խումբերը, նաեւ Նիսի Հ. Մ. Ը. ի եւ Փարիզի Հ. Մ. Ը. ի խումբերը։

Ա Ն Գ Լ Ի Ա

— 1979ին, իրանի «Արարատ» մշակութային կազմակերպութեան նախկին սկառտապետներ եւ ղեկավարներ, Լոնտոնի մէջ հիմը կը դնեն Անգլիոյ Հայ Սկառտական Միութեան:

Առաջին ժողովին կը մասնակցին՝ 22 հոգի:

Աշխատանքներու ընդհանուր վարիչ կ'ընտրուի աւագ խմբապետ Հրայր Տէր Գրիգորեան, կազմակերպչականի պատասխանատու՝ խմբապետուհի Անահիտ Սարգիսեան, հաշուականի պատասխանատու՝ խմբապետ Զօրիկ Գասպարեան:

Ընդհանուր վարիչը կը նշանակէ հատուածներու պատասխանատուները, երէց-Պարմանուհիներու՝ Բաֆիկ Սարգիսեան, Սկառտաներու՝ Լազար Տէր Գրիգորեան, Արենոյշներու՝ Օտէթ Մինասեան, Արծվիկներու՝ Իվէթ Շահմուրատեան, Գայլիկներու՝ Հրայր Ռոստոմեան:


Ընդհանուր վարիչը, կազմակերպչականի, հաշուականի եւ հատուածներու պատասխանատուները կը կազմեն Անգլիոյ Հայ Սկառտական Միութեան առաջին Գերագոյն Մարմինը:



Անգլիոյ Հ. Մ. Ը. Մ. ի Հայ Սկառտական Միութեան ընդհ. ժողովին մասնակցողները, 1981ին:



Անգլիոյ Հ. Մ. Ը. Ա. Մ. ի Հայ Սկառտական Միութեան
Գերազոյն Մարմինը, 1981ին:



Անգլիոյ Հ. Մ. Ը. Ա. Մ. ի Հայ Սկառտական Միութեան
Երեցներն ու Պարմանուհիները, 1981ին:



Անգլիոյ Հ. Մ. Ը. Ա. Մ. ի Հայ Սկառտական Միութեան
Երեցներն ու Արիները, 1981ին:



Անգլիոյ Հ.Մ.Ը.Մ.ի Հայ Սկառտական Միութեան
Գերազոյն Մարմինը, 1982ին:

— 1980ի Նոյեմբերին, Անգլիոյ Հայ Սկառտական Միութիւնը Հ.Մ.Ը.Մ.ին միանալու համար կը գիմէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդր. Վարչութեան եւ Դեկտեմբերին կ'ընդունուի ու կը միանայ Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային մեծ ընտանիքին:

— 1981ին, կը գումարուի Անգլիոյ Հ.Մ.Ը.Մ.ի Հայ Սկառտական Միութեան տարեկան Ընդհանուր ժողովը, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդր. Վարչութեան ատենապետ Վարդգէս Տէր Կարապետեանի եւ մասնակցութեամբ՝ վարիչ-առաջնորդէն վեր 25 աստիճանաւոր սկառտներու եւ արենոյշներու եւ խորհրդակցական ձայնով 35 հոգիի, զանազան միաւորներու ներկայացուցիչներ եւ նախկին պատասխանատուներ:

— 1981ին, Անգլիոյ Հայ Սկառտական Միութեան Ծրագիր-Կանոնագիրը կ'ենթար-

կուի Հ.Մ.Ը.Մ.ի հետ միացման անհրաժեշտ պատշաճեցումներու:

— 1981ին, Անգլիոյ Հ.Մ.Ը.Մ.ի Հայ Սկառտական Միութեան անդամներուն թիւը կը հասնի 225ի:

— 1982ին, Անգլիոյ Հ.Մ.Ը.Մ.ի Հայ Սկառտական Միութիւնը կ'ունենայ իր առաջին ընդհանուր աստիճանաւորական բանակումը, մասնակցութեամբ՝ սկառտական կազմէն 50 աստիճանաւորներու:

— 1982ին, Անգլիոյ Հ.Մ.Ը.Մ.ի Հայ Սկառտական Միութեան 30 արի-արենոյշներ, տասը ազգերու ներկայացուցիչ 1200 սկառտներու շարքին, կը մասնակցին միջազգային սկառտութեան հիմնադրութեան 75ամեակին առիթով, Լոնտոնի մօտ, Զալֆոնիթ Հայթզ բանակավայրին մէջ տեղի ունեցած միջազգային բանակումին:



Վազգեն Ա. Կաքողիկոս Ամենայն Հայոց
Երջապատուած՝ Լոնտոնի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնանիդի սկաուտական կազմով

Ամենայն Հայոց Վազգեն Ա. Կաքողիկոս, 1983ի Մայիսին, լոնտոնահայ գաղութին տուած իր հովուապետական այցելութեան, ջերմ ու յարգալիր ընդունելութեան կ'արժանանայ Լոնտոնի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնանիդի սկաուտական կազմին կողմէ։ Վեհափառ Հայրապետը, այս առիթով, սկաուտներուն ուղղուած իր պատգամին մէջ, ի միջի այլոց, կ'ըսէ։

«Այս պահին ես շատ յուզուած եմ... ես յիշեցի իմ պատանեկութիւնը, ես էլ ձեզ նման սկաուտ եմ եղած, եւ երկար տարիներ, 12 տարեկանից մինչեւ 20 եւ աւելի, Ռումանիայում...»։

Ռումանիոյ մայրաքաղաք Պուլքէշի հայ ազգային կեանքին մասին վկայելով, ուր եւ ծնած է Վեհափառը, կ'ըսէ։


«...Սկաուտական կազմակերպութիւնը եւ ընդհանրապէս հայ համայնքի կազմա-

կերպութիւնը տեղի ունեցաւ 1920-22 տարիներին եւ ահա այդ օրերին էր, որ իմ մայրը իմ ձեռքը բռնած... բերաւ յանձնեց սկաուտական կազմակերպութեան, այնտեղ էլ նոյն անունն էինք կրում, Հ.Մ.Ը.Մ. — Հայ Մարմարակրթական Ընդհանուր Միութիւն...»

«...Յետոյ մենք մի ժիշ մեծացանք եւ ինքներս եղանք խմբապետ։ Ես, օրինակի համար, եղած եմ 4-5 տարի եւ աւելի եթէ չեմ սխալում, աֆելլա... Նաև՝ փոխ-առաջնորդ»։

Իր հայրենաշունչ պատգամը աւարտելով, Վեհափառ Վազգեն Ա. կ'ըսէ։

«...Զմոռանանք նաեւ որ մեր ազգը տակաւին անելիքներ ունի, որպէսզի ամբողջապէս իրականութիւն դառնան մեր ազգի արդար երազանքները եւ դուք այդ երազանքների զինուորները լինեք հենց այսօրնանից»։



Լոնտոնի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական կազմը, 1984ին:

*Տասը ազգերու դրօշներու շարքին,
առաջինը կը ծածանի հայկական եռագոյն
դրօշը:*

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները իրենց ցուցաբերած կարգությունով, սկաուտի վա-

*յել պահուածքով եւ գիտելիքներու բարձր
մակարդակով, բանակումի ընդհանուր ղեկավարութեան կողմէ կ'արժանանան յատուկ գնահատանքի:*

— 1985ին, Անգլիոյ Հ.Մ.Ը.Մ.ի Հայ



Լոնտոնի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի Վարչութիւնը, 1987ին:
Զախէն աջ՝ Ռուբիկ Գալչեան, Ռաֆֆիկ Սարգսեան, Ռոպերք Օհանեան,
Վիոլետ Թադէոսեան, Ռազմիկ Մենլումեան:



Սկաուտական Միութիւնը վերջնականապէս կ'որդեգրէ Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրը ու կը դառնայ Լոնտոնի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղ:

— 1986ին, Հ.Մ.Ը.Մ.ի համագաղու-

թային սկաուտական Գ. ընդհ. բանակումին գործադրութիւնը եւ հիւրընկալութիւնը կը վստահուի Լոնտոնի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղին: Վարչութեան ատենապետ Միամանթօ Կարապետեանի գլխաւորութեամբ, Լոնտոնի մօտ Զալֆոնթ Հայթզ սկաուտական բանակավայրին մէջ տեղի ունեցած Հ.Մ.Ը.Մ.ի Գ. ընդհանուր բանակումը մեծ յաջողութեամբ կ'իրագործուի:

— Լոնտոնի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի եռանդուն գործունէութեան տարեկան ծրագրին մաս կը կազմեն՝ արշաւներ, ուսուցողական, աշխատանքի բանակումներ, ընդհանուր բանակում, բանակումներու ընթացքին «Այդ» թերթի հրատարակում, տարեղարձի տօնակատարութիւն, երգման արարողութիւն, դաշտահանդէս, Ապրիլ 24ին՝ տողանցքի եւ հացադուլի մասնակցութիւն, Մշակոյթի Օրուայ նշում, Վարդանանցի ոգեկոչումով՝ Հայ Սկաուտի Օրուայ տօնակատարութիւն, Նոր Տարուայ դիմաւորում, Փութպոլի եւ պասքեթպոլի իր խումբերով տեղական եւ միջ-մասնաճիւղային մրցումներու մասնակցութիւն եւ Լոնտոնի Հայ գաղութի ազգային ձեռնարկներուն խանդավակառող մասնակցութիւն եւ պատուաբեր ներկայութիւն:



Լոնտոնի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի պասբեթպոլի խումբը, 1987ին:

Ի Տ Ա Լ Ի Ա

— 1983ին, նախաձեռնութեամբ Ալէքս Պեղիկեանի եւ խումբ մը ազգայիններու, իտալիոյ մէջ Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղ հիմնելու առաջադրութեամբ կազմուած Կարգադիր Յանձնախումբի (ատենապետ Հրայր Բամպուկեան, ատենապահիր ժան Անսըրլեան) հրաւէրով, Միլանոյի «Հայ Տուն»ի սրահին մէջ տեղի կ'ունենայ հիմնադիր առաջին ժողովը:

Ներկայ կ'ըլլան՝ Հ. Մ. Լ. Մ. ի Կեդր. Վարչութեան ատենապետ Վարդգէս Տէր Կարապետեան եւ աւելի քան 70 երկսեռ ազգայիններ, առաւելաբար երիտասարդ, եկած՝ Միլանոյէն, Պերկամոյէն, Փարայէն, Փատովայէն, Վենետիկէն եւ Ճենովայէն եւ երէց նախկին Հ. Մ. Լ. Մ. ականներ, գաղթած՝ Ռումանիայէն, Յունաստանէն, Հալէպէն կամ Պէյրութէն:

Ներկաներէն շուրջ 60 հոգի կ'անդամագրուին: Շաբաթ մը յետոյ, անդամներուն թիւը կը հասնի 80ի:

Առաջին Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Ալէքս Պեղիկեան, Միշէլ Մինասեան, ժան Անսըրլեան, Սօսի Պորանեան, Սարօ Խոտավերտեան, Արմէն Մալոյեան, Յակոբ Պտղունի, Վալոտ Երեմեան եւ Էտվիին Խաչատուրեան:

— 1983ին, Հ. Մ. Լ. Մ. ի 65ամեակին առիթով, իտալիոյ նորակազմ Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի Վարչութիւնը կը կազմակերպէ իր առաջին հրապարակային ձեռնարկը, որ տեղի կ'ունենայ Միլանոյի «Հայ Տուն»ի սրահին մէջ:

Ներկայ կ'ըլլան Հ. Մ. Լ. Մ. ի անդամ ու համակիր շուրջ 150 հոգի, եկած՝ Վենե-



ԱԼԷՔՍ ՊԵՂԻԿԵԱՆ

տիկէն, Փատովայէն, Պերկամոյէն, Փիաչենցայէն, Ճենովայէն, Թորինոյէն եւ Միլանոյէն:

— 1985ին, Հ. Մ. Լ. Մ. ի Կեդր. Վարչութեան նախաձեռնութեամբ, իտալիոյ Միլանո քաղաքի «Հայ Տուն»ի սրահին մէջ կը գումարուի Հ. Մ. Լ. Մ. ի Շրջանային եւ Մեկուսի Մասնաճիւղերու Վարչութիւններու խորհրդաժողով:



Միլանոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի պասիբեթպոլի
խումբը, 1987ին:



Միլանոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի ֆութպոլի
խումբը, 1986ին:



Միլանոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի ֆութպոլի
խումբը, 1987ին:



Միլանոյի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի
1987ին:

Միլանոյի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի
Վարչութիւնն ու անդամները ջերմ հիւրա-
սիրութեամբ կը պատուեն ժողովին մաս-
նակցողները. կը կազմակերպեն շրջապր-
տոյտներ եւ կ'առաջնորդեն տեսարժան վայ-
րեր ու վենետիկի Միլիթարեան վանքը:

Այս առիթով, հիւրընկալ Մասնաճիւղի
Վարչութիւնը կը կազմակերպէ ազգային
եւ ընկերային ձեռնարկներ եւ եւրոպայի
առաջին Միջ-Մասնաճիւղային ֆութպոլի-
երկօրեայ մրցաշարքն ու տողանցքը, որուն
կը մասնակցին Զուլիցերիոյ «Մասիս»,
Վիէննայի «Արարատ», Վալանսի (Փրանսա)
եւ Միլանոյի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղերու
խումբերը:

— 1986ին, Միլանոյի Հ.Մ.Ը.Մ.ի
անդամական Դ. Բնդհ. Ժողովին, Մասնա-
ճիւղի հիմնադիրներէն Հրանդ Բամպակ-

եան կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ.ի ծառայու-
թեան շքանշանին:

— 1987ին, Փարմայի մէջ, տեղի կ'ու-
նենայ Միլանոյի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի
նորակազմ սկաուտական խումբի առաջին
երգման արարողութիւնը: Երգում կը կա-
տարեն 7 արի-արենոյշներ եւ 12 արծուիկ-
գայլիկներ:

— Միլանոյի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնա-
ճիւղը, որուն տրամադրութեան տակ
դրուած է «Հայ Տուն»ը, հայապահպանման
իրեւ ամուր ամրոց, իր անդամներու
եռանդուն գործունէութեամբ, սկաուտա-
կան կազմով, փոքրիկներու երգչախում-
բով եւ մարզական ելոյթներով, կարեւոր
տեղ կը գրաւէ գաղութի ազգային կեանքէն
ներս:

ԱԻՍՏՐԱԼԻԱ

— 1965ին, Աւստրալիոյ հայ գաղութի կազմակերպումին հետ, կը հիմնուի Հ.Մ. Ը. Մ. ի առաջին Մասնաճիւղը, Սիտնիի մէջ, նախաձեռնութեամբ Միջին Արեւելքի արարական երկիրներէն Աւստրալիա գաղթած խումբ մը Հ.Մ. Ը. Մ. ականներու: Հիմնադիր ժողովին կը մասնակցին 40 անդամներ:

— 1966ին, կը հիմնուի նաեւ Աւստրալիոյ Հ.Մ. Ը. Մ. ի երկրորդ Մասնաճիւղը, Մելպուռնի մէջ:

Հիմնադրութեան օրէն, անմիջական գործակցութեան կապ կը հաստատուի եր-

կու Մասնաճիւղերու միջեւ: Կը կազմուին ֆութպոլի, պասքեթպոլի, վոլիպոլի, ֆինկ-ֆոնկի եւ աթլեթիզմի երկսեռ խումբեր:

— 1966ին, երկու Մասնաճիւղերու գործակցութեամբ եւ մասնակցութեամբ, կը կազմակերպուին Աւստրալիոյ Հ.Մ. Ը. Մ. ի Ողիմպիական Խաղերը, Սիտնիի մէջ:

Այնուհետեւ, Ողիմպիական Խաղերը, Աւստրալիոյ Հ.Մ. Ը. Մ. ի Նաւասարդեան Մարզախաղեր անունով, կանոնաւոր յաշորդականութեամբ կը կազմակերպուին ամէն տարի, Դեկտեմբեր ամսուն:



1979ին, Աւստրալիոյ Հ.Մ. Ը. Մ. ի Միջ-Մասնաճիւղային սկաուտական Ա. ընդհանուր բանակումին, գայլիկներն ու մրջնիկները կը խաղան:

— 1978ին, կը հիմնուի Աւստրալիոյ Հ. Մ. Լ. Մ. ի երրորդ Մասնաճիւղը, Արեւմըտեան Սիտնիի մէջ (Ֆերֆիլտ):

— 1978ին, Աւստրալիոյ Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղերէն պատուիրակութիւն մը, — 70 հոգի, անդամ, մարզիկ —, Լոս Անձելըսի մէջ կը մասնակցի Հ. Մ. Լ. Մ. ի Արեւմըտեան Միացեալ Նահանգներու Միջ-Մասնաճիւղային Գ. Ողիմպիական Խաղերուն եւ տողանցքին:

— 1979ին, նախաճեռնութեամբ Հ. Մ. Լ. Մ. ի Կեդր. Վարչութեան, Սիտնիի նորակառոյց Հայ Մշակոյթի Տան մէջ կը գումարուի Աւստրալիոյ Հ. Մ. Լ. Մ. ի Ա. Շրջանային Ժողովը, ներկայութեամբ Կեդր. Վարչութեան ատենապետ Վարդգէս Տէր Կարապետեանի: Կը մասնակցին Սիտնիի, Մելպունի եւ Արեւմըտեան Սիտնիի Մասնաճիւղերէն իրաւասու եւ խորհրդակցական ձայնով 30 անդամներ:

Ա. Շրջանային Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Զաւէն Բրուտեան, Վազգէն Փայլակեան, Արդուշ Աղամալեան, Ռաֆֆի Խրլոբեան եւ Ցովհաննէս Մարտոյեան:

— 1979ին, տեղի կ'ունենայ Աւստրալիոյ Հ. Մ. Լ. Մ. ի Սկաուտական Խորհուրդի կազմակերպութեամբ, Միջ-Մասնաճիւղային սկաուտական Ա. Ընդհանուր Բանակումը, Սիտնիէն 100քլմ. հեռու, Քուրինկա Ջէյս վայրին մէջ: Չորսօրեայ բանակումին, շրջանի երեք Մասնաճիւղերէն կը մասնակցին՝ 133 խմբապետ-խմբապետուհիներ, արիներ, արենոյշներ, գայլիկներ եւ մըջնիկներ:

— 1980ին, Սիտնիի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի սկաուտական խումբերը փառաշուր տօնակատարութեամբ եւ երգման արարողութեամբ կը նշեն իրենց հիմնադրութեան 15ամեակը:

— 1980ին, Սիտնիի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղէն սկաուտներ եւ գայլիկներ կը մասնակցին Աւստրալիոյ Ուկիլուպիի շրջանի Սկաուտական Միութեան կազմակերպած աթլէթիզմի տարեկան մրցումներուն: Կէտաղրութեամբ, Հ. Մ. Լ. Մ. ի սկաուտները ընդհանուր դասաւորման մէջ կը գրաւեն առաջին դիրքը:



Սիտնիի եւ Մելպունի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղերու արիներն ու արենոյշները, 1980ին:



Մելպունի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի ֆինկ-ֆոնկի
խումբը, 1980ին:



Մելպունի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի պասֆեթպոլի
աղջկներու խումբը, 1980ին:



Սիտնի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը
եւ խմբավետական կազմը, 1980ին:



Սիտնիի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի արծուիկներու խումբը, 1980ին:



Սիտնիի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի գայլիկներու վոհմակը, 1980ին:



Սիտնիի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի արենոյշներու խումբը, 1980ին:



Սիտնիի եւ Սիտնիի Արեւմտեան ու Արեւելեան շրջաններու Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաթիւղերու սկաուտական կազմերը կը տողանցեն, 1982ին:



Արեւմտեան Սիտնիի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի պասֆեթպոլի աղջիկներու խումբը, 1982ին:



Արեւմտեան Սիտնիի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի պասֆեթպոլի մանչերու խումբը, 1982ին:

— 1981ին, Սիտնիի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի ֆութպոլի խումբերը, երկցներու եւ կրտսերներու, շրջանի ֆութպոլի Դաշնակցութեան կազմակերպած մրցաշարքերուն, յաղթանակներ կը տանին եւ կը տիրանան բաժակի ու շքանշաններու:

— 1981ին, նախապատրաստական աշխատանքներէ եւ հաւաքոյթէ ետք, տեղի կ'ունենայ Սիտնիի Արեւելեան Շրջանի Հ. Մ. Ը. Մ. ի նորակազմ Մասնաճիւղի հիմնադրութեան պաշտօնական հանդիսութիւնը, Հայ Մշակոյթի կեդրոնին մէջ:

— 1981ին, Մելպուռնի մէջ, տեղւոյն Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի մրջնիկներու կազմէն 7 տարեկան Սիրզան Տօնապետեան կը շահի Վիքթորիա նահանգի լողորդութեան ախոյեանութիւնը:

— 1983ին եւ 1984ին եւս, Հ. Մ. Ը. Մ.-ական լողորդուհի Սիրզան Տօնապետեան նոր յաղթանակներ կը տանի Վիքթորիա նահանգի ախոյեանութեան մրցումներուն:

1983ին, Սիրզան կը լողայ չորս տարբեր ձեւերով ու կը շահի չորս առաջնութիւններ:

Աթլեթիզմի մրցումներուն եւս, 100 մետր, 200 մետր վազքերու եւ մէկ քայլ ոստումի մէջ Սիրզան կը շահի առաջնութեան երեք ժապաւէններ ու կը տիրանայ օրուայ ոսկի մետալին:

— 1983ին, Մելպուռնի մէջ, տեղւոյն Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի Վարչութեան կազմակերպութեամբ, տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի 65ամեակին նուիրուած հրապարակային չքեղ տօնակատարութիւն:

— 1985ին, Մելպուռնի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի պասքեթպոլի մանչերու եւ աղջիկներու Ա. Դասակարգի խումբերը, Մելպուռնի պասքեթպոլի Դաշնակցութեան կազմակերպած մրցաշարքին, կը տիրանան ախոյեանի տիտղոսին եւ բաժակին:

— 1985ին Սիտնիի եւ 1986ին Մելպուռնի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերը, յաջորդաբար 19րդ եւ 20րդ Միջ-Մասնաճիւղային Նաւասարդեան Խաղերու առընթեր, կը տօնեն իրենց Մասնաճիւղերու հիմնադրութեան 20ամեակը:



Արեւելեան Սիտնիի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի կրտսեր մանչերու պասքեթպոլի խումբը, 1983ին:

— 1979ին սկսեալ, Աւստրալիոյ Հ. Մ. Ը. Մ. ի սկառուտական ընդհանուր բանակումները, Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Սկառուտական Խորհուրդի կազմակերպութեամբ, Սիտնիի, Մելպուռնի կամ սկառուտական այլ բանակավայրերու մէջ, մասնակցութեամբ արիներու, արենոյշներու, գայլիկներու եւ մրջնիկներու, իրենց նպատակը արդարացնող բանակումներ կ'ըլլան, ուր վերջին օրը կ'այցելեն ծնողներ եւ ազգայիններ, կը դիտեն սկառուտական ձեռային աշխատանքները, ամբողջ օրը կը մնան բանակավայրին մէջ եւ ներկայ կ'ըլլան չորսօրեայ բանակումէն մեկնումի խարոյկահանդէսին:

— Աւստրալիոյ Հ. Մ. Ը. Մ. ի Միջ-Մասնաճիւղային Նաւասարդեան Խաղերը, կանոնաւոր յաջորդականութեամբ, ամէն տարի, Դեկտեմբերի վերջերուն, տեղի կ'ունենան Սիտնիի կամ Մելպուռնի մէջ, նախաձեռնութեամբ Շրջ. Վարչութեան եւ մասնակցութեամբ Սիտնիի, Մելպուռնի, Արեւմտեան Սիտնիի եւ Արեւելեան Սիտնիի Մասնաճիւղերու երկսեռ մարզիկներու եւ սկառուտական կազմերու:



Մելպուռնի եւ Արեւելեան Սիտնիի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղերու
մեծ աղջկներու պասխեթպոլի խումբերը, 1984ին:



Մելպուռնի եւ Արեւելեան Սիտնիի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղերու
կրտսեր մանչերու պասխեթպոլի խումբերը, 1984ին:



Մելպուղմի, Սիտնիի եւ Արեւելեան Սիտնիի Հ. Մ. Ը. Մ. ի
Մասնաթիւղբու ֆութպողի խումբերը, 1984ին:



Աւատրալիոյ Հ. Մ. Ը. Մ. Ի Ներկայացուցչական 4րդ ժողովին մասնակցող ներկայացուցիչները:

Ա. շարք, ձախէն աջ՝ Բագրի Խրլորեան, Պերթ Մումբան, Արդուշ Աղամալեան, Յովհաննէս Մարտոյեան,
Արման Ֆերհատեան, Անդօ Բանյեան, Կարպիս Պազալեան, Շանթ Աւագեան, Կիրակոս Պազալեան:

Բ. շարք, ձախէն աջ՝ Պետօ Գարլանեան, Զարեհ Հալանեան, Սարգիս Պատիկեան, Յարութիւն Քէօշկերեան,
Սարգիս Տէր Պետրոսեան, Զարմիկ Ցակորեան, Սարգիս Պէրպէրեան:

Գ. շարք, ձախէն աջ՝ Փայլակ Աղամեան, Հրայր Ինկիլիզեան, Եփրատ Իվանեան, Զաւէն Բրուտեան, Տիգրան
Ամիրեան, Լեւոն Պալգապանեան, Երեմ Շահինեան, Ժիրայր Պատիկեան, Ցակոր Զարուկեան:

Դ. շարք, ձախէն աջ՝ Վարնա Մանկասարեան, Գօօ Խաչտուրեան, Կարօ Եփրաննեան, Հերա Գրիգորեան,
Հրանդ Զուրիկեան, Մանուկ Մկրեան, Արա Չորլեան:





Սիտնիի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի գայլիկ-մարզիկները, 1980ին:



Սիտնիի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը, 1981ին:

Նստած, ձախէն աջ՝ Կատարինէ Ինկիլիզեան, Մարկօ Մարտիրոսեան, Ալիս
Մովսեսան:

Ոտքի, ձախէն աջ՝ Յակոբ Խաչոյեան, Մակար Օփոյեան, Սարգիս Սարգիսեան,
Յակոբ Նազարեան, Զաւեն Սարգիսեան, Ներսէս Ներսէսեան:



ՍԻՒԶԱՆ ՏՕՆԱՊԵՏԵԱՆ

Ամբողջ շաբաթ մը, հայաբոյր մթնուրտի մէջ տեղի կ'ունենան ֆութպոլի, պասքեթպոլի, վոլիպոլի, փինկ-փոնկի եւ աթլէթիզմի տաք ու հետաքրքրական մըրցումներ, սկառուտական նուագախումբի առաջնորդութեամբ տպաւորիչ ու չքեղ տողանցք եւ յաղթանակի պարահանդէս:

— Մայիս 28, Հայաստանի անկախութեան տարեդարձին առիթով, ամէն տարի, Սիտնիի մէջ, Շրջ. Վարչութեան կազմակերպութեամբ, Աւստրալիոյ Հ. Մ. Լ. Մ.ի սկառուտական կազմերը, իրենց նուագախումբին առաջնորդութեամբ եւ բազմահարիւր հետեւողներու մասնակցութեամբ կը կատարեն Մայիսեան յաղթանակի չքեղ տողանցք, դէպի Զացտվուտի Անծանօթ Զինուորի Յուշարձանը, ուր տպաւորիչ արարողութեամբ, եռագոյն ծաղկեպսակ կը դնեն:

— Աւստրալիոյ Հ. Մ. Լ. Մ.ի Մասնաճիւրերը միշտ պատրաստ, կը մասնակցին Հայ Դատի հետապնդման աշխատանքնե-

րուն եւ հրապարակային հաւաքներուն ու ցոյցերուն, իսկ Մեծ Եղեռնի նահատակաց Օրուայ՝ Ապրիլ 24ի առիթով, սկառուտական կազմերը իրենց նուագախումբով կը մասնակցին յարգանքի տողանցքին եւ Անծանօթ Զինուորի Յուշարձանի ծաղկեպսակի զետեղումի արարողութեան:

— Աւստրալիոյ Հ. Մ. Լ. Մ.ի չորս Մասնաճիւրերու նուիրեալ անդամները, ամբողջ փաղանգ մը եւ սկառուտ խմբապետներն ու իրենց յաջորդող սերունդը, մարզական գործունէութեան առընթեր, ընկերային հաւաքոյթներով, բանակումներով, Միջ-Մասնաճիւրային հանդիպումներով, տօնակատարութիւններով եւ ազգային ու մշակութային ձեռնարկներով վառ կը պահեն աւստրալահայ գաղութէն ներս ազգային ոգին, տեւաբար եռանդ եւ ուժականութիւն տուող աւիշ ներածելով մեր անժամանցելի արդար դատի հետապնդման եւ գոյատեւման պայքարին:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

— 1927ին կը հիմնուի Հարաւային Ամերիկայի Հ.Մ.Ը.Մ.ի առաջին Մասնաճիւղը, Արժանթինի մայրաքաղաք Պուէնուայրէսի մէջ:

— Հիմնադրութեան օրէն, Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը հիմնաւորելու աշխատանք կը տարուի: Հիմնադիր 25 անդամներու վրայ շուտով կ'աւելնան 35 նոր անդամներ:

— Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի առաջին Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Կարօ Գալիկեան, Յովսէփ Ասլանեան, Գրիգոր Ասատուրեան, Վալենթին Արթինեան եւ

Մանուկ Ասլանեան:

— 1928ին, ներկայացում-պարահանդէս մը կը կազմակերպուի, ապա կարելի կ'ըլլայ վարձել սենեակ մը, որ կը վերածուի ակումբի:

— 1929ին, Հայ Կեդրոնի Վարչութեան թոյլտուութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ին կը տրամադրուի Հայ Կեդրոնի հողը, որ զայն կը վերածէ փոքրիկ մարզադաշտի մը:

— 1933ին, Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի Վարչութիւնը կը վարձէ հողամաս մը, կը վերածէ մարզադաշտի ու կը գործածէ մինչեւ 1938:



1927ին, Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաթիւդի հիմնադիր անդամներէն՝

Նստած, ձախէն աջ՝ Արքահամ Մազլըմեան, Կարօ Գալիկեան:
Ոտքի, ձախէն աջ՝ Մանուկ Ասլանեան, Յովսէփ Ասլանեան, Գրիգոր Ասատուրեան, Վալենթին Արթինեան:

— 1934ին, Թաղէոս Մեծատուրեան եւ Լեւոն Գամեան հայ սկառտական միաւոր կազմելու նախափորձ կը կատարեն ու կը յաջողին, հակառակ անոր, որ սկառտական շարժումը Արժանթինի մէջ պետական դրոշ ունէր: Երեք տարի միայն կը յաջողին ձեռնարկներ եւ արշաւներ կազմակերպել:

— 1938ին, Պագրծեան Հաստատութիւնը ընդառաջելով Հ. Մ. Լ. Մ. ի Վարչութեան դիմումին, սիրով կը տրամադրէ Օլիվոսի մէջ ունեցած իր մարզադաշտը Հ. Մ. Լ. Մ. ին: Հաստատութեան տնօրէնը՝ Արմէն Պէրկամալի, անդամուհիներ եւ Հ. Մ. Լ. Մ. ին, մարզադաշտի գործածութեան համար:

— 1938ին տեղի կ'ունենայ Պուէնոս Այրէսի Հ. Մ. Լ. Մ. ի առաջին Ողիմպիականը, Օլիվոսի մարզադաշտին վրայ:

— 1939ին, Պուէնոս Այրէսի Հ. Մ. Լ. Մ. ի 220 անդամներու շարքին կը միանան մօտ 40 անդամուհիներ եւ Հ. Մ. Լ. Մ. ը կը դառնայ 260 երկսեռ անդամ ունեցող կազմակերպութիւն:

— Պուէնոս Այրէսի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը հիմնադրութեան տարիէն կը կազմէ Փութպոլի խումբ, որ մրցումներ կը կատարէ տեղական խումբերու հետ, ապա պասքեթպոլի խումբ, որ տեղական լաւագոյն խումբերու դէմ իր կատարած մրցումներուն յաճախ յաղթանակներ կը տանի ու կը շահի բաժակներ: Հ. Մ. Լ. Մ. ի մարզիկները ուշագրաւ կ'ըլլան նաեւ թենիսի եւ աթլէթիզմի մրցումներուն:

— 1939ին, Ռիօ տը Բլաֆայի յորդումին հետեւանքով, Հ. Մ. Լ. Մ. ի մարզադաշտն ու իր չէնքը կ'աւերուին: Հ. Մ. Լ. Մ. ի վարչականներուն եւ անդամներուն ջանքերուն շնորհւ, մարզադաշտը կրկին գործածելի կը դառնայ:

— 1942ին, Պուէնոս Այրէսի Հ. Մ. Լ. Մ. ի Վարչութիւնը կը կազմակերպէ Նաւասարդեան տօնակատարութիւնը, որ մեծ յաջողութեամբ կ'իրագործուի, կ'ապահովէ նաեւ նիւթական շահ, որ կորիզը կը կազմէ հետագային Պուէնոս Այրէսի արուարձաններէն Ռամոս Մեխիայի մէջ Հ. Մ. Լ. Մ. ի մարզադաշտի գնման:

— Պուէնոս Այրէսի Հ. Մ. Լ. Մ. ի Վարչութեան կազմակերպած Նաւասարդեան Մարզախաղերը մեծ հետաքրքրութիւն կը ստեղծեն. հետագային կը մասնակցին նաեւ ազգային վարժարաններու, հայ ակումբներու եւ Հ. Մ. Լ. Մ. ի նորաստեղծ Մասնաճիւղերու երկսեռ մարզիկները:

— 1946ին, բարերարուհի տիկ. Մարթա Տիարպէքիրեանի ջանքերով, հիմը կը դրուի Ռամոս Մեխիայի Հ. Մ. Լ. Մ. ի մարզադաշտին: Այնուհետեւ, վարչականներու եւ անդամներու անձնուէր աշխատանքով եւ ժողովրդային նուիրատուութեամբ, տարիներու ընթացքին կը բարեզարդուի մարզադաշտը, կը դառնայ արդիական եւ ծաւալուն կեղրոնատեղի մը, գոց մարզարանով, ջրաւագանով, գրադարանով, ժողովատեղիներով, մեծ ու փոքր սրահներով եւ այլ յարմարութիւններով, կը դառնայ ամէն կիրակի երիտասարդները, մեծն ու պատիկը իրեն քաշող հայկական օճախ մը, փոքրիկ Հայաստան մը:

— 1952ին, արիներու կրտսերաց խումբերու կազմութիւնը արտօնուած ըլլալով, Հ. Մ. Լ. Մ. ի հոգեւոր Հայր Շաւարշ Քնյայ. Մեհրապեան, Վարչութեան ատենապետ Յովհաննէս Ստեփանեան, Կարպիս Տէր Մեսրոպեան, Կարօ Գալիկեան, Զարեհ Տէմիրճեան, Պարոյր Զանիկեան, Յարութիւն Մանուկեան եւ Անդրանիկ Մուրատեան կ'որոշեն Հայ Արիներու Խորհուրդ մը կազմել եւ յառաջացնել Հ. Մ. Լ. Մ. ի Արիներու կրտսերաց խումբեր:

— 1953ին կը կազմուի Պուէնոս Այրէսի Հ. Մ. Լ. Մ. ի Արիներու կրտսերաց խումբը, 28 գայլիկներով եւ կը սկսի հրատարակուիլ սկառտական «Նաւասարդ» ամսագիրը:

— 1954ին, 1955ին եւ 1956ին, յաջորդաբար երեք տարի, Պուէնոս Այրէսի Հ. Մ. Լ. Մ. ի Վարչութեան հովանաւորութեամբ եւ Արիներու Խորհուրդի կազմակերպութեամբ տեղի կ'ունենան Արիներու կրտսերաց խումբի շուրջ երեք շաբաթ տեւող ամառնային բանակումները, Հ. Մ. Լ. Մ. ի Ռամոս Մեխիայի մարզարանի հայաբոյր մթնոլորտին մէջ:



Պուենս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը,
1956ին:



Պուենս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի Վարչութիւնը, 1957ին:
Նստած, ձախէն աջ՝ Յակոբ Մսրբյան, Արամ Կիւգէլեան, Պարգև
Պարսամեան, Արմենակ Ֆէրէնեան, տոքք. Հրաչ Յովակիմեան:
Ոտքի, ձախէն աջ՝ Մկրտիչ Նազարեթեան, Սեղրակ Օհանեան, Վազգէն
Թիւթիւնեան, Կարապետ Թոփալեան, Հայկ Լեւնեան, Վահագն
Իսրայէլեան:

— 1956ին, պետական արտօնութեամբ, կը կազմուի Պուէնոս Այրէսի Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղի Սկաուտական առաջին խումբը: Քաջալերելու համար շարժումը, վեթերան սկաուտներու մասնակցութեամբ կը կազմուի Սկաուտական Ծնողական Խորհուրդ, ատենապետութեամբ Արտաշէս Պարսամեանի:

— 1957ին, Պուէնոս Այրէսի Հ.Մ.Լ.Մ.ի պասքեթպոլի խումբը եւ նորակազմ սկաուտական խումբը կը մեկնին Պուէնոս Այրէսէն մօտ 1000 քլմ. հեռու Գորտոպա, ուր մրցումներ կը կատարեն տեղւոյն «Արմենիա» երիտ. Միութեան «Անդրանիկ» խումբին դէմ:

— 1957ին տեղի կ'ունենայ Պուէնոս Այրէսի Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտական բանակումը դէպի Մորենօ, Հ.Մ.Լ.Մ.ական Աշարձեան եղբայրներու «Էլ Թրէպոլ» ամառանոցը: Ընդհանուր սկաուտապետ Կարպիս Տէր Մեսրոպեանի ղեկավարութեամբ, 21 օրեայ բանակումին կը մասնակցին 88 սկաուտներ եւ 32 գայլիկներ:

— 1958ին, Պուէնոս Այրէսի Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտները թիկրէի ողողուած շըրջանը կ'երթան, օգնելու համար աղէտեալներուն: Իրենց հետ կը տանին մեծ քանակութեամբ հագուստ, ղեղորայք եւ ֆլորէսի

տեղացի ժողովուրդէն հաւաքուած նուէրներ:

— 1958ին, Պուէնոս Այրէսի Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտական կազմը կ'ունենայ Արենոյշներու առաջին խումբը, 40 հայուհիներու անդամագրութեամբ:

— 1958ին, Հ.Մ.Լ.Մ.ի հիմնադրութեան 40ամեակին առիթով, Հ.Մ.Լ.Մ.ի Ռամոս Մեխիայի մարզավայրին մէջ բացումը կը կատարուի Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտական նորակառոյց սրահ-ակումբին:

— 1958ին, Պուէնոս Այրէսի Հայ Կեդրոնի սրահին մէջ, չքեղ հանդիսութեամբ կը նշուի Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտական կազմի երրորդ տարեղարձը: Սկաուտական կազմը ունէր 215 անդամ:

— Պուէնոս Այրէսի Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտական հաճելի եւ դաստիարակիչ բանակումները կը շարունակուին: 1958ին՝ դէպի Փետերնալէս, «Մեսրոպեան» ազարակ: 1959ին՝ դէպի Գորտոպա, Ալթա-Կրասիայի մօտ, Անիսաքաթէի գետափի դաշտավայրը, ուր ջերմ հիւրընկալութեան կ'արժանանան Գորտոպայի Հ.Օ.Մ.ի եւ «Արմենիա» երիտ. Միութեան կողմէ: 1959ին նաեւ արենոյշներու բանակումը, Հ.Մ.Լ.Մ.ի Ռամոս Մեխիայի մարզավայրին մէջ:



Պուէնոս Այրէսի Հ.Մ.Լ.Մ.ի ՄասնաՅի գայլիկներու վոհմակները, 1957ին:



Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաթիւղի Վարչութիւնը, 1959ին:
Նստած, ձախէն աջ՝ Յակոբ Մսքրիեան, Հայկ Լեւնեան, Յովհաննէս
Ստեփանեան, Պարգևի Պարսամեան, Արամ Կիւզելեան:
Ոտքի, ձախէն աջ՝ Ճորբ Տաղլեան, Լ. Թէրզեան, Սեդրակ Օհանեան,
Բառլ Պետիկեան, Յ. Թորգոմեան:



Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաթիւղի Սկաուտական եւ Ծնողական
Խորհուրդները, գայլիկներու եւ արենոյշներու հետ, 1959ին:



Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի Սկառուտական Խորհուրդը, 1959ին:
Նստած, ձախէն աջ՝ Օհան Գալիքաքեան, Պարոյր Զանիկեան, Կարպիս Տէր Մեսրոպեան,
Մանուշակ Մեսրոպեան, Գասպար Անէմեան:
Ոտքի, ձախէն աջ՝ Մեսրոպ Տէր Մեսրոպեան, Արամ Գալիքաքեան, Յարութիւն
Ծառուկեան, Ալիս Յովսէփեան, Գառնիկ Եկմէնինեան, Յարութիւն Յովհաննէսեան:

— 1959ին, Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտաները եւ արենոյշները կը մասնակցին Ապրիլ 24ի սպատօնին, ապա, ընդառաջելով «Արմենիա» Մշակութային Ընկերակցութեան հրաւերին, ներկայ կը գտնուին եւ տողանցքով կը մասնակցին Մունրօ թաղամասի «Արմենիա» փողոցի բացման հանդէսին:

— 1959ին, Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտական Ա. խումբի աստիճանաւորական կազմը լեռնարշաւ մը կը կատարէ դէպի Պուէնոս Այրէսէն 650 քլմ. հեռու, Սիէրա տէ լա Վենթանա լեռնաշրջադաշտի բարձունքը:

— 1960ին տեղի կ'ունենայ Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտներու, արենոյշներու եւ գայլիկներու բանակումը, Միրամար քաղաքի բանակավայրին մէջ:

— 1971ին, Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղէն 13 սկառուտներ կը մասնակցին միջազգային սկառուտական 13րդ ճեմպորիին, ձափոնի մէջ:

— 1980ի Մարտին կը հիմնուի Գորտո-

պայի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղը: Տեղւոյն «Բէպէս» ակումբի սրահին մէջ տեղի կ'ունենայ հիմնադրութեան հանդէսը, ներկայութեամբ շուրջ 500 հանդիսականներու եւ Պուէնոս Այրէսէն մեծաթիւ պատուիրակութեան մը, գլխաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդր. Վարչութեան անդամ Պարգեւ Պարսամեանի եւ Մասնաճիւղի Վարչութեան ատենապետ Ճորժ Տաղլեանի:

— 1980ի Հոկտեմբերին, Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի Վարչութեան կազմակերպութեամբ, Ռամոս Մելիխայի մարզադաշտին վրայ տեղի կ'ունենան աւանդութիւն դարձած Նաւասարդեան խաղերը, որոնց առաջին անգամ կը մասնակցին եւ յաւելեալ փայլ կու տան Գորտոպայի Հ.Մ.Ը.Մ.ի նորաստեղծ Մասնաճիւղէն շուրջ 50 մարզիկներ:

— 1980ին կը հիմնուի Վալենթին Ալսինայի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղը:

— 1981ին, Վալենթին Ալսինայի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղը եւ Խրիմեան Կրթական Հիմնարկութիւնը միասնաբար կը կատարեն



Գորտոպայի Հ. Մ. Ը. Մ. ի միջի ֆութպոլի խումբը, 1980ին:



Պուէնս Այրեսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի
պասիքեթպոլի մանչերու խումբը, 1980ին:



Գորտոպայի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի պասիքեթպոլի
մանչերու խումբը, 1980ին:

Հիմնարկութեան դիմաց նոր մարզադաշտի մը բացումը:

— 1981ին, Պուէնոս Այրէսի մէջ մեծ շուրջով կը նշուի Արժանթինի Հ. Մ. Լ. Մ.ի սկառատութեան հիմնադրութեան 25ամեակը:

— Հ. Մ. Լ. Մ.ի սկառատական, նաեւ երիտասարդական բանակումները, տարբեր բանակավայրերու մէջ, կը շարունակուին հետեւղական ծրագրով եւ կ'իրագործուին իրենց նպատակը արդարացնող յաջողութեամք:

— Գորտոպայի Հ. Մ. Լ. Մ.ի Մասնաճիւղը, իր հիմնադրութեան թուականէն՝ 1980էն սկսեալ, կը կազմակերպէ Հ. Մ. Լ. Մ.ի Միջ-Մասնաճիւղային հետաքրքրական մրցումներ:

— Պուէնոս Այրէսի Հ. Մ. Լ. Մ.ի Մասնաճիւղի կազմակերպած Նաւասարդեան խաղերը, որոնք մեծ յաջողութեամբ կ'իրագործուին Հ. Մ. Լ. Մ.ի Ռամոս Մեխիայի մարզադաշտին վրայ, տարուէ տարի աւելի մեծաթիւ մասնակցութիւն կ'ունենան:



Պուէնոս Այրէսի Հ. Մ. Լ. Մ.ի Մասնաճիւղի հետապոլի աղջկանց խումբը, 1981ին:



Պուէնոս Այրէսի Հ. Մ. Լ. Մ.ի Մասնաճիւղի վոլիպոլի աղջկանց խումբը, 1983ին:



Պուէնս Այրէսի Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղի վոլիպոլի
մանչերու խումբը, 1983ին:



Մոնթեվիտէոյի Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղի համազօր
«Վոամեան» ակումբի վոլիպոլի աղջիկներու
խումբը, 1983ին:

— 1982ի Նաւասարդեան խաղերուն կը
մասնակցին՝ Պուէնոս Այրէսի եւ արուար-
ձաններու հայկական վարժարանները, գա-
ղութի մարզական Միութիւնները, Հ.Մ.
Լ.Մ.ի Պուէնոս Այրէսի, Գորտոպայի եւ
Վալենթին Ալսինայի Մասնաճիւղերը եւ
Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղի համազօր՝ Մոն-
թեվիտէոյի «Վոամեան» ակումբը եւ Սան
Փաւլոյի «Քլուպ Արմենիօ»ն:

— 1985ին տեղի կ'ունենայ Գորտոպայի
Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղի լողաւազանի եւ
մարզադաշտի բացումը:

— 1986 Յունուար 11էն 28, Պուէնոս
Այրէսի Հ.Մ.Լ.Մ.ի սկառուտները, արե-
նոյշները, գայլիկները եւ արծուկիկները,
թիւով 120 հոգի, բանակումի կ'երթան մայ-
րաքաղաքէն 1700 քլմ. հեռու՝ Պարիլոչէի
շրջանը: Բանակողներուն կ'ընկերանայ



Մոնթեվիտէոյի Հ. Մ. Ը. Մ. ի «Վռամեան» Մասնաթիւղի հիմնադիր ժողովը, 1987ին:

Կազմեցէ՛ք Հ. Մ. Ը. Մ. ի խումբեր, հո՛ն ուր չկան:
իսկ հոն՝ ուր կան արդէն, պահանջեցէ՛ք որ կազմեն սկառ-
տական խումբեր:

Հ. Մ. Ը. Մ. ի հիմնադիրները առանց պատճառի չեր որ որդեգ-
րեցին «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն» վերտա-
ռութիւնը: Մարմնամարզական բառը բաւական չեր հիմնադիրնե-
րուն իտէալը պարզելու համար: Մեր որդեգրածը մարմնամարզը
չեր միայն, այլ մարմնակրթութիւնը, իր լայն, ամբողջական եւ
բարերար իմաստովը:

ԳՐԻԳՈՐ ՑԱԿՈԲԵԱՆ



Պուէնս Այրէսի Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղի ֆութ-
պոլի խումբը, 1983ին:



Վալենթին Ալսինայի Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղի ֆութ-
պոլի խումբը, 1983ին:

**Խմբապետական կազմը, Ստեփան Արսլան-
եանի ընդհանուր պատասխանատուու-
թեամբ:**

— 1987ին, Պուէնս Այրէսի Հ.Մ.
Լ.Մ.ի Մասնաճիւղի Վարչութեան հետա-
պնդումներով, Մոնթեվիտէոյի մէջ, 30
անդամ-անդամուհիներով կը հիմնուի Հ.Մ.
Լ.Մ.ի «Վռամեան» Մասնաճիւղը:

— Հարաւային Ամերիկայի Հ.Մ.Լ.Մ.ի
Մասնաճիւղերու բոլոր ձեռնարկներուն,
Նաւասարդեան հանդիսութիւններուն, միջ-
դպրոցական, միջ-ակումբային եւ

Մասնաճիւղային մրցումներուն, բանա-
կումներուն, արշաւներուն, ուժատի եւ
երդման արարողութիւններուն, Ա. Պատա-
րագի մատուցումներուն, մասաղօրհնու-
թիւններուն, ջրօրհնութիւններուն, ազ-
գային տօնակատարութիւններուն եւ Հայ
Դատի հետապնդման աշխատանքներուն
մէջ, շնորհիւ Հ.Մ.Լ.Մ.ականներու հա-
ւատքով եւ անձնդիր ծառայութեան, տիրա-
պետողը եղած է ու կը շարունակէ ըլլալ
բոլորանուէր հայկականութիւնը, իր բոլոր
արտայայտութիւններով:



ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԱՄԵՐԻԿԱ

ՄԵՔՍԻՔԱ

— 1926ին, Մեքսիքայի մայրաքաղաք Մեքսիքոյի մէջ կը հիմնուի Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղ, Յունաստանէն գաղթած Հ.Մ.Լ.Մ.ական մարզիչ եւ սկառուտ խմբապետ Գասպար Առաքելեանի նախաձեռնութեամբ եւ գործակցութեամբ իր եղբայրներուն՝ Յարութիւն եւ Քերոր Առաքելեաններու:

— Մեքսիքոյի Հ.Մ.Լ.Մ.ի նորակազմ Մասնաճիւղը, փոքրաթիւ հայ գաղութին մէջ, յաղթահարելով նիւթական եւ այլ դըժուարութիւններ, կը յարատեւէ, կ'ունենայ հաւաքավայր, 25 մարզիկ անդամ, արիներու խմբակ եւ ֆութպոլի բաւականին զօրաւոր խումբ:

— 1933-1934ին, Մեքսիքայի ներքին տագնապներու հետեւանքով, այլ կազմակերպութիւններու շարքին, Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղը եւս կը դադրի գործելէ մինչեւ 1951, երբ դարձեալ կը վերականգնի:

— 1951ին, Քերոր Առաքելեանի նախաձեռնութեամբ, կը կազմուի Հ.Մ.Լ.Մ.ի Յանձնախումբ մը, ծանօթացնելու համար Հ.Մ.Լ.Մ.ը Մեքսիքայի, Միացեալ Նահանգներու եւ Գանատայի հայութեան եւ ապահովելու համար նիւթական օժանդակութիւն՝ Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի, Սուրիոյ, Յորդանանի եւ Յունաստանի Մասնաճիւղերուն:

— Հ.Մ.Լ.Մ.ի Յանձնախումբը — Սան Ֆրանսիլոյէն նախկին սկառուտապետ Ճորճ Մարտիկեան պատուոյ նախագահ, Քերոր Առաքելեան ատենապետ, Կարապետ Հեքիմ-



Զախէն աջ՝ Քերոր, Գասպար եւ Յարութիւն Առաքելեան եղբայրները, 1927ին, Յունաստան:



եան գանձապահ, Գասպար Առաքելեան եւ Տիրան Ինձէեան խորհրդականներ — կ'ունենայ արդիւնաւոր գործունէութիւն։ Այսուհանդերձ, Մեքսիկոյի Հ. Մ. Ը. Մ. ը, փոքրաթիւ գաղութէն ներս Մասնաճիւղի մը գոյավիճակը արդարացնող գործունէութիւն ունենալէ կը դադրի։

— 1976էն սկսեալ, ամէն տարի, կանոնաւոր յաջորդականութեամբ, Լոս Անձելըսի մէջ տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. ի Արեւմբան Միացեալ Նահանգներու Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ Հ. Մ. Ը. Մ. ի Միջ-Մասնաճիւղային (ապա՝ Նաւասարդեան) Մարզախաղեր, որոնց, սկզբնական շրջանին, մինչեւ 1980, Առաքելեան ընտանիքի ղեկավարութեամբ իրենց մասնակցութիւնը կը բերեն մեքսիկահայ երիտասարդներ, ֆութպոլի խումբով եւ աթլէթներով։ Անոնք թէեւ դադրած են իրենց մասնակցութիւնը բերելէ Մարզախաղերուն, սակայն իրենց հետաքրքրութեամբ կը մնան Հ. Մ. Ը. Մ. ի համակիրներ։

ՃՈՐՃ ՄԱՐՏԻԿԵԱՆ



ՓՈՂԿԱՊԻՆ ՀԱՆԳՈՅՑԸ

Սկաուտները ամէն օր իրենց փողկապին ծայրը կը հանգուցեն եւ երբ բարիք մը կը գործեն, կը քակեն զայն։

Հ. Մ. Ը. Մ. ի սկաուտ, դուն մէկ հանգոյցով մի՛ գոհանար, օրդինագոյցներու շղթայ մը քող ըլլայ։ Բարեգործութեան դաշտը ընդարձակ է. տունը, նամբան, դպրոցը, գործատեղին, հանրակառքին մէջ, ուր որ գտնուիս, առիթները անպակաս են. փնտոելու հարկ չկայ, բաւ է որ ունենաս բարի սիրտ, ան կրնայ ստեղծել առիթը։

ԳԱՆԱՏԱ

— 1958ին, Մոնթրէալ գաղթած Հ. Մ. Լ. Մ. ականներ կը կազմեն «Արմենիա» անունով ֆութապոլի խումբ մը, ապա 22 անդամներով կը հիմնուի Գանատայի շրջանի Հ. Մ. Լ. Մ. ի առաջին Մասնաճիւղը:

— Մոնթրէալի գաղութը տարուէ տարի կը սկսի աճիլ: Նոր ուժեր կուգան Միջին Արեւելքի երկիրներէն ու կը խտացնեն Հ. Մ. Լ. Մ. ի շարքերը: Գաղթական հայեր կը հաստատուին նաեւ Գանատայի տարբեր քաղաքներու մէջ:

— 1960ին, 14 պատանիներով կը կազմուի Մոնթրէալի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի սկաուտական առաջին խումբը: 1962ին կը կազմուի երէցներու պասքեթպոլի խումբը:

— 1963ին, Մոնթրէալի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղին կը տրուի Հ. Մ. Լ. Մ. «Կամք» անունը:

— 1964ին, կը կազմուի Մոնթրէալի Հ. Մ. Լ. Մ. «Կամք» Մասնաճիւղի գայլիկներու առաջին վոհմակը, 1969ին՝ արծուիկներու առաջին խումբը:

— Մոնթրէալի Հ. Մ. Լ. Մ. «Կամք» Մասնաճիւղի գործակցութեամբ, յաջորդաբար կը հիմնուին՝

— 1968ին, Համիլթոնի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը:

— 1969ին, Թորոնթոյի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը:

— 1977ին, Քեմպրիճի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը:

— 1969էն սկսեալ, Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ կը կազմակերպուին ձմեռնային եւ ամառնային Միջ-Մասնաճիւղ-



Մոնթրէալի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի ֆութապոլի առաջին՝ «Արմենիա» խումբը, 1958ին:
Զախէն աջ՝ Հրայր Արշակունի, Մկրտիչ Սինեան, Գևորգ Սեւակեան,
Յակոբ Տիմիրեան, Արմեն Տիմիրեան, Ալպեռ Մարտիկեան,
Պետրոս Գարրիկեան, Սերգո Եափունեան, Վահագ Սաւուխեան,
Համբարձում Հանեան եւ Սերգո:



Թորոնքոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի սկաուտական երեցներու փաղանգը, 1980ին:

ղային խաղեր, որոնց կը մասնակցին Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերը:

— 1977ին, Նիւ Ճըրզիի մէջ գումարուած Հ. Մ. Ը. Մ. ի Շըջ. Ներկայացուցչական ժողովին, Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանի փափաքով, Գանատայի շրջանը լրացնելով Հ. Մ. Ը. Մ. ի Կանոնադրային պայմանները, իբրեւ առանձին շրջան, կ'ունենայ իր Շըջանային Վարչութիւնը:

— Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու Շըջ. Վարչութիւններու գործակցութեամբ եւ երկու շրջաններու Մասնաճիւղերու մասնակցութեամբ, ամէն տարի, հերթով, Գանատայի կամ Արեւելեան Միացեալ Նահանգներու մէջ, կանոնաւոր յաջորդականութեամբ կը շարունակուին կազմակերպուիլ ձմեռնային եւ ամառնային Միջ-Մասնաճիւղային խաղերը:


— 1979ին, Մոնթբէալի մէջ տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. ի Միջ-Մասնաճիւղային ձմեռնային նրդ խաղերը: Կը կատարուին պասքեթպոլի մրցաշարքեր՝ երէցներու, կրտսերներու եւ աղջկներու խումբերու միջեւ: Կը մասնակցին՝ երկու շրջաննե-

րէն՝ Գանատայէն եւ Արեւելեան Միացեալ Նահանգներէն, Հ. Մ. Ը. Մ. ի Թորոնթոյի, Քեմպրիճի, Համիլթոնի, Մոնթրէալի «Կամք», Պոսթընի եւ Նիւ Ճըրզիի Մասնաճիւղերը:

— 1980ին, Մոնթրէալի Հ. Մ. Ը. Մ. ի «Կամք» Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կազմակերպութեամբ, Հայ Կեդրոնի «Ա. Ահարոնեան» սրահին մէջ շքեղ հանդիսութեամբ կը նշուի Մասնաճիւղի սկաուտական կազմի հիմնադրութեան 20ամեակը:

20 տարի առաջ, 1960ին 14 պատանիներով սկսած սկաուտական առաջին խումբը, 1980ին ունէր 8 խումբ, 339 երկսեռ անդամներով:

— 1980ի Մայիս-Յունիսին, Թորոնթոյի նորակերտ Հայ Կեդրոնի մէջ տեղի կ'ունենան սկաուտական աստիճանատուութեան հանդէս, Հ. Մ. Ը. Մ. ի Շիքակոյի եւ Թորոնթոյի Մասնաճիւղերու պասքեթպոլի խումբերու միջեւ մրցում, խրախճանք-ճաշկերոյթ եւ սկաուտական երդման արարողութիւն: Սկաուտական կազմը ունէր 237 երկսեռ անդամ:



Թորոնքոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի պատմեթպոլի խումբը, 1980ին:

— 1980ին, Գանատայի եւ Միացեալ Նահանգներու Արեւելեան շրջանի 12րդ՝ Միջ-Մասնաճիւղային ամառնային խաղերը եւ տողանցքը տեղի կ'ունենան թորոնթոյի մէջ։ Կը մասնակցին՝ Հ. Մ. Ը. Մ. ի Մոնթրէալի «Կամք», Թորոնթոյի, Քեմպրիծի, Նիւ Եորքի, Պութընի, Տիթրոյիթի եւ Ֆիլատելֆիոյ Մասնաճիւղերը։

— 1980ին, Մոնթրէալի Հ. Մ. Ը. Մ. «Կամք» Մասնաճիւղի գայլիկներու եւ արծուիկներու տարեկան բանակումը տեղի կ'ունենայ Քեմփի Անտերսընի մէջ։ Զորսօրեայ բանակումին կը մասնակցին 100 հոգի։

— 1980ին տեղի կ'ունենայ թորոնթոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի սկառտական միօրեայ արշաւը, դէպի Սիմքօ լիճ։ Կը մասնակցին՝ նորակազմ Երէցներու փաղանգը, 13 հոգի եւ 11 խմբապետ-խմբապետուհիներ, իսկ Մասնաճիւղի Սկառտական Խորհուրդի կազմակերպած տարեկան նուիրահաւաք-հեծելարշաւին կը մասնակցին՝ 55 մրջնիկ, գայլիկ, արծուիկ եւ սկառտ հեծելանորդներ։

— 1980ին, Մոնթրէալի Հայ Կեդրոնէն ներս տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. «Կամք»

Մասնաճիւղի մարզասրահի եւ յարակից սենեակներու բացումը։ Տեղի կ'ունենան պասքեթպոլի մրցումներ։ Կը մասնակցին՝ Հ. Մ. Ը. Մ. ի Թորոնթոյի, Մոնթրէալի, Պութընի եւ Քալիֆորնիոյ խումբերը։ 1958ին 22 անդամով սկսած Հ. Մ. Ը. Մ. «Կամք» Մասնաճիւղը, 1980ին ունէր 800 երկսեռ անդամ։

— 1980ին տեղի կ'ունենայ Մոնթրէալի Հ. Մ. Ը. Մ. «Կամք» Մասնաճիւղի խմբապետական կազմի լսարան-բանակումը, Քեմփ Անտերսընի մէջ։ Կը մասնակցին 35 խմբապետ-խմբապետուհիներ։

— 1980ին, Համիլթընի Հայ Կեդրոնի մէջ տեղի կ'ունենայ Համիլթընի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի 12րդ տարեղարձի տօնակատարութիւնը։ Այս առիթով, կը կատարուին սկառտներու աստիճանատուութիւններ։

— 1981ին տեղի կ'ունենայ Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի 10րդ Ներկայացուցչական Ժողովը, Մոնթրէալի Հայ Կեդրոնի Հ. Մ. Ը. «Կամք»ի նորակառոյց մարզարանին մէջ։ Ժողովին մասնակցող շրջանի չորս Մասնաճիւղերու երկսեռ անդամներու թիւն էր՝ 490, սկառտական կազմերը ունէին 653 երկսեռ անդամ։



Մոնթրէալի Հ.Մ.Ը.Ա. «Կամֆ» Մասնաճիւղի պասիբռպոլի կրտսերներու խումբը, 1980ին:



Մոնթրէալի Հ.Մ.Ը.Ա. «Կամֆ» Մասնաճիւղի պասիբռպոլի խումբը, 1980ին:



Թորոնքոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաթիւղի ֆութպոլի կրտսերներու խումբը,
1980ին:



Համիլթոնի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաթիւղի ֆութպոլի երեցներու խումբը,
1968ին - 1974:



Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի 10րդ ներկայացուցչական
ժողովը, 1981ին:

— 1981ին տեղի կ'ունենայ թորոնթոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի Սկառատական Խորհուրդի ժողովասրահին բացումը, Հայ Կեդրոնին մէջ: Ժողովասրահի կահաւորումը կը կատարէ Հայ Կեդրոնի Վարչութիւնը: Այս առիթով, տեղի կ'ունենան սկառատական խոստումի եւ երդումի արարողութիւններ: Մասնաճիւղի սկառատական կազմը ունէր 284 երկսեռ անդամ:

— 1981ին, Գանատայի մէջ տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի համագաղութային պատքեթպոլի Ա. մրցաշարքը, նախաձեռնութեամբ Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութեան եւ կազմակերպութեամբ Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Վարչութեան եւ կազմակերպիչ Կեդր. Յանձնախումբի: Բացման հանդէսը եւ զտումի մրցումները կը կատարուին թորոնթոյի մէջ, աւարտական մրցումները, փակման հանդէսը եւ տողանցքը՝ Մոնթրէալի մէջ: 15 օր կը տեւեն մրցումները,

որոնց կը մասնակցին 8 լրջաններէ 200 մարզիկ-մարզիկուհիներ:

— 1981ին, թորոնթոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղին 25 գայլիկներ, եռօրեայ բանակում մը կը կատարեն Զեսնեսթ բանակավայրին մէջ:

— 1981ին, թորոնթոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի երկցներու ֆութպոլի խումբը «Փան Ամերիքան» Լիկի Բ. Դասակարգի խումբերու ախոյեանութեան մրցաշարքին Բ. դիրքը գրաւելով, կ'անցնի Ա. Դասակարգ:

— 1981ին, Հ. Մ. Ը. Մ. ի Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու Միջ-Մասնաճիւղային ձմեռնային 7րդ խաղերը տեղի կ'ունենան Համիլթոնի մէջ: Կը մասնակցին՝ Հ. Մ. Ը. Մ. ի Մոնթրէալի «Կամք», թորոնթոյի, Քեմպրիճի, Համիլթոնի, Պոսթընի, Շիքակոյի եւ Փրավիտենսի Մասնաճիւղերը:



Մոնթրէալի Հ. Մ. Ը. Մ. «Կամֆ» Մասնաճիւղի պասֆեթպոլի երեցներու խումբը, 1981ին:



Մոնթրէալի Հ. Մ. Ը. Մ. «Կամֆ» եւ Թորոնտոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերու կրտսեր մանչերու պասֆեթպոլի խումբերը, 1981ին:



Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերու սկառւտական պատասխանատուներու
Դ. լսարան-ժողովը, 1981ին:

— 1981ին տեղի կ'ունենայ Մոնթրէալի Հ. Մ. Ը. Մ. «Կամք» Մասնաճիւղի խմբապետական կազմի լսարան-բանակումը Քեմփի Քենիորայի բանակավայրին մէջ: Կը մասնակցին 33 խմբապետ-խմբապետուհիներ:

— 1981ին, Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Վարչութեան կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ երկօրեայ սկառւտական Դ. սեմինարը: Կը մասնակցին մօտ 50 խմբապետ-խմբապետուհիներ, Հ. Մ. Ը. Մ. ի Թորոնթոյի, Համիլթոնի եւ Մոնթրէալի «Կամք» Մասնաճիւղերէն:

— 1982ին, Մոնթրէալի մէջ տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. ի 14րդ Միջ-Մասնաճիւղային ամառնային խաղերը: Գանատայէն կը մասնակցին՝ Մոնթրէալի «Կամք», Համիլթոնի, Թորոնթոյի եւ Քեմպրինի, իսկ Արեւելեան Միացեալ Նահանգներէն՝ Պոսթընի, Նիւ Եորքի, Նիւ Ճըրգիի, Ուաշինգթոնի, Փրավիտենսի եւ Տիթրոյիթի Մասնաճիւղերը: 700 մարզիկներու եւ սկառւտներու տողանցքին, առաջին անգամ ըլլալով կը մասնակցին զոյգ՝ Հ. Մ. Ը. Մ. ի Մոնթրէալի «Կամք» եւ Թորոնթոյի Մասնաճիւղերու նուագախումբերը:

— 1982ին, Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ, տեղի կ'ունենայ խմբապետական Ա. լսարան-բանակումը, Մըրֆի Փոյնթ Փարքի մէջ, Օնթարիօ: Եորեայ բանակումին կը մասնակցին՝ Թորոնթոյի, Համիլթոնի եւ Մոնթրէալի «Կամք» Մասնաճիւղերէն 20 խմբապետ-խմբապետուհիներ:

— 1982ին տեղի կ'ունենայ Գանատայի լրջանի սկառւտական Ե. սեմինարը, Օնթարիօ նահանգի «Կանոնաքէ ինն» պանդոկին մէջ: Երկօրեայ սեմինարին կը մասնակցին՝ Մոնթրէալի «Կամք», Թորոնթոյի եւ Համիլթոնի Մասնաճիւղերէն 27 աստիճանաւոր սկառւտներ:

— 1982ին, Թորոնթոյի եւ Համիլթոնի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերու սկառւտական կազմերը հինգօրեայ բանակում մը կը կատարեն «Պալսամ Լէյք»ի ափին:

— 1982ին, Թորոնթոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի սկառւտական նուագախումբը, Թորոնթոյի մէջ կը մասնակցի սկառւտութեան հիմնադրութեան 75ամեակի տօնակատարութեան շքեղ տողանցքին, Միացեալ Նահանգներէն եւ Գանատայէն եկած 30 այլ նուագախումբերու կողքին:



Թորոնքոյի եւ Համիլթոնի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերու ֆութպոլի
խումբերը, 1983ին:



Թորոնքոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի վոլիպոլի խումբը, 1983ին:



Թորոնքոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի սկառտական նուագախումբը,
1983ին:



Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերու սկառտական խմբապետական
Բ. բանակում-լսարանին մասնակցողները, 1983ին:



Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերու խմբապետական Զ. սեմինարին
մասնակցողները, 1984ին:

— 1983ին, Գալկըրիի մէջ տեղի կ'ունենայ սկառատական միջազգային 15րդ ճամբարը: Կը մասնակցին 106 երկիրներ ներկայացնող սկառատներ, որոնց շարքին՝ Մոնթրէալի Հ. Մ. Ը. Մ. «Կամք» Մասնաճիւղէն 33 արիներ: Ընթացիկ աշխատանքներու մասնակցելէ բացի, Հ. Մ. Ը. Մ. ի արիները կ'ունենան ազգային եւ մշակութային ելոյթներ եւ իրենց կարգապահհութեան ու կազմակերպուածութեան համար կ'արժանանան գնահատանքի:

— 1983ին տեղի կ'ունենայ Մոնթրէալի Հ. Մ. Ը. Մ. «Կամք» Մասնաճիւղի սկառատական տարեկան բանակումը, Մորիսըն Այլընտ, Օնթարիոյ նահանգին մէջ, Սէն Լորանի գետեղերքը: Ութօրեայ բանակումին կը մասնակցին 102 սկառատներ:

— 1983ին, Մոնթրէալի Հ. Մ. Ը. Մ. «Կամք» Մասնաճիւղի հիմնադրութեան

25ամեակին առիթով, Մոնթրէալի մէջ տեղի կ'ունենայ պասքեթպոլի քառանկիւն մրցաշարք: Կը մասնակցին՝ Հ. Մ. Ը. Մ. ի «Մասիս» (Արեւմտեան Միացեալ նահանգներ), Փրավիտենսի (Արեւելեան Միացեալ նահանգներ), Թորոնթոյի եւ Մոնթրէալի «Կամք» Մասնաճիւղերու մանչերու խումբերը, նաեւ՝ Թորոնթոյի եւ Մոնթրէալի «Կամք» Մասնաճիւղերու աղջիկներու եւ կրտսերներու խումբերը:

— 1983ին տեղի կ'ունենայ Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի սկառատական խմբապետական Բ. բանակում-լսարանը, Քորնուէլ քաղաքի Մորիսըն բանակավայրին մէջ: Կը մասնակցին Հ. Մ. Ը. Մ. ի Մոնթրէալի «Կամք», Թորոնթոյի եւ Համիլթոնի Մասնաճիւղերէն 26 խմբապետ-խմբապետուհիներ:

— 1983ին տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի Գանատայի շրջանի խմբապետական Զ. սե-



Թորոնթոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի երեց աղջիկներու պատմեթպոլի
խումբը, 1983ին:

մինարը, Օնթարիօ նահանգի կանոնաքուէ քաղաքին մէջ: Երկօրեայ սեմինարին կը մասնակցին՝ Հ. Մ. Ը. Մ. ի Մոնթրէալի «Կամք», Համիլթընի եւ Թորոնթոյի Մասնաճիւղերու խմբապետական կազմերը, Հ. Մ. Ը. Մ. ի կեդր. Վարչութեան, Գանատայի Շրջ. Վարչութեան, Մասնաճիւղերու Վարչութեանց, Սկառուտական Խորհուրդի եւ Քեմպրիճի Մասնաճիւղի ներկայացուցիչները:

— 1983ին, Թորոնթոյի Հայ Կեդրոնին մէջ տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. ի 65ամեակին եւ Շաւարչ Քրիսեանի յիշատակին նուիրուած Հ. Մ. Ը. Մ. ի Միջ-Մասնաճիւղային ձմեռնային Թրդ խաղերը եւ սկառուտական նուագախումբի առաջնորդութեամբ տողանցքը: Կը մասնակցին՝ Շիքակոյի, Նիւ Եորքի, Պոսթընի, Նիւ Ճըրզիի, Փրավիտենսի, Համիլթընի, Մոնթրէալի «Կամք», Քեմպրիճի եւ Թորոնթոյի Մասնաճիւղերէն 450 երկսեռ մարզիկներ:

— 1984ին, Թորոնթոյի Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի Օրուան տօնակատարութիւնը: Յայտագրին մաս կը կազմեն՝ Մասնաճիւղի տիպար մար-

զիկներու մրցանակներու յանձնում, սկառուտական աստիճաններու տուչութիւն եւ երգման արարողութիւն:

— 1984ին, Թորոնթոյի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի խումբը երրորդ տարին ըլլալով յաղթական, կը տիրանայ Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Վարչութեան տրամադրած «Լուտեր Մասպանաճեան» մրցաշարքի բաժակին: Մրցաշարքը կը կատարուի Հ. Մ. Ը. Մ. ի Համիլթընի, Քեմպրիճի եւ Թորոնթոյի Մասնաճիւղերու խումբերուն միջեւ:

— 1984ին տեղի կ'ունենայ Մոնթրէալի Հ. Մ. Ը. Մ. «Կամք» Մասնաճիւղի սկառուտական կազմի մանչերու բաժնի աւանդական ձմեռնային եռօրեայ բանակումը, Քինքորաբանակավայրին մէջ: Կը մասնակցին 92 հոգի:

— 1984ին, Մոնթրէալի Հ. Մ. Ը. Մ. «Կամք» Մասնաճիւղի արիները, աւելի քան 50 սկառուտական խումբերու շարքին, կը մասնակցին Գանատայի Սկառուտական Կեդրոնի Քէպէքի Մասնաճիւղի կազմակերպած ցուցահանդէսին: Հ. Մ. Ը. Մ. «Կամք» մրցանակի արժանի առաջին խումբը կը հանդիսանայ եւ կը ստանայ յուշատախտակ:



Թորոնթոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի աղջիկներու վոլիպոլի
խումբը, 1983ին:




Մոնթրէալի Հ. Մ. Ը. Մ. «Կամք» Մասնաճիւղի ֆութպոլի երեցներու
խումբը, 1983ին:

— 1984ին, Մոնթրէալի Հ. Մ. Ը. Մ. «Կամք»ի մարզասրագին մէջ տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի հիմնադրութեան 65ամեակի եւ Մոնթրէալի Հ. Մ. Ը. Մ. «Կամք» Մասնաճիւղի հիմնադրութեան 25ամեակի տօնակատարութիւնը:

— 1984ին, Թորոնթոյի մէջ տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. ի Միջ-Մասնաճիւղային ամառնային 16րդ խաղերը: Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջաններէն կը մասնակցին 8 Մասնաճիւղեր:

— 1984 Օգոստոս 11էն 19, տեղի կ'ունենայ Մոնթրէալի Հ. Մ. Ը. Մ. «Կամք» Մասնաճիւղի սկաուտական տարեկան բանակումը, Մորիսըն կղզիի բանակավայրին մէջ, Օնթարիօ: Կը մասնակցին 134 հոգի:

— 1984ին տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի Գանատայի շրջանի խմբապետական 7րդ սեմինարը, Օնթարիօ նահանգի Կանոնաքուէ քաղաքին մէջ: Կը մասնակցին 38 խմբապետ-խմբապետուհիներ: 1984ին, Հ. Մ. Ը. Մ. ի Գանատայի շրջանի սկաու-



Համիլթընի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի ֆութպոլի երեցներու եւ կրտսերներու խումբերը, 1984ին:

տական կազմերը ունէին՝ թորոնթօ 182, Համիլթըն 38, Մոնթրէալ «Կամք» 390, միասնաբար՝ 610 երկսեռ անդամ։

— 1984ին, թորոնթոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը կը նշէ Հ. Մ. Ը. Մ. ի հիմնադրութեան 65ամեակը եւ իր հիմնադրութեան 15ամեակը, թորոնթոյի Հայ Կեդրոնի սրահին մէջ։ Թորոնթոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը կը հիմնուի 1969ին։ Ա. Ընդհ. ժողովին կ'անդամագրուին 60 հոգի։ 1979ին, թորոնթոյի Հայ Կեդրոնին մէջ Մասնաճիւղը կ'ունենայ իր մարզասրահը, վարչական եւ սկաուտական սենեակները։ 1984ին ունէր 336 երկսեռ անդամ։

— 1985ին կը գումարուի Գանատայի շրջանի Հ. Մ. Ը. Մ. ի 14րդ Ներկայացուցչական ժողովը, Մոնթրէալի Հայ Կեդրոնին մէջ։ Շրջանի չորս Մասնաճիւղերը միասնաբար ունէին 1152 երկսեռ անդամ։ Սկաուտական շարքերուն թիւն էր՝ 556։

— 1985ին, Քէպէք նահանգի Արենուշական Շարժումը կը տօնէ Լորտ Պէյտըն Փառւըլի եւ քրոջը՝ Ակնէսի 1910ին հիմնած

Արենուշական Շարժումի 75ամեակը։ Կը մասնակցին՝ 2500 արենոյշներ, արծուիկներ եւ պատասխանատուներ։ Մոնթրէալի Հ. Մ. Ը. Մ. «Կամք» Մասնաճիւղէն կը մասնակցին 88 արենոյշներ, որոնք կը ցուցադրեն հայկական տարագներ եւ ձեռային աշխատանքներ ու կը ներկայացնեն պարեր։

— 1985ին, Համիլթընի մէջ տեղի կ'ունենան Համիլթընի եւ հարաւային Օնթարիոյ մարմնակրթական մրցաշարքերը։ 23 մարզիկներու մէջ, Համիլթընի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղէն Պետիկ Պէքմէզեան, զոյտ մրցաշարքերուն, կը գրաւէ պատուաբեր երրորդ դիրքը։

— 1985ին տեղի կ'ունենայ Գանատայի շրջանի Հ. Մ. Ը. Մ. ի խմբապետական Դ. լսարան-բանակումը, Օնթարիօ նահանգի Կրէնվիլլ Փրովենշըլ Փարքի մէջ։ Եռօրեայ բանակումին կը մասնակցին՝ Հ. Մ. Ը. Մ. ի Մոնթրէալի «Կամք», Համիլթընի եւ թորոնթոյի Մասնաճիւղերէն 19 խմբապետ-խմբապետուհիներ, Սկաուտական Խորհուրդի անդամներ եւ հրաւիրեալներ։



Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ. «Կամք» Մասնաճիւղի 25ամեակին, Վարչութիւններու ատենապետներէն, 1984ին:

Զախէն աջ՝ Գրիգոր Գույումնեան, Վարուժան Սերոբեան, Գևորգ Սեւակեան,
Գևորգ Մանկելեան, Սեդրակ Պուրալեան, Լ. Նահարեան, Ժ. Շատախցեան:

— 1985ին, գանատական սկառտական ճամբարին կը կասնակցին 12,000 սկառտաներ եւ հետախոյզներ, որոնց շարքին՝ Թորոնթոյի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղէն 22 սկառտաներ, որոնք իրենց կարգապահութեամբ կ'արժանանան պատասխանատուներու գնահատանքին:

— 1985ին, Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ. «Կամք» Մասնաճիւղի կրտսերներու ֆութպոլի խումբը, իր դասակարգին մէջ, «Գոնգորտիա Լիկ»ի Մոնթրէալի հիւսիսային շրջանի խումբերու մրցաշարքին, անպարտելի, կը հռչակուի ախոյեան: Իւրաքանչիւր շրջանի նոյն դասակարգի ախոյեան խումբերու միջեւ մրցաշարքին եւս Հ.Մ.Ը.Մ. «Կամք» յաղթական, կը տիրանայ Մոնթրէալի բաժակին:

— 1985ին տեղի կ'ունենայ Թորոնթոյի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի սկառտական աստիճաններու տուչութիւն եւ կարգերու փոխանցում:

խարոյկահանդէսը, Հայ Կեդրոնի բակին մէջ, որու ընթացքին կը կատարուին սկառտական աստիճաններու տուչութիւն եւ կարգերու փոխանցում:

— 1985ին տեղի կ'ունենայ Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ. «Կամք» Մասնաճիւղի սկառտական տարեկան բանակումը, Մորիսըն կը դգիին մէջ. 9 օր տեւող բանակումին կը մասնակցին՝ երեց, պարմանուհի, սկառտ, արենոյշ, հետախոյզ, 131 հոգի: Բանակավայր միօրեայ այցելութիւն կու տան նաեւ 52 գայլիկներ, 24 արծուիկներ եւ ծնողներ:

— 1985ին, Գանատայի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջ. Վարչութեան կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ շրջանի չորս Մասնաճիւղերու՝ Մոնթրէալի «Կամք», Համիլթոնի, Թորոնթոյի եւ Քեմպրիճի մարզական պատասխանատուներու Բ. լսարան-խորհրդաժողովը: Կը մասնակցին՝ 28 հոգի:



Թորոնթոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաթիւղի Վարչութիւնը, 1985ին:
Նստած, ձախէն աջ՝ Թամիցա Սարխանեան, Յակոբիան, Բէննա
Թարգի:

Ուռքի, ձախէն աջ՝ Հայկ Ակորեան, Յակոբինեան, Արսէն Քէշիշեան,
Վահան Զալիբեան:

— 1985ին տեղի կ'ունենայ Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի շրջանային խմբապետական 8րդ լսարան-ժողովը: Շրջանի չորս Մասնաճիւղերէն կը մասնակցին 43 հոգի:

— 1985ին տեղի կ'ունենան Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու Հ. Մ. Ը. Մ. ի Միջ-Մասնաճիւղային ձմեռնային 11րդ խաղերը, Մոնթրէալի տարրեր մարզավայրերուն մէջ: Գանատային կը մասնակցին՝ Մոնթրէալի «Կամք», Համիլթոնի, Թորոնթոյի, Քեմպրիճի, Արեւելեան Միացեալ Նահանգներէն՝ Շիփակոյի, Նիւ Ջըրգիի, Նիւ Եորքի, Փրավիտենսի, Տիթրոյիթի եւ Պոսթընի Մասնաճիւղերէն աւելի քան 550 երկսեռ մարզիկներ: Միջ-Մասնաճիւղային խաղերը տարուէ տարի աւելի հետաքրքրութիւն կը ստեղծեն մարզասէր պատանիներու եւ երիտասարդներու մօտ: Տողանցքը տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի «Կամք»ի մարզադաշտին վրայ, սկառուտական նուագախումբի առաջնորդութեամբ:

— 1985ին, Թորոնթոյի Հայ Կեղրոնի սրահին մէջ տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի Օրուայ տօնակատարութիւնը: Նոյն օրը տեղի կ'ունենայ նաեւ Հայ Կեղրոնի նորաշէն բաժնին մէջ Թորոնթոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի նոր գրասենեակի պաշտօնական բացումը:

— 1985ին, Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Համիլթոնի Մասնաճիւղի կազմակերպութեամբ, Համիլթոնի մէջ տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի Գանատայի շրջանի Փութպոլի ախոյեանութեան Բ. մրցաշարքը: Կը մասնակցին շրջանի Հ. Մ. Ը. Մ. ի չորս Մասնաճիւղերու երէցներու խումբերը, նաեւ Մոնթրէալի «Կամք» եւ Թորոնթոյի Մասնաճիւղերու կրտսերներու խումբերը:

— 1985ին տեղի կ'ունենայ Մոնթրէալի Հ. Մ. Ը. Մ. ի «Կամք» Մասնաճիւղի Ակառւտական Խորհուրդի կազմակերպած խմբապետ-խմբապետուհիներու տարեկան սեմի-



Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ. «Կամք» Մասնաճիւղի կրտսեր մանչերու ֆութպոլի խումբը, 1986ին:

նարը, Թրէյլզ էնտ բանակավայրին մէջ: Կը մասնակցին 19 խմբապետ-խմբապետուհիներ եւ Սկառտական Խորհուրդի անդամներ:

— 1985ին, Հիւսիսային Ամերիկայի սկառտութեան հիմնադրութեան 75ամեակին առիթով, Նիւ Եորք նահանգի Փլացպըրկ քաղաքին մօտերը տեղի կ'ունենայ միջազգային եռօրեայ ճամբար: Կը մասնակցին 72 խումբեր, որոնց շարքին՝ Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ. «Կամք» Մասնաճիւղէն 3 պատասխանատուներ եւ 18 տասնապետ արիներ: Կազմակերպիչ Մարմնի կողմէ Հ.Մ.Ը.Մ.ի խումբը իր ելոյթներով եւ աշխատանքով բացառիկ գնահատանքի կ'արժանանայ, կը պատգեւատրուի եւ կը ստանայ յաղթանակի բաժակ:

— 1985ին տեղի կ'ունենայ Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ. «Կամք» Մասնաճիւղի գայլիկներու եւ արծուկիկներու տարեկան ընդհանուր բանակումը, Քոնքորա բանակավայրին մէջ (Քէպէք): Կը մասնակցին՝ 78 գայլիկներ, 28 արծուկիկներ եւ 22 պատասխանատուներ:

— 1985ին, Սէն Լորան-Քարթիկվիլ սկառտական շրջանի կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ գայլիկներու յատուկ քայլարշաւ, Սէն Լորան քաղաքին մէջ: Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ. «Կամք» Մասնաճիւղէն կը

մասնակցին 121 գայլիկներ եւ պատասխանատուներ:

— 1985ին, Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ. «Կամք» Մասնաճիւղի աւագ խմբապետ Բարգէն Կարապետեան, խմբապետ Լեւոն Արաբեան եւ փոխ խմբապետ Վիգէն Պասմանեան կը պարզեւատրուին Մոնթրէալի Սկառտական Կեդրոնի հաւատարիմ ծառայութեան շքանչանով:

— 1986ին տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ. «Կամք» Մասնաճիւղի երէցական կազմի ձմեռնային բանակումը, Թրէյլզ էնտ բանակավայրին մէջ: Կը մասնակցին 30 հոգի:

— 1986ին, Թորոնթոյի Հայ Կեդրոնին մէջ կը գումարուի Գանատայի շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի Ներկայացուցչական 15րդ ժողովը, ուր կը յայտարարուի Սէնթ Քաթրինզի մէջ, 45 անդամներով, Հ.Մ.Ը.Մ.ի նոր Մասնաճիւղի հիմնումը: Արդարեւ, տարի մը առաջ, Սէնթ Քաթրինզի Հ.Յ.Դ. «Անդրանիկ» կոմիտէն ընդառաջելով գաղութի երիտասարդութեան մարզական պահանջներուն եւ ընկերներու առաջարկին, կազ կը պահէ Գանատայի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջ. Վարչութեան հետ եւ անոր անվերապահ աջակցութեամբ հիմը կը դնէ Գանատայի շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի հինգերորդ՝ Սէնթ Քաթրինզի Մասնաճիւղին:



Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի Շրջանային Վարչութիւնը, 1986ին:
Զախէն աջ՝ Տիգրան Մելքոնեան, Արմեն Կետիկեան, Վարուժան
Սերոբեան (Կեդր. Վարչութեան անդամ), Լեւոն Պէնկեան, Յակոբ
Սմիրեան, Վրեժ Մելքոնեան:

— 1986ին, Գանատայի շրջանի Հ. Մ. Ը. Մ. ի անդամներուն ընդհանուր թիւն էր՝ 1119։ Սկառտական կազմը ունէր 556 անդամ, Մարզական բաժինը՝ 392։

— 1986ին, Մոնթրէալի «Փարք Օլիմփիք» դաշտին վրայ տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. ի ամառնային 18րդ Միջ-Մասնաճիւղային խաղերը, նուիրուած՝ անարգ ոճիրի զոհ, Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութեան ատենապետ Վարդգէս Տէր Կարապետեանի յիշատակին, որուն անունով կը հաստատուի մնայուն բաժակ մը։

— 1986ին տեղի կ'ունենայ Թորոնթոյի Հ. Մ. Ը. Մ. ի սկառտական տարեկան ամառնային բանակումը, Փոյնթ Քոնսերվէյշըն էրիայի բանակավայրին մէջ։ 9 օր տեւող բանակումին կը մասնակցին 123 Հ. Մ. Ը. Մ. ականներ։

— 1986ին, Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ տեղի կ'ունենան՝ Թորոնթոյի մէջ միջ-վարչական, Օնթարիոյ Քինկսթըն քաղաքին մէջ սկառտական խմբապետական ֆրական պատասխանատուներու Յրդ լսարան-ժողովները։

— 1986ին, Մոնթրէալի Հ. Մ. Ը. Մ. «Կամք» Մասնաճիւղի Սկառտական Խորհուրդի կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ սկառտական տարեկան ամառնային բանակումը, Մորիսըն կղզիի մէջ, Օնթարիօ։ 9 օր տեւող բանակումին կը մասնակցին 83 հոգի։

— 1986ին, Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ, Թորոնթոյի մէջ տեղի կ'ունենայ Փութպոլի Միջ-Մասնաճիւղային ախոյեանութեան Գ. մըցաշարքը։ Կը մասնակին՝ Մոնթրէալի



Մոնթրեալի Հ. Մ. Լ. Մ. «Կամք» Մասնաճիւղի գայլիկները կը տողանցեն,
1986ին:

«Կամք», Համիլթոնի, Թորոնթոյի եւ Սէնթ Քաթրինզի Մասնաճիւղերու խումբերը: Ախոյեանի տիտղոսը կը շահի Մոնթրէալի Հ. Մ. Լ. Մ. «Կամք» խումբը:

— 1986ին, Համիլթոնի Ուինթուրթի մարմամշակումի մրցումներուն, միջակէն նուազ ծանրութեան դասակարգին մէջ, առաջին կը հանդիսանայ եւ բաժակի կը տիրանայ Համիլթոնի Հ. Մ. Լ. Մ. ի անդամ, Պետիկ Պէքմէզեան:

— 1986ին, Մոնթրէալի Հ. Մ. Լ. Մ. «Կամք» Մասնաճիւղի կրտսերներու ֆութպոլի խումբը, երկրորդ տարին ըլլալով, կը տիրանայ «Գոնգորտիա Լիկ»ի Մոնթրէալի հիւսիսային շրջանի իր դասակարգի խումբերու ախոյեանի տիտղոսին:

— 1986ին տեղի կ'ունենայ Մոնթրէալի Հ. Մ. Լ. Մ. «Կամք» Մասնաճիւղի Սկառտական Խորհուրդի գայլիկներու եւ արծուիկներու տարեկան ամառնային բանակումը «Քինքորա» բանակավայրին մէջ: Կը մասնակցին՝ 141 գայլիկներ եւ արծուիկներ:

— 1987ին, Մոնթրէալի Հ. Մ. Լ. Մ. «Կամք» Մասնաճիւղի Արենոյշներու խումբերը կը կատարեն իրենց փոխանցման եր-

դումը: Նոյն օրը կը տօնակատարուի նաեւ Մասնաճիւղի պարմանուհիներու փաղանգի հիմնադրութեան 10ամեակը:

— 1987ին կը գումարուի Գանատայի Հ. Մ. Լ. Մ. ի 16րդ Շրջանային Ներկայացուցչական ֆողովը, Մոնթրէալի մէջ: Իրաւասու ձայնով կը մասնակցին 31 ներկայացուցիչներ, որոնք կը ներկայացնեն շրջանի հինգ Մասնաճիւղերու՝ Մոնթրէալի «Կամք», Համիլթոնի, Թորոնթոյի, Քեմպրինի եւ Սէնթ Քաթրինզի 1178 երկսեռ անդամները, 552 սկառտատները եւ 359 մարզիկները:

— 1987ին, Գանատայի Հ. Մ. Լ. Մ. ի Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ, Թորոնթոյի մէջ տեղի կ'ունենան ձմեռնային առաջին վոլիմովի եւ աթլէթիզմի մըրցումներ, Վարիէթի Վիլէյճ մարզասրահին մէջ: Կը մասնակցին շրջանի հինգ Մասնաճիւղերէն 200 երկսեռ մարզիկներ: Աթլէթիզմի մըրցումներուն կը հաստատուին նոր մըրցանիշներ: Երկօրեայ մըրցումներէն ետք, Թորոնթոյի Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի կ'ունենայ նաեւ Հ. Մ. Լ. Մ. ի Օրուայ տօնակատարութիւն:



Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերու սկառտական եւ մարզական
պատասխանատութերը, 1986ին:

— 1987ին, Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Վարչութեան կազմակերպութեամբ, տեղի կ'ունենան Գանատայի շրջանի Մասնաճիւղերու յատուկ ամառնային աթլէթիք մրցումներ, Մոնթրէալի «Օլիմփիք Փարք» մարզադաշտին վրայ: Կը մասնակցին շրջանի հինգ Մասնաճիւղերու երկսեռ մարզիկները: Տողանցքը կ'առաջնորդեն՝ Հ. Մ. Ը. Մ. «Կամք»ի սկառտական կազմի թմբկահարները: Ախոյեանի տիտղոսին կը տիրանայ թորոնթոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը:

— 1987ին, Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ, Օնթարիօ նահանգի Քինկութըն քաղաքին մէջ տեղի կ'ունենան Գանատայի Մասնաճիւղերու երկօրեայ

միջ-վարչական, սկառտական խմբապետներու 10րդ եւ մարզական պատասխանատուներու 4րդ լսարան-ժողովները: Կը մասնակցին 80 անդամ-անդամուհիներ:

— Գանատայի Հ. Մ. Ը. Մ. ի շուրջբոլորուած խմբապետ-խմբապետուհիները, վարչական ու գործոն անդամ-անդամուհիները նույիրումով ու հաւատքով կը շարունակեն իրենց ծառայութիւնը Հ. Մ. Ը. Մ. ին, որպէսզի նորահաս սերունդներու մէջ վառպահուի ազգային ոգին, որպէսզի անոնք կառչած մնան իրենց արմատներուն:

Հ. Մ. Ը. Մ. ը գանատահայ գաղութին մէջ, հայկական հարցերու եւ մտահոգութեանց նկատմամբ դրական կեցուածքով, աշխատանքով ու ոգիով, կը շարունակէ պահել իր պատուաբեր դիրքը:



ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

— Հ. Մ. Լ. Մ.ի առաջին Մասնաճիւղը Ամերիկայի, կը հիմնուի 1921 Փետրուարին, Նիւ Եորքի մէջ, Պոլիսէն գաղթած երեք Հ. Մ. Լ. Մ. ական հայորդիներու՝ Մամաս Խուպէսէրեանի, Օննիկ Քեմանճեանի եւ Յակոբ Գարապէքեանի կողմէ:

Նորակազմ Մասնաճիւղը կը վաւերացուի Պոլսոյ Հ. Մ. Լ. Մ.ի Կեդր. Վարչութենէն: Առաջին Վարչութեան ատենապետի .

պաշտօնը կը ստանձնէ տոքթ. Պայընտըրեան:

— Նիւ Եորքի Հ. Մ. Լ. Մ.ի Մասնաճիւղի երկրորդ Վարչութեան մաս կը կազմեն՝ դարձեալ տոքթ. Պայընտըրեանի ատենապետութեամբ, Հ. Մ. Լ. Մ.ի հիմնադիրներէն Տիգրան Խոյեան (ապա՝ Տիգրան քհնյ. Խոյեան), Գաբրիէլ Մաճառեան, Արշաւիր Հիւսնեան, Մամաս Խուպէսէր-



Նիւ Եորքի Հ. Մ. Լ. Մ.ի Մասնաճիւղի ֆութպոլի Ա. խումբը, 1922ին:

եան, Օննիկ Քեմանճեան: Այսուհետեւ, շրջան մը, Վարչութեան ատենապետի պաշտօն կը վարէ հայ մարմակրթական շարժումի ռահվիրաներէն Եղիշէ Քաջունի:

— 1922ին, կը կազմուի նիւ Եորքի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի Փութպոլի խումբը, որ կ'անդամակցի ամերիկեան Մեթրոփոլիթէն Լիկին եւ առաջին իսկ տարիէն սկսեալ իր տարած յաղթանակներով ուշագրաւ կը դառնայ, իսկ Լիկի անդամ 16 խումբերու ախոյեանութեան մրցաշարքին, ընդհանուր դասաւորման մէջ կը գրաւէ պատուաբեր երկրորդ դիրքը:

— 1922ին տեղի կ'ունենան նիւ Եորքի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի կազմակերպած առաջին ողիմպիական խաղերը, Պրուքլինի էլմըր Փարքի մարզադաշտին վրայ: Կը մասնակցին՝ Հ. Մ. Լ. Մ. ի նիւ Եորքի, նորակազմ Ուսեմ Հոպէքի (նիւ Եորք) Մասնաճիւղերու եւ նիւ Ճըրգիէն՝ «Փիրամիտ» մարզական ակումբի մարզիկները:

— 1923ին, 1924ին եւ այնուհետեւ կը շարունակուին նիւ Եորքի Հ. Մ. Լ. Մ. ի կազմակերպած տարեկան ողիմպիական խաղերը, հետզհետէ աւելի ուժեղ տարողութեամբ: Ֆութպոլի, պասքեթպոլի, վոլիպոլի, թենիսի եւ դաշտային խաղերու մըրցումներուն կը մասնակցին՝ Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղերու եւ Հայ Ուսանողական Միութեան մարզիկները, նաեւ՝ հայ մարզական այլ խումբեր:

— Նիւ Եորքի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի սկառուտական առաջին խումբը կը կազմեն՝ Տիգրան Խոյեան, Օննիկ Քեմանճեան եւ այլ սկառուտ աստիճանաւորներ: Այսուհանդերձ, այդ շրջանին, Հ. Մ. Լ. Մ. ի սկառուտական նորակազմ խումբը թէեւ ազատ իր գործունէութեան մէջ, բայց պարտադրաբար մաս կը կազմէ ամերիկեան Պոյ Սկառուտներու կազմակերպութեան:

— 1923էն սկսեալ, հայաշատ քաղաքներու մէջ Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղեր հիմնելու աշխատանք կը տարուի: Յաջորդաբար կը հիմնուին՝ Ֆիլատելֆիոյ, Պոսթընի եւ Քէմտընի Մասնաճիւղերը:

— 1934ին, Ֆիլատելֆիոյ Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը կը կազմակերպէ ողիմպիական խաղեր, որոնք տեղի կ'ունենան՝ Ֆիլատելֆիոյ Հէվըրֆորտ գոլէճի մարզադաշտին վրայ: Կը մասնակցին՝ Հ. Մ. Լ. Մ. ի Ֆիլատելֆիոյ եւ նիւ Ճըրգիէն իւնիոն Սիթիի Մասնաճիւղերու մարզիկները:

— 1930ական թուականներուն, Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղերը կը տկարանան եւ հետզհետէ կը կազմալուծուին:

— 1950ական թուականներուն, Տիթրոյիթի մէջ կը սկսի Հ. Մ. Լ. Մ. ի նոր շարժում մը, բայց չի յարատեւեր:

— 1960ական թուականներու վերջերը եւ յատկապէս 1970ական թուականներէն սկսեալ, Հ. Մ. Լ. Մ. ական նոր շարժում մը ծնունդ կ'առնէ:

— 1969էն սկսեալ, Արեւելեան Միացեալ Նահանգներու մէջ, ապա նաեւ Գանատայի մէջ, տարին անդամ մը, երկու շրջաններու Մասնաճիւղերու մասնակցութեամբ տեղի կ'ունենան Հ. Մ. Լ. Մ. ի ամառնային եւ ձմեռնային Միջ-Մասնաճիւղային խաղեր:

— 1973ին, Պոսթընի մէջ, խումբ մը երիտասարդ մարզիկներ կը կազմեն Փութպոլի «Արմէնգ» խումբը, որ իր արձանագրած յաջողութիւններով խանդավառութիւն կը ստեղծէ ու կը հիմնուի Պոսթընի Հ. Մ. Լ. Մ. ի նոր Մասնաճիւղը:

— 1974ին կը հիմնուի Ուաշինգթընի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը:

— 1976ին կը հիմնուի նիւ Ճըրգիէն Հ. Մ. Լ. Մ. ի նոր Մասնաճիւղը:

— 1980ին կը նշուի նիւ Ճըրգիէն Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի հիմնադրութեան ճրդ տարեղարձը:

— 1980ին կը գումարուի Հ. Մ. Լ. Մ. ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Գ. Ներկայացուցչական ժողովը, Ֆիլատելֆիոյ մէջ: Իրաւասու ճայկով ժողովին կը մասնակցին՝ Հ. Մ. Լ. Մ. ի Շիքակոյի, Ֆիլատելֆիոյ, Ուաշինգթընի, նիւ Ճըրգիէն, նիւ Եորք Պէյսայտի, Պոսթընի եւ Տիթրոյիթի Մասնաճիւղերու ներկայացուցչիչները:

— 1980ին, Պոսթընի Հ. Մ. Ը. Մ.ի Մասնաճիւղի Սկառտական Խորհուրդի կազմակերպութեամբ, տեղի կ'ունենայ եռօրեայ դպրոց-բանակում եւ գաշտահանդէս, «Հայաստան» բանակավայրին մէջ:

— 1980ին, Նիւ Ճըրզիի մէջ տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի շրջաններու ձմեռնային երդ Միջ-Մասնաճիւղային խաղերը: Յաջողութեամբ իրագործուած մրցումներուն կը մասնակցին՝ Հ. Մ. Ը. Մ.ի Նիւ Ճըրզիի, Նիւ Եորք Վուտսայտի, Նիւ Եորք Պէյսայտի, Պոսթընի, Տիթրոյիթի, Շիքակոյի, Ուաշինկթընի, Ֆիլատելֆիոյ,

Գանատայէն՝ Մոնթրէալի «Կամք», Թորոնթոյի եւ Յորդանանէն՝ Ամմանի Մասնաճիւղերու երկսեռ մարզիկները:

— 1981ին, Տիթրոյիթի Հ. Մ. Ը. Մ.ի սկառտական նորակազմ խումբերը Հայ Կեղրոնի մէջ կը կատարեն իրենց երդումը եւ մաս կը կազմեն Հ. Մ. Ը. Մ.ի բանակին:

— 1981ին կը գումարուի Հ. Մ. Ը. Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Դ. Ներկայացուցչական ժողովը, Նիւ Ճըրզիի մէջ: Կը մասնակցին՝ Հ. Մ. Ը. Մ.ի Պոսթընի, Նիւ Ճըրզիի, Ֆիլատելֆիոյ, Շիքակոյի, Ուաշինկթընի, Նիւ Եորք Վուտսայտի, Նիւ Եորք Պէյսայտի եւ Տիթրոյիթի Մասնաճիւ-



Պոսթընի Հ. Մ. Ը. Մ.ի Մասնաճիւղի պասֆեթ-սպոլի աղջկանց խումբը, 1980ին:



Պոսթընի Հ. Մ. Ը. Մ.ի Մասնաճիւղի պասֆեթ-սպոլի Ա. խումբը, 1980ին:



Նիւ Ճըրզիի Հ. Մ. Ը. Մ. Ի Մասնաճիւղի պասիքեթպոլի խումբը, 1980ին:



Տիբրոյիթի Հ. Մ. Ը. Մ. Ի Մասնաճիւղի սկառուտական ընդհանուր կազմը, 1981ին:



Արեւելեան Միացեալ Նահանգներու Հ. Մ. Ը. Մ. ի Շրջանային 4րդ Ներկայացուցչական
Ժողովը, Նիւ Ճըրզի, 1981ին:

ղերէն իրաւասու ձայնով 33 ներկայացուցիչներ:

Շըջանի ութ Մասնաճիւղերը միասնաբար ունէին 936 երկսեռ անդամ՝, 285ր՝ մաս կը կազմէին սկառտական շարքերուն:

— 1981ին կը հիմնուի Փրավիտենսի (Ռոտ Այլընա) Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը: Տարի մը դեռ չբոլորած, նորակազմ Մասնաճիւղը ունէր ֆութպոլի, պասքեթպոլի, աթլէթիզմի խումբեր եւ 78 մրջնիկ, գայլիկ, սկառտ, արենոյշ:

— 1981ին, Նիւ Եորքի մէջ տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. ի Արեւելեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի շրջաններու 13րդ Միջ-Մասնաճիւղային ամառնային խաղերը: Գանատայէն կը մասնակցին՝ Հ. Մ. Ը. Մ. ի Թորոնթոյի, Քեմպրիճի, Համիլթոնի, Մոնթրէալի «Կամք», իսկ Արեւելեան Միացեալ Նահանգներէն՝ Նիւ Ճըրզի, Պոսթընի, Ռաշինկթընի, Փրավի-

տենսի, Ֆիլատելֆիոյ, Տիթրոյիթի եւ Նիւ Եորքի Մասնաճիւղերու երկսեռ մարզիկները:

— 1981ին, Նիւ Ճըրզի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի Սկառտական Խորհուրդը կը կազմակերպէ իր երկրորդ բանակումը, Նիւ Ճըրզի Հայ Փոյնիթս ծառաստանին մէջ: Եօթնօրեայ բանակումին կը մասնակցին՝ 45 սկառտներ, գայլիկներ, արենոյշներ եւ մըջնիկներ:

— 1981ին կը հիմնուի Հ. Մ. Ը. Մ. ի Մայամիի (Հարաւային Ֆլորիտա) Մասնաճիւղը, 120 հոգիով եւ դաշտագնացութեամբ, Թրիփոլիէն (Լիբանան) գաղթած Հ. Մ. Ը. Մ. ական Լեռոն Ալեքսանեանի նախաձեռնութեամբ:

— 1981ին, Պոսթընի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը երկօրեայ տօնախմբութեամբ՝ կը նշէ Հ. Մ. Ը. Մ. ի հիմնադրութեան 63րդ տարեդարձը, Հայ Կեդրոնի սրահին մէջ, ճաշ-



Նիւ Եղբայրքի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի ֆութպոլի կրտսերներու խումբը,
1982ին:



Պոսթընի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի ֆութպոլի կրտսերներու խումբը, 1983ին:



Հ. Մ. Ը. Մ. ի Արենոյշները կը տողանցեն 15րդ
Ամառնային խաղերուն, Նիւ Ճըրգիի մէջ, 1983ին:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ Հ. Մ. Ը. Մ. ի ՄԱՍՆԱՑԻՂԵՐՈՒ
ՖՈՒԹՊՈԼԻ ԵՐԵՑՆԵՐՈՒ ԽՈՒՄՔԵՐԸ, 1983ին:



Նիւ Ճըրգիի Մասնաճիւդ



Ուաշինկըլնի Մասնաճիւդ



Ֆիլատելփիոյ Մասնաճիւդ



Նիւ Եորք Պէյսայշի Մասնաճիւդ



Փրավիտենսի Մասնաճիւդ



Շիբրոյիրի Մասնաճիւդ

կերոյթ-պարահանդէսով եւ սկառտական հանդիսութեամբ: 40 սկառտաներ, արենոյշներ, գայլիկներ եւ մրջնիկներ կը կատարեն իրենց երդումը:

— 1982ին, Հ. Մ. Լ. Մ. ի Արեւելեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի շրջաններու ձմեռնային 8րդ խաղերը եւ տողանցքը տեղի կ'ունենան Փրավիտենսի մէջ (Ռոտ Այլընտ), մասնակցութեամբ՝ Հ. Մ. Լ. Մ. ի 11 Մասնաճիւղերու, Արեւելեան Միացեալ Նահանգներէն՝ Պոսթըն, Նիւ Ճըրզի, Շիքակօ, Ուաշինկթըն, Ֆիլատելֆիա, Նիւ Եորք Պէյսայտ, Նիւ Եորք Վուտսայտ, Փրավիտենս, Գանատայէն՝ Մոնթրէալ «Կամք», Համիլթըն եւ Թորոնթօ:

— 1983ին, Նիւ Ճըրզի մէջ տեղի կ'ունենան Հ. Մ. Լ. Մ. ի Արեւելեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի շրջաններու ամառնային 15րդ Միջ-Մասնաճիւղային խաղերը եւ տողանցքը: Կը մասնակցին Հ. Մ. Լ. Մ. ի 12 Մասնաճիւղեր, Արեւելեան Միացեալ Նահանգներէն՝ Ուաշինկթըն, Ֆիլատելֆիա, Նիւ Եորք Վուտսայտ, Նիւ Եորք Պէյսայտ, Պոսթըն, Փրավիտենս, Տիթրոյիթ, Նիւ Ճըրզի, Գանատայէն՝ Մոնթրէալ «Կամք», Թորոնթօ, Համիլթըն եւ Քեմպրին:

— 1983ին, Ուաշինկթընի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի նախաճեռնութեամբ տեղի կ'ունենայ հանդէս-խրախճանք, որու ընթացքին 24 գայլիկներ եւ սկառտաներ կուտան իրենց խոստումն ու երդումը:

— 1983ին տեղի կ'ունենայ Փրավիտենսի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի երկօրեայ դպրոց-բանակումը, «Հայաստան» քեմփի մէջ:

— 1983ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսը Արեւելեան Միացեալ Նահանգներ տուած հովուապետական այցելութեան, ամէնուրեք, արժանի պատուով կը դիմաւորուի Հ. Մ. Լ. Մ. ի սկառտաներուն կողմէ: Վեհափառ Հայրապետը ջերմ խօսքերով կը գնահատէ Հ. Մ. Լ. Մ. ը, իր ազգօգուտ գործունէութեան համար եւ հայրական օրհնութիւն կը պարգևէ Հ. Մ. Լ. Մ. ի սկառտաներուն:

— 1983ին տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ. ի Պոսթընի եւ Փրավիտենսի Մասնաճիւղերու սկառտ-աստիճանաւորներու երկօրեայ բանակումը, «Հայաստան» քեմփի մէջ: Կը մասնակցին 30 աստիճանաւորներ:

— 1983ին, Ուաթըրթառունի Հայ Մշակութային եւ Կրթական Կեդրոնին մէջ, երկօրեայ հանդիսութիւններով կը նշուին Հ. Մ. Լ. Մ. ի հիմնադրութեան 65րդ եւ Պոսթընի Մասնաճիւղի հիմնադրութեան 10րդ տարեդարձները: Այս առիթով, 37 գայլիկ, արծուիկ, արի եւ արենոյշ կը կատարեն իրենց երդումը: Մասնաճիւղի սկառտական կազմը ունէր 109 անդամ:

— 1983ին տեղի կ'ունենայ Նիւ Ճըրզիի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի սկառտական 4րդ ընդհանուր բանակումը, Սթոք Ֆորեսթ Փարքի մէջ: Ութօրեայ բանակումին կը մասնակցին 47 սկառտաներ: Մասնաճիւղի սկառտական կազմը ունէր 72 արի, արենոյշ, գայլիկ եւ արծուիկ:

— 1984ին, Փրավիտենսի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը իր հիմնադրութեան 3րդ տարեդարձը կը տօնէ դաշտահանդէսով, «Հայաստան» քեմփի մէջ:

— 1984ին, շրջանի Հ. Մ. Լ. Մ. ի 10 Մասնաճիւղերու Ֆութպոլի Լիկի մրցաշարքին, յաղթանակը կը տանի Փրավիտենսի Հ. Մ. Լ. Մ. ի Փութպոլի խումբը:

— 1984ին, եռօրեայ հանդիսութիւններով կը նշուի Շիքակոյի Հ. Մ. Լ. Մ. ի հիմնադրութեան 10րդ տարեդարձը: Այս առիթով, տեղի կ'ունենան ֆութպոլի եւ վոլիպոլի մրցումներ, Հ. Մ. Լ. Մ. ի Տիթրոյիթի եւ Շիքակոյի Մասնաճիւղերու խումբերուն միջեւ:

— 1984ին տեղի կ'ունենայ հարաւային Ֆլորիտայի (Միամի) Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի սկառտական եռօրեայ բանակումը: Կը մասնակցին 20 սկառտաներ:

— 1984ին, Նիւ Ճըրզիի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան 10րդ տարեդարձը: Մասնաճիւղը ունէր 137 երկսեռ անդամ եւ 90 սկառտ:

— 1984ին, հարաւային Ֆլորիտայի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղը ունէր 65 գործոն



Շիկաբոյի եւ Տիթրոյիթի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերու վոլիպոլի աղջկանց խումբերը,
1984ին:

անդամ-անդամուհիներ եւ 25 օժանդակ
անդամներ:

— 1984ին, Տիթրոյիթի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը կը տօնէ Հ. Մ. Ը. Մ. ի հիմնադրութեան 65րդ տարեդարձը, Հայ Կեդրոնի սրահին մէջ:

— 1985ին, Հ. Մ. Ը. Մ. ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջ. Վարչութեան հրաւէրով, հարաւային Ֆլորիտայի Ֆորթ Լատըրտէյլ քաղաքին մէջ տեղի կ'ունենայ շրջանի Մասնաճիւղերու Վարչութեանց դիւաններու երկօրեայ ժողով: Այս առիթով, հրապարակային ձեռնարկով կը տօնակատարուի նաեւ Հ. Մ. Ը. Մ. ի հիմնադրութեան 67րդ տարեդարձը:

— 1985ին, Պոսթընի մէջ տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. ի Արեւելեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի շրջաններու 17րդ Միջ-Մասնաճիւղային ամառնային խաղե-

րը, որոնց սկիզբը դրուած էր Մոնթրէալի Հ. Մ. Ը. Մ. «Կամք» Մասնաճիւղի մարզական պատասխանատուներու կողմէ, իբրև միջանդամային խաղեր, սակայն տարիներու ընթացքին զարգանալով ու ծաւալելով, դարձած էին Միջ-Մասնաճիւղային խաղեր:

17րդ ամառնային խաղերուն, որոնք կը նույիրուին վաստակաւոր սկաուտապետ Լեւոն Պապլուցեանի յիշատակին, կը մասնակցին՝ Արեւելեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի 12 Մասնաճիւղերէն 400 երկսեռ մարզիկներ:

— 1985ին, Տիթրոյիթի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի խումբը, Սքուէյր Լէյք Ռաքէթ Քլասի գոց դաշտի ֆութպոլի մրցաշարքին կը գրաւէ երկրորդ դիրքը:

— 1985ին, հարաւային Ֆլորիտայի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի գայլիկներու եւ մրջնիկներու խումբերը կ'ունենան ութօր-



Մայամիի (Հարաւային Ֆլորիդա) Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի սկառւտական
կազմը, 1984ին:



Տիբրոյիթի եւ Շիկագոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերու
պատմեթպոլի խումբերը, 1985ին:

եայ բանակում՝ Պոքա Բաղոնի Սպանիշ
Բիվորի ծովեզերեայ վայրը:

— 1985ին, Մեծ Եղեռնի 70ամեակ —
Հ. Մ. Ը. Մ. ի Արեւելեան Միացեալ Նահանգ-
ներու շրջանէն 430 երկսեռ մարզիկներ եւ
սկառւտներ գործօն մասնակցութիւն կը բե-
րեն՝ Ապրիլ 24ին, Ուաշինգթոնի մէջ Հայ
Դատի արդար լուծումը պահանջող ազգային
քաղաքական հաւաքին:

— 1985ին, Փրավիտենսի Հ. Մ. Ը. Մ. ի
Մասնաճիւղի Փութպոլի խումբը, Ռոտ Այ-

լընտ Փութպոլի Լիկի ախոյեանութեան
մրցաշարքին կը տիրանայ յաղթանակի
բաժակին:

— 1986ին կը հիմնուի Ալպընի (Նիւ
եռք) Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը, հրապա-
րակային հանդիսութեամբ, հիմնադիր 45
երկսեռ անդամներով:

— 1986ին, Շիքակոյի Հ. Մ. Ը. Մ. ի
Մասնաճիւղի Փութպոլի խումբը, Շիքակոյի
սրահի Փութպոլի խումբերու մրցաշարքին
կը տիրանայ յաղթանակի բաժակին:



Տիբրոյիթի եւ Շիկաքոյի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղերու ֆութպոլի խումբերը,
1985ին:




Պութընի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի ֆութպոլի խումբը, 1985ին:

— 1986ին, Փրավիտենսի մէջ տեղի կ'ունենան Հ. Մ. Լ. Մ. ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջ. Վարչութեան կազմակերպած վոլիսպոլի Միջ-Մասնաճիւղային ախոյեանութեան մրցումները եւ տողանցքը, Առւր Լէյտի օֆ Փրավիտենսի մարզադաշտին վրայ, 120 մարզիկ-մարզիկուհիներու մասնակցութեամբ: Ախոյեանի տիտղոսին կը տիրանան՝ Հ. Մ. Լ. Մ. ի նիւ Եռքի Մասնաճիւղի աղջկանց եւ Պէյսայտի Մասնաճիւղի մանչերու խումբերը:

— 1986ին կը տօնակատարուի Փրավիտենսի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի հիմնադրութեան 5րդ տարեգարձը: Ներկայ կ'ըլլան Շրջ. Վարչութեան կազմակերպած վոլիսպոլի Միջ-Մասնաճիւղային մրցաշարքին մասնակցող Հ. Մ. Լ. Մ. ի Տիթրոյիթի, Ֆիլատելֆիոյ, Շիքակոյի, Ուաշինկլընի եւ Պէյսայտի Մասնաճիւղերու երկսեռ մարզիկները:

— 1986ին կը տօնակատարուի Տիթրոյիթի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի հիմնադ-



Փրավիտենսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի պասքեթպոլի կրտսեր մանչերու խումբը, 1987ին:

բութեան 10րդ տարեղարձը, Տիթրոյիթի Հայ Կեդրոնին մէջ: Այս առիթով տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. ի նիւ Եորքի եւ Տիթրոյիթի Մասնաճիւղերու պասքեթպոլի եւ վոլիպոլի աղջկանց եւ մանչերու խումբերու Միջ-Մասնաճիւղային մրցումներ:

— 1987ին, Տիթրոյիթի մէջ կը գումարուի Հ. Մ. Ը. Մ. ի Արեւելեան Միացեալ Նահանգներու 10րդ Շրջ. Ներկայացուցչական ժողովը: Եորեայ նիստերուն շրջանի 11 Մասնաճիւղերէն իրաւասու ձայնով կը մասնակցին 44 ներկայացուցիչներ: Շրջանի 11 Մասնաճիւղերը միասնաբար ունէին 1017 անդամ-անդամուհի: 403ը՝ երկսեռ մարզիկ, իսկ 208ը՝ մաս կը կազմէին սկառտական շարքերուն:

— 1987ին, Պէյսայտի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի անդամ 40 պատանիներ, Սըրբոց Նահատակաց եկեղեցւոյ սրածին մէջ կը կատարեն խոստման տպաւորիչ արարողութիւն:

— 1987ին, Հ. Մ. Ը. Մ. ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջ. Վարչութիւնը կը կազմակերպէ սկառտական եօթնօրեայ շրջանային ընդհանուր բանակում: Կը մասնակցին 132 արի-արենոյշներ:

— 1987ին, Փրավիտենսի Քոմիւնիթի Գոլէճ օֆ Ռոտ Այլընտ մարզադաշտին վրայ տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջ. Վարչութեան կազմակերպած պասքեթպոլի Միջ-Մասնաճիւղային ախոյեանութեան աւարտական մրցումները: Կը մասնակցին՝ Հ. Մ. Ը. Մ. ի Ալպընիի, Շիքակոյի, Նիւ Եորքի, Պոսթընի եւ Փրավիտենսի Մասնաճիւղերէն շուրջ 100 մարզիկ-մարզիկուհիներ: Առաջնութեան բաժակ եւ ոսկի մետալներ կը ստանան՝ Հ. Մ. Ը. Մ. ի Պոսթընի պասքեթպոլի աղջկանց եւ կրտսեր մանչերու եւ Փրավիտենսի մանչերու խումբերը: Մարզիկներու տողանցքին կը մասնակցին նաեւ Հ. Մ. Ը. Մ. ի Պոսթընի, Ալպընիի եւ Փրավիտենսի Մասնաճիւղերու սկառտական կազմերը:

Երկօրեայ մրցումներու առաջին օրը կը տօնակատարուի Փրավիտենսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի հիմնադրութեան նրդ տարեղարձը:

— 1987-1988 տարեշրջաններուն, Հ. Մ. Ը. Մ. ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջ. Վարչութիւնը կը կազմակերպէ երկօրեայ սկառտական վեց սեմինար-բանակումներ, որոնց ընթացքին, 30էն 50



Նիւ Եորքի եւ Տիբրոյիթի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղերու պասֆեթպոլի խումբերը,
1986ին:



Արեւելեան Միացեալ Նահանգներու Հ. Մ. Ը. Մ. ի 11րդ Ներկայացուցչական ժողովին
մասնակցողները, Հարաւային Ֆլորիտա, 1988ին:

մասնակցողներուն կը դասաւանդուին Նորընծայի եւ աստիճանաւորական գիտելիքներ:

— 1987ին, Պոսթընի մէջ տեղի կ'ունենան Հ. Մ. Լ. Մ. ի Արեւելեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի շրջաններու 19րդ Միջ-Մասնաճիւղային ամառնային խաղերը, իսկ 1988ին, Նիւ Ճըրզիի մէջ, 14րդ Միջ-Մասնաճիւղային ձմեռնային խաղերը:

— 1988ին, հարաւային Ֆլորիտայի Ֆօրթ Լոտլրտալի «Հոլիտէյ ինն» պանդոկին մէջ կը գումարուի Հ. Մ. Լ. Մ. ի Արեւելեան Միացեալ Նահանգներու 11րդ Ներկայացուցչական ժողովը: Եռորեայ նիստերուն կը մասնակցին շրջանի 11 Մասնաճիւղերէն իրաւասու ձայնով 47 ներկայացուցիչներ եւ խորհրդակցական ձայնով՝ 23 հոգի: 11 Մասնաճիւղերը միասնաբար ունէին 265 սկառուտ, 459 մարզիկ, 428 անդամ: Ընդհանուր թիւ՝ 1152:

— 1988ին, Նիւ Ճըրզիի մէջ, Հ. Մ. Լ. Մ. ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջ. Վարչութիւնը, գործակցութեամբ Հ. Մ. Լ. Մ. ի Նիւ Ճըրզիի, Նիւ Եորքի, Պէյ-

սայտի, Տիթրոյիթի, Ուաշինկթընի եւ Ֆիլատելֆիոյ Մասնաճիւղերու Վարչութեանց, մեծ շուրջով կը տօնակատարէ Հ. Մ. Լ. Մ. ի հիմնադրութեան 70ամեակը:

— Հ. Մ. Լ. Մ. ը, Արեւելեան Միացեալ Նահանգներու մէջ, կը չարունակէ հայապահանման իր առաքելութիւնը, տակաւընդարձակուող ուշագրաւ գործունէութեամբ, չնորհիւ մերձաւոր արեւելեան երկիրներէն գաղթած նախկին անուանի մարզիկներու, հաւատաւոր, գաղափարապաշտու նուիրեալ Հ. Մ. Լ. Մ. ականներու:

Հ. Մ. Լ. Մ. ի մարզական, սկառուտական եւ ընկերային բոլոր ձեռնարկները կը կազմակերպուին Հ. Մ. Լ. Մ. ականի ոգիով, խանդավառող են, վառ կը պահեն ազգային ոգին, կ'արմատացնեն ազգային ինքնութիւնը:

Հ. Մ. Լ. Մ. ի անդամները, մարզիկներն ու սկառուտները միշտ պատրաստ, ներկայ են ու մասնակից մեր ազգային տօնակատարութիւններուն, յուշահանգսներուն, մեր ազգային գերազոյն նպատակը՝ մեր արդար դատը հետապնդող հաւաքներուն, բողոքի ցոյցերուն:



ԱՐԵՒՄՏԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ

ԼՈՍ ԱՆՃԵԼԸՄԻ ՄԱՅՐ ՄԱՍՆԱԺԻՒՂ

Արեւմտեան Միացեալ Նահանգներու մէջ Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղ հիմնելու առաջին փորձը կը կատարուի Քալիֆորնիա նահանգի Լոս Անճելըս քաղաքին մէջ, 1952ին, սակայն, կարելի չըլլար հիմնաւորել:

1960ական թուականներուն, Պալքանեան եւ Մերձաւոր Արեւելեան կարգ մը երկիրներու մէջ ստեղծուած քաղաքական եւ տնտեսական տագնապներու բերումով, Քալիֆորնիա կը գաղթեն հոծ թիւով հայեր:

Ռումանահայ ազգային գործիչ Սարգիս Սարունիի գլխաւորութեամբ, Լոս Անճելըսի մէջ կը ստեղծուի Ռումանահայ «Բաֆֆի» Միութիւնը, որուն շուրջ համախմբուած մարզասէր երիտասարդութիւնը կը կազմէ Փութպոլի խումբ մը, որ 1966ին կը կոչուի Հ. Մ. Ը. Մ. եւ օրհնութիւնը կը ստանայ Հ. Մ. Ը. Մ. ի հիմնադիրներէն Տիգրան քհնյ. Խոյեանի:

Կը կազմուի նաեւ սկաուտական խումբ մը, որուն առաջին բանակումին, շուրջ 60 սկաուտներով եւ արենոյշներով, բանակավայր կ'այցելէ եւ խանդավառող ներկայութիւն կ'ըլլայ գրագէտ Համաստեղ:

Այնուհետեւ, Սարգիս Սարունիի նախագահութեամբ եւ Վարդգէս Սահակեանի, Ժիրայր Գալայճիկեանի, Ֆլորա Պարուքճեանի, Ստեփան Գապտատյեանի, Փայլիկ Առաքելեանի եւ Անճելա Կոտիկեանի մասնակցութեամբ կը կազմուի յանձնախումբ մը, որուն պարտականութիւնը կ'ըլլայ, նախկին Հ. Մ. Ը. Մ. ականներու աջակ-

ցութեամբ, պահել Փութպոլի խումբը, աւելցնել թիւը սկաուտներուն, ձեռնարկել անդամարչաւի եւ կազմակերպել Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղ հիմնելու անդամական ժողով:

Հիմնադիր ժողովը կը գումարուի 1968ի Յունուարին: Առաջին Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Յարութիւն Բարսեղեան (ատենապետ), Յարութիւն Սարգիսեան, Վարդգէս Սահակեան, Յակոբ Առաքելեան, Միրէլ Սարգիսեան, Յարութիւն Բելենկեան, Եղուարդ Սարգիսեան, Զարեհ Ռումտիկեան:

Վարչութեան եւ կարգ մը անդամներու կողմէ կը կազմուի նաեւ ներքին կանոնագիր մը:

Լոս Անճելըսի Հ. Մ. Ը. Մ. ի նորակազմ Մասնաճիւղը կը վաւերացնեն՝ Քալիֆորնիոյ նահանգապետութիւնը եւ Մերձաւոր Արեւելքի Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Վարչութիւնը, որ այդ շրջանին գոյութիւն ունեցող Հ. Մ. Ը. Մ. ի գերագոյն Մարմինը կը նկատուէր:

1970ին, Լոս Անճելըսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը կը վաւերացուի նաեւ Միացեալ նահանգներու կառավարութեան՝ Internal Revenue Service-ի կողմէ, իբրև non profit organization.

1971ին, Մասնաճիւղի պասքեթպոլի մանչերու խումբը առաջին անգամ ըլլալով կը մասնակցի Հարաւային Քալիֆորնիոյ Պասքեթպոլի Լիկի կազմակերպած տարեկան մրցաշարքին: Կը գրաւէ դասաւորման Բ. դիրքը: Այնուհետեւ, երեք անգամ կը



Լու Աննելըսի Հ. Ա. Ը. Մ. ի Մասնաճիւղի հիմնադրութեան առաջին
Յանձնախումբը, 1967ին:

Նստած, ձախէն աջ՝ Փայլիկ Առաքելեան, Սարգիս Սարունի, Աննելա
Կոտիկեան:

Ոտքի, ձախէն աջ՝ Վարդգէս Սահակեան, Ժիրայր Գալայնիկեան, Ֆլորա
Պարութեան, Ստեփան Գապատայեան:

Միրանայ նոյն Լիկի մրցաշարքերու ախո-
յեանի պատուաբեր տիտղոսին եւ բաժակին:

1972էն սկսեալ, Մասնաճիւղի Փութ-
պոլի խումբը չորս անգամ կը տիրանայ Լու
Աննելը Մէյձըր Լիկի Ա. Դասակարգի
միջազգային խումբերու տարեկան մրցա-
շարքի ախոյեանի պատուաբեր տիտղոսին
եւ բաժակին: Կը տիրանայ նոյն Լիկի կազ-
մակերպած Հարաւային Քալիֆորնիոյ
բաժակի մրցաշարքի բաժակին, ապա ամ-
բողջ Քալիֆորնիա նահանգի բաժակի մրց-
աշարքի բաժակին: Կը տիրանայ նաև Սինքո տը Մայօ Ա. Դասակարգի Փութպոլի
միջազգային խումբերու մրցաշարքի բա-
ժակին, յաջորդաբար երկու անգամ:

1972ին, Մասնաճիւղի Փութպոլի եւ
պասքեթպոլի մանչերու Ա. Դասակարգի
խումբերը Պէյրութի մէջ (Լիբանան) կը
մասնակցին Մերձաւոր Արեւելքի Հ. Ա.
Ը. Բ. Շրջ. Վարչութեան կազմակերպած
35րդ Միջ-Մասնաճիւղային մրցումներուն:

Մասնաճիւղը, շրջան մը, գրեթէ ամէն
տարի կը մասնակցի W.A.A.Ա.ի կազմա-

կերպած Ողիմպիականներուն, Հէյվըրտի
մէջ — Սան Ֆրանսիսկօ — եւ միշտ կը տիրա-
նայ Փութպոլի եւ պասքեթպոլի Ա. Դասա-
կարգերու խումբերու մրցաշարքերու բա-
ժակին եւ աթլէթիք խաղերու առաջնակարգ
մետալներու:

1974ին, Մասնաճիւղի Վարչութեան
մաս կը կազմեն՝ Քերոր Առաքելեան, Կար-
պիս Սեմէրձեան, Նուպար Սարգիսեան,
Արմէն Տէյիրմէնձեան, Մակի Բարսեղեան,
Սարգիս Արեւեան, Յարութիւն Բարսեղ-
եան, Արմէն Կէօնձեան, Յարութիւն Սար-
գիսեան, Վահագն Սաւուլեան, Ցոլակ
Ցովուկեան:

1975ին, Մասնաճիւղը ունէր 750 ան-
գամ: Ակաուտական կազմը կը բաղկանար
175 հոգիէ:

1975ին, Մասնաճիւղի Վարչութեան
անգամ կ'ընտրուին՝ Յարութիւն Բարսեղ-
եան, Նուպար Սարգիսեան, Ցոլակ Ցով-
ուկեան, Մակի Բարսեղեան, Յակոբ
Բրինձեան, Սահակ Աւագեան, Ճորճ Պաղ-
տոյեան, Անդրանիկ Անտոնեան, Կարպիս



Լու Անհելըսի Հ. Մ. Լ. Մ. Ի պասֆեթառլի խումբը, 1972ին:



Լու Անհելըսի Հ. Մ. Լ. Մ. Ի պասֆեթառլի Ա. խումբը, 1980ին:



Լու Աննելըսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի «Կիլիկիա» ֆութպոլի խումբը,
1981ին:



Լու Աննելըսի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի Ա. խումբը, 1981ին:



Լու Աննելըսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի Քարաքէի «Վահագնի» խումբը
եւ կրտսերներու «Արամազդ» խումբը փորձի պահուն:

Սեմյուն Պերճ Ռուբինեան:

1976ին, Մասնաճիւղի Վարչութիւնը կ'ունենայ հետեւեալ կազմը. — Սարգիս Արեւեան, Էտի Գաղեան, Արօ Իղնեան, Վարդգէս Ղազարեան, Ռուբին Յակոբեան, Մուրատ Շահինեան, Ճորճ Պաղտոյեան:

Մասնաճիւղը իր հիմնադրութեան թուականէն սկսեալ, Հոլիվուտի «Մանթա Մոնիքա» պողոտայի վրայ կ'ունենայ իր ակումբ-կեդրոնատեղին, որ թէեւ վարձու, բայց մինչեւ 1983, կ'ըլլայ Քալիֆորնիոյ մէջ Հ. Մ. Ը. Մ. ի գործունէութիւնը ծաւալող հրաբորք հնոց մը:

Մասնաճիւղը իր վարչականներով, յանձնախումբերով եւ անդամներով, գործոն եւ ամբողջանուէր մասնակցութիւնը կը բերէ եւ իր ակումբ-կեդրոնատեղին ժամադրավայրը կը դառնայ Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ Միջ-Մասնաճիւղային, ապա նաւասարդեան Մարզախաղերու կազմակերպչական աշխատանքներուն, առաջին տարիէն սկսեալ:

Միջ-Մասնաճիւղային թէ նաւասարդեան Մարզախաղերուն, Մասնաճիւղի մարզիկներուն նուաճած արդիւնքները, մանաւանդ դաշտային խաղերու մէջ, միշտ գերա-

զանց գնահատանքի կ'արժանանան:

1978ին, Մասնաճիւղի Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Նուպար Սարգիսեան, Վարդգէս Թովմասեան, Արփի Պէրէճիքլեան, Վահէ Ցովակիմեան, Ճործ Պաղտոյեան, Մանուկ Զէյթունցեան, Շանթ Հայթայեան, Էտի Գաղեան, սկառատ-խմբապետ Ռազմիկ Շիրինեան:

1978ին, Մասնաճիւղէն 23 սկառատներ եւ արենոյշներ կը մասնակցին Հ. Ա. Ը. Մ. ի Առաջին Համագաղութային բանակումին, որ տեղի կ'ունենայ Յունաստանի մէջ:

1979ին, Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Ցարութիւն Բարսեղեան, Նուպար Սարգիսեան, Մակի Պալեան, Նիկոլ Արզումանեան, Մանուկ Զէյթունցեան, Արփի Պէրէճիքլեան, Ճործ Մահրուքեան, Հենրի Նազարբէզեան, սկառատ-խմբապետ Ռազմիկ Շիրինեան:

1980ին, Մասնաճիւղը ունէր 163 երկսեռ անդամ, մարզիկ: Ակառատական կազմը կը բաղկանար՝ 150 հոգիէ:

1980ին, Մասնաճիւղի ներքին դըժարութեանց բերումով, սեփական ակումբ ունենալու հարց, ֆութպոլի Ա. խումբը շրջանի ներկայացուցիչ խումբի վերածելու հարց եւայլն, Շրջ. Վարչութեան կողմէ Վարչութեան անդամ կը նշանակուին՝ Ժագ Ալահայտոյեան, Կարօ Հայթայեան, Զարեհ Սողոմոնեան, Նիկոլ Արզումանեան, Հերրի Նազարբէզեան, Ցարութիւն Հալէպլեան, Մանուկ Զէյթունցեան, Ճործ Մահրուքեան, սկառատ-խմբապետուհի իւղիկ Շիթիլեան:

1981ին, Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Ցարութիւն Բարսեղեան, Ցարութիւն Հալէպլեան, Ցակոր Ճիյէրճեան, Նիկոլ Արզումանեան, Գրիգոր Մահրուքեան, Երուանդ Նահապետեան, Միսաք Թէպէլէքեան, Մանուէլ Տուղճեան, սկառատ-խմբապետուհի իւղիկ Շիթիլեան:

Առանձին յիշատակութեան արժանի է Մասնաճիւղի քոնֆու-քարաթէի «Վահագնի» սեռ գոտիներու միաւորը, որ ամէն տարի, 1981էն սկսեալ, կը յաջողի իր շուրջ համախմբել եւ մարզել շուրջ 80 պարման-պարմանուհիներ ու ելոյթներ ունենալ եւ

տեղական միջազգային մրցումներուն մասնակցելով՝ պատուաբեր արդիւնքներով մրցանակներու արժանանալ:

1982ին, Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Նուպար Սարգիսեան, Կարպիս Շիրուտըմեան, Գոգօ Պալեան, Միսաք Թէպէլէքեան, Աշոտ Աբէլեան, Փերծ Կարապետեան, Ցարութ Գազանճեան, Ցարութիւն Հալէպլեան, Արշակ Տօնոյեան:

1983ին, Մասնաճիւղի ճատրակի յանձնախումբը կը կազմակերպէ եւ յաջողութեամբ կ'իրագործէ ճատրակի աննախընթաց ախոյեանութեան մրցաշարք մը:

1983ին, Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Կարպիս Շիրուտըմեան, Զապէլ Գազանճեան, Մհեր Դաւիթեան, Ցակոր Թիւֆէնքճեան, Ցարութ Գազանճեան, Արա Ասատուրեան, Նորա Իլիւպէյեան, Ցակոր Բրինճեան, Իւղիկ Շիթիլեան:

1985ին, Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Ցարութիւն Բարսեղեան, Ցակոր Թիւֆէնքճեան, Մհեր Դաւիթեան, Նիկոլ Արզումանեան, Ցարութ Գազանճեան, Երուանդ Վարդանեան, Վարանդ Մելքոնեան, Ցարութիւն Հալէպլեան, Հուրի Նահարեան:

1986ին, Մասնաճիւղը ունէր 500 երկսեռ անդամ, մարզիկ, ներառեալ՝ սկառատական կազմը:


1986ին, Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Ցարութիւն Բարսեղեան, Մհեր Դաւիթեան, Նիկոլ Արզումանեան, Ծովիկ Սրապեան, Վարանդ Մելքոնեան, Սարգիս Արթինեան, Ցարութ Քէհէեան, Երուանդ Վարդանեան, սկառատ-խմբապետ Միրօհանզեան:

Լոս Անճելըսի Հ. Ա. Ը. Մ. ի Մասնաճիւղի Վարչութիւններու առնթեր կը գործեն՝ Ակառատական Խորհուրդ, Ֆութպոլի, Պասբեթպոլի, Ակումբի եւ Ընկերային Ցանձնախումբեր:

Ընկերային Ցանձնախումբը յատկապէս Վարչութեան կողքին գործող ամէնէն աշխոյժ Մարմիններէն մէկը կ'ըլլայ, իր շուրջ համախմբելով երկսեռ երիտասարդներու պատկառելի թիւ մը: Մասնաճիւղային իր

Հ. Մ. Ը. Մ. ի 70ԱՄԵԱԿ — ՅՈՒՆԱՏԵՏՐ

Լոս Անֆելքսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիշխի սկավառական կեանքուն դրուազներ:



Հ. Մ. Ը. Մ. ի 70ԱՄԵԱԿ — ՅՈՒՇԱՏԵՏՐ

Լու Աննելըսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաթիւղի սկառտական կեանքէն դրուագներ:



Հ. Մ. Ը. Մ. ի 70ԱՄԵԱԿ — ՑՈՒՇԱՏԵՏՐ

Լոս Անդելըսի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի սկաուտական կեանքէն դրուագներ:





Լոս Աննելըսի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաթիղի Վարչութեան եւ Ընկերային
Յանձնախումբի անդամները, 1986ին:

Ժրաջան գործունէութեան կողքին, յաճախ կ'օժանդակէ նաեւ Շրջ. Վարչութեան ընկերային ձեռնարկներուն:

1986ին, Վարչութիւնը կը սկսի հրատարակել Մասնաճիւղի «Լրատու» պատկերազրդ պարբերաթերթը:

1987ին, Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Մհեր Դաւիթեան, Նիկոլ Արզումանեան, Երուանդ Վարդանեան, Արամ Պէքըրեան, Վարանդ Մելքոնեան, Սարգիս Արթինեան, Յարութիւն Քէհէեան, Հրայր Թիւֆէնքնեան, Միրօ Խանզադեան:

Մասնաճիւղի տարեկան ձեռնարկները կ'ըլլան՝ ծնողական ժողով, սկաուտական հաւաքոյթ, սկաուտական հանդէս:

Կում, երդման արարողութիւն, նախաճաշի հաւաքոյթ, դաշտագնացութիւն, ընկերային խաղերու՝ փինկ-փոնկ, ճատրակ, նարուեւայլն մրցաշարքեր, յաղթանակներու առիթով հիւրասիրութիւն, հիւր Հ.Մ.Ը.Մ.ականներու հիւրընկալութիւն, Մասնաճիւղի անդամ վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.-ականներու ի պատիւ մեծարանքի հանդիսութիւն, ճաշկերոյթ-պարահանդէս:

Մարզական, սկաուտական եւ ընկերային գործունէութեան առընթեր, Մասնաճիւղը իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ հանրանուէր ձեռնարկներուն եւ մեր ազգային տօնակատարութիւններուն:

Վարչութիւնները նախաձեռնողը եւ քաջալերողը կ'ըլլան Քալիֆորնիոյ հայաշատ քաղաքներու մէջ սկառտական միաւորներու կազմումին եւ Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղերու հիմնումին այն խոր հաւատքով, որ, օտար այս ափերու վրայ մանաւանդ, Հ.Մ.Լ.Մ.ի դրօշին տակ բանակումները, արշաւները, մարմնակրթանքը կամ մարզախաղերը կ'ըլլան, եղած են հայացընդ, նկարագիր կերտող, բարոյական կրթութիւն տուող:

1983էն 1986, Մասնաճիւղը իր կեդրոնատեղին կը փոխադրէ «Աղեքսանդրիա» պողոտայի վրայ գտնուող ազգապատկան շէնքին մէջ, իսկ ներկայիս հաստատուած է

«Վերմոնթ» պողոտայի վրայ, Հայ կեդրոնի շէնքը:

1988ին, Վարչութեան անդամ կ'ընտըրուին՝ Հրայր Թիւֆէնքնեան, Յարութ Գաղանճեան, Վարդան Եաղմուրեան, Լեւոն Պողոսեան, Բագֆի Սիմոնեան, Յարութ Քէհէեան, Աննա Քիւրքնեան, Պերճ Ճամճեան, Յարգիս Արթինեան:

Մասնաճիւղի Վարչութիւնները միշտ հետապնդած են ու կը հետապնդեն, որ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Հ.Մ.Լ.Մ.ի հիմնադիր Լոս Անձելըսի Մայր Մասնաճիւղը ունենայ իր սեփական ակումբ-կեդրոնատեղին:



ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍՔՈՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հ. Մ. Լ. Մ. ի գործունէութիւնը Սան Ֆրանսիսքոյի մէջ, կը սկսի 1971ի Մայիսին:

Խումբ մը Հ. Մ. Լ. Մ. ականներու նախաձեռնութեամբ նշանակովի առժամեայ Վարչութիւն մը կը յաջողի անդամ արձանագրել 95 երիտասարդներ, որոնցմէ 25ը՝ սկաուտ:

Կը կազմուին պասքեթպոլի երկու՝ մանչերու եւ աղջիկներու, վոլիպոլի եւ հեծելարշաւի խումբեր:

Նշանակովի Վարչութիւնը յաջողութեամբ գործադրելով իր վրայ դրուած պարտականութիւնները, կը կազմակերպէ Մասնաճիւղի անդամական առաջին ժողովը, որ տեղի կ'ունենայ 22 Յունուար 1972ին, Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ սրահին մէջ:

Ժողովին կը մասնակցին՝ Հ. Մ. Լ. Մ. ի Լու Անձելըսի Մասնաճիւղէն ներկայացուցիչներ՝ Յարութիւն Բարսեղեան եւ Յակոբ Տէր Պօղոսեան:

Կը մշակուի Մասնաճիւղի գործունէութեան ծրագիրը:

Առաջին Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Տիգրան Սարգիսեան, Ժան Թովմասեան, Նուպար Տէմիրճեան, Արչի Մելքոնեան, Սեպուհ Վարդանեան, Գ. Մարտիրոսեան:

1972 Մարտ 18-19ին, նորակազմ Մասնաճիւղը իր մասնակցութիւնը կը բերէ Հ. Մ. Լ. Մ. ի Լու Անձելըսի Մասնաճիւղի կազմակերպած պասքեթպոլի առաջին մրցաշարքին, Լու Անձելըսի մէջ:

1972 Նոյեմբեր 16ին կը գումարուի Մասնաճիւղի անդամական երկրորդ ժողովը: Լու Անձելըսի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղէն ներկայ կը գտնուին՝ Յարութիւն Բարսեղեան, Ցոլակ Յովսէփեան եւ Յակոբ Տէր Պօղոսեան:

Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Կարպիս Պեղճեան, Մանասէ Գարամարտեան, Սեպուհ Վարդանեան, Վաչէ Ստեփանեան, Արմինէ Գալֆայեան:

1974ին, Մասնաճիւղի Վարչութեան ատենապետն է՝ Արմէն Մարգարեան:

1974ի Մայիսին, Մասնաճիւղի Փութպոլի խումբը կը մասնակցի Հ. Մ. Լ. Մ. ի Ֆրեզնոյի Մասնաճիւղի կազմակերպած Փութպոլի մրցաշարքին, Ֆրեզնոյի մէջ:

Նոյն տարին, Մասնաճիւղը կ'ունենայ սկաուտական երդման առաջին արարողութիւնը: Հ. Մ. Լ. Մ. ի Մերձաւոր Արեւելքի Շրջ. Վարչութիւնը մասնաւոր յատուկ պատգամով կը շնորհաւորէ երդման արարողութեան գործադրումը:

1974ի Օգոստոսին, Մասնաճիւղը կ'ունենայ իր տարեկան մեծ պարահանդէսը:



Սան Ֆրանսիսկոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի վոլիպոլի խումբը, 1980ին:

1975ի Հոկտեմբերին, Մասնաճիւղը իր մասնակցութիւնը կը բերէ Հ. Մ. Ը. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջ. Վարչութեան կազմակերպած սկառուտական Միջ-Մասնաճիւղային ընդհանուր բանակումին, Ֆրեզնոյի «Լեւոն Յակոբեան» դաշտավայրին մէջ:

1976ին, Վարչութեան անդամ կ'ընտըրուին՝ Զօհրապ Անտոնեան, Սալբի Մուրատեան, Աշխէն Զաքեան, Ստեփան Պաղպուտարեան, Մարտօ Գարբիէլեան, Լեւոն Իսահակեան, Վահագն Թօփճեան:

1976ի Դեկտեմբերին, Մասնաճիւղը շքեղ հանդիսութեամբ կ'ունենայ սկառուտական երդման երկրորդ արարողութիւնը:

Նոյն տարին, իր մասնակցութիւնը կը բերէ Հ. Մ. Ը. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջ. Վարչութեան կազմակերպած Միջ-Մասնաճիւղային առաջին Պղիմպիական Խաղերուն:

1977ին, Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Վարչութեան կազմակերպած Բ. Ողիմպիական Խաղերուն, Լոս Անձելըսի մէջ, կը մասնակցի Փութպոլի խումբով:

1977-1978 տարեշրջանին, Հ. Մ. Ը. Մ. ի Սան Ֆրանսիսկոյի Մասնաճիւղը ունէր 212

երկսեռ անդամ, ներառեալ՝ սկառուտական կազմը, որ կը հաշուէր 100 հոգի: Ունէր պասքեթպոլի երկու՝ մանչերու եւ աղջիկներու, ֆութպոլի եւ վոլիպոլի խումբեր:

1977-1978ին, յաջորդաբար Վարչութեան ատենապետներն են՝ Տիգրան Սարգիսեան եւ Զօհրապ Անտոնեան:

1978ի Յունուարին, Հրապարակային ձեռնարկով, Մասնաճիւղը կը նշէ Հ. Մ. Ը. Մ. ի սկառուտութեան հիմնադրութեան 60ամեակը:

1978ի Մայիսին, իր մասնակցութիւնը կը բերէ Շրջ. Վարչութեան կազմակերպած Միջ-Մասնաճիւղային Գ. Ողիմպիական Խաղերուն, նուիրուած՝ Հ. Մ. Ը. Մ. ի 60ամեակին:

1978ի Օգոստոսին, շքեղ հանդիսութեամբ կը տօնակատարէ Հ. Մ. Ը. Մ. ի հիմնադրութեան 60ամեակը:

1978ի Օգոստոսին, Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութեան կազմակերպած Հ. Մ. Ը. Մ. ի սկառուտական Ա. ընդհ. բանակումին, Յունաստանի մէջ, նուիրուած՝ Հ. Մ. Ը. Մ. ի 60ամեակին, Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանը իր մասնակցութիւնը կը բերէ 31 արի-արենոյշներով, որոնցմէ 8



Սան Ֆրանսիսկոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի պատմեթպոլի
կրտսերներու խումբը, 1985ին:

Հոգին՝ Սան Ֆրանսիսկոյի Մասնաճիւղէն:

1978ի Օգոստոսին, մէկ շաբաթ տեւողութեամբ, տեղի կ'ունենայ Մասնաճիւղի սկառուտական տարեկան ընդհանուր բանակումը:

1979ին, Մասնաճիւղի Վարչութեան անդամներն են՝ Տիգրան Սարգիսեան (ատենապետ), Վիքթոր Ստեփանեան, Աստղիկ Պուրսալեան, Աշխէն Զաքեան, Սրբուկ Սարգիսեան, Վարուժ Տէր Պետրոսեան, Էտուին Մարգարեան:

1979ի Մայիսին, Մասնաճիւղը Շրջ. Վարչութեան կազմակերպած Միջ-Մասնաճիւղային Դ. Ողիմպիական Խաղերուն, Լոս Անձելըսի մէջ, կը մասնակցի Փութպոլի, պասքեթպոլի, վոլիպոլի խումբերով եւ թենիս ու ֆինկ-ֆոնկ կիրարկող երկսեռ մարզիկներով։ Կ'արձանագրէ երեք յաղթանակ։

1979ին, Մասնաճիւղը կը մասնակցի Շրջ. Սկառուտական Խորհուրդի կազմակերպած Ա. Դպրոց-բանակումին, Հ. Ե. Դ. ի ճամբարին մէջ։

1980ին, Մասնաճիւղի Փութպոլի խումբը, Ֆրեզնոյի մէջ, կը մասնակցի Շրջ. Վարչութեան կազմակերպած Միջ-Մասնաճիւղային Ե. Ողիմպիական Խաղերու զըտումի մրցաշարքին։

Ե. Ողիմպիական Խաղերուն, Լոս Անձելըսի մէջ, Մասնաճիւղը կը տանի երեք յաղթանակ։

1980ին, Մասնաճիւղը իր մասնակցութիւնը կը բերէ Հ. Մ. Ը. Մ. ի համագաղութային սկառուտական Բ. ընդհանուր բանակումին, կայացած՝ Փարիզի մէջ։

1981ի Մայիսին, Մասնաճիւղի անդամական ժողովին, Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Ժիրայր Սարգիսեան, Աշխէն Զաքեան, Մարլէն Թաշճեան, Մանուէլ Միճեան, Վարուժան Ազայ, Վիքթոր Ստեփանեան եւ սկառուտ-խմբապետ Ռոպէր Սարգիս։

1981ին, Մասնաճիւղը իր մասնակցութիւնը կը բերէ Շրջ. Վարչութեան կազմակերպած Հ. Մ. Ը. Մ. ի Նաւասարդեան Զ. Մարզախաղերուն, Լոս Անձելըսի մէջ, Փութպոլի, պասքեթպոլի, վոլիպոլի խումբերով եւ ֆինկ-ֆոնկ ու դաշտային խաղեր կիրարկող, ընդհանուր՝ 65 երկսեռ մարզիկներով եւ 40 արի-արենոյշներով։ Կ'արձանագրէ չորս յաղթանակ։

Նոյն տարին, կը մասնակցի Շրջ. Վարչութեան կազմակերպած Մարզական Սեմինարին եւ Փութպոլի Ա. դասակարգի խումբերու Միջ-Մասնաճիւղային մրցաշարքին։



Սան Ֆրանսիսկոյի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի պատմեթպոլի
կրտսերներու խումբը, 1986ին:



Սան Ֆրանսիսկոյի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի պատմեթպոլի Բ.
դասակարգի խումբը, 1986ին:



Սան Ֆրանսիսկոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի պատմեթպոլի խումբը,
շրջապատուած համակիրներով եւ պատասխանատուներով, 1986ին:

Վարչութեան ատենապետն է՝ Ժիրայր Սարգիսեան:

1981ի Օգոստոսին, առաջին անգամ ըլլալով, Մասնաճիւղը Մարզական Փառատօն մը կը կազմակերպէ Սան Ֆրանսիսկոյի մէջ, մասնակցութեամբ՝ Հ. Մ. Ը. Մ. ի Սան Ֆրանսիսկոյի, Կլէնտէյլի, Ֆրեզնոյի եւ Հովհտի Մասնաճիւղերէն 80 երկսեռ մարզիկներու. կը կատարուին վոլիպոլի, ֆութպոլի, փինկ-փոնկի, պասքեթպոլի եւ վազքի մըրցումներ ու տողանցք:

1982ին, Մասնաճիւղը կը մասնակցի Օքլէնտի Ս. Վարդան Հայց. Առաքելական եկեղեցւոյ կազմակերպած մարզախաղերուն:

1982ի Ապրիլ 24ին, Մասնաճիւղը կը մասնակցի գաղութի կազմակերպած քայլարշափին:

1982ին, Մասնաճիւղը ունէր 120 երկսեռ անդամ, 55 երկսեռ մարզիկ, սկառատական

կազմը կը հաշուէր 150 հոգի: Ընդհանուր՝ 325 անդամ: Ունէր ֆութպոլի խումբ, պասքեթպոլի 4 խումբ, 2 մանչերու, 2 աղջիկներու, վոլիպոլի աղջիկներու խումբ, փինկ-փոնկ եւ դաշտային խաղեր կիրարկող երկսեռ մարզիկներ: Վարչութեան առընթեր կը գործէին՝ Սկառատական Խորհուրդ, Ընկերային Ցանձնախումբ եւ Մարզական Ցանձնախումբ: Կ'օգտագործէր Սան Ֆրանսիսկոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ սրահը եւ նորակառոյց Հայ Կեդրոնի յարմարութիւնները:

1982ի Ցուլիսին, պաշտօնապէս բացումը կը կատարուի Հ. Մ. Ը. Մ. ի Սան Ֆրանսիսկոյի Մասնաճիւղի ակումբին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կողքին, ազգապատկան շէնքին մէջ: Բացումը կը կատարէ Աշոտ Մամիկոնեան եւ ակումբը կ'անուանուի «Աշոտ Մամիկոնեան»:



Սան Ֆրանսիսկոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաթիւդի ֆութպոլի Ա. խումբը:

Վաստակաւոր Հ. Մ. Ը. Մ. ական Աշոտ Մամիկոնեան իր կտակին հարդը կը նուիրէ Հ. Մ. Ը. Մ. ին, կառուցելու համար մարզաւան մը, որ իր անունով կոչուի «Աշոտ Մամիկոնեան» մարզաւան։

1982ի Օգոստոսին, Մասնաճիւղը կը կազմակերպէ Մարզական Բ. Փառատօնը, մասնակցութեամբ՝ Հ. Մ. Ը. Մ. ի Սան Ֆրանսիսկոյի, Կլէնտէյլի եւ Ֆրեզնոյի Մասնաճիւղերու երկսեռ մարզիկներուն։

1982ին եւ 1983ին, Հ. Մ. Ը. Մ. ի Նաւասարդեան է. եւ Լ. Մարզախաղերուն, Լոս Անձելըսի մէջ, Մասնաճիւղը յաջորդաբար կը տանի չորս եւ երկու յաղթանակներ։

1983ին, Մասնաճիւղի Մարզական Գ. Փառատօնը կ'իրագործուի փայլուն յաջողութեամբ։ Կը մասնակցին՝ Հ. Մ. Ը. Մ. ի Լոս Անձելըսի, Սան Ֆրանսիսկոյի, Ֆրեզնոյի, Փասատինայի, Կլէնտէյլի «Արարատ» եւ Հովհաննի «Մասիս» Մասնաճիւղերը։ Կը կատարուին՝ Փութպոլի, պասքեթպոլի, ֆինկ-ֆոնկի եւ դաշտային խաղերու մըրցումներ։ Տողանցքին կը մասնակցին՝ 230 երկսեռ մարզիկներ եւ 120 արի-արենոյշներ։

1984ին, Հ. Մ. Ը. Մ. ի Նաւասարդեան Թ. Մարզախաղերուն, Լոս Անձելըսի մէջ, Մասնաճիւղը կ'արձանագրէ աննախընթաց 13 յաղթանակ։

1981ին 1984 տարեցրջաններուն, Մասնաճիւղի Վարչութիւնը, ատենապետութեամբ Ժիրայր Մարգիսեանի, Սկառտական Խորհուրդը, Ընկերային Յանձնախումբը եւ Մարզական Յանձնախումբը կը տանին եռուն գործունէութիւն։

1984ին, Սան Ֆրանսիսկոյի եւ շրջակայքի հայութեան հպարտութիւն ներշնչող Մասնաճիւղի Մարզական Դ. Փառատօնին կը մասնակցին՝ Հ. Մ. Ը. Մ. ի Լոս Անձելըսի, Սան Ֆրանսիսկոյի, Փասատինայի, Կլէնտէյլի «Արարատ» Մասնաճիւղերը եւ Օքլէնտի Ս. Վարդան եկեղեցւոյ մարզական ակումբը։

1985ին, Մասնաճիւղի Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Ժիրայր Մարգիսեան, Կարպիս Էօլմէսէքեան, Արա Տէրունեան, Կասիս Զաքեան, Մարտիրոս Արիստակէսեան, Սեղրակ Սողոմոնեան, Ռոպէր Մարգիս։



Սան Ֆրանսիսկոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի սկառուտական խումբը
եւ երկսեռ մարզիկները կը տողանցեն:



1985ին, Մասնաճիւղի 9էն 12 տարեկան մանչերու պասքեթպոլի խումբը, Սան Ֆրանսիսկոյի տարեկան մրցաշարքին, կ'արձանագրէ փայլուն յաղթանակ:

1985ին, Հ. Մ. Լ. Մ. ի Նաւասարդեան 10րդ Մարզախաղերուն, Մասնաճիւղը կ'արձանագրէ 4 յաղթանակ:

1985ին, Մասնաճիւղի Մարզական Ե. Փառատօնին, նուիրուած Մասնաճիւղի 15 ամեակին, կը մասնակցին՝ Հ. Մ. Լ. Մ. ի Լու Անձելըսի, Սան Ֆրանսիսկոյի, Փասատինայի, կ'լէնտէյլի «Արարատ» եւ Հովիտի «Մասիս» Մասնաճիւղերը: Այս առիթով, Մասնաճիւղի տարեկան շքեղ պարահանդէսին, Հ. Մ. Լ. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջ. Վարչութիւնը, գնահատագրով կը պատուէ Վարչութեան ատենապետ Ժիրայր Սարգիսեանը:

1986ին, Մասնաճիւղի Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Րաֆֆի Խաչատուրեան, Արա Տէրունեան, Հայկ Մինեան, Մարտիրոս Արիստակէսեան, Ժիրայր Սարգիսեան, Կասիա Զաքեան եւ սկառուտ-խըմբապետ Ռոպէր Սարգիս:

1986ին, Մասնաճիւղի մանչերու պասքեթպոլի Բ. Խումբը, Սան Ֆրանսիսկոյի խումբերու մրցաշարքին, փայլուն յաղթանակ կը տանի:

1986ին, Հ. Մ. Լ. Մ. ի Նաւասարդեան 11րդ Մարզախաղերուն, Լու Անձելըսի մէջ, Մասնաճիւղը կը տանի 9 յաղթանակ:

1986ին, Մասնաճիւղի Մարզական Զ. Փառատօնին կը մասնակցին՝ Հ. Մ. Լ. Մ. ի Լու Անձելըսի, Ֆրեզնոյի, Փասատինայի,

կ'լէնտէյլի «Արարատ», Հովիտի «Մասիս» եւ Սան Ֆրանսիսկոյի Մասնաճիւղերը:

1987ին, Մասնաճիւղի Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Կարպիս Էօլմէսէքեան, Մարօ Տէմիրճեան, Հրայր Դանիէլեան, Ալպէո Ալեքսանեան, Արա Տէրունեան, Քլէր Գարագուլայեան, Հայկ Մինեան:


1987ին, Մասնաճիւղի Մարզական է. Փառատօնին, Մասնաճիւղի Վարչութիւնը գնահատագրով կը պատուէ Զօհրապ Անտոնեանը:

1988ին, Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Րաֆֆի Խաչատուրեան, Ծովիկ Տէրունեան, Արա Տէրունեան, Քնար Շահիճանեան, Սեղրակ Սողոմոնեան, Վաչիկ Սարգիսեան, Յարութ Տէյրմէնճեան:

Հ. Մ. Լ. Մ. ի Սան Ֆրանսիսկոյի Մասնաճիւղէն Շրջ. Վարչութեան անդամ ընտրուած են՝ Հրայր Սարգիսեան, յաջորդաբար երկու շրջան, Տիգրան Սարգիսեան, տոքթ. Պերճ Ռուբինեան, Զօհրապ Անտոնեան, յաջորդաբար երեք շրջան եւ Ժիրայր Սարգիսեան:

Հ. Մ. Լ. Մ. ի Պատգմ. Դ. Ընդհանուր ժողովին, Մասնաճիւղէն մասնակցած է Ժիրայր Սարգիսեան:

Հ. Մ. Լ. Մ. ի Սան Ֆրանսիսկոյի Մասնաճիւղը, մարզական մրցումներէն, Վարչութեան, Ընկերային Ցանձնախումբի եւ Սկառուտական Խորհուրդի կազմակերպած հանդէսներէն, բանակումներէն եւ այլ ընթացիկ գործունէութիւններէն բացի, իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ գաղութի հանրանուէր ձեռնարկներուն եւ ազգային տօնակատարութիւններուն:



ՖՐԵԶՆՈՅԻ «ՍԱՍՈՒՆ» ՄԱՍՆԱՑԻԻՂ



Ֆրեզնոյի մէջ, Հ. Մ. Ը. Մ. ի Մասնացիւղ մը հիմնելու նախաձեռնութեամբ, 1973ի Սեպտեմբերին, քանի մը վեթերան Հ. Մ. Ը. Մ. ականներ եւ երիտասարդ մարդիկներ, ներկայութեամբ Հ. Մ. Ը. Մ. ի Լու Անճելըսի Մասնաճիւղի ներկայացուցիչներ՝ Յարութիւն Բարսեղեանի, Յովակ Յովսէփեանի եւ Ժագ Տէր Պօղոսեանի, կը նշանակեն առժամեայ Վարչութիւն մը՝ Մասիս Հեքիմեան ատենապետ, Եղուարդ Պալաճանեան մարդիչ, Համբիկ Գասպարեան ատենադպիր, Յակոբ Տէր Պօղոսեան գանձապահ, Հիւկօ Գէորգեան խորհրդական, խորհրդատու ներկայացուցիչներ՝ Եղուարդ Մկրտիչեան եւ Մհեր Շիրտըմեան:

1973ի Նոյեմբերին, ծանօթացման առաջին իսկ ձեռնարկին, նոր անդամագրութեամբ, 17էն 30ի կը բարձրանայ անդամներուն թիւը: Կը կազմուի նաեւ սկառտական միաւոր:

1974 Փետրուար 25ին, տեղի կ'ունենայ Ֆրեզնոյի նորակազմ Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի առաջին անդամական ժողովը:

Մասնաճիւղի առաջին Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Վարուժան Պուլութեան, Սոսի Մուրլեան, Վիքի Տէր Պօղոսեան, Կարպիս Գաթարոյեան, Հիւկօ Գէորգեան եւ Ալպերթ Աբրահամեան: Վարչութեան Դրդ անդամը կ'ըլլայ Մասնաճիւղի սկառտական միաւորի խմբապետուհի Արաքսի Գալընեան:

Առաջին առիթով, Վարչութիւնը Ս. Զատկի չնորհաւորական քարթեր կը պատրաստէ եւ կ'ուղարկէ գաղութի հայ ընտանիքներուն:

1974 Մարտ 26ին կը կազմակերպուի յաջողութեամբ կ'իրագործուի Հ. Մ. Ը. Մ. ի Օրուայ տօնակատարութիւնը:

Այս առիթով, կը կատարուի Քալիֆորնիոյ շրջանի ֆութապոլի Միջ-Մասնաճիւղային մրցաշարք, մասնակցութեամբ՝ Հ. Մ. Ը. Մ. ի Սան Ֆրանսիսկոյի, Լոս Անճելըսի եւ Ֆրեզնոյի Ա. Դասակարգերու խումբերուն:

Նոյն օրը, երեկոյեան, տեղի կ'ունենայ ճաշկերոյթ-պարահանդէս, Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցւոյ սրահին մէջ:

1974ի Օգոստոսին եւս կը կազմակերպուի ճաշկերոյթ-պարահանդէս, նոյն սրահին մէջ:

1975 Յունուար 26ին կը գումարուի Մասնաճիւղի անդամական Բ. Ժողովը: Վարչութեան անդամ կ'ընտրուին՝

Կարպիս Գաթարոյեան, Յակոբ Տէր Պօղոսեան, Վիքի Գաթարոյեան, Նելլի Միհրանեան, Համբիկ Գասպարեան, Նուպար Նալպանտեան: Ի պաշտօնէ Վարչութեան մաս կը կազմէ սկառտ-խմբապետուհի Արաքսի Գալընեան:

Նոյն տարին կը կազմակերպուի դաշտահանդէս, որու ընթացքին տեղի կ'ունենայ Մասնաճիւղի սկառտական կազմի 40



Ֆրեզնոյի Հ. Մ. Լ. Մ. ի «Սասուն» Մասնաճիւղի սկառտական կազմը,
1982ին:

արի-արենոյշներու երդման արարողութիւնը:

1976ին, Մասնաճիւղը կը մասնակցի Շրջ. Վարչութեան կազմակերպած Միջ-Մասնաճիւղային Ա. Ողիմպիականին, Լոս Անձելըսի մէջ:

1976ին, Ֆրեզնոյի մէջ տեղի կ'ունենայ Շրջ. Վարչութեան կազմակերպած Միջ-Մասնաճիւղային ընդհանուր բանակումը եւ դպրոց-բանակումը, հիւրընկալութեամբ Ֆրեզնոյի Մասնաճիւղին:

1977ին, Մասնաճիւղի ֆութպոլի խումբը կը մասնակցի Շրջ. Վարչութեան կազմակերպած Բ. Ողիմպիականին, Լոս Անձելըսի մէջ:

1978ին, Շրջ. Վարչութեան կազմակերպած եւ Հ. Մ. Լ. Մ. ի 60ամեակին նուիրուած Գ. Ողիմպիականին, Մասնաճիւղը կը մասնակցի ֆութպոլի եւ պասքեթպոլի խումբերով:

1978ի Յուլիսին, Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-Մասնաճիւղային երկօրեայ հանդիպում մը

տեղի կ'ունենայ Ֆրեզնոյի մէջ: Մասնաճիւղի Վարչութիւնը ունէր հետեւեալ կազմը. — Զօհրապ Ստեփանեան, Կարպիս Տէր Յովհաննէսեան, Սալբի Քէրքէզեան, Ռոզի Սաղարճեան եւ սկառտ-խմբապետ Հրաչ Գոչունեան:

1977-1978 տարեշրջանին, Հ. Մ. Լ. Մ. ի Ֆրեզնոյի Մասնաճիւղը ունէր 40 երկսեռ անդամ, սկառտական կազմը կը հաշուէր 40 հոգի: Ունէր ֆութպոլի խումբ եւ պատեմթպոլի խումբ:

1978ին, Ֆրեզնոյին տիկ. Արշալոյան օրսիւգեան բնակարան մը կը նուիրէ Ֆրեզնոյի Հ. Յ. Դ. «Քրիստափոր» Կոմիտէին եւ Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղին, հաւասար իրաւունքով:

1979ին, Մասնաճիւղի Վարչութիւնը կը ներկայացնեն՝ Վարդգէս Մսըրլեան, Կարպիս Գաթարոյեան, Ցակոր Գրիօղլեան, Բէթ Պուլութեան, Զօհրապ Ստեփանեան, Արամ Աթիքեան, սկառտ-խմբապետ Հրաչ Գոչունեան:



Ֆրեզնոյի Հ. Մ. Ը. Մ. ի «Սասուն» Մասնաճիւղի ֆութպոլի Ա. խումբը
1983ին:

1979ին, Շրջ. Վարչութեան կազմակերպած Հ. Մ. Ը. Մ. ի Միջ-Մասնաճիւղային Դ. Ողիմպիական խաղերուն, Լոս Անձելըսի մէջ, Մասնաճիւղի երկսեռ մարզիկները կը մասնակցին՝ ֆութպոլի, պասքեթպոլի, վոլիպոլի, թենիսի, փինկ-փոնկի եւ դաշտային խաղերու մրցումներուն: Կ'արձանագրեն երեք յաղթանակ:

1979ին, Մասնաճիւղը վերաշխուժացման աշխատանք կը տանի, յատկապէս մարզական կեանքի մէջ: Կը մասնակցի Ֆրեզնոյի ֆութպոլի եւ պասքեթպոլի խումբերու մրցաշարքերուն: Ֆութպոլի խումբը ուշագրաւ յաղթանակներով կը գրաւէ մրցաշարքի դասաւորման առաջին դիրքը:

1979ին, Մասնաճիւղի սկաուտական կազմէն 7 հոգի, արի եւ արենոյչ, կը մասնակցին ամերիկեան սկաուտութեան դասընթացքին:

1980ին կը կազմակերպուի Հ. Մ. Ը. Մ. ի ընտանեկան երկօրեայ շաբաթավերջ, Ֆրեզնոյի մէջ:

1980ին Վարչութեան անդամ են՝ Կարպիս Տէր Յովհաննէսեան, Ռոզի Սաղտըճեան, Բէթ Պոլութեան, Զօհրապ Ստեփանեան, Արամ Աթիքեան, Շաքէ Պէղիքկանեան, սկաուտ-խմբապետ Հրաչ Գոչունեան:

Նոյն տարին, Մասնաճիւղի Վարչութիւնը յաջողութեամբ կ'իրագործէ տարեկան պարահանդէսը:

1980ին, Մասնաճիւղի Վարչութիւնը շարունակելով իր եռուն գործունէութիւնը, անդամներուն թիւը 55էն կը բարձրանայ 110ի:

1980ին, Հ. Մ. Ը. Մ. ի Նաւասարդեան Ե. Մարզախաղերուն ֆութպոլի զտումի մրցաշարքը տեղի կ'ունենայ Ֆրեզնոյի մէջ:

Նաւասարդեան Ե. Մարզախաղերու եղրափակիչ մրցումներուն, Լոս Անձելըսի մէջ, Մասնաճիւղը կ'արձանագրէ երեք յաղթանակ:

1980ին, Հ. Մ. Ը. Մ. ի Համագաղութային Սկաուտական Բ. Ընդհանուր Բանակու-



Ֆրեզնոյի Հ. Մ. Լ. Մ. ի «Սասուն» Մասնաճիւղի արենոյշները եւ գայլիկները, 1983ին:

մին, Փարիզի մէջ, Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանէն կը մասնակցին 39 հոգի, որոնցմէ մէկը՝ Ֆրեզնոյի Մասնաճիւղէն:

1981ին, Հ. Մ. Լ. Մ. ի Լոս Անձելըսի Մասնաճիւղի Փութպոլի եւ պասքեթպոլի խումբերու մարզիկները, Ֆրեզնոյի Մասնաճիւղի հիւրընկալութեամբ, կ'այցելեն Ֆրեզնոյի հայոց «Արարատ» գերեզմանատունը, ուր յարգանքով, ծաղկեպակ մը կը դնեն վրիժառու բազուկ Սողոմոն թէհմիրեանի յուշարձան-դամբանին առջեւ:

1981ին, Հ. Մ. Լ. Մ. ի Նաւասարդեան Զ. Մարզախաղերուն, Մասնաճիւղը կը մասնակցի Փութպոլի, պասքեթպոլի եւ փինկ-փոնկի մրցումներուն եւ տողանցքին՝ 28 երկսեռ մարզիկներով եւ 26 արի-արենոյշներով: Կ'արձանագրէ յաղթանակ մը:

1981ին, Ֆրեզնոյի մէջ տեղի կ'ունենայ մարզական սեմինար մը, Հ. Մ. Լ. Մ. ի Սան Ֆրանսիսկոյի եւ Ֆրեզնոյի Մասնա-

ճիւղերու ներկայացուցիչներով: Մասնաճիւղի Վարչութեան ատենապետն է՝ Վարուժան Պուլութեան:

1981ին, Մասնաճիւղը իր մասնակցութիւնը կը բերէ Հ. Մ. Լ. Մ. ի Սան Ֆրանսիսկոյի Մասնաճիւղի կազմակերպած մարզական առաջին Փառատօնին, Սան Ֆրանսիսկոյի մէջ:

1982ին, Հ. Մ. Լ. Մ. ի Նաւասարդեան է. Մարզախաղերուն, Լոս Անձելըսի մէջ, Մասնաճիւղը կ'արձանագրէ յաղթանակ մը:

1982ին, Ֆրեզնոյի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի Փութպոլի Բ. Դասակարգի խումբը կը տիրանայ Ֆրեզնոյի ախոյեանի տիտղոսին ու կը բարձրանայ Ա. Դասակարգ:

1982ին, Մասնաճիւղը ունէր 40 երկսեռ անդամ, 25 երկսեռ մարզիկ: Սկառտական կազմը կը հաշուէր 60 հոգի: Ընդհանուր գումար՝ 125: Ունէր Փութպոլի խումբ եւ թեթեւ աթլէթ կիրարկող երկսեռ մարզիկներ: Վարչութեան առընթեր կը



Հ. Մ. Լ. Մ. ի Ֆրեզնո «Մասուն» Մասնաճիւղի պատմեթպոլի
աղջկանց խումբը, 1981թ:

Զայն աջ՝ Սոսի Նեմենեան, Հայկ Օհաննեսեան, Այտա
Տէր Պօղոսեան, Մարալ Չատրենեան, Աստղիկ Օհաննեսեան:

գործէր Սկառուտական Խորհուրդ:

1983ին, Ֆրեզնոյի մէջ տեղի կ'ունենայ Մասնաճիւղի Սկառուտական Խորհուրդի կազմակերպած բանակում-սեմինարը, մասնակցութեամբ՝ Սան Ֆրանսիսքոյի եւ Ֆրեզնոյի Մասնաճիւղերու:

1983ին, Մասնաճիւղի Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Յակոր Գրիօղեան, Զօհրապ Ստեփանեան, Երուանդ Զատրընեան, Յակոր Տէր Պօղոսեան, Արաքսի Գալընեան:

1983ի Ապրիլին, տեղի կ'ունենայ Մասնաճիւղի 30 գայլիկ, արծուիկ եւ արի-արենոյշներու սկառուտական երդման արարողութիւնը:

1983ին, Հ. Մ. Լ. Մ. ի Նաւասարդեան 8րդ Մարզախաղերուն, Լոս Անձելըսի մէջ, Մասնաճիւղը կ'արձանագրէ յաղթանակ մը:

1984ին, Վարչութեան մաս կը կազմեն՝ Վարուժան Պուլութեան, Երուանդ Զատրընեան, Ժանօ Քէրքէղեան, Ժօրժ Կիւզէլեան, Նշան Միհթարեան, Փոլ Մարզարեան, Արա Գասնակեան:

1984ին, Մասնաճիւղի Վարչութեան կազմակերպութեամբ եւ ազգային բարերար տէր եւ տիկ. Վահան եւ Անոյշ Շամլեանի նախագահութեամբ, տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ. ի 65ամեակին եւ Մասնաճիւղի 10ամեակին նուիրուած շքեղ ճաշկերոյթ-պարագանդէս:

1984ին, Հ. Մ. Լ. Մ. ի Նաւասարդեան 9րդ Մարզախաղերուն, Լոս Անձելըսի մէջ, Մասնաճիւղը կ'արձանագրէ երկու յաղթանակ:

1985ին, Մասնաճիւղի Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Մհեր Շխրտըմեան, Վաչէ Սողոմոնեան, Յակոր Գրիօղեան, Զօհրապ Ստեփանեան, Բաֆֆի Սանդիկեան:

1985ին, Հ. Մ. Լ. Մ. ի Նաւասարդեան 10րդ Մարզախաղերուն, Մասնաճիւղը կ'արձանագրէ 7 յաղթանակ, 6ը՝ դաշտային խաղերու մրցումներուն:

Նոյն տարին, Մասնաճիւղը աշխուժացման ընթացքի մէջ, ունէր սկառուտական միաւոր, Փութպոլի, պասքեթպոլի, վոլի-պոլի խումբեր, փինկ-փոնկի, թենիսի եւ



Ֆրեգնոյի Հ. Մ. Ը. Մ. ի «Սասուն» Մասնաճիւղի նուագախումբը,
վրիժառու քազուկ Սողոմոն թէհիթբանի յուշարձան-դամբարանին
առջեւ, 1986ին:

դաշտային խաղերու հետեւող երկսեռ մարզիկներ, որոնք յաճախ կը փայլին, յաղթանակներ տանելով՝ ֆրեգնոյի տեղական, Միջ-Մասնաճիւղային եւ նաւասարդեան Մարզախաղերուն:

1985ի Յունիսին, Մասնաճիւղը կ'ունենայ իր նուագախումբը, Բաֆֆի Սանդիկեանի ղեկավարութեամբ եւ մասնակցելով Մայիս 28ի տօնակատարութեան, Ֆրեգնոյի Հայ Կեղրոնի մէջ, իր առաջին ելոյթով կը ստեղծէ խանդավառութիւն։ Այսուհետեւ, իր մասնակցութիւնը կը բերէ Հ. Մ. Ը. Մ. ի նաւասարդեան Մարզախաղերու փառահեղ տողանցքին։

1985ին, Մասնաճիւղը կ'ունենայ իր նոր անունը, կոչուելով՝ Հ. Մ. Ը. Մ. ի Ֆրեգնոյի «Սասուն» Մասնաճիւղ։

1986ին, Վարչութեան անդամ կ'ընտըրուին՝ Բաֆֆի Սանդիկեան, Մարտիկ Եփեմեան, Բէթ Պուլութեան, Աստղիկ Ճեպեան, Մանասէ Սաղարճեան։

1986ին, նաւասարդեան 11րդ Մարզախաղերուն, Լոս Անձելըսի մէջ, Մասնա-

ճիւղը կ'արձանագրէ չորս յաղթանակ։

1988ին, Վարչութեան մաս կը կազմեն՝ Կրէկ-Գրիգոր Քօհայեան, Պերճ Արգարեան, Հրանդ Գալընեան, Հայկ Սաաթճեան, Փիէռ Փիլաւեան, Բաֆֆի Սողոմոնեան, Ժանօ Գարգաղեան։

Հ. Մ. Ը. Մ. ի Ֆրեգնոյի «Սասուն» Մասնաճիւղը իր հիմնագրութեան առաջին տարիէն սկսեալ, կ'օգտագործէ Ս. Երրորդութիւն Մայր Եկեղեցւոյ եւ Հայ Կեղրոնի սրահներն ու յարմարութիւնները։ Ներկայ կը գտնուի եւ իր գործոն մասնակցութիւնը կը բերէ գաղութի ազգային-Եկեղեցական ձեռնարկներուն եւ տօնակատարութիւններուն։

Մասնաճիւղէն Շրջ. Վարչութեան մաս կազմած են՝ Վարուժան Պուլութեան, Մհեր Շիրտըմեան, Երկու շրջան, Կարպիս Գամճարոյեան, Երկու շրջան եւ Սերոբ Վարդանեան։

Մհեր Շիրտըմեան իրաւասու ձայնով մասնակցած է Հ. Մ. Ը. Մ. ի Պատգամաւորական Ա. եւ Դ. Ընդհ. Ժողովներուն։

ՄՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ



Մոնթելելլոյի հայ գաղութէն ներս մարզական կեանքը կը սկսի 1952ին, Հայկական Ակումբի հիմնումով:

1968ին, Հայկական Ակումբի ֆութպոլի խումբը կը տիրանայ Քալիֆորնիոյ ֆութպոլի Ա. Դասակարգի ախոյեանի տիտղոսին:

1968ին, Հայկական Ակումբը իր 15ամեակին առիթով, կը միանայ Հ. Մ. Լ. Մ. ին, տրամադրելով իր բոլոր ուժերը:

Նոյն տարին, Հ. Մ. Լ. Մ. ի Լոս Անձելըսի Մասնաճիւղը եւ Մոնթեպելլոյի Հայ Ակումբը, միասնաբար, հրապարակային ձեռնարկով կը տօնակատարեն Հ. Մ. Լ. Մ. ի 50ամեակը, ուր պաշտօնապէս կը յայտարարուի Մոնթեպելլոյի Հայկական Ակումբին միացումը Հ. Մ. Լ. Մ. ին:

1969ին, Մոնթեպելլոյի Հ. Մ. Լ. Մ. ի ֆութպոլի խումբը կը տիրանայ Քալիֆորնիոյ եւ ապա Միջին Ամերիկայի ախոյեանի տիտղոսին:

1971ին, կ'որոշուի Մոնթեպելլոյի Հ. Մ. Լ. Մ. ի ֆութպոլի խումբը միացնել Լոս Անձելըսի Հ. Մ. Լ. Մ. ի ֆութպոլի խումբին, որ 1972էն սկսեալ փայլուն յաղթանակներով կը տիրանայ ախոյեանի տիտղոսներուն եւ բաժակներուն:

1974ին, Մոնթեպելլոյի մէջ, Քալիֆորնիոյ Հ. Մ. Լ. Մ. ի Առժամեայ Շրջ. Բարձրագոյն Խորհուրդի կողմէ յայտարարուած Հ. Մ. Լ. Մ. ի նորակազմ Մասնաճիւղի Վարչութեան մաս կը կազմեն՝ Օննիկ Աբրահամեան, Քերոբ Առաքելեան, Պորիս Կիրակոսեան, Մինաս Մարգարեան, Նշան Մարաֆեան:



Մոնթեպելլոյի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի ֆութպոլի Ա. Դասակարգի խումբը, 1983ին:



Մոնթեպելլոյի Հ. Մ. Ը. Մ. Ի Մասնաճիւղի պատմելովի խումբը, 1988ին:

1975ին, Վարչութեան անդամներն են՝ Քերոր Առաքելեան, Աբրահամ Առծրունեան, Տընիս Ղազարեան, Պորիս Կիրակոսեան, Մինաս Մարգարեան:

1976ին, Մասնաճիւղը կը կազմակերպէ ընտանեկան խրախճանք, Մոնթեպելլոյի շայ Կեղրոնի սրահին մէջ:

1976ին կը գումարուի Մասնաճիւղի անդամական տարեկան ընդհանուր ժողովը:

Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Մինաս Մարգարեան, Սալբի Բագրատունի, Սարգիս Սակինեան, Հրաչ Ասատուրեան, Արա Շիրտըմեան:

1974էն մինչեւ 1977, Մասնաճիւղը կ'ունենայ մարզական եւ ընկերային ուշագրաւ գործունէութիւն:

1978ին չի մասնակցիր Հ. Մ. Ը. Ի Միջ-Մասնաճիւղային Ողիմպիական Խաղերուն:

1979ին կը մասնակցի Փութպոլի եւ պասքեթպոլի խումբերով:

1979ին, սակայն, Մասնաճիւղը կը կազմալուծուի:

1980 Մեպտեմբեր 25 թուակիր դիմումնագրով, թիւով 21 Հ. Մ. Ը. Մ. ականներ եւ մարզասէրներ, ցանկութիւն կը յայտնեն Շրջ. Վարչութեան վերակազմելու Մոնթեպելլոյի Հ. Մ. Ը. Մ. Ի Մասնաճիւղը: Լնթացք կը տրուի եւ առաջին հանդիպում-ժողովին կը կազմուի առժամեայ Վարչութիւն, անդամագրութիւններ կատարելու համար:

1981ին վերակազմուած երիտասարդ երկսեռ ուժերով, կը մասնակցի Հ. Մ. Ը. Մ. Ի Զ. Ողիմպիական Խաղերուն, Փութպոլի խումբով եւ աթլէթ մարզիկներով:

1981-1982 տարեշրջանին, Մասնաճիւղը ունէր 20 երկսեռ անդամ եւ 75 երկսեռ մարզիկ:



ԹՈՐՈՍ ԲԱՐՍԵՂԵԱՆ



Մոնթեպելլոյի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի վոլիվոլի Ա. Դասակարգի
խումբը:



Մոնթեպելլոյի Հ.Մ.Ը.Մ.Ի Մասնաճիւղի խմբապետական կազմը:

Ունէր ֆութպոլի խումբ, պասքեթպոլի 5 խումբ, 3ը՝ մանչերու, 2ը՝ աղջիկներու, վոլիպոլի 2 խումբ, մանչերու եւ աղջիկներու, թեթեւ աթլէթի հետեւող եւ թենիս կիրարկող երկսեռ մարզիկներ:

1982ին, Մասնաճիւղի գործօն անդամ միջազգային իրաւարար թորոս Բարսեղեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի ֆութպոլի մրցում դեկավարող 120 լաւագոյն իրաւարարներէն ընտրուած լաւագոյններու լաւագոյն 7 իրաւարարներէն կ'ընտրուի առաջին, թիւ 1 իրաւարար:

1983ի Յունուարին կը գումարուի Մասնաճիւղի անդամական ընդհ. ժողով:

Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Լիզա Բարսեղեան, Մանուկ Զէյթունցեան, ձան Նաշունեան, Էտ Սարգիսեան կրտսեր, Շէյլա Գաղարեան, Մարալ Արէլեան, Պալք Պետրոսեան, ձագ Թոմասեան, Քենի Մոսիկեան:

Նոյն տարին, Հոկտեմբերին, տեղի կ'ունենայ Մասնաճիւղի տարեկան ճաշկերոյթ-պարահանդէսը, նուիրուած՝ Հ.Մ.Ը.Մ.Ի 65ամեակին:

Այսուհանդերձ, Մասնաճիւղը դարձեալ ընկրկում կ'ունենայ:

Շրջ. Վարչութիւնը ընդառաջելով Մոնթեպելլոյի հայ գաղութէն ներս Հ.Մ.Ը.Մ.Ի Մասնաճիւղը վերաշխուժացնելու եւ հրցօրացնելու ցանկութեան՝ 1985ի Սեպտեմբերին կը նշանակէ 9 հոգինոց Վարչութիւն, հետեւեալ կազմով.—

Նշան Սարաֆեան, Լիզա Բարսեղեան, Մարալ Արէլեան, ձան Նաշունեան, Վիգէն Յովսէփեան, Մանուկ Զէյթունցեան, Յարութ Պուրեան, Քենի Մոսիկեան, Վահէ Գաբրիէլեան:

Նորակազմ Վարչութիւնը անյապաղ աշխատանքի անցնելով, առաջնահերթ նպատակ կ'ունենայ անդամագրութիւնը, սկառատական միաւորի ստեղծումը եւ ֆութպոլի ու պասքեթպոլի խումբերու վերակազմութիւնը:

1985ին, «Մեսրոպեան» ազգ. վարժարանէն ներս, տնօրէն Վիգէն Յովսէփեանի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Վարչութեան քաջալերանքով, աշակերտներով սկառատական միաւոր կազմելու աշխատանք կը տարուի եւ հիմը



Մոնթելլոյի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի սկառտական կազմը 1988ի քանակումին:

կը դրուի Մոնթեպելլոյի Հ.Մ.Ը.Մ.ի սկառտական միաւորին, ուսուցչուհի եւ խմբապետուհի Մարօ Քէշիշեանի ղեկավարութեամբ։


1985ին, Մասնաճիւղը ունէր 120 երկու անդամ ու մարզիկ։ Սկառտական կազմը կը հաշուէր 50 հոգի։ Վարչութեան առընթեր կը գործեն Մարզական Յանձնախումբ եւ սկառտ-խմբապետներ։

Հ.Մ.Ը.Մ.ի 11րդ Նաւասարդեան Մարզախաղերուն կը մասնակցի Փութապոլի 2 խումբով, պասքեթպոլի 3 խումբով, 2ը՝ մանչերու, 1ը՝ աղջիկներու, վոլիպոլի 4 խումբով, 2ը՝ մանչերու, 2ը՝ աղջիկներու եւ դաշտային խաղերու հետեւող 15 երկսեռ մարզիկներով։

1987ին, Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Օհաննէս Պաղտասարեան, Լիզա Բարսեղեան, Մանուկ Զէյթունցեան, Մարալ Աբէլեան, Վարդգէս Արապեան, Յակոբ Խաչատրեան, Յարութ Պուրեան, Թորոս Բարսեղեան, Պետրոս Պէրպէրեան։

Մոնթեպելլոյի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղը Փութապոլի, պասքեթպոլի եւ վոլիպոլի խումբերով, Հ.Մ.Ը.Մ.Մ.ին աշխուժութիւն ու թարմութիւն բերող Մասնաճիւղը կ'ըլլայ։

Իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ գաղութի ազգային-եկեղեցական հանրանուէր ձեռնարկներուն եւ ազգային տօնակատարութիւններուն։



ՓԱՍՏԻՆԱՑԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ


Հ. Մ. Լ. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջ. Վարչութիւնը ընդառաջելով խումբ մը Հ. Մ. Լ. Մ. ականներու Փաստինայի հետզհետէ աճող գաղութին մէջ Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղ հիմնելու ցանկութեան, նախապատրաստական աշխատանքներէ ետք, 20 Մարտ 1977ին կը գումարուի հիմնադիր ժողովը, Շրջ. Վարչութեան ներկայութեամբ:

Առաջին Վարչութեան անդամ կ'ընտըրուին՝ իշխան Զարոյեան, Հրաչ Ասատուրեան, Եղիա Գոճայեան, Արա Շիրտըմեան, Մանուէլ Իւթիւնեան, Ժագ Թիւթիւննեան, Յովհաննէս Թաշճեան:

Նորակազմ Մասնաճիւղը ունէր 85 անդամ: Սկառատական միաւորը կը հաշուէր 50 հոգի: Հակառակ կեղրոն կամ ակումբ չունենալուն, մարզական կեանքը, սկառտական հաւաքոյթ-խաղերը եւ ժողովները տեղի կ'ունենան կանոնաւոր կերպով:

Առաջին իսկ տարին, Մասնաճիւղը ֆութպոլի եւ պասքեթպոլի մանչերու եւ աղջիկներու խումբերով իր մասնակցութիւնը կը բերէ Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-Մասնաճիւղային Համագաղութային Բ. Ողիմպիական խաղերուն:

1978ին, Վարչութեան անդամ կ'ընտըրուին՝ իշխան Զարոյեան, Մանուէլ Իւ-



Փաստինայի Հ. Մ. Լ. Մ. ի արի-արենոյշներու խմբապետական կազմը, 1984ին:



Փաստինայի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղի պասթեթպոլի Ա. խումբը
1985ին:

թիւճեան, Մնացական Յարութիւնեան, Յակոր Թիւթիւնճեան, Կարպիս Հինտոյ-յեան, Յովհաննէս Թաշճեան, սկառտ-խմբապետ Պետիկ Թաշճեան:

1978ին, Մասնաճիւղը կ'ունենայ փոք-րիկ ակումբ մը, ուր կը կեղրոնանան բոլոր աշխատանքները: Նոյն տարին, հրապարակային հանդիսութեամբ կը տօնուի Մասնաճիւղի հիմնադրութեան առաջին տարե-դարձը:

1979ին, Վարչութեան անդամ կ'ըն-տրուին՝ Հրայր Թորոսեան, Յովհաննէս Թաշճեան, Մնացական Յարութիւնեան, Արա Շիրտըմեան, Գարեգին Պապասոլուք-եան, Յովհաննէս Թոքաթլեան, սկառտ-խմբապետ Ժիրայր Պաղպուտարեան:

Մասնաճիւղի երկսեռ անդամներուն թիւը կը հասնի 195ի: 45ը՝ սկառտ, 50՝ մարզիկ, 100ը անդամ:

Յաջորդաբար Վարչութեան անդամ կ'ընտրուին՝

1980ին, Հրայր Թորոսեան, Արա Շիրտըմեան, Շահան Ստեփանեան, Մնացական Յարութիւնեան, Գարեգին Պապասոլուք-եան, Յովհաննէս Թոքաթլեան, Ժիրայր Պաղպուտարեան:

1981ին, Յովհաննէս Թաշճեան, Հրաչ Ասատուրեան, Մնացական Յարութիւնեան, Վահէ Գարբիկեան, Յովհաննէս Նազար-եան, Արա Շիրտըմեան, Ժիրայր Պաղպուտարեան:

1982ին, Հրայր Թորոսեան, Վահան Ճանսըկեան, Մնացական Յարութիւնեան, Հրաչ Ասատուրեան, Գարեգին Պապասոլուք-եան, Անի Քիլէճեան, սկառտ-խմբա-պետ Արիկ Գէորգեան:

1983ին, Վարչութիւնը կը ձեռնարկէ Մասնաճիւղի «Մենք» պարբերաթերթի հրատարակութեան, սակայն քանի մը թիւ միայն լոյս կը տեսնէ:



Փաստինայի Հ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի Ա. խումբը, 1986ին:



Փաստինայի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաթիւղի գործոն անդամներէն
խմբանկար մը



Փաստինայի Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի խմբապետական կազմը

1983ին, Վարչութեան անդամ կ'ընտըրուին՝ Հայկ Տօնապետեան, Մնացական Յարութիւնեան, Անի Քիլէճեան, Արիկ Գէորգեան, Բաֆֆի Մարկէնեան, Տիգրան Թաշճեան, Ժիրայր Պաղպուտարեան:

1983ին, Մասնաճիւղը ունէր 85 երկսեռ անդամ, 75 երկսեռ մարզիկ, սկաուտական միաւորը կը հաշուէր 60 հոգի:

1985ին, Վարչութեան անդամ կ'ընտըրուին՝ Սարգիս Տէրփիշեան, Յարութիւն Յարութիւնեան, Բաֆֆի Ճիկէրեան, Էտւարդ Մարտիրոսեան, Ժագ Կարապետեան, Դաւիթ Շիրիգեան, Անի Քիլէճեան:

1986ին, Վարչութեան անդամ են՝ Յովհաննէս Թաշճեան, Ժագ Կարապետեան, Բաֆֆի Թոնակեան, Էտուարդ Մարտիրոսեան, Սարգիս Սահակեան, Գոգօ Գալփագեան, Ժիրայր Պաղպուտարեան:

1986ին, Մասնաճիւղը ունէր 120 երկսեռ անդամ, սկաուտական միաւորը՝ 80:

Մասնաճիւղի իրերայաջորդ Վարչութիւնները, Սկաուտական Խորհուրդները,

Մարզական եւ Ընկերային Յանձնախումբերը իրենց կարելիութեան սահմանին մէջ կը ջանան ոյժ տալ Հ.Մ.Ը.Մ.ի ողնասիւնը կազմող սկաուտական շարքերուն, Փութպոլի, պասքեթպոլի եւ վոլիսպոլի խումբերուն, փինկ-փոնկ, թենիս եւ դաշտային խաղեր կիրարկող երկսեռ մարզիկներուն, մարմնամարզութեան եւ հայեցի դաստիարակութեան:

Մասնաճիւղը իր հիմնադրութենէն ի վեր միշտ ներկայ է ու իր գործօն մասնակցութիւնը կը բերէ Հ.Մ.Ը.Մ.ի մարզական կեանքին՝ Նաւասարդեան Մարզախազերուն, Ապրիլեան մրցաշարքերուն, Փութպոլի եւ պասքեթպոլի մրցաշարքերուն, Սան Ֆրանսիսկոյի Մասնաճիւղի Մարզական Փառատօնին, կազմակերպած է Շրջ. Մարզական Յանձնախումբի Փութպոլի մըրցաշարքի աւարտախաղ, խումբերու ընդունելութիւն, հիւրընկալութիւն, նաև տեղական մրցաշարք:



Փաստինայի Հ . Մ . Ը . Մ . ի Մասնաճիւղի սկաուտական կազմէն
տեսարաններ:



Մասնաճիւղը յատուկ գնահատանքի կ'արժանանայ, վերոյիշեալ ձեռնարկներուն, նոյնիսկ եթէ տկար խումբեր ունեցած է, անընդհատ իր մասնակցութեան համար, այն գիտակցութեամբ, որ Մասնաճիւղերու մասնակցութեամբ է, որ Միջ-Մասնաճիւղային ձեռնարկները նուաճումներ կ'արձանագրեն:

Մասնաճիւղը ունի ֆութպոլի Ա., Բ., Գ. եւ Դ. Դասակարգերու, պասքեթպոլի երկսեռ եւ վոլիպոլի խումբեր, փինկ-փոնկ, թենիս եւ դաշտային խաղեր կիրարկող երկսեռ մարզիկներ:

Նաւասարդեան Մարզախաղերուն, Մասնաճիւղի ֆութպոլի Ա. խումբը ախոյեանի տիտղոսին եւ բաժակներու կը տիրանայ յաջորդաբար 1982, 1983 եւ 1984ին, նաեւ 1986ին՝ Ա. եւ Բ. խումբերը եւ վոլիպոլի մանչերու խումբը: Այլ մարզաձեւերու մէջ եւս կը տանի մէկ, մէկէ աւելի եւ մինչեւ 10 յաղթանակ:

Մասնաճիւղը յաղթանակ կը տանի նաեւ Սան Ֆրանսիսքոյի Մասնաճիւղի Մարզական Փառատօնին, Շրջ. Մարզական Ցանձնախումբի Միջ-Մասնաճիւղային եւ իր կազմակերպած մրցաշարքերուն:

Մասնաճիւղի տարեկան ձեռնարկները կ'ըլլան՝ Ամանորի խրախճանք, վիճակահանութիւն, ընկերային հաւաքոյթ, սկառատա-


կան հաւաքոյթ-հանդէս, բանակում, Միջ-Մասնաճիւղային եւ ընդհանուր բանակումներ, Հ. Մ. Ը. Մ. Ի եւ Մասնաճիւղի հիմնադրութեան տարեղարձներ, ճաշկերոյթպարահանդէս, եւայլն:

1988ին, Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Անդրանիկ Շանլեան, Սիրան Պոսնոյեան, Ժիրայր Պաղպուտարեան, Սարգիս Տէրվիշեան, Սարգիս Սահակեան, Ներսէս Կարապետեան, Յարութիւն Յարութիւնեան:

Մասնաճիւղը ներկայիս հաստատւած է Փաստինայի նոր Հայ Կեդրոնին մէջ, ուր ունի իր սեփական գրասենեակը, սկառատական միաւորը կ'օգտագործէ ակումբի կարելիութիւնները եւ յարակից բակերը, իսկ մարզիկները եւ մարզախումբերը կ'օտագործեն Փաստինայի մարզաւաններն ու դաշտերը:

Վաստակաւոր եւ երիտասարդ Հ. Մ. Ը. Մ. Ականներու համերաշխ գործակցութեամբ կ'ընթանայ Մասնաճիւղի գործունէութիւնը, միշտ նախանձախնդիր բարձր պահելու Հ. Մ. Ը. Մ. Ի անունն ու վարկը:

Մասնաճիւղը իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ գաղութի հանրանուէր ձեռնարկներուն եւ ազգային տօնակատարութիւններուն:



ԿԼԵՆՏԵՑԼԻ «ԱՐԱՐԱՏ» ՄԱՍՆԱԺԻՒՂ

Հ. Մ. Լ. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջ. Վարչութիւնը ընդառաջելով կլէնտէյլի Հ. Յ. Դ. «Ահարոնեան» կոմիտէի ցանկութեան, Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղ մը ունենալու հետզհետէ հայահոծ գաղութի վերածուող կլէնտէյլի մէջ, հիմնադիր ժողովը կը գումարուի 15 Դեկտեմբեր 1979ին, Կոմիտէութեան Հայ Կեդրոնի սրահին մէջ. Շրջ. Վարչութեան անդամներու, Լոս Անձելըսի Մասնաճիւղի Վարչութեան ներկայացուցիչներու եւ հիմնադիր 31 երկսեռ անդամներու մասնակցութեամբ:

Հիմնադիր ժողովէն ամիսներ առաջ, արդէն Թեհրանի «Արարատ» կազմակերպութեան մէջ սկառատական անցեալ ունեցող խումբ մը երիտասարդներ, այլ երիտասարդներու եւ Լոս Անձելըսի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի հետ կը կատարէին սկառատական աշխատանքներ ու բանակումներ, կազմուած էր նաեւ ֆութապոլի խումբ մը:

Նորակազմ Մասնաճիւղի առաջին Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Ռուբէն Գիւրջեան (ատենապետ), Հիլդա Յովհաննիսեան, Հրայր Մեսրոպեան, Վարուժան Շիրտըմեան, Վարուժ Միրզայեան:

Վարչութիւնը Մասնաճիւղի գործունէութեան համար իր տրամադրութեան տակ կ'ունենայ Հայ Կեդրոնի գրասենեակը եւ սրահը:

1979ի Ապրիլին, տեղի կ'ունենայ նորակազմ Մասնաճիւղի հրապարակային առա-

ջին ձեռնարկը՝ քոքթէյլ-նկարչական ցուցահանդէսով:

1979ին, Մասնաճիւղը կ'ունենայ իր առաջին ընդհանուր բանակումը եւ իր մասնակցութիւնը կը բերէ Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-Մասնաճիւղային 4րդ Ողիմպիական Խաղերուն:

1980ի Փետրուարին, Մասնաճիւղի անդամներուն թիւը կը հասնի 378ի:

Մասնաճիւղի Սեւակ Սագինեան կը նշանակուի Մասնաճիւղի խորհրդատու գործավար:

1980ին, Մասնաճիւղի Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Ռուբէն Գիւրջեան, Կարէն Բենիասեան, Իդա Քարայր Մեսրոպեան, Վարուժ Միրզայեան, Արմիկ Արրահամեան, Գառնիկ Նալբանդեան:

Մասնաճիւղը կ'ունենայ իր գրասենեակները եւ սկառատական կեդրոնավայրը կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ յարակից ազգապատկան բնակարանին մէջ, ապա նաեւ երկրորդ բնակարանին մէջ:

Նոյն տարին, 250 սկառատներ կը կատարեն երդման տպաւորիչ արարողութիւն: Կ'ընդարձակուի նաեւ Մասնաճիւղի մարդական գործունէութիւնը:

1980-1981, շուրջ երկու տարի, Վարչութիւնը կը հրատարակէ Մասնաճիւղի «Կոչնակ» օրգանը:



Կլենտէլի Հ. Մ. Ը. Մ. ի «Արարատ» Մասնաճիւղի արի-արենոյշները
կը տողանցեն, 1980ին:

1981ին, Վարչութեան անդամ՝ կ'ընտըրուին՝ Ռուբէն Գիւրջեան, Արմիկ Քարայեան, Ռուզան Մովսիսեան, Էղիկ Միրզայեան, Արմիկ Արահամեան, Վազգէն Ամիրիսանեան, Վարուժ Միրզայեան:

Մասնաճիւղի անդամներուն թիւը կը հասնի 658ի: Տարեկան ընդհանուր բանակումին կը մասնակցին 350 սկառտաներ, իսկ Միջ-Մասնաճիւղային նրդ Ողիմպիական Խաղերուն՝ 233 երկսեռ մարզիկներ:

1982ին, Վարչութեան անդամ՝ կ'ընտըրուին՝ Ռուբէն Գիւրջեան, Արմիկ Քարուժ Միրզայեան, Ռուզան Մովսիսեան, Կարէն Գրիգորեան, Օսիկ Մովսիսեան, Հարմիկ Սարեան, Արմիկ Արահամեան, Էղիկ Միրզայեան:


Մասնաճիւղի սկառտական կազմը կը հաշուէ աւելի քան 600 անդամ: Տարեկան ընդհանուր բանակումին կը մասնակցին՝ 300 սկառտաներ, իսկ Հ. Մ. Ը. Մ. ի նաւասարդեան 7րդ Մարզախաղերուն՝ 160 երկսեռ մարզիկներ:

Վարչութեան առընթեր կը գործեն՝ Սկառտական Խորհուրդ, Մարզական Յանձնախումբ, կը սկսի գործել նաեւ Ծնողական Օժանդակ Մարմին:

Մասնաճիւղի հիմնադրութենէն սկըսեալ, Վարչութիւնները աշխատելու իւրայատուկ ոճով, կը ցուցադրեն բծախընդիր, հետեւողական եւ եռանդուն գործունէութիւն, արձանագրելով կազմաւորման եւ հզօրացման բացառիկ նուաճում:

Հ. Մ. Ը. Մ. ի տարեգրութեան մէջ աննախընթաց, Վարչութիւնները, ակամայ, երբեմն կը դադրեցնեն անդամագրութիւնները, տեղի անբաւարարութեան եւ մարզական ու սկառտական աշխատանքները զեկավարող որակաւոր ու անհրաժեշտ մարդուժը չունենալով:

1983ին, Վարչութեան անդամ՝ կ'ընտըրուին՝ Համլեթ Զրախչեան, Էղիկ Մուշեղեան, Գրիգոր Մկրեան, Օսիկ Մովսիսեան, Արմոնդ Գորգորեան, Հարմիկ Սարեան, Արմիկ Բաղդասարեան:



: իսմուստ 000՝ 078 վեսդ մի զվեգտողսամնդի
-մրակիլ : դրամդդոց մհրացումսւս վմրասպ
-տղջոտմ վիեգտողսամնդի ոգ շամդդյունդո
սպոկիմդ ։ շամդդյունիունմոի ։ վդոգչովումծ
թղթիրուչ տգեուոցտո զողթրանմոի ։ վշմազ
։ զվյումնողը քոմկիսպ շամդդնիունդմրուչ
վենեուումուն մր մրասպ մվիոյուչ վերվց
-տղուոյ «տոմմոմդ» ։ վշմազ ։ իստլուն վլսե
-թղժուուու ոգ իսչումո ։ իսմդդիոգդուումն
քուսենմոեցմուն ։ ձկր վլրիտոցիլի ։ զվեգտ
-տղսամնդի-մրակիտ զոկիուփու մկ բողզուուի
մս ։ բոլլուկ մերկցուոոյ զվցուտ վզոց
-մը ։ մետոմմոմդ» ։ 0:7:0:7, զվեցիլ

: զոգլվրդ զտրութազը՝ զոգեհմոնի
զտնմոյի՝ զոգմոստնետք կվրմը՝ զոգովո

-իսու կփո՞ք զագրոշամբն զհրմո՞ւ զագրոշամբն
կփառավ զագնվամծ թվելու զփամտ
-պմի ըստեղու զագթաւմնի 1984թ.

: վԵՏՑ կղոսչ մի մովք զաւմգդցոնց
վերպշտողություն : մուվթիւնչուսքմսն շամզո
-րամաւոմքով տաճու զտիտեմոր լզբեզմ
-նուն վեսձու մի ‘մբուգթիւնտիմզո մի ևսք
-մուն վլուեն հտոցեաց ‘Ամգդպշուսկիմոր
-իմեմոր մաւսմ վթիւնտեն մորոչ շալզմբով
-ոյուն զմուն մի մերպշտողություն ‘զվէՑԵՒ

ՆԵՐՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ : ՆԵՐՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՄԱՄԱՄԱՐ» ։ Ո. Ե. Ո. Ն ՎԼԻԿԱՐԵՆԻ ՎՐԱԺԴԻ
ԱԼԻ ԱՆԵՐՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԴՊ ՊՐԱՍՏ ՊՐԻՋԻԲՈՒ
ՌԱԼԳՅԵԼԻ ՊՎԵՆԵՐՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊՎՐԱՍՐՎԵՆ ՊՐՊՐԵ
-ՐԱՆԴՄՈՒԻ ՎԵՐՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՖԾԱՄՆԱՋԵԼԻ ԻՆՍԺ
-ՊՐԱՄԳԼՈՂՈՒԺ ՌԱԼԳՐԱՏԴՆ ՊՎԻԴՊՎՄԸ ՊԵՐՎՎԵ
-ՐԱՆԴՄՈՒԻ ՃԱԶ ՃՄԱԳ ՔԼԱՊԱՄՈ ԵՊՐՎԲՐԱՏ
-ՄՐՎԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՃՆԳԻ Վ. Ո. Ե. Ո. Ն

1984ին, Գարեգին Բ. Կաթողիկոս կը կատարէ ակումբի եւ սրահի բացումը, ուր կ'արձանագրուին Վեհափառ Հօր հետեւեալ տողերը, իր ստորագրութեամբ։

Երիտասարդութիւնը գարունն է կեանքին, Հայ նոր սերունդը՝ յոյսը հայ ազգին, Հ.Մ.Ը.Մ.ը նրագը յոյսին՝ Բոցավուած դէպի բարձունքն ԱՐԱՐԱՏԻն։

Նաւասարդեան 9րդ Մարզախաղերուն, Մասնաճիւղը դասաւորման առաջին տեղը կը գրաւէ։ Անդամներուն թիւը կը հասնի 938ի։

1985ին, Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Համլեթ Զրախչեան, Ժորժ Ահարոնեան, Օսիկ Մովսիսեան, Լիլիթ Բաղդասարեան, Արմոնդ Գորգորեան, Վարուժ Միրզայեան, Արտուշ Տ. Մինասեան։


Նաւասարդեան 10րդ Մարզախաղերու փառահեղ տողանցքին Մասնաճիւղը կը մասնակցի 850 երկսեռ անդամներով։

Տարեկան ընդհանուր բանակումին կը մասնակցին 350 սկաուտներ։

Յաջորդաբար, Մասնաճիւղի Վարչութեան անդամ կ'ընտրուին՝

1986ին, Համլեթ Զրախչեան, Ժորժ Ահարոնեան, Լիլիթ Բաղդասարեան, Հարմիկ Սարեան, Արմիկ Բաղդասարեան, Ալֆրէդ Խայեաթ, Արմոնդ Գորգորեան։

1987ին, Լիլիթ Բաղդասարեան, Ժորժ Ահարոնեան, Ալֆրէդ Խայեաթ, Վիգէն Դաւթեան, Արմիկ Բաղդասարեան, Ռուբիկ Սարեան, Խաչիկ Զարգարեան, Արմոնդ Գորգորեան, Փիէռ Զրախչեան։



անդամներուն ընդհանուր խմբանկարը, 1980ին։



Կլէնտէյլի Հ. Մ. Ը. Մ. ի «Արարատ» Մասմանիւղի ֆութպոլի
պատանեկան խումբը, 1981ին:



Կլէնտէյլի Հ. Մ. Ը. Մ. ի «Արարատ» Մասմանիւղի արլեքները, 1983ին:



Կլենտէյլի Հ. Մ. Ը. Մ. ի «Արարատ» Մասնաթիւղի հիւրընկալ
մարզիկ-մարզիկուհիները, 1985ին:



Կլենտէյլի Հ. Մ. Ը. Մ. ի «Արարատ» Մասնաթիւղի խումբ մը սկառուտ
աստիճանաւորներ, 1985ին:



Կլենտէյլի Հ. Մ. Ը. Մ. ի «Արարատ» Մասնաճիւղի ֆութպոլի Ա. խումբը:

1988ին, Վիգէն Դաւթեան, Ալէն Բժշչկեան, Քարմէն Օհանեան, Վիկտոր Մարթին, Յովիկ Դաւթեան, Կարէն Գրիգորեան, Վալօ Խալաթեան, Ռոպերթ Շատիկեան, Արիկ Գէորգեան:

1986ին, սկառւտներու թիւը կը հասնի 550ի:

Հ. Մ. Ը. Մ. ի Համագաղութային Գ. Ընդհանուր Բանակումին, Լոնտոնի մէջ, Մասնաճիւղը կը մասնակցի 17 սկառւտներով:

1987ին, Մասնաճիւղի անդամներուն թիւը կը հասնի 1300ի: Տարեկան 9րդ ընդհանուր բանակումին կը մասնակցին 325 սկառւտներ:

1988ին, տպաւորիչ արարողութեամբ տեղի կ'ունենայ Մասնաճիւղի 550 սկառւտներու երդման արարողութիւնը: Մարզական բաժանմունքին թիւը կը հասնի 500ի:

Նաւասարդեան 13րդ Մարզախաղերուն կը մասնակցի 400 երկսեռ մարզիկներով:

1986էն 1988, Մասնաճիւղը նաւասարդեան Մարզախաղերու ընդհանուր դասաւորման մէջ կը գրաւէ առաջին տեղը եւ յաջորդաբար երեք անգամ ակումբ կը տանի Վարդգէս Տէր Կարապետեանի յիշատակին նուիրուած շրջուն բաժակը:

1988ին, Մասնաճիւղը 50,000 տոլար կը հաւաքէ, Հայաստանի աղէտալի երկրաշարժի աղէտեալներուն օժանդակելու համար:

1988ին, Մասնաճիւղը կը հրատարակէ «Ախթամար» օրացոյցը:

Մասնաճիւղի երկսեռ մարզիկներն ու մարզախումբերը իրենց մասնակցութիւնը կը բերեն եւ յաղթանակներու կը տիրանան նաեւ Շրջ. Մարզական Խորհուրդի եւ Մասնաճիւղի կազմակերպած Միջ-Մասնաճիւ-



Կլենտոնի Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» Մասնաճիւղի դրօշակակիրներ եւ արիներ
տողանցքի պահուն, 1986ին:

ղային եւ համահայկական մրցաշարքերուն, նաեւ Սան Ֆրանսիսքոյի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի Նաւասարդեան փառատօներուն:

Մասնաճիւղի Վարչութեան առընթեր, տարիներու հոլովոյթով զարգացած, 1984էն սկսեալ, կամք ու հաւատք սկզբունքով կը գործեն չորս Բաժանմունքներ, իրենց առանձին Վարչութիւններով:

Սկառտական Բաժանմունքը, մշտադալար յորդուն պարտէզ մըն է Մասնաճիւղէն ներս եւ պատուաբեր ներկայութիւն մը՝ մեր հանրանուէր ձեռնարկներուն եւ մեր ազգային տօնակատարութիւններուն: 1988ին ունէր աւելի քան 700 արի, արենոյշ, գայլիկ, մրջնիկ:

Մարզական Բաժանմունքը յաղթանակելու նախանձախնդիր, միշտ կը գտնուի առաջին դիրքերու վրայ: 1988ին ունէր շուրջ 560 երկսեռ մարզիկ:

Երիտասարդական Բաժանմունքը, նկարագիր կազմաւորող հայատրոփ աշխոյժ ու կենսունակ ներկայութիւն մըն է Մասնաճիւղէն ներս: 1988ին ունէր աւելի քան 120 երկսեռ անդամ:

Երէցներու Բաժանմունքը յանձնառու նեցուկ է Մասնաճիւղին եւ բարոյակերտ հովանաւորողը:

Մասնաճիւղի Վարչութեան հովանա-

ւորութեան տակ գործող այս չորս Բաժանմունքներէն ներս, մեծով-պղտիկով, կը տիրապետէ համերաշխ գործակցութիւն, փոխադարձ սէր ու փոխադարձ յարգանք:

Մասնաճիւղի տարեկան ձեռնարկները կ'ըլլան՝ նոր տարրուայ դիմաւորում, սկառտական արշաւ, բանակում, ընդհանուր բանակում, երդման արարողութիւն, մարզական եւ սկառտական ձեռնարկներ, ցուցահանդէս, շրջապտոյտ, Հ. Մ. Լ. Մ. ի եւ ազգային տօներու տարեղարձներ, գնահատանքի եւ յիշատակի երեկոներ, հասութաբեր ձեռնարկ, գրական, արուեստի եւ հաճոյական ձեռնարկներ, եւայլն, եւայլն:

Մասնաճիւղը ունի նաեւ սկառտական եւ մարզական տարագներու եւ գոյքերու խանութ:

Կլէնտէյլի Հ. Մ. Լ. Մ. «Արարատ» Մասնաճիւղը, վստահաբար, Վարչութիւններու հետապնդած նոր ու աւելի ընդարձակ սեփական ակումբ-կեդրոնատեղի-մարզավայրի իրագործումով, առաւել բարգաւաճելու նախանձախնդրութեամբ, պիտի շարունակէ իր օրինակելի գործընթացը, Հ. Մ. Լ. Մ. ի կառոյցին մէջ մնալու համար իր անունով հպարտ միշտ ամէնէն բազմանդամ ու ամէնէն հզօր Մասնաճիւղը:



ՕՐԵՆՃ ՔԱՌԻՆԹԻԻ
«ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ՄԱՍՆԱՑԻՒՂ

1978ին, Հ. Մ. Ը. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջ. Վարչութեան կազմակերպած Միջ-Մասնաճիւղային Գ. Ողիմպիական Խաղերուն, Օրէնճ Քառւնթիէն, Հ. Մ. Ը. Մ. ական Արտաշ Քէօյլեանի նախաձեռնութեամբ, տողանցքին կը մասնակցին խումբ մը ապագայ Հ. Մ. Ը. Մ. ականներ:

Այնուհետեւ, Շրջ. Վարչութիւնը ընդառաջելով Օրէնճ Քառւնթիի Հ. Յ. Դ. «Արմէն Գարօ» Կոմիտէի շրջանին մէջ Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղ հիմնելու դիմումին, նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքները տանելէ ետք, յատուկ շրջաբե-

րական-յայտարարութեամբ կը հրաւիրէ անդամագրուած եւ գաղութի բոլոր երկսեռ մարզիկները հիմնադիր ժողովի մը, որ տեղի կ'ունենայ 12 Յունուար 1979ին, Բաֆֆի Ակուբեանի նպարատուն-ճաշարանի սրահին մէջ, ֆառւնթըն Վալի:

Ատենէ մը ի վեր բուռն ցանկութեամբ հետապնդուած հիմնադիր ժողովին ներկայ կ'ըլլան Շրջ. Վարչութեան ատենապետ Քերոս Առաքելեան, փոխ-ատենապետ Յակոբ Օվայեան, ատենապիր տոքթ. Սարգիս Արեւեան, հաշուապահ Մինաս Մարգարեան, քարտուղար Պարգեւ Շիրինեան եւ հիմնադիր 48 երկսեռ անդամներ:



Օրէնճ Քառւնթիի Հ. Մ. Ը. Մ. ի «Սարդարապատ» Մասնաճիւղի փոքրերու փութպոլի ախոյեան խումբը, 1980ին:



Օրէնք Քառունթիի Հ. Մ. Լ. Մ. ի «Սարդարապատ» Մասնաճիւղի փոքրերու պասմեթպոլի խումբը, 1980ին:

Նորակազմ Մասնաճիւղի առաջին Վարչութեան անդամ՝ կ'ընտրուին՝ տոքթ. Կարօ Դերձակեան, Բաֆֆի Ակուբեան, Սիւզի Յարութիւնեան, Կարպիս Գարամարտեան, Ժիրայր Ներսէսեան, Գէորգ Այվազեան եւ Գրիգոր Ներսէսեան:

Անդամագրութիւնը կը շարունակուի եւ շուտով թիւը կը հասնի 70ի:

1979ի Մայիսին, տեղի կ'ունենայ անդամական ժողով եւ Վարչութեան լրացուցիչ անդամներու ընտրութիւն:

1979ի Յուլիսին, Վարչութիւնը կը կազմակերպէ թու-
լո-լուք փիքնիք մը, շրջանին մէջ:

1980 Մարտ 12ին, Մասնաճիւղը կը գումարէ անդամական ժողով:

Արտաշ Քէօյլեանի ղեկավարութեամբ, Օրէնք Քառունթիի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի փոքրիկներու Փութպոլի խումբը, միակ հայկական խումբը, շրջանի մրցաշարքին կը նուածէ ախոյեանի տիտղոսը եւ կը ստանայ բաժակ:

Նոյն տարին, Մասնաճիւղը կը կազմակերպէ նաեւ Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-Մասնաճիւղային պասքեթպոլի մրցաշարք:

1981ին, Մասնաճիւղը ունէր փոքրիկներու Փութպոլի խումբ, պասքեթպոլի ման-

չերու երկու խումբ, փինկ-փոնկ եւ դաշտային խաղեր կիրարկող ընդամէնը 75 երկուու մարզիկներ:

Հ. Մ. Լ. Մ. ի Ողիմպիական Զ. Մարզախաղերուն կը նուածէ յաղթանակ մը:

1982ին, Մասնաճիւղը ունէր 120 երկուու անդամ, որուն 50ը՝ երկսեռ մարզիկ: Ֆութպոլի երկու խումբ, պասքեթպոլի երկու խումբ, թեթեւ աթլէթի հետեւող երկուու մարզիկներ: Վարչութեան առընթեր կը գործեն Փութպոլի, պասքեթպոլի մարզիչներ:

Հ. Մ. Լ. Մ. ի Նաւասարդեան է. Մարզախաղերուն, Լու Անճելըսի մէջ, Մասնաճիւղը կը տանի յաղթանակ մը:

Պասքեթպոլի խումբը կը տիրանայ Հ. Մ. Լ. Մ. ի պասքեթպոլի լիկի ախոյեանի տիտղոսին:

Այսուհանդերձ, Մասնաճիւղի գործունէութիւնը սահմանափակուած կը մնայ Նաւասարդեան Մարզախաղերուն եւ այլ մրցաշարքերու մասնակցութեան մէջ:

Անհրաժեշտ կը նկատուի Մասնաճիւղի վերաշխուժացումն ու ամրապնդումը: Շրջ. Վարչութեան կողմէ կը նշանակուի Վարչութիւն, որպէսզի իրագործուին գաղութէն



Օրենք Քառնըի Հ.Մ.Ը.Մ.ի «Սարդարապատ» Մասնաճիւղի պասխեթպոլի խումբը, 1981ին:

ներս Հ.Մ.Լ.Մ.ի ներկայութիւնը արդարացնող պայմանները:

Նշանակեալ Վարչութիւնը կ'ունենայ
հետեւեալ կազմը .- Կարո Արուշեան, Սեմ
Ազիզեան, տռքթ. Պետրոս Գոճեան,
Նուարդ Պալեան, Արմէն Քէօյլեան, Յակոբ
Աւետեան, Նշան Շանպէրի:

1983ի Յունուարին, Մասնաճիւղը կը
տիրանայ Օրէնք Քառենթիի վազքի ախո-
յեանի տիտղոսին:

1983ին, Նաւասարդեան Տրդ Մարզա-
խաղերուն, Լու Անձելըսի մէջ, Մասնա-
ճիւղը կը նուածէ հինգ յաղթանակ:

1984ի Նաւասարդեան 9րդ Մարզախանություն՝ մեզ լաղթանակ:

1985ի նաւասարդեան 10րդ Մարզական-
գերուն, թէեւ փոքրաթիւ Մասնածիւղ, բայց
կը նուաճէ 10 յաղթանակ, ինչ որ մեծա-
պէս կը գնահատուի:

1986ին, Երջ. Վարչութիւնը կը նշանակէ նոր Վարչութիւն.- Կարօ Արուշեան, Սեմ Ազիգեան, Հրաչ Հինդիեան, տոքթ. Պետրոս Գոճեան, Արա Էքմէքճեան:

1986ի Նաւասարդեան 11րդ Մարզախաղերուն, Մասնաճիւղը կը նուածէ վեց յաղթանակ։

1987ին, Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Գէորգ Ալահայտոյեան, Տիգրան Պապիկեան, Հրաչ Հինդիեան, Ռուբինա Թիւթիւնճեան, Վարդան Տիշոյեան, Սեւակ Զօհրապեան, Արա Էքմէքճեան:

Օրէնք Քառւնթիի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ, «Ղուկասեան» սրահի եւ «Արի Կիրակոս Մինասեան» ազգ. փարժարանի համալիրի կառուցումէն ետք, Հ.Մ. Հ.Մ.ը հնարաւորութիւն կ'ունենայ նաեւ կազմելու Մասնաճիւղի սկառւտական միաւորոր:

Այսուհետեւ, ազգային պատկանելիութիւն խորհրդանշող անունով մը՝ կը կոչուի Հ.Մ.Լ.Մ.ի Օրէնք Քառենթիի «Սարդարապատ» Մասնաճիւղ:

1988ին, Վարչութեան անդամ՝ կ'ընտրուին՝ Վարդան Տիգոյեան, Նազելի Թիւթիւնձեան, Ռուբինա Թիւթիւնձեան, Յովիկ Ֆիլհանէսեան, Անահիտ Պօղոսեան:

Մասնաճիւղը մարզական, սկառուտական եւ ընկերային գործունէութեան առընթեր, իր մասնակցութիւնը կը բերէ նաև գաղութի հանրանուէր ձեռնարկներուն եւ ազգային տօնակատարութիւններուն:

**ՀՈՎԻՏԻ
«ՄԱՍԻՍ» ՄԱՍՆԱՃԻՒՂ**

Հ. Մ. Լ. Մ. ի առաքելութեան հանդէս հաւատք ունեցող խումբ մը հայորդիներ, դիմումնագիր կը ներկայացնեն **Հ. Մ. Լ. Մ. ի** Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջ. Վարչութեան, Սան Ֆերնանտո Վալիի մէջ **Հ. Մ. Լ. Մ. ի** Մասնաճիւղ հիմնելու:

Շրջ. Վարչութիւնը ընդառաջելով, 16 Օգոստոս 1979ին, **Հ. Մ. Լ. Մ. ական** Քրիս Արգարեանի Վալիի ընակարանին մէջ, 15 հոգիի մասնակցութեամբ, տեղի կ'ունենայ խորհրդակցական ժողով:

Կ'որոշուի Մասնաճիւղ հիմնելու դրա-

կան քայլեր առնել: Արդէն իսկ, շրջանին մէջ, **Հ. Մ. Լ. Մ. ի** Լու Անձելըսի Մասնաճիւղի Վարչութեան նախաձեռնութեամբ, 14 Յունիս 1979ին կազմուած էին սկաուտական խումբեր, որոնք ունեին արձանագրուած 60 անդամ:

Շրջ. Վարչութեան հրաւէրով, 20 Սեպտեմբեր 1979ին, «Ֆերահեան» ազգ. վարժարանի «Տիգրանեան» սրահին մէջ կը գումարուի անդամական առաջին ժողովը: Առաջին Վարչութիւնը կ'ունենայ հետեւեալ կազմը. —



Հովիտի **Հ. Մ. Լ. Մ. ի** «Մասիս» Մասնաճիւղի խմբապետական կազմը



Հովհանի Հ. Մ. Ը. Մ. ի «Մասիս» Մասնաճիւղի պասմեթպոլի մանչերու Ա. և աղջկներու Բ. խումբերը, 1984ին:



Հովհանի Հ. Մ. Ը. Մ. ի «Մասիս» Մասնաճիւղի պասմեթպոլի Բ. խումբը, 1984ին:



Հոգիտի Հ. Մ. Ը. Մ. ի «Մասիս» Մասնաթիւղի սկառուտական կազմը,
1985ին:



Հոգիտի Հ. Մ. Ը. Մ. ի «Մասիս» Մասնաթիւղի արենոյշները, 1985ին:



Հովհան Հ. Մ. Ը. Մ. ի «Մասիս» Մասնաճիւղի ֆութպոլի Ա. Խումբը,
1985ին:

Կարօ Պետրոսեան, Քրիս Աբգարեան, Ժիրայր Պօյաճեան, Խաչիկ Կիւրլէքեան, Վարդգէս Թուլումճեան, Ալիս Թօփալեան, Վահան Պապամեան, Կարօ Մարգարեան, Ակառուտ-խմբապետ Բաֆֆի Սարգիսեան:

Նորակազմ Մասնաճիւղը կ'անուանուի Հ. Մ. Ը. Մ. ի Հովհան Մասնաճիւղ, որուն գորավիդ ու քաջալեր կը հանդիսանայ շըրջանի Հ. Յ. Դ. «Ռոստոմ» Կոմիտէն, իսկ Շրջ. Վարչութիւնը Մասնաճիւղը կը հաստատէ 25 Հոկտեմբեր 1979ին:

1979ի Հոկտեմբերին, տեղի կ'ունենայ Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կազմակերպած ձեռնարկը եւ անդամագրութիւնը:

1980ին, Մասնաճիւղի պասքեթպոլի Ա. Խումբը կը տիրանայ Հ. Մ. Ը. Մ. ի Պասքեթպոլի Լիկի կազմակերպած մրցաշարքի ախոյեանի տիտղոսին:

1981ին, Մասնաճիւղը ունէր 125 երկսեռ անդամ, 60 երկսեռ մարզիկ, սկաուտա-

կան կազմը կը հաշուէր 160 հոգի: Գումար՝ 345: Ունէր ֆութպոլի խումբ, պասքեթպոլի խումբ, մէկը մանչերու, երկուքը աղջիկներու, վոլիպոլի մանչերու խումբ, փինկ-փոնկ կիրարկող երկսեռ մարզիկներ: Վարչութեան առընթեր կը գործեն՝ Սկաուտական Խորհուրդ եւ Ընկերային Ցանձնախումբ:

1982 տարեշրջանին, յարաբերաբար 1981 տարեշրջանի աւելի փայլուն գործունէութեան, Մասնաճիւղը կ'ունենայ անգործունեայ եւ անշարժ վիճակ մը:

1983 Յունուար 16ին կը գումարուի անդամական ընդհ. ժողով:

Նոր Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ տոքթ. Ճագ Մկրտիչեան, Ազիզ Կիւրէսէրեան, Սիլվա Թօփալեան, Գալուստ Քրիստեանեան, Սոնա Մոմճեան, Համբիկ Սինանեան, Սեպուհ Համասեան, Արմէն Դանիէլեան, սկաուտ-խմբապետ Բաֆֆի Սարգիսեան:



Հովհան Հ. Մ. Ը. Մ. ի «Մասիս» Մասնաճիւղի պատմեթպոլի Ա. խումբը,
1986ին:

Մասնաճիւղի սկառուտական կազմի թիւն
էր՝ 140: Վարչութեան առընթեր կը գործեն՝
Ընկերային Յանձնախումբ, Մարզական
Յանձնախումբ եւ Սկառուտական Խորհուրդ:

1983ին, Շրջ. Վարչութեան թելագրան-
քին հետեւելով, Հովհան Մասնաճիւղը եւս
հայկական անուն մը որդեգրելով, կը կոչ-
ուի՝ Հովհան Հ. Մ. Ը. Մ. ի «Մասիս» Մասնա-
ճիւղ:

1979ին 1985 վեց տարիներու ընթաց-
քին, Մասնաճիւղի Վարչութիւնները եւ
Յանձնախումբերը շրջանին մէջ կը յաջողին
արժեւորել Հ. Մ. Ը. Մ. ը եւ հասցնել նուա-
ճումներու սեմին:

1985ին, Վարչութեան անդամ՝ կ'ըն-
տրուուին՝ Պարթեւ Եռևէֆեանց, Ստեփան
Պայրամեան, Ժանէթ Ասլանեան, Նուապար
Ֆստըքնեան, Գալուստ Քրիստեանեան,
Թորոս Զալըգեան, Զապէլ Գալանճեան:

1985ը, կազմակերպչական ծրագրուած
ու հետեւողական աշխատանքով, բեղուն
տարեշրջան մը կ'ըլլայ Մասնաճիւղին հա-
մար: Տպաւորիչ հանդիսութեամբ կը տօնա-

կատարուի նաեւ Մասնաճիւղի հիմնադրու-
թեան Յամեակը:

1985ին, Նաւասարդեան 10րդ Մարզա-
խաղերուն, Մասնաճիւղը կ'արձանագրէ 19
յաղթանակ ու կը գրաւէ ընդհանուր դասա-
ւորման 2րդ դիրքը:

Տողանցքին կը մասնակցին աննախըն-
թաց թիւով՝ 182 հոգի եւ տպաւորիչ կար-
գապահնութեամբ:

1986ին կը գումարուի Մասնաճիւղի ան-
դամական ընդհ. ժողովը, «Ֆերահեան»
ազգ. վարժարանի «Տիգրանեան» սրահին
մէջ:

Նոր Վարչութեան անդամ կ'ընտրուին՝
Զապէլ Պօյաձեան, Կարօ Պապուշեան, Անդօ
Գամարեան, Վարդան Գույումձեան, Յա-
րութ Խոտանեան, Էլի Պապլոզեան, Ժանէթ
Ասլանեան, Գօգօ Թօփալեան, Ֆլորա Ռւն-
ձեան:

1986ին, Սկառուտական Խորհուրդէն եւ
Մարզական Յանձնախումբէն բացի, կը
կազմուի Երիտասարդական Բաժանմունք,
43 հոգիով:

Մասնաճիւղը ունէր պասքեթպոլի 4 խումբ, ֆութապոլի խումբ, վոլիպոլի աղջը-կանց Ա. Դասակարգի խումբ եւ դաշտային խաղեր կիրարկող երկսեռ մարզիկներ:

1987ին, Վարչութեան անդամ կ'ըն-տրուուին՝ Զապէլ Գազանճեան, Վաչէ Գաս-պարեան, Վարդան Գույումճեան, Թորոս Սուսանի, Սարգիս Մահսէրէճեան, Նուպար Ֆստըճեան, Օշին Ցարութիւնեան, Ցարութ Խոտանեան, Սարգիս Կիտցինեան:

1987ին, Մասնաճիւղը լաւագոյն մար-զախումբերով, ներկայանալի մասնակցու-թիւն կ'ունենայ Նաւասարդեան 12րդ Մար-զախաղերուն: Կը մասնակցի ֆութապոլի 2 խումբով, պասքեթպոլի 10 խումբով, 6ը՝ մանչերու, 4ը՝ աղջիկներու, վոլիպոլի 8 խումբով, 4ը՝ մանչերու, 4ը՝ աղջիկներու եւ դաշտային խաղերուն՝ 70 երկսեռ մար-զիկներով:

1988ին, Վարչութեան անդամ կ'ըն-տրուուին՝ Վարդգէս Թուլումճեան, Նուպար Ֆստըճեան, Հայկօ Արմէնեան, Վաչէ

Գասպարեան, Մայք Վարժապետեան, Թորոս Սուսանի, Արման Աշճեան, Վարդան Գույումճեան, Երուանդ Պէրէճիքլեան

275 երկսեռ անդամ ու մարզիկ եւ 125 սկառուտական կազմ հաշուող Մասնաճիւղէն ներս, Վարչութեան առընթեր՝ կը գործեն Սկառուտական Խորհուրդ, Մարզական եւ Ընկերային Յանձնախումբեր եւ Երիտա-սարդական Բաժանմունք:

Հովիտի ընդարձակ ու հայահոծ շրջա-նին մէջ, Մասնաճիւղը աճելու, հզօրանալու եւ յաջողելու լայն կարելիութիւններ ունի:

Հիմնադրութեանէն ի վեր, օգտագործած է «Ֆերահեան» ազգ. վարժարանի ժողովարահը, խաղավայրը եւ այլ յարմարութիւնները:

Այսուհանդերձ, շրջանին մէջ հետա-պընդուող Հայ կեդրոնի իրագործումով, Հ.Մ.Ը.Մ.ի Հովիտի «Մասիս» Մասնա-ճիւղը պիտի ունենայ ազատօրէն գործելու իր մնայուն կեդրոն-հաւաքավայրը եւ խաղավայրը:

Գործն է անմահ,
Լաւ իմացէք
Որ ապրում է դարէ դար.
Երեւէկ նրան,
Ով իր գործով
Կ'ապրի անվերջ, անդադար:
Յ. Թումանեան

**ՀԻՒՄԹԸՆ (ԹԵՔՍԱՍ)
ՄԱՍՆԱՃԻՒՂ**



Հիւմթընի (Թեքսաս նահանգ) 1500 հայութիւն հաշուող գաղութին մէջ, խումբ մը հայորդիներ դիմում կը կատարեն Հ. Մ. Լ. Մ. ի Արեւմտեան Միացեալ նահանգներու Շրջ. Վարչութեան, Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղ մը հիմնելու, իբրեւ անհրաժեշտութիւն ազգային դպրոցէ զուրկ եւ օտար շրջանակներու մէջ հասակ առնող սերունդները հայեցի միջնոլորտի մէջ համախմբելու եւ անոնց ներշնչելու՝ ազգային ոգի:

Դիմումը գործի վերածուելով, նախապատրաստական աշխատանքներէ ետք, 1983ին կը գումարուի Մասնաճիւղի հիմնադիր ժողովը:

Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Վարդգէս Յակոբեան (ատենապետ), Սամ Յակոբեան, Փասքալ Կիւզէլ, Արմէն Մանուկեան, Սերոժ Ալավերտեան, Վարդան Ապրիլեան, Սարգիս Գալայճեան:

Նորընտիր Վարչութիւնը կը կազմակերպէ իր առաջին ձեռնարկը՝ ճաշկերոյթպարահանդէս, 11 Յունիս 1983ին, որուն ընթացքին խօսք կ'առնեն Շրջ. Վարչութեան ատենադպիր Ժիրայր Պօյաճեան եւ նորակազմ Մասնաճիւղի Վարչութենէն՝ Վարդգէս Յակոբեան եւ Արմէն Մանուկեան:

1984ին, Հ. Մ. Լ. Մ. ի նաւասարդեան 9րդ Մարզախաղերուն, Լոս Անձելըսի մէջ, Մասնաճիւղը կը մասնակցի ֆութպոլի Ա. Դասակարգի խումբով:



Հիւմթընի Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղի ֆութպոլի խումբը, 1984ին:

1985ին, Վարչութեան անդամ կ'ընտըրուին՝ Փասքալ Կիւզէլ, Հայկազ Կարախանեան, Արամ Վարդանեան, Վարդգէս Թահթաճեան, Մկրտիչ Ժորժէզեան:

1985ի նաւասարդեան 10րդ Մարզախաղերուն, Մասնաճիւղը իր երկսեռ մարզիկները խանդավառող յաղթանակ մը կը տանի, փինկ-փոնկի Ա. Դասակարգի աղջիկներու մրցումներուն:

Այլ առիթով, Հիւսթըն կը մեկնի եւ Վարչութեան ժողովին կը մասնակցի Շրջ. Վարչութեան գանձապահ նուպար Մարգիսեան:

Այսուհանդերձ, Մասնաճիւղի անդամները առաւելաբար պետական կամ այլ եւ այլ հաստատութիւններու եւ կազմակերպութիւններու պաշտօնեայ, յաճախ, հարկադրաբար, գործի բերումով կը տեղափոխուին: Այդ իսկ պատճառով, Հ. Մ. Ը. Մ. ը կը մնայ կազմալոյծ վիճակի մէջ եւ գաղութէն ներս որեւէ գործունէութիւն ունենալէ կը դադրի: Սակայն, գաղութը ունի ազգային կեանքը վերաշխուժացնելու հեռանկարներ, որոնց կապուած է նաեւ վերստին կազմակերպումը Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղին:



ՍԱՆ ՏԻԷԿՈՅԻ «ՍԵՒԱՆ» ՄԱՍՆԱՃԻՒՂ

1982ին, Հ.Մ.Լ.Մ.ի Նաւասարդեան
Դրդ Մարզականագերուն, Լոս Անձելըսի մէջ,
Սան Տիէկոյէն իմիլ Մաղաքեանի եւ Կարպիս
Զատէկեանի ղեկավարութեամբ խումբ մը
մարզասէր հայորդիներ, «Արմէնգ» ֆութ-
պոլի խումբով իրենց մասնակցութիւնը կը
բերեն եւ, միեւնոյն ատեն, փափաք կը
յայտնեն Շրջ. Վարչութեան, Սան Տիէկոյի
մէջ Հ.Մ.Լ.Մ.ի Մասնաճիւղ հիմնելու:

Շրջ. Վարչութիւնը ընդառաջելով հրաւէրին, նաեւ Հ.Մ.Լ.Մ.ի գործունէութեան աւելի լայնատարած բնոյթ տայլու տրամադրեած է:

բութեամբ, Սան Տիէկոյի մէջ ներկայ կը գտնուի 2 Հոկտեմբեր 1982ին կազմակերպուած Մասնաճիւղի հիմնադիր-հանդիպումին եւ տեղոյն վրայ կը նշանակուի անդամագրութիւն կատարելու յանձնախումբ մը: Այնուհետեւ, կը գումարուի նորակազմ Մասնաճիւղի անդամական առաջին ժողովը եւ առաջին Վարչութեան անդամ կ'ընտրը ուին՝ Վրէժ Սարգսիսեան, Արմոնդ Մեհրաբեան, Սոնիկ Օհանեան, Ռոբերթ Դաբադեան, Կարօ Արթինեան:

1983ին, Սան Տիէկոյի Հ.Մ.Լ.Մ.ի
Մասնաճիւղը Նաւասարդեան 8րդ Մարզա-



Սան Տիեկոյի «Արմենք» ապա՝ Հ. Մ. Ղ. Մ. ի «Սեւան» Մասնաճիւղի
Փութառոյի խումբը, 1982ին:



Սան Տիէկոյի Հ. Մ. Ը. Մ. ի «Սեւան» Մասնաճիւղի մարզիկները կը տողանցեն, Նաւասարդեան 8րդ Մարզախաղերուն, 1983ին:

խաղերուն կը մասնակցի ֆութպոլի խումբով եւ աթլէթներով:

1983ին, Մասնաճիւղի Վարչութեան մաս կը կազմեն՝ Վրէժ Տէր Սարգիսեան, Վահէ Մանուչակեան, Մարկարէթ Իսմայիլեան, Արմոնդ Մեհրաբեան, Շէրի Մինասեան:

1984ին, Մասնաճիւղը գժուարութիւններու դէմ յանդիման գտնուելով, կարելի լիութիւնը չունենար մասնակցելու Նաւասարդեան 9րդ Մարզախաղերուն:

Այնուհետեւ, Սան Տիէկոյի Հ. Մ. Ը. Մ. «Ռուբէն» Կոմիտէի քաջալերանքով, Հ. Մ. Ը. Մ. Ական աշխոյժ ու հաւատաւոր հայորդիներ, որոնք Սան Տիէկոյի փոքրաթիւ հայութեան մէջ վառ կը պահեն ազգային կեանքը, կազմակերպչական աշխատանք կը տանին Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղէն ներս: Կը գումարուի անդամական ժողով ու կ'ընտըրուի նոր Վարչութիւն:

Նորընտիր Վարչութիւնը կը նշանակէ

եւ գործի կը մղէ նաեւ սկառտական եւ մարզական յանձնախումբեր:

Սկառտական Յանձնախումբը արձանագրութեան աշխատանք կը տանի եւ իր կարելին կ'ընէ ու 1985ին կը կազմէ Մասնաճիւղի սկառտական առաջին միաւորը, որպէսզի արիներ, արենոյշներ, գայլիկներ եւ մրջնիկներ Հ. Մ. Ը. Մ. ի սկառտական տարագ հագած, ինչպէս ամէնուրեք, խանդավառող ներկայութիւն ըլլան Սան Տիէկոյի գաղութէն ներս:

Մարզական Յանձնախումբը կը կազմէ Փութպոլի երկու խումբ. Ա. Դասակարգի, 16էն վեր տարիք ունեցողներու եւ Բ. Դասակարգի, 11էն 16 տարեկաններու համար:

1985ին, Հ. Մ. Ը. Մ. ի Նաւասարդեան 10րդ Մարզախաղերուն, Մասնաճիւղը կը մասնակցի ֆութպոլի Ա. Դասակարգի խումբով, որ իր խմբակին մէջ առաջին տեղը կը գրաւէ ու կը տիրանայ ախոյեանի տիտղոսին եւ բաժակին:



Սան Տիեկոյի Հ. Մ. Ը. Ա. «Սեւան» Մասնաճիւղի արծուիկներ եւ գայլիկներ, 1987ին:



Սան Տիեկոյի Հ. Մ. Ը. Ա. «Սեւան» Մասնաճիւղի սկառտական կազմը, 1988ի բնդիանուր բանակումին:

1986ին, անդամական ժողովի որոշումով, Մասնաճիւղը կ'ունենայ ազգային պատկանելիութիւն խորհրդանշող անուն մը եւ այնուհետեւ կը կոչուի Հ.Մ.Ը.Մ.ի Սան Տիէկոյի «Սեւան» Մասնաճիւղ:

Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ էմիլ Մաղաքեան, Ռաֆֆի Խսմայիլեան, Մանուէլ Մարսէլեան, Էլմա Բալալեան, Արա Բալալեան, Արմէն Բալալեան, Գուրգէն Բուղաղեան:

Վարչութեան առընթեր կը գործեն Սկառտական Խորհուրդ եւ Մարզական Յանձնախումբ: Մասնաճիւղը ունէր 65 երկսեռ անդամ ու մարզիկ, սկառտական կազմը կը հաշուէր 30 հոգի:


1986ին, Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 11րդ Մարզախաղերուն, Լոս Անձելըսի մէջ, Մասնաճիւղը կը մասնակցի Փութպոլի խումբով, վոլիպոլի 2 խումբով, մանչերու

եւ աղջիկներու, թենիսի եւ դաշտային խաղերու մրցումներուն 6 երկսեռ մարզիկներով, նաեւ սկառտական կազմով:

1988ին, Վարչութեան անդամ կ'ընտըրուին՝ էմիլ Մաղաքեան, Մանուէլ Մարսէլեան, Վահէ Մանուշակեան, Տինա Տապագեան, Արա Բալալեան, Սեղա Խոչարեան, Աստղիկ Մարգարեան, Սեպուհ Օհանեան, էտիկ Խսմայիլեան:

Հ.Մ.Ը.Մ.ի «Սեւան» Մասնաճիւղի ձեռնարկները տեղի կ'ունենան Սան Տիէկոյի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ «Խոշարեան» սրահին մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր Մասնաճիւղերուն պէս, Սան Տիէկոյի Մասնաճիւղը եւս մարզական, սկառտական եւ ընկերային ընթացիկ գործունէութեան առընթեր, իր մասնակցութիւնը կը բերէ գաղութի հանրանուէր ձեռնարկներուն եւ ազգային տօնակատարութիւններուն:



ԱՐԵՒՄՏԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ՇՐՋԱՆԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

1974ին, Քալիֆորնիոյ մէջ գործող Հ. Մ. Լ. Մ. ի չորս Մասնաճիւղերը՝ Լոս Անդելըսի, Մոնթեպելլոյի, Սան Ֆրանսիսկոյի եւ Ֆրեզնոյի, ամբողջացնելով Շրջ. Վարչութիւն ունենալու Հ. Մ. Լ. Մ. ի Ընդհ. Ծրագիր-Կանոնագրի օրինական պայմանները, վարչական-ներկայացուցչական խորհրդակցական հանդիպում մը ունենալով, կը նշանակեն Քալիֆորնիոյ Հ. Մ. Լ. Մ. ի Շրջանային Առժամեայ Բարձրագոյն Խորհուրդ մը, որուն անդամները՝

Նշան Սարաֆեան, Վարուժան Պուլութեան, Արտուշ Մատուրեան, Ճորճ Պաղտոյեան, Տիգրան Սարգիսեան, Հրայր Սարգիսեան եւ Կարպիս Գաթարոյեան, Շրջ. Վարչութիւն ընտրելու անհրաժեշտ աշխատանքները տանելէ ետք՝

1974ի նոյեմբերին կը գումարուի Շրջ. Ներկայացուցչական Ա. Ժողովը, ուր առաջին Շրջ. Վարչութեան անդամ կ'ընտրուին՝

Յակոբ Օվայեան (ատենապետ), Արմէն Տէյիրմէնձեան, Մհեր Շիրտըմեան, Վարուժան Պուլութեան, Տիգրան Սարգիսեան, Հրայր Սարգիսեան եւ Զարեհ Էքմէքնեան։

Հ. Մ. Լ. Մ. ի գործունէութիւնը միայն Քալիֆորնիա նահանգին մէջ չսահմանափակելու, այլ Միացեալ նահանգներու ամբողջ արեւմտեան շրջանին մէջ ընդարձակելու հեռանկարով, Շրջ. Վարչութիւնը կ'անուանուի՝ Հ. Մ. Լ. Մ. ի Արեւմտեան Միաց-

եալ նահանգներու Շրջ. Վարչութիւն։

1975ին, Շրջ. Վարչութեան կազմակերպութեամբ՝ տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ. ի Արեւմտեան Միացեալ նահանգներու շրջանի սկաուտական առաջին ընդհանուր բանակումը, Ֆրեզնոյի «Լեւոն Յակոբեան» դաշտավայրին մէջ։

1976ին, Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ, ընդառաջելով Հ. Յ. Դ. «Շանթ» Կոմիտէութեան առաջարկին եւ Լոս Անդելըսի Մասնաճիւղի Վարչութեան կազմակերպութեամբ, առաջին անգամ ըլլալով, տեղի կ'ունենան Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-Մասնաճիւղային Ողիմպիական Խաղեր, իսթ Լոս Անդելըս Գոլէճի մարզադաշտին վրայ, 4000 հանդիսականներու ներկայութեամբ։

Մրցումներուն եւ տողանցքին կը մասնակցին՝ Հ. Մ. Լ. Մ. ի չորս Մասնաճիւղերէն 250 երկսեռ մարզիկներ, ներառեալ՝ սկաուտական կազմերը, առաւել՝ ազգային վարժարաններու, Կիրակնօրեայ եւ Հ. Օ. Մ. ի Շաբաթօրեայ վարժարաններու եւ Հայերիտ. Դաշնակցութեան Ուխտերու երկսեռ մարզիկները։

1976ին կը գումարուի Հ. Մ. Լ. Մ. ի Շրջանային ներկայացուցչական Բ. Ժողովը։ Շրջ. Վարչութեան անդամ կ'ընտրուին՝

Քերոբ Առաքելեան (ատենապետ), Յակոբ Օվայեան, տոքթ. Սարգիս Արեւեան, Յարութ Եփրեմեան, Հրայր Սարգիսեան,



Հ. Մ. Ը. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Ներկայացուցչական
Բ. Ժողովը, 1976ին:

Նստած, ձախէն աջ՝ տոքր. Սարգիս Արեւեան, Զօհրապ Անտոնեան, Արմէն Տէյիրմէթնեան, Տիգրան Ռոկոնի:

Քերոր Սոաքելեան, Յակոր Օվայեան, Յարութիւն Բարսեղեան:

Երկրորդ շարք, ոտքի, ձախէն աջ՝ Ցոլակ Ցովսէփեան, Ստեփան Պաղպուտարեան, Տիգրան Սարգիսեան,
Հրայր Սարգիսեան, Սիլվա Սարգիսեան, Մինաս Մարգարեան, Նուպար Սարգիսեան:

Երրորդ շարք, ոտքի, ձախէն աջ՝ Ճորի Արէլեան, Ռազմիկ Շիրինեան, Ռոստոմ Այնթապլեան, Հրայր
Նալպանտեան, Լեւոն Տէր Պետրոսեան, Վարդգէս Թովմասեան, տոքր. Արմէն Կէօննեան:

Չորրորդ շարք, ոտքի, ձախէն աջ՝ Իշխան Զարոյեան, Ճորի Սվագնեան, Կարպիս Գարարոյեան, Ներսէս
Իղնեան, Քրիս Արգարեան:



Զախէն աջ՝ Հրայր Յովնանեան, Վարդգէս Տէր Կարապետեան (Կեդր. Վարչութեան ատենապետ), տիկ. Յովնանեան, Քերոբ Առաքելեան:

Մինաս Մարգարեան, Կարպիս Գաթարոյեան:

Շրջանային Ներկայացուցչական Բ. Ժողովը կը վաւերացնէ Հ. Մ. Ը. Մ. ի Արեւմբուժեան Միացեալ Նահանգներու շրջանի Ներքին Ծրագիր-Կանոնագիրը:

1977 Մարտ 10ին, Փասատինայի մէջ, Շրջ. Վարչութեան ներկայութեամբ, կը գումարուի Հ. Մ. Ը. Մ. ի Փասատինայի Մասնաճիւղի հիմնադիր Ժողովը:

1977 Մայիսին, Նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ Շրջ. Վարչութեան եւ կազմակերպութեամբ Լոս Անձելըսի Մասնաճիւղի Վարչութեան, տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. ի Միջ-Մասնաճիւղային համագաղութային Բ. Ողիմպիական Խաղերը եւ Յաղթանակի Պարահանդէսը:

Մարգախաղերուն եւ տողանցքին կը մասնակցին՝ Հ. Մ. Ը. Մ. ի Լոս Անձելըսի, Սան Ֆրանսիսկոյի, Ֆրեզնոյի եւ Փասատինայի Մասնաճիւղերու երկուու մարզիկները եւ սկաուտական կազմերը, Թեհրանի Հ. Մ. «Արարատ» կազմակերպութեան պասքեթ-

պոլի Ա. Դասակարգի մանչերու եւ աղջիկներու խումբերը եւ աթլէթները, Մեքսիքօ Սիթիէն եւ Թիհուանայէն (Մեքսիքա) Հ. Մ. Ը. Մ. ական երիտասարդներ, Փութպոլի խումբով, Հայ երիտ. Դաշնակցութեան Ուստերու, Հ. Օ. Մ. ի Շաբաթօրեայ վարժարաններու, Քալիֆորնիոյ Հայ Մարգական Միութիւններու երկսեռ մարզիկները: Տողանցքը կը գլխաւորէ շարժանկարի աստղ՝ Մայք Քանըրզ (Գրիգոր Օհանեան):

1978ի Մայիսին, Հ. Յ. Դ. Արեւմտեան Ամերիկայի Կեդր. Կոմիտէի եւ Հ. Մ. Ը. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ, տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. ի Միջ-Մասնաճիւղային համագաղութային Ողիմպիական Գ. Խաղերը, Լոս Անձելըսի Քաղաքային Գոլէճի (Էլ. Էյ. Սի. Սի.) մարզադաշտին վրայ, նուիրուած՝ Հայաստանի Անկախ Հանրապետութեան հիմնադրութեան եւ Հ. Մ. Ը. Մ. ի հիմնադրութեան 60ամեակներուն:

Կը մասնակցին՝ Հ. Մ. Ը. Մ. ի Լոս Ան-



Հ. Մ. Ը. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու խմբապետական կազմը,
Ֆրեզնօ, 1981ին:

ճելըսի, Սան Ֆրանսիսքոյի, Ֆրեզնոյի, Փասատինայի եւ Պոսթընի Մասնաճիւղերու երկսեռ մարզիկները, Հ. Մ. Ը. Մ. ի Աւստր-րալիոյ Մասնաճիւղերէն երկսեռ մարզիկներ, 70 հոգիով, Մեքսիքո Սիթիէն, Թիհուանայէն, Հ. Յ. Դ. Աւստերէն երկսեռ մարզիկներ, Լոս Անձելըսի հայ եւ օտար վարժարաններու եւ Հ. Օ. Մ. ի Շաբաթօրեայ վարժարաններու աշակերտութիւնը:

9000 հանդիսականներու ներկայութեամբ, շուրջ 2000 երկսեռ մարզիկներու եւ սկառուտական կազմերու տողանցքը կը գլխաւորէ Քալիֆորնիոյ նահանգապետ Շերի Պրաուն: Օրուայ նախագահուհին՝ տիկ. Ֆլորա Շահվերտեան ներկայ կ'ըլլայ իր զաւկին՝ Վահէ Շահվերտեանի հետ:

«Պոնավանթիւր» պանդոկին մէջ, Ցաղթանակի Պարահանդէսին ներկայ կ'ըլլայ 2500 հոգի:

1978ի Օգոստոսին, Հ. Մ. Ը. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանը իր մասնակցութիւնը կը բերէ Հ. Մ. Ը. Մ. ի համագաղութային սկառուտական Ա. ընդհա-

նուր բանակումին, Ցունաստանի մէջ, 31 արի-արենոյշներով:

1978ի Նոյեմբերին, Մոնթեպելոյի Հայ Կեղրոնի սրահին մէջ կը գումարուի Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Ներկայացուցչական Ա. բացառիկ (ընթացիկ Գ.) ժողովը: Իրաւասու ձայնով կը մասնակցին 23 պատգամաւորներ:

1975-76 եւ 1977-78 տարեշրջաններու Շրջ. Վարչութեան տեղեկագիրներէնի յայտ կու գայ, որ Հ. Մ. Ը. Մ. ի Լոս Անձելըսի, Սան Ֆրանսիսքոյի, Ֆրեզնոյի եւ Փասատինայի Մասնաճիւղերը միասնաբար ունէին 412 երկսեռ անդամ, սկառուտական կազմերը կը հաշուէին 390 արի, արենոյշ, գայլիկ եւ մըջնիկ: Ընդհանուր գումար՝ 802:

Հ. Մ. Ը. Մ. ի Համագաղութային Պատգամաւորական Բ. Ընդհ. Ժողովին պատգամաւոր կ'ընտրուին՝ տոքթ. Սարգիս Արեւեան եւ Կարպիս Թիթիգեան: Շրջ. Վարչութեան կողմէ՝ Քերոր Առաքելեան:

1978ին, Ֆրեզնոյի մէջ, Շրջ. Վարչու-



Հ. Մ. Ը. Մ. ի Սրբւմտեան Միացեալ Նահանգներու Մարզական
Բ. Սեմինարին մասնակցողները, 1981ին:

թիւնը կը պատուէ Հ. Մ. Ը. Մ. ի բարերար-
ներ՝ տիկ. Արշալոյս Էօքսիւզեանը եւ Վա-
հան Շամլեանը:

1978 Դեկտեմբեր 15ին, Կլէտէյլի Հայ
Կեդրոնին մէջ, Շրջ. Վարչութեան ներկա-
յութեամբ, կը գումարուի Հ. Մ. Ը. Մ. ի
Կլէնտէյլի Մասնաճիւղի հիմնադիր ժողովը:

1979 Յունուար 12ին, Օրէնճ Քառնթիի
մէջ, Շրջ. Վարչութեան ներկայութեամբ,
կը գումարուի Հ. Մ. Ը. Մ. ի Օրէնճ Քառն-
թիի Մասնաճիւղի հիմնադիր ժողովը:

1979ին կը գումարուի Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ.
Ներկայացուցչական Դ. Ժողովը, Էնսինոյի
«Փերահեան» ազգ. վարժարանի «Տիգրան-
եան» սրահին մէջ: Շրջանի Յ Մասնաճիւ-
ղերէն՝ Լու Անձելըսի, Սան Ֆրանսիսկոյի,
Ֆրեզնոյի, Փասատինայի, Կլէնտէյլի եւ
Օրէնճ Քառնթիի, իրաւասու ձայնով կը
մասնակցին՝ 23 պատգամաւորներ:

Շրջ. Վարչութեան անդամ կ'ընտրուին՝
Քերոր Առաքելեան (ատենապետ), տոքթ.
Մարգիս Արեւեան, տոքթ. Պերճ Ռուբին-

եան, Մհեր Շիրտըմեան, Զօհրապ Անտոն-
եան, Սերոբ Վարդանեան, Վահէ Ցովակիմ-
եան, Մինաս Մարգարեան, Ստեփան Պաղ-
պուտարեան:

1979ին, Շրջ. Վարչութեան Շրջանային
Մարզական Յանձնախումբը կը կազմէ Հ. Մ.
Ը. Մ. ի Պատքեթպոլի Լիկ:

1979ին, Շրջ. Սկառտական Խորհուրդի
կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ Հ. Մ.
Ը. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգնե-
րու սկառտ խմբապետական Ա. դպրոց-
բանակումը, Հ. Ե. Դ. ճամբարին մէջ, 70
աստիճանաւորներու մասնակցութեամբ:

Շրջ. Վարչութիւնը Ստեփան Պաղպու-
տարեանը կը նշանակէ Շրջ. Սկառտ-Խըմ-
բապետ: Համարատու այս պաշտօնինք բերու-
մով, ան կը գաղրի Շրջ. Վարչութեան իրա-
ւասու ձայնով իբրև անդամ մաս կազմելէ:
Զինք կը փոխարինէ, Շրջ. Վարչութեան
որոշումով՝ Պարգեւ Շիրինեան:

1979ի Մայիսին, Շրջ. Վարչութեան
նախաձեռնութեամբ, տեղի կ'ունենան Հ. Մ.



Հ. Մ. Լ. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջ. Ներկայացուցչական 5րդ ժողովը, 1981ին:

Հ. Մ. ի Նաւասարդեան Դ. Ողիմպիական Խաղերը, Խոթ Լոս Անձելը Գոլէճի մարզադաշտին վրայ:

Կը մասնակցին՝ Քալիֆորնիոյ Հ. Մ. Լ. Մ. ի Մասնաճիւղերու երկսեռ մարզիկները, սկառւտական կազմերը, Հ. Ե. Դ. Ռ. Ռիստերը, Լոս Անձելը հայ եւ օտար վարժարաններու հայ երկսեռ աշակերտութիւնը:

Աւելի քան 6000 հանդիսականներու ներկայութեամբ, 1500 հայորդիներու փառահեղ տողանցքը կը գլխաւորէ Քալիֆորնիոյ ընդհանուր դատախազ Ճորճ Տէօքմէճեան: «Պոնավանթիւր» պանդոկին մէջ Յաղթանակի Պարահանդէսին ներկայ կ'ըլլայ 2500 հոգի:

1979 Մեպտեմբեր 20ին, Շրջ. Վարչութեան ներկայութեամբ, էնսինոյի «Ֆերահեան» ազգ. վարժարանի «Տիգրանեան» սրահին մէջ կը գումարուի Հ. Մ. Լ. Մ. ի Հովիտի (էնսինօ) Մասնաճիւղի հիմնադիր ժողովը:

1980ին, Շրջ. Մարզական Ցանձնախումբը կը կազմակերպէ Հ. Մ. Լ. Մ. ի Միջ-Մասնաճիւղային Փութպոլի մրցաշարք:

1980ի Մայիսին, Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ, տեղի կ'ունենան Հ. Մ. Լ. Մ. ի Նաւասարդեան Ե. Ողիմպիական Խաղերը, Լոս Անձելը Սիթի Գոլէճի մարզադաշտին վրայ:

կը մասնակցին՝ Հ. Մ. Լ. Մ. ի շրջանի 7 Մասնաճիւղերէն՝ Լոս Անձելըսի, Սան Ֆրանսիսքոյի, Ֆրեզնոյի, Փասատինայի, Կլէնտէյլի, Օրէնճ Քառութիի եւ Հովհտի երկսեռ մարզիկները, սկառատական կազմերը, Վենեգուէլայի «Արմենիա» ֆութպոլի խումբը եւ հայ եւ օտար վարժարաններու հայ երկսեռ աշակերտութիւնը:

10,000 հանդիսականներու ներկայութեամբ՝ տողանցքին կը մասնակցին 2000 հայորդիներ: Տողանցքի աւարտին, օրուայնախագահ Հրայր Ցովնանեան կը խոստանայ մէկ միլիոն տողար նուիրել, Լոս Անձելըսի մէջ հայ կեդրոն-մարզավայր մը Հիմնելու համար, որ ցարդ իրականացած չէ ու խոստումը կը մնայ խոստում:

Նոյն օրը, երեկոյեան, «Պոնավանթիւր» պանդոկին մէջ տեղի կ'ունենայ Յաղթանակի Պարահանդէսը, 2000 հոգիի ներկայութեամբ:

1980ին, Հ. Մ. Լ. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանի Մասնաճիւղերէն 39 արի-արենոյշներ կը մասնակցին Հ. Մ. Լ. Մ. ի համագաղութային սկառտական Բ. ընդհ. բանակումին, որ տեղի կ'ունենայ Փարիզի մերձակայ, Քլամար Հայաշատ քաղաքի բանակավայրին մէջ:

1980 Հոկտեմբերին, Շրջ. Վարչութիւնը ընդառաջելով Մոնթրէալի Հ. Մ. Լ. Մ. «Կամք» Մասնաճիւղի հրաւերին, Հ. Մ. Լ. Մ. ի Քալիֆորնիոյ պասքեթպոլի մանչերու ներկայացուցիչ խումբը կը մասնակցի Մոնթրէալի Հայ Կեդրոնի մարզաւանի բացման պատքեթպոլի մրցաշարքին ու կը տիրանայ ախոյեանի տիտղոսին եւ բաժակին:

1980 Դեկտեմբերին, Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ, տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ. ի Օրուայ շքեղ տօնակատարութիւնը, Կլէնտէյլ Հայ Սփուլի հանդիսասրահին մէջ: Այս առիթով, կը կարդացուի Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսի պատգամը, ուղղուած՝ Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանի Հ. Մ. Լ. Մ. ին:



ՔԵՐՈԲ Ա.ՌԱՔԵԼԵԱՆ

1981 Մարտ 22-23ին, նախաձեռնութեամբ Շրջ. Վարչութեան եւ կազմակերպութեամբ Մասնաճիւղերու Վարչութեանց, տեղի կ'ունենան Հ. Մ. Լ. Մ. ի Նաւասարդեան Զ. Ողիմպիական Խաղերը, պատույնախագահութեամբ տէր եւ տիկ. Քերոբ Առաքելեանի եւ ներկայութեամբ 10,000 հանդիսականներու:

Կը մասնակցին՝ Հ. Մ. Լ. Մ. ի Գանատայէն՝ Մոնթրէալի «Կամք», Արեւելեան Միացեալ Նահանգներէն՝ Տիմրոյիթի եւ շրջանի 8 Մասնաճիւղերու երկսեռ մարզիկները եւ սկառտական կազմերը:

Մարզախաղերը տեղի կ'ունենան Լոս Անձելըս Միթի Գոլէճի մարզադաշտին վրայ, 3000 հայորդիներու փառահեղ տողանցքը՝ իսթ Լոս Անձելըս Գոլէճի մարզադաշտին վրայ, Յաղթանակի Պարահանդէսը՝ «Պոնավանթիւր» պանդոկին մէջ:

1981 Յուլիսին, Հ. Մ. Լ. Մ. ի Կեդր. Վարչութեան նախաձեռնութեամբ, Գանատայի մէջ տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ. ի



Տէր ԵՒ ՏԻԿ. ՎԱՀԱՆ ՇԱՄԼԵՍՆ

համագաղութային պասքեթպոլի Ա. մրցաշարքը, շրջաններու մանչերու եւ աղջիկներու ներկայացուցիչ խումբերու մասնակցութեամբ:

Մանչերու մրցաշարքին ախոյեանի տիտղոսին եւ բաժակին կը տիրանայ Հ. Մ. Ը. Մ. ի Քալիֆորնիոյ ներկայացուցիչ խումբը:

1981 Օգոստոսին եւ Սեպտեմբերին, Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ եւ հրաւերով, շրջանի մարզական կեանքը աշխուժացնելու առաջադրութեամբ՝ առաջնորդող ծրագիր մը պատրաստելու համար, Մասնաճիւղերէն 19 ներկայացուցիչներու մասնակցութեամբ, յաջորդաբար տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու մարզական Ա. Եւ Բ. Սեմինարները, Կլէնտէյլի Հայ Կեղրոնի սրահին մէջ:

1981ին, Շրջ. Վարչութեան Մարզական Յանձնախումբը կը կազմակերպէ երկար վազքի մրցումներ:

1981ին կը գումարուի Շրջ. Ներկայացուցական Ե. Ժողովը, Մոնթեպելոյի Հայ Կեղրոնի «Միսաք Սեւաչերեան» սրահին մէջ, մասնակցութեամբ՝ Լոս Անձելըսի, Սան Ֆրանսիսկոյի, Ֆրեզնոյի, Փաստինայի, Կլէնտէյլի, Օրէնճ Քառունթիի եւ Հովիտի Մասնաճիւղերէն իրաւասու ձայնով 36 ներկայացուցիչներու:

Շրջ. Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ տոքթ. Սարգիս Արեւեան (ատենապետ), Էմիլ Մարգարեան, Ժիրայր Պօյաճեան, Յովսէփ Գաբրիէլեան, Թորոս Բարսեղեան, Կարպիս Գաթարոյեան, Յակոբ Օվայեան, Զօհրապ Անտոնեան, Նշան Փիրումեան:

1981ին, Շրջ. Վարչութիւնը կը նշանակէ եռանդամ սկաուտական խմբապետական կազմ:

1981 Սեպտեմբերին, Շրջ. Վարչութիւնը ճաշկերոյթով կը պատուէ Հ. Մ. Ը. Մ. ի համագաղութային պասքեթպոլի Ա. մրցաշարքին մասնակցած, իր շրջանի՝ Քալիֆորնիոյ ներկայացուցիչ մանչերու յաղ-



Տէր ԵԽ ՏԻԿ. ԷՆՏԻ ԱՆՏՈՆԵՍԻՆ

թական խումբին մարզիկները եւ երկրորդ դիրքը գրաւած աղջիկներու խումբին մարզիկուհիները, Մոնթեպելլոյի մէջ:

1981ին տեղի կ'ունենայ Հ.Մ.Լ.Մ.ի Օրուայ տօնակատարութիւնը, Շրջ. Վարչութեան կազմակերպութեամբ, էնսինոյի «Ֆերահեան» ազգ. վարժարանի «Աւետիսեան» սրահին մէջ:

1982 Յունուարին, պաշտօնապէս բացումը կը կատարուի Հ.Մ.Լ.Մ.ի Շրջ. Վարչութեան գրասենեակին, Կէնտէյլի մէջ:

1982 Փետրուարին, Նշան Փիրումեան կը հրաժարի Շրջ. Վարչութենէն: Յարգելի պատճառներով հրաժարականը կ'ընդունուի եւ զինք կը փոխարինէ, Շրջ. Վարչութեան որոշումով՝ Սերոբ Տէր Պօղոսեան:

1982ին, Հ.Մ.Լ.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանը ներկայացրնող եռանդամ սկաուտական խմբապետական կազմը՝ Հրաչ Գոչունեան, Ստեփան Պաղպուտարեան եւ իւղիկ Շիթիլեան, Աթէնքի մէջ կը մասնակցի Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտական կանոնագրի վերամշակման համագաղութային ժողովին:

1982 Մայիսին, Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Շրջ. Մարզական Յանձնախումբի կազմակերպութեամբ, առաջին անգամ ըլլալով, տեղի կ'ունենան Քալիֆորնիոյ Հայ Աշակերտական Մարզախաղեր (ՔԱ.Հ.Ա.Մ.) եւ տողանցք, Կլէնտէյլ Հայ Աքուլի մարզադաշտերուն վրայ:

1982ին, Շրջ. Վարչութիւնը իր լիազումար նիստին, կ'որոշէ Հ.Մ.Լ.Մ.ի նիւթեական նպաստը բերել Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն, իր շրջանի Հ.Մ.Լ.Մ.ի եկամտաբեր ձեռնարկներուն 10 առ հարիւր յատկացնելով:

1982ին, Շրջ. Մարզական Յանձնախումբի կազմակերպութեամբ, տեղի կ'ունենան Հ.Մ.Լ.Մ.ի Նաւասարդեան 7րդ Մարզախաղերը:

Կը մասնակցին՝ շրջանի Հ.Մ.Լ.Մ.ի 8 Մասնաճիւղերու երկսեռ մարզիկները եւ սկաուտական կազմերը, Հ.Մ.Լ.Մ.ի նիւթորքի, Մոնթրէալի, Թորոնթոյի Մասնաճիւղերը եւ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութիւնը ներկայացրնող մարզախումբերը, նաեւ՝ Սան Տիէկոյէն Հ.Մ.Լ.Մ.ին անդամագրուիլ ցանկա-



Հ. Մ. Լ. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու ֆութպոլի ներկայացուցիչ խումբը, 1984ին:

Նստած, ձախէն աջ՝ Վարուժան Աւետիսեան, Հայկ Պօղոսեան, Մարտիկ Միրիկեան,
Վարուժան Շիրտըմեան, Մայք Գրիգորեան, Արա Հայրապետեան, Սամ Պարտագնեան:
Առաջ, ձախէն աջ՝ Հենրիկ Ազատեան, Աշրափ Պահարեան, Տիգրան Թաշնեան, Վրեժ
Խըշիկեան, Ժագ Թովմասեան, Ռոտրիկ Պապախանեան, Ռազմիկ Աղանեան, Անդօ
Անտոնեան:

ցող հայ երիտասարդներ, ֆութպոլի խումբ:

Լոս Անձելըս Սիթի Գոլէճի մարզա-
դաշտին վրայ, Հ. Մ. Լ. Մ. ի Լոս Անձելըսի
նորակազմ նուագախումբի առաջնորդու-
թեամբ, փառահեղ տողանցքին կը մաս-
նակցին 1700 երկսեռ մարզիկներ եւ
սկառուտական կազմեր: Յաղթանակի Պարա-
հանդէսը տեղի կ'ունենայ «Պոնավանմիւր»
պանդոկին մէջ:

Նաւասարդեան 7րդ Մարզախաղերը
կ'իրագործուին միայն Հ. Մ. Լ. Մ. ի Մասնա-
ճիւղերու մասնակցութեամբ եւ այնուհե-
տեւ այդպէս ալ կը շարունակուին: Նա-

խորդ 6 Մարզախաղերուն եւ տողանցքնե-
րուն, քանակի անհրաժեշտութեամբ, մաս-
նակցած էին նաեւ հայ եւ օտար վարժա-
րաններու հայ աշակերտութեան եւ Հ. Ե. Դ.
Ուխտերու երկսեռ մարզիկները:

1982 Հոկտեմբեր 2ին, Սան Տիէկոյի
մէջ, Շրջ. Վարչութեան ներկայութեամբ,
տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ. ի Սան Տիէկոյի
նորակազմ Մասնաճիւղի հիմնադիր հանդի-
պումը:

1982ին, Հ. Մ. Լ. Մ. ի Օրուայ տօնակա-
տարութեան, Կլէնտէյլ Հայ Աքուլի հան-
դիսարահին մէջ, Հ. Մ. Լ. Մ. ի Կեդր. Վար-
չութիւնը Հ. Մ. Լ. Մ. ի Արժանեաց Ոսկի



Հ.Մ.Լ.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջ. Ներկայացուցչական 7րդ Ժողովը, 1984ին:

շքանշանով կը պարզեւատրէ վաստակաւոր
Հ.Մ.Լ.Մ.ական Քերոր Առաքելեանը:
Նքանշանի տուչութիւնը կը կատարէ Կեդր.
Վարչութեան շրջանի անդամ Վարդգէս
Ալահայտոյեան:

1982ին, Կլէնտէյլի մէջ կը գումարուի
Հ.Մ.Լ.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նա-
հանգներու Շրջ. Ներկայացուցչական Զ.
Ժողովը: Շրջանի 8 Մասնաճիւղերէն իրա-
ւասու ձայնով կը մասնակցին 54 ներկայա-
ցուցիչներ, խորհրդակցական ձայնով՝ Սան
Տիէկոյի նորակազմ Մասնաճիւղի ներկայա-
ցուցիչներ եւ 16 Հ.Մ.Լ.Մ.ականներ:


Հ.Մ.Լ.Մ.ի Պատգ. Ընդհանուր Ժողո-
վին, գումարելի 1983ի Յունուարին, պատ-
գամաւոր կ'ընտրուին՝ Սեւակ Սագինեան,
տոքթ. Սարգիս Արեւեան, Ժիրայր Պօյա-
ճեան:

Շրջ. Վարչութեան անդամ կ'ընտրուին՝
տոքթ. Սարգիս Արեւեան, (ատենապետ),
Յակոբ Օվայեան, Ժիրայր Պօյաճեան, Նու-
պար Սարգիսեան, Թորոս Բարսեղեան, Սե-
րոր Տէր Պօղոսեան, Գոգօ Պալեան, Զօհրապ
Անտոնեան, Կարպիս Գաթարոյեան:

1982ին, Հ.Մ.Լ.Մ.ի Արեւմտեան
Միացեալ Նահանգներու 9 Մասնաճիւղերը,
միասնաբար, ունէին՝ 739 երկսեռ անդամ,
756 երկսեռ մարզիկ, իսկ սկառուտական
կազմերը կը հաշուէին 1075 հոգի: Ընդհա-
նուր գումար՝ 2570:

1983ին, Շրջ. Վարչութեան որոշումով,
կը կազմակերպուին Ապրիլեան Միջ-Մաս-
նաճիւղային ֆութապոլի, պասքեթապոլի եւ
վոլիսպոլի մրցումներ, իբրեւ խորհրդանիշ
հայութեան ապրելու, ստեղծագործելու եւ
պայքարելու կամքին: Մասնակցող Մասնա-
ճիւղերու՝ Լոս Անձելըսի, Մոնթեպելլոյի,
Փաստինայի, Կլէնտէյլի եւ Օրէնճ Քառն-
թիի մարզիկ-մարզուհիները, բոլոր մըր-
ցումներուն, իրենց կուրծքին կը կրեն սեւ
ժապաւէն եւ մրցումները սկսելէ առաջ,
վայրկեան մը լուսավեամբ կը յարգեն եղեո-
նի մէկ ու կէս միլիոն նահատակներուն յի-
շատակը:

1983ին, Շրջ. Վարչութիւնը գործադրե-
լով Շրջ. Ներկայացուցչական Զ. Ժողովի
որոշումը, Հ.Մ.Լ.Մ.ի Քալիֆորնիոյ ֆութ-
ապոլի ներկայացուցիչ խումբը ամբողջու-



ՀՐԱՅՐԻԱՆ (ՊԱՐԳԵԽ ՇԻՐԻՆԵԱՆ)

թեամբ կը կազմուի հայ ֆութպոլիստներով:

1983ին, Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Շրջ. Մարզական Խորհուրդի կազմակերպութեամբ, տեղի կ'ունենան Քաղաքութիոյ Հայ Աշակերտական Բ. Մարզախաղերը (ՔԱ.Հ.Ա.Մ.) Կլէնտէյլ Հայ Սքուլի մարզադաշտերուն վրայ, նուիրուած՝ 1918 Մայիս 28ին, Հայաստանի Անկախ Հանրապետութեան հոչակման 65ամեակին:

Ամէնօրեայ հայ ազգային եւ օտար վարժարաններ յաճախող հայ երկսեռ աշակերտութեան ստեղծած խանդավառ մթնոլորտին մէջ, կը կատարուին դաշտային խաղեր, ֆութպոլի, պասքեթպոլի, վոլիպոլի եւ փինկ-փոնկի մրցումներ, որոնք վերջ կը գտնեն՝ Հ. Մ. Ը. Մ. ի Լոս Անձելըսի Մասնաճիւղի նուագախումբին առաջնորդութեամբ աշակերտական շքեղ տողանցքով, մրցանակաբաշխութեամբ եւ ազգային ոգի ներշնչող տպաւորիչ հանդիսութեամբ:

1983ին, Շրջ. Վարչութիւնը հիմը կը դնէ հասութաբեր ձեռնարկի մը՝ Մջանային վիճակահանութեան:

1983ին, Շրջ. Վարչութիւնը ընդառաջելով Հիւսթընի հայ գաղութէն (Թէքսաս նահանգ) խումբ մը հայորդիներու դիմու-

մին, կը գումարուի հիմնադիր ժողով եւ կը հիմնուի Հ. Մ. Ը. Մ. ի Հիւսթընի Մասնաճիւղը:

1983ին տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. ի 65ամեակին նուիրուած նաւասարդեան 8րդ Մարզախաղերը, Կլէնտէյլ Հայ Սքուլի մարզադաշտերուն վրայ, պատուոյ նախագահութեամբ տէր եւ տիկ. Վահան եւ Անոյշ Շամլեանի:

Կը մասնակցին Հ. Մ. Ը. Մ. ի Արեւմըտեան նահանգներու 10 Մասնաճիւղերու երկսեռ մարզիկներն ու սկառտական կազմերը, Հ. Մ. Ը. Մ. ի Պէյրութի եւ Թորոնթոյի Մասնաճիւղերէն մարզախումբեր:

Հ. Մ. Ը. Մ. ի Պէյրութի ֆութպոլի Ախումբին մասնակցութիւնը մեծ խանդավառութիւն կը ստեղծէ:

15,000 հանդիսականներու ներկայութեամբ կատարուած մարզախաղերը, 1500 Հ. Մ. Ը. Մ. ական երկսեռ մարզիկներու եւ սկառտական կազմերու ֆառահեղ տողանցքը, ապա Յաղթանակի Պարահանդէսը, վայրուն յաջողութեամբ կը պսակուին:

«Էէնչըրի Փլազա» պանդոկին մէջ, Յաղթանակի Պարահանդէսին, իրենց ներկայութեամբ Հ. Մ. Ը. Մ. ը կը պատուեն եւ խօսք կ'առնեն՝ Քալիֆորնիոյ նահանգապետ Ճորճ Տէօքմէնեան, պետական դէմքեր եւ հանրածանօթ ազգայիններ:

1983ին, Շրջ. Վարչութիւնը կը կազմակերպէ խորհրդակցական հանդիպում, որուն կը մասնակցին՝ Շրջ. Սկառտական Խորհուրդի, Շրջ. Մարզական Խորհրդի, Մասնաճիւղերու Վարչութիւններու եւ Յանձնախումբերու երկսեռ անդամներ, նաեւ գործօն Հ. Մ. Ը. Մ. ականներ:

Խորհրդաժողովին կը շեշտուի հաւատարմութիւնը Հ. Մ. Ը. Մ. ի այն վեհ սկզբունքին, թէ Հ. Մ. Ը. Մ. ի գործունէութեան մէջ տեղ մը հասած ըլլալ գոյութիւն չունի, այլ միշտ կայ միասնաբար աւելի բարձրին, աւելի լաւին, աւելի կատարեալին հասնելու ձգտում:

1984ի Յունուարին, Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ.



ԺՈՐԺ ԱԴԱՄԵԱՆ

Մարզական Խորհուրդի կազմակերպութեամբ եւ հրաւէրով, Հ. Մ. Լ. Մ. Ի հարաւային Քալիֆորնիոյ 6 Մասնաճիւղերու երկսեռ մարզիկները կ'ունենան ընկերային հաւաքոյթ, Կլէնտէյլի «Արգարեան» սրահին մէջ:

1984ին, Շրջ. Վարչութեան հօվանաւորութեամբ եւ Շրջ. Մարզական Խորհուրդի կազմակերպութեամբ, տեղի կ'ունենայ Համահայկական Պասքեթպոլի Լիկի տարեկան Ա. մրցաշարքը, մասնակցութեամբ՝ Հ. Մ. Լ. Մ. Ի Լոս Անձելըսի, Կլէնտէյլի «Արարատ», Հովհտի, Օրէնճ Քառունթիի Մասնաճիւղերու, Հ. Բ. Լ. Մ. Ի եւ Հայ Աւետարանական Միացեալ Եկեղեցւոյ մանչերու եւ աղջիկներու խումբերու:

1984ին տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ. Ի Ապրիլեան Միջ-Մասնաճիւղային Բ. մրցաշարքը: Կը մասնակցին՝ Հ. Մ. Լ. Մ. Ի Լոս Անձելըսի, Մոնթեպելլոյի, Փաստինայի, Կլէնտէյլի «Արարատ», Օրէնճ Քառունթիի եւ Հովհտի Մասնաճիւղերէն 48 խումբեր:

Հ. Մ. Լ. Մ. Ի ձեռնարկները միշտ ունեցած են ազգային գաղափարական իմաստութեան պահանդակութիւն: Ապրիլեան մրցաշարքերը եւս, կը կազմակերպուին՝

Հ. Մ. Լ. Մ. Ի երկսեռ մարզիկներուն ներշնչելու ազգային գաղափարական ոգի, անոնց մէջ ամրապնդելու ազգային ինքնութեան հպարտանքը եւ զանոնք մղելու գործօն մասնակցութեան՝ Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն:

1984ին, Շրջ. Մարզական Խորհուրդի կազմակերպութեամբ, տեղի կ'ունենան՝ Հայաստանի Անկախութեան Ենամեակին նուիրուած Քալիֆորնիոյ Հայ Աշակերտական Գ. Մարզախաղերը (ՔԱ. Հ. Ա. Մ.):

700 երկսեռ աշակերտներու մասնակցութեամբ՝ Փութպոլի, պասքեթպոլի, վոլիպոլի, փինկ-փոնկի մրցումները եւ դաշտային խաղերը, Կլէնտէյլ Հայ Սքուլի մարզադաշտերուն վրայ, կ'իրագործուին աննախընթաց յաջողութեամբ:

Աւարտախաղերէն ետք, 350 երկսեռ աշակերտներ կը կատարեն շքեղ տողանցք: Ի պատիւ աշակերտներու, երեկոյեան, տեղի կ'ունենայ խրախճանք:

1984ին տեղի կ'ունենան Հ. Մ. Լ. Մ. Ի Նաւասարդեան 9րդ Մարզախաղերը, Կլէնտէյլ Հայ Սքուլի մարզադաշտերուն վրայ, պատուոյ նախագահութեամբ՝ տէր եւ տիկ. էնտի եւ Ալին Անտոնեաններու:

Նաւասարդեան 8րդ Մարզախաղերու նախագահ Վահան Շամլեան ընդունելութիւն մը կու տայ ի պատիւ նաւասարդեան 9րդ Մարզախաղերու նախագահ տէր եւ տիկ. էնտի Անտոնեաններուն, Քերոբ Առաքելեանի բնակարանին մէջ:

Տարի մը առաջ, Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. Ի Փութպոլի Ա. խումբին մասնակցութեան լուրը նաւասարդեան 8րդ Մարզախաղերուն, եղաւ սրտաշարժ, խանդավառող եւ ուրախութեամբ համակեց բոլոր Հ. Մ. Լ. Մ. ականներն ու Հ. Մ. Լ. Մ. Ի համակիր ժողովուրդի լայն զանգուածը:

Զերմ ու սիրալիր ընդունելութեան արժանացան Պէյրութի մարզիկները: Մարզադաշտի թրիպիւնէն բազմահազար հանդիսականներ Պէյրութ-Պէյրութ բացագանչելով, քաջալերեցին, ծափահարեցին եւ



Հ. Ա. Ը. Ա. ի 70ՄՄԵԱԿ Առաջնահանձնության վերաբերյալ Արդյունաբանական Ազգային Կոմիտեի պատճենը՝ 1986թ.:



ՏՈՒԹ. ՍԱՐԳԻՍ Ա. ԲԵԽԵԱՆ

իրենց անվերապահ սէրն ու յարգանքը յայտնեցին հանդէպ լիբանահայութեան, որ 1975ի Ապրիլէն ի վեր, սուտ ու աւեր սփոռող Լիբանանի ներքին ահաւոր աղէտը կը դիմագրաւէ:

Շրջ. Վարչութիւնը անհրաժեշտ միջոցառումներու դիմեց, որպէսզի 1984ի նաւասարդեան 9րդ Մարզախաղերուն իր մասնակցութիւնը բերէ Հ. Մ. Լ. Մ. ի Հալէպի ֆութպոլի Ա. խումբը, որպէսզի այս անգամ, նոյնքան կարօտով եւ ջերմութեամբ ընդունելով ու ծափահարելով Հալէպի մարզիկները, հանդիսականները իրենց սէրն ու յարգանքը յայտնէին Հ. Մ. Լ. Մ. ի մեծագոյն միջնարդերէն՝ Հալէպի Մասնաճիւղը կանգուն ու եռուն պահող Հալէպի Հ. Մ. Լ. Մ. ականներուն, Հալէպի սիրելի ու հիւրասէր հայութեան: Մակայն, կարելի չեղաւ խումբը բերել, դժուարութիւնները ակամայ էին: Փօխարէնը՝ եկաւ Պէյրութի Հ. Մ. Լ. Մ. ի վեթերաններու խումբը:

20,000 հանդիսականներ ներկայ եղան նաւասարդեան 9րդ Մարզախաղերուն, Հ. Մ. Լ. Մ. ի Լոս Անձելըսի Մասնաճիւղի նուագախումբի առաջնորդութեամբ՝ 2000 Հ. Մ. Լ. Մ. ական երկսեռ մարզիկներու եւ սկառուտական կազմերու փառահեղ տողանցքին եւ Յաղթանակի Պարահանդէսին, որ տեղի ունեցաւ «Սենչըրի Փլազա» պանդոկի սրահին մէջ:

Նաւասարդեան 9րդ Մարզախաղերուն նորութիւնը՝ տօնական մթնոլորտ ստեղծող Ֆեսթիվալն էր:

1984ին, 400 հանդիսականներու ներկայութեամբ տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ. ի Օրուայ տօնակատարութիւնը, ինսինոյի «Ֆերահեան» ազգ. վարժարանի «Աւետիսեան» սրահին մէջ:

Այս առիթով, Շրջ. Վարչութեան կողմէ, ատենապետ տոքթ. Սարգիս Արեւեան գնահատագիր-փլաք մը կը նուիրէ Հ. Մ. Լ. Մ. ի Կլէնտէյլի «Արարատ» Մասնաճիւղի Վարչութեան ատենապետ Համլէթ Զրախչեանին, ի պատիւ Մասնաճիւղին, որ ջանադիր եղաւ եւ յաջողեցաւ ունենալ իր սեփական ակումբը:

1984ին, Շրջ. Վարչութիւնը երկրորդ տարին ըլլալով կը ձեռնարկէ եւ կ'իրագործէ եկամտաբեր շրջանային վիճակահանութիւնը:

1984 Նոյեմբեր 30—Դեկտեմբեր 1 եւ 2ին, տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ. ի Արեւմըտեան Միացեալ նահանգներու Շրջ. Ներկայացուցչական 7րդ ժողովը, Հ. Մ. Լ. Մ.-ական Յարութեանի Կլէնտէյլի կալուածի սրահին մէջ:

Շրջանի 10 Մասնաճիւղերէն իրաւասուձայնով կը մասնակցին՝ 51 պատգամաւորներ:

Շրջ. Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Ժիրայր Պօյաճեան (ատենապետ), Գոգօ Պալեան, Կարպիս Շխրտըմեան, Կարէն Բենիասեան, Ռուբէն Գիւրջեան, Սերոբ Տէր Պօղոսեան, Մակի Բարսեղեան, Վահագն Մաւուկեան, Զօհրապ Անտոնեան:



Հ. Մ. Ը. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջ. Ներկայացուցչական
8րդ ժողովը, 1986ին:

1985ին, Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ տեղի կ'ունենան Քալիֆորնիոյ Հայ Աշակերտական Դ. Մարզախաղերը (ՔԱ. Հ. Ա. Մ.):

Հայ եւ օտար 15 վարժարաններէն կը մասնակցին 700 հայ երկսեռ աշակերտներ: Կը կատարուին՝ Փութպոլի 12, պասքեթպոլի մանչերու 29, աղջիկներու 9, վոլիպոլի մանչերու 14, աղջիկներու 11 խումբերու միջեւ, նաեւ փինկ-փոնկի եւ դաշտային խաղերու հետաքրքրական մրցումներ:

Հայաստանի անկախութեան նուիրուած մարզախաղերու աւարտին տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. ի հայաշունչ դրօշին տակ մէկ-տեղուած աշակերտութեան ազգային ոգի եւ հպարտանք ներշնչող, ազգային ոգին վառ պահող շքեղ տողանցք, պատգամ եւ մրցանակաբաշխութիւն:

1985ի Մայիսին, «Համազգային»ի Արեւմտեան Ամերիկայի Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ, Փաստինայի Հայ Կեդրոնի սրահին մէջ, հոծ բազմութեան մը ներկայութեամբ, տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ական Պարգևե Շիրինեանի, գրչանունով՝ Հրազդանի հայ գիրին ու մամուլին 50ամեայ ծառայութեան նուիրուած մեծարանքի երեկոն:

Զեռնարկին կը մասնակցին եւ ելոյթ կ'ունենան՝ Հ. Յ. Դ. Արեւմտեան Ամերիկայի Կեդր. Կոմիտէի, «Ասպարէզ» օրաթերթի, Հ. Օ. Մ. ի Շրջ. Վարչութեան, «Համազգային»ի Շրջ. Վարչութեան ներկայացուցիչներ եւ բարեկամներ: Հ. Մ. Ը. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջ. Վարչութեան կողմէ Հ. Մ. Ը. Մ. ի գնահատանքի եւ շնորհաւորութեան խոսքը կ'ընէ



Հ. Մ. Ը. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջ. Սկաուտական
Խորհուրդը եւ Մասնանիդերու խմբապետները, 1987ին:

ատենապետ Ժիրայր Պօյաճեան: Այս առիթով, Վեհափառ Գարեգին Բ. Կաթողիկոս յատուկ կոնդակով եւ Ս.Մեսրոպ Մաշտոց շքանշանով կը պատուէ Յորելեարը։ Եքանչանի տուչութիւնը կը կատարէ թեմի առաջնորդ եւ ձեռնարկի նախագահ Եփրեմ Եպիսկոպոս։ Թապագեան։

1985 Յուլիս 25ն 7, Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութեան նախաձեռնութեամբ ու կազմակերպութեամբ, Կլինտէյլ Հայ Աքուլի մարզագաշտերուն վրայ տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի համագաղութային ֆութապոլի Ա. մրցաշարքը, մասնակցութեամբ եօթը շրջաններու՝ Լիբանանի, Յունաստանի, Աւստրալիոյ, Ֆրանսայի, Գանատայի, Արեւելեան Միացեալ Նահանգներու, Արեւմըտեան Միացեալ Նահանգներու ներկայացուցիչ խումբերու։

Նոյն օրերուն, նոյն մարզագաշտերուն վրայ տեղի կ'ունենան շրջանի տասը Մասնաճիղերու մասնակցութեամբ Հ. Մ. Ը. Մ. ի Նաւասարդեան 10րդ Մարզախաղերը, պատոյ նախագահութեամբ ժորժ Աղամեանի։

1985ին, Հ. Մ. Ը. Մ. ի համագաղութային կառոյցը, 17 Շրջանային եւ Մեկուսի շրջաններու մէջ ունէր 58 Մասնաճիւղեր,

17,000 երկսեռ անդամներով եւ սկաուտական կազմերով։

Հ. Մ. Ը. Մ. ի համագաղութային ֆութապոլի Ա. մրցաշարքը եւ Նաւասարդեան Մարզախաղերը եօթը շրջաններէ կը մէկտեղեն՝ ճակատագրի բերումով իրարմէ բաժնուած, իրարու անծանօթ Հ. Մ. Ը. Մ. Սականներ եւ պատասխանատուներ։

35,000 հանդիսականներ ներկայ կ'ըլլան ֆութապոլի մրցումներուն, Նաւասարդեան Մարզախաղերուն, 1700 Հ. Մ. Ը. Մ. սկան երկսեռ մարզիկներու եւ սկաուտական կազմերու փառահեղ տողանցքին, Ֆեսթիվալին եւ Յաղթանակի Պարահանդէսին։

Հ. Մ. Ը. Մ. ի համագաղութային ֆութապոլի Ա. մրցաշարքի ախոյեանի տիտղոսին եւ բաժակին կը տիրանայ Հ. Մ. Ը. Մ. ի Արեւմըտեան Միացեալ Նահանգներու ներկայացուցիչ խումբը։

Փառահեղ տողանցքի աւարտին, Հ. Մ. Ը. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանը նուէր կը ստանայ եւ սեփականատէր կը դառնայ բանակավայրի մը, 160 էյքըր տարածութեամբ հողամաս մը, գեղատեսիլ Էլյք Իզապէլի մօտ։

Ամերիքըն Լայֆ Սայլընգ Ֆաունտէյշնէն ստացուած նուէրը կ'իրականանայ շնորհիւ Ճէյմս Պունի եւ Ալեքս Ֆիլեանի ջանքերուն, որոնք կալուածագիրը կը յանձնեն Շրջ. Վարչութեան ատենապետ Ժիրայր Պօյաճեանին, արժանանալով ներկայ հանդիսականներու գնահատանքի բուռն ծափերուն:

Հ. Մ. Լ. Մ. ի համագաղութային ֆութպոլի Ա. մրցաշարքին առիթով, Շրջ. Վարչութիւնը կը կազմակերպէ՝

Յուլիս 1ին, ընդունելութիւն մը, ի պատիւ հիւր շրջաններու ֆութպոլի ներկայացուցիչ խումբերուն եւ պատասխանատուններուն, էնսինոյի «Փերահեան» ազգ. վարժարանի «Աւետիսեան» սրահին մէջ:

Յուլիս 9ին, ճաշկերոյթ մը՝ ի պատիւ Հ. Մ. Լ. Մ. ի Լիբանանի ներկայացուցիչ խումբին, Կլէնտէյլի «Աբգարեան» սրահին մէջ:

Յուլիս 28ին, ճաշկերոյթ մը՝ ի պատիւ համագաղութային ֆութպոլի Ա. մրցաշարքի ախոյեան Հ. Մ. Լ. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու ներկայացուցիչ խումբին, Փաստինայի մէջ:

1986 Փետրուար 9ին, Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, հոգեհանգըստեան պաշտօն կը կատարուի՝ Պէյրութի մէջ, անարգ ոճիրի զոհ, տարաբախտ Հ. Մ. Լ. Մ. ականներ ներսէս Խուտավերտեանի, Լեւոն Պէրպէրեանի եւ Հ. Մ. Լ. Մ. ի Կեղը. Վարչութեան ատենապետ Վարդգէս Տէր Կարակետեանի մահուանց քառասունքին առիթով:

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք, եկեղեցւոյ սրահին մէջ, խուռներամ բազմութեան մը ներկայութեամբ, տեղի կ'ունենայ պատշաճ յայտագրով սգահանդէս:

Խօսք կ'առնեն ներկայացուցիչները՝ Հ. Յ. Դ. Արեւմտեան Ամերիկայի Կեղը. Կոմիտէի՝ Ռազմիկ Աճէմեան եւ Տիգրան Տէր Սարգիսեան, Հ. Մ. Լ. Մ. ի Կեղը. Վարչութեան՝ Պարգեւ Շիրինեան, Հ. Մ. Լ. Մ. ի Շրջ. Վարչութեան՝ Ժիրայր Պօյաճեան,




ԿԱՐՈ ՍՈՂԱՆՍԱԼԵԱՆ

«Համագգային»ի Շրջ. Վարչութեան՝ տոքթ. Օննիկ Քէշիշեան եւ Արեւմտեան թեմի Ազգ. Վարչութեան՝ Վաչէ Մատէնլեան:

1986ի Մարտին, Շրջ. Վարչութեան հըրաւէրով, Կլէնտէյլի Հայ Կեղրոնի սրահին մէջ տեղի կ'ունենայ Շրջանային Արտակարգ ներկայացուցչական ժողով, ուր կը քըննարկուի ու կը վաւերացուի շրջանի Հ. Մ. Լ. Մ. ի ներքին Մրագիր-Կանոնագիրը, որ խմբագրուած էր 1984ին, Շրջ. Ներկայացուցչական Դրդ ժողովին նշանակուած Վերամշակման Յանձնախումբին կողմէ:

1986ին, Հայաստանի Անկախութեան 68րդ տարեդարձին նուիրուած Քալիֆորնիոյ Հայ Աշակերտական 5րդ Մարզախաղերը (ՔԱ. Հ. Ա. Մ.), ֆութպոլի, պասքեթպոլի, վոլիսպոլի, փինկ-փոնկի, դաշտային խաղերով, փակման արարողութիւնը, շքեղ տողանցքով եւ մրցանակաբաշխութիւնը՝



Հ. Մ. Բ. Մ. ի «Սեւան», «Մարդարապատ» եւ Լոս Աննելըսի Մասնաճիւղերու
Միջ-Մասնաճիւղային բանակումին մասնակցած գայլիկները, 1988ին:

կ'իրագործուին փայլուն յաջողութեամբ:

1986ին, Շրջ. Վարչութեան հրատարակութեամբ եւ Հայ Կրթական Հիմնարկութեան մեկենասութեամբ, լոյս կը տեսնէ Շրջանային Սկաուտական Խորհուրդին պատրաստած եւ Հրազդանի խմբագրած Հ. Մ. Բ. Մ. ի սկաուտական Նորընծայի գիտելիքներու գիրքը:

1986 Յուլիսին, Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ տեղի կ'ունենան Հ. Մ. Բ. Մ. ի Նաւասարդեան 11րդ Մարզախաղերը, Կէնտէյլ Հայ Աքուլի մարզադաշերուն վրայ:

Արդէն իսկ սովորութիւն դարձած, այս անգամ ժորժ Աղամեանի բնակարանին մէջ, Նաւասարդեան 8րդ, 9րդ եւ 10րդ Մարզախաղերու պատույ նախագահներ՝ տէր եւ

տիկ. Վահան Շամլեան, տէր եւ տիկ. Էնտի Անտոնեան եւ Ժորժ Աղամեան, ի պատիւ Նաւասարդեան 11րդ Մարզախաղերու պատույ նախագահ տոքթ. Մարգիս Արեւեանի, քոքթէյլ-ընթրիք մը կու տան, որու ընթացքին զեկուցումով կը նշուի, որ Շրջ. Վարչութեան տարեկան պիւտճէն տարուէ տարի յաւելում արձանագրելով, այս տարի արդէն կը հասնի 200-225 հազար տոլարի: Միայն Նաւասարդեան Մարզախաղերու ելեւմուտքը կը տարութերի 100էն 150 հազար տոլարի միջեւ:

16,000 հանդիսականներ ներկայ կ'ըլլան ֆութապոլի 8, պասքեթապոլի 43 (29 մանչերու, 14 աղջիկներու), վոլիպոլի 26 (14 մանչերու, 12 աղջիկներու) միագումար՝ 77 խումբերու, նաեւ փինկ-փոնկի եւ դաշ-



Տէր ԵՒ ՏԻԿ. ՎԱԶԵ ՄԱՆՈՒԿԵԱՆ

տային խաղերու մրցումներուն, առաջին անգամ ըլլալով՝ Հ. Մ. Լ. Մ.ի Ֆրեզնոյի «Սասուն» Մասնաճիւղի նորակազմ նուագախումբի առաջնորդութեամբ փառահեղ տողանցքին, Ֆեսթիվալին եւ Յաղթանակի Պարահանդէսին, «Պոնավանթիւր» պանդոկին մէջ, որոնք կ'իրագործուին ժողովրդային ուրախ եւ հայաբոյր մթնոլորտի մէջ:

Հանդիսականներու տրամադրութեան տակ կը դրուի գեղատիպ ու պատկերազարդ ալպոմ մը, 80 էջ, նուիրուած՝ Հ. Մ. Լ. Մ.ի Կեդր. Վարչութեան վաստակաւոր ատենապետ, ողբացեալ Վարդգէս Տէր Կարապետեանին:

Տողանցքին ետք, Շրջ. Վարչութեան ատենապետ Ժիրայր Պօյաճեան կը կարդայ Հ. Յ. Դ. Արեւմտեան Ամերիկայի 25րդ Շրջ. Պատգմ. ժողովի կողմէ յղուած Հ. Մ. Լ. Մ.ի Նաւասարդեան 11րդ Մարզախազերը շնորհաւորող ողջոյնի հեռագիրը:

Պօյաճեան կը յայտարարէ նաեւ ազգաւէր հայորդիի մը խանդավառող նուիրատը-

ւութիւնը Հ. Մ. Լ. Մ.ին, 840,000 տոլար:

Առաջին անգամ ըլլալով նաւասարդեան Մարզախազերը միայն շրջանի 9 Մասնաճիւղերէ 1500 երկսեռ մարզիկներու եւ սկաուտական կազմերու մասնակցութեամբ եւ փայլուն յաջողութեամբ իրագործումը, վկայութիւն մը կ'ըլլայ, որ Հ. Մ. Լ. Մ. Ըրեւմտեան Միացեալ նահանգներու մէջ արդէն հաստատ արմատներ նետած է ու կը վայելէ մեծ ժողովրդականութիւն:

Այս նուաճումը կարելի կը դառնայ շնորհիւ Հ. Մ. Լ. Մ.ի Շրջ. Վարչութեան անդամներուն եւ իրենց հետ աշխատող բոլոր Հ. Մ. Լ. Մ. ականներուն, որոնք նախանձախընդութեամբ կը կատարեն իրենց ստանձնած պարտականութիւնները, ոգեւորութեամբ, նուիրումով, մթնոլորտ ստեղծելով կ'աշխատին եւ կը յաջողին գրաւիչ ու հաճելի յայտագրով, մանաւանդ կարգապահութեամբ իրագործել աւանդաբար շարունակուող Հ. Մ. Լ. Մ.ի նաւասարդեան Մարզախազերու տարեկան այս մեծ ձեռնարկը:



«...Ու կարապի երգն այս հեզ
Պիտի ըլլայ զերդ ամպրուց
Պիտի մըուընչէ զերդ մըրրիկ՝
Միայն թէ դուն լսէ՝ մահիկ...
Թափուած կարմիր արիւններէն
Արշալոյսներ պիտի ծաղկին...»:

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ



Հ. Մ. Լ. Մ. Ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Թ. Շրջանային
Ներկայացուցչական Ժողովը, 1988ին:

1986ի Օգոստոսին, Հ. Մ. Լ. Մ. Ի Կեդր. Վարչութեան կազմակերպութեամբ, Լուսոնի մէջ տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ. Ի համագաղութային սկառտական Գ. Ընդհ. բանակումը: Շրջ. Վարչութիւնը ընդառաջելով Կեդր. Վարչութեան հրաւէր-շրջաբերականին, իր շրջանի Մասնաճիւղերէն բանակումին կը մասնակցին 42 արի-արենոյշներ:

1986ի Հոկտեմբերին, Հոլիվուտի մէջ տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ. Ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջ. Ներկայացուցչական 8րդ ժողովը: Շրջանի 9 Մասնաճիւղերէն իրաւասու ձայնով կը մասնակցին 56 ներկայացուցչիներ, խորհրդակցական ձայնով՝ 30 Հ. Մ. Լ. Մ. ականներ:

9 Մասնաճիւղերը միասնաբար ունէին 3000 երկսեռ անդամ, որուն 1000ը՝ երկսեռ մարզիկ, 1200ը՝ արի-արենոյշ, գայլիկ, մրջնիկ: Շրջ. Վարչութեան 1985-86 տարեշրջանի պիտմէն հասած էր 300,000 տոլարի: 1986-1987 տարեշրջանի համար կը քուէարկուի 500,000 տոլար պիտմէ:

Հ. Մ. Լ. Մ. Ի Պատգմ. 4րդ Ընդհանուր ժողովին մասնակցելու համար պատգամաւոր կ'ընտրուին՝ Ժիրայր Պօյաճեան, տոքթ. Սարգիս Արեւեան, Գոգօ Պալեան, Յարու-

թիւն Բարսեղեան, Մհեր Շիրտըմեան, Սարգիս Կիտցինեան:

Շրջ. Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Համլէթ Զրախչեան (ատենապետ), Ռուբէն Գիւրջեան, Ժիրայր Սարգիսեան, Սերոբ Տէր Պօղոսեան, Յակոբ Թիւֆէնքճեան, Մակի Բարսեղեան, Իւզիկ Շիթիլեան, Կարպիս Շիրտըմեան, Օսիկ Մովսիսեան:

1987ի երկրորդ եռամսեային տեղի կ'ունենայ Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Շրջ. Սարգական Խորհուրդի կազմակերպութեամբ «Հ. Մ. Լ. Մ. Ի Համահայկական Առաջին Մարզախաղեր — 1987»ը, Կէնտէյլ Հայ Սքուլի մարզադաշտերուն վրայ, մասնակցութեամբ շրջանի Հ. Մ. Լ. Մ. Ի Մասնաճիւղերէն, Հ. Բ. Լ. Մ. էն, Հ. Մ. Մ. էն եւ հայ եւ օտար վարժարաններէն մանչերու 5 եւ աղջիկներու 4 Դասակարգերու բաժնուած 50 պասքեթպոլի եւ 25 վոլիսոլի խումբերու:

1987ի Մայիսին, Շրջ. Ակառտական Խորհուրդի կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ դաստիարակչական դպրոց-բանակում, Լոնկ Պիչի ամերիկեան սկառտական բանակավայրին մէջ, մասնակցութեամբ շրջանի բոլոր Մասնաճիւղերէն 91 բարձրաստիճան արի-արենոյշներու:

1987ի Յունիսին, Շրջ. Վարչութեան կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ յարգանքի երեկոյ, ի պատիւ Նաւասարդեան 8րդ, 9րդ, 10րդ եւ 11րդ Մարզախաղերու պատուոյ նախագահներուն, «Արարատ Մասնաճիւղի Վարչութեան ատենապետ Ժորժ Ահարոնեանի բնակարանին մէջ։ Կը յայտարարուի Նաւասարդեան 12րդ Մարզախաղերու պատուոյ նախագահը՝ Կարօ Սողանալեան։

1987ի Յուլիսին, Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. ի Նաւասարդեան 12րդ Մարզախաղերը Կլէնտէյլի Հայ Սքովի մարզաղաշտերուն վրայ, պատուոյ նախագահութեամբ Կարօ Սողանալեանի։ 12.000 հանդիսականներ ներկայ կ'ըլլան փակման հանդիսութեան, շրջանի 9ը եւ նիւ Եորքի ու Տիթրոյիթի Մասնաճիւղերէն Հ. Մ. Ը. Մ. ական 2000 երկսեռ մարզիկներու եւ սկառուտներու փառահեղ տողանցքին, առաջնորդութեամբ Ֆրեզնոյի «Սասուն» Մասնաճիւղի նուագախումբին։ Յաղթանակի Պարահանդէսին «Պոնավանթիւր» պանդակին մէջ, կը մասնակցին 1700 Հ. Մ. Ը. Մ. ականներ եւ համակիրներ։

1987ին, Շրջ. Սկառուտական Խորհուրդի կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ Միջմասնաճիւղային ընդհանուր զարգացման մրցում, մասնակցութեամբ՝ Լոս Անձելըսի, Մոնթեպելլոյի, Փաստինայի, Կլէնտէյլի «Արարատ», Օրէնճ Քառւնթիի եւ Հովհանի «Մասիս» Մասնաճիւղերը ներկայացնող արի-արենոյշներու, 6 խումբ, իւրաքանչիւրը 5 հոգիով։ Յաղթանակը կը տանի Մոնթեպելլոյի Մասնաճիւղը։

1988ի Յունիսին, Շրջ. Վարչութեան կեղրոնի շէնքի կառուցման համար, տեղի կ'ունենայ կալա-ձեռնարկ, «Պեվըլի Հիլզ» պանդոկին մէջ, հիւրընկալութեամբ Հ. Մ. Ը. Մ. ի Նաւասարդեան 13րդ Մարզախաղերու պատուոյ նախագահ տէր եւ տիկի Վաչէ Մանուկեանի, ներկայ կ'ըլլան Գարեգին Բ. Կաթողիկոս, Քալիֆորնիոյ կառավարիչ Ճորժ Տէօքմէճեան եւ 280 երկսեռ ազգայիններ։ Շէնքի հիմնադիր 120 հոգիի նուիրատուութեամբ, իւրաքանչիւրը 5 հա-

զարով, կը գոյանայ 600.000 տոլար։

1988ի Յունիսին, Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ, տեղի կ'ունենայ աւանդութիւն դարձած Նաւասարդեան Մարզախաղերու պատուոյ նախագահը ծանօթացնելու եւ ներկայացնելու հիւրասիրութիւնը, «Լա Ստրատա» ճաշարանին մէջ։ Արժանի մեծարանքով կը ներկայացուի Հ. Մ. Ը. Մ. ի Նաւասարդեան 13րդ Մարզախաղերու պատուոյ նախագահը՝ Վաչէ Մանուկեան։

1988ի Յուլիսին, Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ տեղի կ'ունենան Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան եւ Հ. Մ. Ը. Մ. ի հիմնադրութեան 70ամեակին գուգաղիպող Հ. Մ. Ը. Մ. ի Նաւասարդեան 13րդ Մարզախաղերը, Կլէնտէյլ Հայ Սքովի մարզաղաշտերուն վրայ, նախագահութեամբ տէր եւ տիկին Վաչէ Մանուկեանի։

Մարզախաղերուն կը մասնակցին Հ. Մ. Ը. Մ. ի շրջանի 9ը եւ Տիթրոյիթի ու Թորոնթոյի Մասնաճիւղերէն աւելի քան 1000 երկսեռ մարզիկներ։ Յաղթանակի Պարահանդէսը տեղի կ'ունենայ «Սենչըրի Փլազա» պանդոկին մէջ, 1600 Հ. Մ. Ը. Մ. ականներու եւ համակիրներու մասնակցութեամբ։

Փակման հանդիսութենէն առաջ, Նաւասարդեան 12րդ Մարզախաղերու պատուոյ նախագահ Կարօ Սողանալեան ընդունելութիւն մը կու տայ ի պատիւ պատուոյ հիւրերուն եւ նոր կառուցուելիք շէնքի հիմնադիր նուիրատուներուն։

Հ. Մ. Ը. Մ. ի 70ամեակին առիթով, Գարեգին Բ. Կաթողիկոս «Կիլիկեան Ասպետ»ի շքանշանով կը պատուէ Հ. Մ. Ը. Մ. ի շրջանի պատուոյ նախագահ Քերոբ Առաքելեանը։

Բարձրաստիճան հրաւիրեալներու եւ 15.000 հանդիսականներու ներկայացնութեամբ, Նաւասարդեան փառահեղ տողանցքին կը մասնակցին Հ. Մ. Ը. Մ. ական 2000է աւելի արծուիկ-գայլիկներ, արի-արենոյշներ, երէց-պարմանուհիներ եւ երկսեռ մարզիկներ։

Խօսք կ'առնեն Գարեգին Բ. Կաթողիկոս, պատուոյ նախագահ Վաչէ Մանուկեան

եւ Հ. Մ. Լ. Մ.ի Կեղրոնական Վարչութեան ատենապետ տոքթ. Միսաք Արզումանեան:

Շրջ. Վարչութեան ատենապետ Համլեթ Զրախնձեան յաղթանակի մետալներ կը յանձնէ պատուոյ նախագահին:

Վեհափառ Հայրապետը Հ. Մ. Լ. Մ.ի 70ամեակին անդրադառնալով, ի միջի այլոց, կ'ըսէ. «Հ. Մ. Լ. Մ. ը դարձաւ յոյս ներշնչող, լոյս սփոռղ եւ կամք դարրնող կազմակերպութիւն»:

Տոքթ. Արզումանեան վերլուծելով հայու խօսքը, թէ՝ «Ես եկել եմ դարերից, եւ գնում եմ յաղթական», կ'ըսէ. «Այս համոզումով զապանակուած հայ ժողովուրդը շարունակեց ասլրիլ, ու այսօր, Հ. Մ. Լ. Մ.-ական մարզիկ-սկառուտ բազմահարիւր բանակը եւս, իր շքերթով, ինքն ալ ըսաւ, թէ «Ես եկել եմ դարերից ու կը քայեմ յաղթական»: Այսպէս եղաւ, այս հաւատքով եղաւ Հայասփիւռքի անապահով ճամբաներուն վրայ, 70ամեայ Հ. Մ. Լ. Մ.ի 70 տարիներու նպատակասլաց երթը»:

1988ի Սեպտեմբերին, Հոլիվուտի Հայ Կեղրոնի սրահին մէջ տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ.ի Արեւմտեան Միացեալ Նա-

հանգներու Շրջ. ներկայացուցչական 9րդ ժողովը, մասնակցութեամբ՝ շրջանի 9ը մասնաճիւղերէն 120 իրաւասու եւ խորհրդակցական ձայնով ներկայացուցիչներու:

Շրջ. Վարչութեան անդամ կ'ընտրուին՝ Համլեթ Զրախնձեան, Օսիկ Մովսիսեան, Ժիրայր Սարգսիսեան, Մհեր Դաւիթեան, Հրաչ Անտոնեան, Մարտիկ Կապուտեան, տոքթ. Ճագ Մկրտիչեան, Արմենդ Գորգորեան, Ներսէս Մելքոնեան:

Արեւմտեան Միացեալ Նահանգներու մէջ Հ. Մ. Լ. Մ.ի ծաւալումը, հզօրացումը եւ գործունէութեան աշխուժացումը, անտարակոյս, հետեւանք են այլասերող այն պայմաններուն, ուր կ'ապրինք եւ մեր ժողովուրդը տակաւ կը գիտակցի Հ. Մ. Լ. Մ.ի փրկարար դերին, որ կոչուած է ծառայելու հայապահապանման, որուն առաքելութիւնն է հայեցի դաստիարակութիւն ջամբել նորահաս սերունդներուն, պատրաստել առողջ մտքով, առողջ մարմնով եւ առողջ նկարագրով հայորդիներ ու գործնապէս նուիրուիլ Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն:



Հ. Մ. Լ. Մ. ի ՀԱՄԱԴԱՂՈՒԹԱՅԻՆ ԿԱՌՈՅՑՑ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

— 1973ին, Հ. Մ. Լ. Մ. ի Մերձաւոր Արեւելքի 20րդ Շրջ. Ներկայացուցչական Ժողովը նկատի ունենալով Հ. Մ. Լ. Մ. ի տարածումը, յատկապէս Հիւսիսային Ամերիկայի եւ Աւստրալիոյ մէջ նոր Մասնաճիւղերու հիմնումը, կ'որոշէ Հ. Մ. Լ. Մ. ը համագաղութային կազմակերպութեան մը վերածել:

— Գործնականացնելով այս որոշումը, նախապատրաստական աշխատանքներ տանելու եւ Մրագիր-Կանոնագիրը մշակելու համար կ'ընտրէ եռանդամ Մարմին մը՝ Վարդգէս Տէր Կարապետեան ատենապետ, Հրանդ Մուրատեան ատենադպիր, Նշան Թիւյսիւզեան գանձապահ:

— 1974ին, եռանդամ Մարմինի հրաւելով, Պէյրութի (Լիբանան) մէջ կը գումարուի Հ. Մ. Լ. Մ. ի Պատգամաւորական Ա. Ընդհանուր Ժողովը:

— Պատգմ. Ա. Ընդհ. Ժողովին, Հ. Մ. Լ. Մ. ի համագաղութային կառոյցը կը հաշուէր 27 Մասնաճիւղ: Ժողովին կը մասնակցին՝ Հ. Մ. Լ. Մ. ի Լիբանանի, Յունաստանի, Գանապատակ, Արեւելեան Միացեալ Նահանգներու, Արեւմտեան Միացեալ Նահանգներու եւ Մերձաւոր Արեւելեան երկիրներու Մասնաճիւղերէն 23 լիազօր պատգամաւորներ, նաեւ Թեհրանի «Արարատ» կազմակերպութեան պատգամաւորը:

— Պատգմ. Ա. Ընդհ. Ժողովը հիմը կը դնէ Հ. Մ. Լ. Մ. ի համագաղութային կա-

ռոյցին, կը քուէարկէ Հ. Մ. Լ. Մ. ի ընդհանուր Մրագիր-Կանոնագիրը եւ կ'ընտրէ Հ. Մ. Լ. Մ. ի Ա. Կեղը. Վարչութիւնը:

— Հ. Մ. Լ. Մ. ի Ա. Կեղը. Վարչութիւնը ունէր հետեւեալ կազմը. — Վարդգէս Տէր Կարապետեան ատենապետ, Վարդգէս Ալահայտոյեան փոխ-ատենապետ, Տիգրան Ոսկունի եւ Բիւզանդ Թորիկեան ատենադպիրներ, Նշան Թիւյսիւզեան գանձապահ, Յովհաննէս Պայթարեան հաշուապահ, Դանիէլ Դանիէլեան (Մոնթրէալ), Արմէն Տէյիրմէննեան (Լոս Անձելըս) եւ Պարգեւ Պարսամեան (Պուէնոս Այրէս) խորհրդականներ:

— Հ. Մ. Լ. Մ. ի Ա. Կեղը. Վարչութեան գլխաւոր ճիգը կ'ըլլայ շրջաններու հետ կապի ամրապնդում, արխիւններու կեղըռնացում, թանգարանի կազմութիւն:

— Հ. Մ. Լ. Մ. ի Կեղը. Վարչութիւնը կը հաստատէ Հ. Մ. Լ. Մ. ի աթլէթիք մրցումներու յատուկ՝ «Ալէք Պեղիկեան» մրցանակը:

— 1978ին, Հ. Մ. Լ. Մ. ի Կեղը. Վարչութիւնը կը հովանաւորէ եւ կը մասնակցի Հ. Մ. Լ. Մ. ի հիմնադիրներէն Գրիգոր Յակոբեանի շիրմաքարի գետեղման, Փարիզի Թիէի գերեզմանատան մէջ:

— 1978ին, Հ. Մ. Լ. Մ. ի Կեղը. Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Յունաստանի Հ. Մ. Լ. Մ. ի Շրջ. Վարչութեան կազմակերպութեամբ, տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ. ի համագաղութային սկաուտական Ա. Ընդ-



Հ. Մ. Ը. Մ. ի Ա. Բնդիանուր ժողովին պատգամաւորները,
Պէյրուր, 1974ին:

հանուր բանակումը, Աթէնքի մերձակայքը
գտնուող Քալամոսի գեղատեսիլ շրջանին
մէջ:

Բանակումի ընդհանուր խմբապետ կը
նշանակուի Վարուժան Սերոբեան: Կը մաս-
նակցին՝ Հ. Մ. Ը. Մ. ի Լիբանանի, Յունաս-
տանի, Գանատայի, Արեւմտեան Միացեալ
Նահանգներու, Արեւելեան Միացեալ Նա-
հանգներու, Քուէյթի, Կիպրոսի, Ֆրան-
սայի, Յորդանանի, Աւստրալիոյ Մասնա-
ճիւղերէն եւ Թեհրանի «Արարատ» կազմա-
կերպութենէն 226 արի-արենոյշներ:

— 1979ին կը գումարուի Հ. Մ. Ը. Մ. ի
Պատգմ. Բ. Ընդհ. Ժողովը նիկոսիոյ (Կիպ-
րոս) մէջ: Կը մասնակցին՝ 6 շրջաններ
եւ 12 Մեկուսի Մասնաճիւղեր ներկայացնող
40 պատգամաւորներ:

Պատգմ. Բ. Ընդհ. Ժողովին, Հ. Մ.
Ը. Մ. ի համագաղութային կառոյցը կը
հաշուէր 46 Մասնաճիւղ: Ունէր՝ ընդհանուր
գումար 12,600 երկսեռ անդամ, մարզիկ,
սկառուտ:

— Հ. Մ. Ը. Մ. ի Պատգմ. Բ. Ընդհ.
Ժողովը նոր արժեւորում մը եւս տալով
Հ. Մ. Ը. Մ. ի գործունէութեան, կ'որոշէ

սփիւռքահայ բոլոր գաղութներու մէջ
Հ. Մ. Ը. Մ. ի Միջ-Մասնաճիւղային Ողիմ-
պիական խաղերը կոչել՝ Հ. Մ. Ը. Մ. ի Նաւա-
սարդեան Մարզախաղեր, ամրօրէն կապե-
լով Հայաստանի մէջ անցեալին կատարուած
Նաւասարդեան Մարզախաղերուն: Ու այս-
պէս, իբրեւ չարունակութիւնը անոնց, Հայ-
րենիքի հետ անքակտելի կապերով, Հայրե-
նիքի գաղափարականով՝ ազգային իմաստ
ու բովանդակութիւն կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. ի
Նաւասարդեան Մարզախաղերը:

— Հ. Մ. Ը. Մ. ի Պատգմ. Բ. Ընդհ.
Ժողովին ընտրուած Կեդր. Վարչութիւնը
ունէր հետեւեալ կազմը.—

Վարդգէս Տէր Կարապետեան ատենա-
պետ, տոքթ. Յարութիւն Գաղանձեան (Յ.
Գեղարդ) փոխ-ատենապետ, Բիւզանդ Թո-
րիկեան եւ Վարուժան Մուլատեան ատենա-
պիիներ, Նշան Թիւյսիւզեան գանձապահ,
Յովհաննէս Պայթարեան հաշուապահ, Վա-
րուժան Սերոբեան (Մոնթրէալ), Արմէն Տէ-
յիրմէնճեան (Լոս Անձելլու) եւ Պարգեւ
Պարսամեան (Պուէնոս Այրէս) խորհրդա-
կաններ: Նշան Թիւյսիւզեանի մահէն ետք,



Հ.Մ.Ը.Ա.Մ.ի համագաղութային սկաուտական Բ. ընդհանուր բանակումին
խմբավետական կազմը, Քլամար (Ֆրանսա), 1980ին:



Հ.Մ.Ը.Ա.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու համագաղութայինի
ախոյեան պասֆեթայոլի ներկայացուցիչ խումբը,
Մոնթրէալ (Կանատա), 1981ին:



Հ. Մ. Ը. Մ. ի Լիբանանի համագաղութեայինի ախոյեան պատմեթպոլի աղջկանց ներկայացուցիչ խումբը, Մոնթրէալ (Գանատա), 1981ին:

փոխանդամ Վարդգէս Ալահայտոյեան կ'ամբողջացնէ Կեդր. Վարչութեան կազմը:

— 1980ին, Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Հ. Մ. Ը. Մ. ի Փարիզի Մասնաճիւղի կազմակերպութեամբ, տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի համագաղութային սկաուտական Բ. ընդհանուր բանակումը, Փարիզի կից Քլամար արուարձանին մէջ:

Բանակումի ընդհանուր խմբապետ կը նշանակուի Սուրէն Մուրատեան: Կը մասնակցին՝ Հ. Մ. Ը. Մ. ի Լիբանանի, Աւստրալիոյ, Յունաստանի, Քուէյթի, Ֆրանսայի, Գանատայի, Արեւմտեան Միացեալ Նահանգներու, Կիպրոսի, Յորդանանի Մասնաճիւներէն եւ Թեհրանի «Արարատ» կազմակեր-

պութենէն 293 արի-արենոյչներ:

— 1980ին, Հ. Մ. Ը. Մ. ի Պատգմ. Բ. Ընդհ. Ժողովի որոշումով, Կեդր. Վարչութիւնը Պէյրութի (Լիբանան) մէջ կը սկսի հրատարակել Հ. Մ. Ը. Մ. ի միջ-գաղութային առաջին պաշտօնաթերթ՝ «Մարզիկ» մարզական ամսաթերթը: Կը բովանդակէ Հ. Մ. Ը. Մ. ի համագաղութային գործունէութիւնը, Հայաստանի եւ միջազգային մարզական լուրեր, Հ. Մ. Ը. Մ. ականներու յուշներ եւ վկայութիւններ: Հակառակ Լիբանանի ներքին տագնապներուն, երբեմն յապաղումներով, բայց հերթական յաջորդականութեամբ, «Մարզիկ»ի հրատարակումը կը շարունակուի:

— 1981ին, Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Գանատայի



Հ. Մ. Լ. Մ. ի համագաղութային սկզբուտական Ա. Համագումարին
մասնակցողները, Գոքինիա (Յունաստան), 1982ին:

Հ. Մ. Լ. Մ. ի Շրջ. Վարչութեան կազմակերպութեամբ, Գանատայի զոյգ քաղաքներու՝ Թորոնթոյի եւ Մոնթրէալի մէջ, տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ. ի պասքեթպոլի համագաղութային Ա. մրցաշարքը:

Կը մասնակցին՝ Հ. Մ. Լ. Մ. ի Արեւմըտեան Միացեալ Նահանգներու, Գանատայի, Արեւելեան Միացեալ Նահանգներու, Լիբանանի, Եգիպտոսի, Աւստրալիոյ, Յունաստանի եւ Ֆրանսայի Մասնաճիւղերէն 200 մարզիկ-մարզիկուհի հաշուող մանչերու 8 եւ աղջիկներու 4 ներկայացուցիչ խումբեր:

Ախոյեանի տիտղոսին եւ բաժակին կը տիրանան՝ Հ. Մ. Լ. Մ. ի Արեւմըտեան Միացեալ Նահանգներու մանչերու եւ Լիբանանի աղջկանց ներկայացուցիչ խումբերը:

— 1982ին, Հ. Մ. Լ. Մ. ի Կեդր. Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Յունաստանի Հ. Մ. Լ. Մ. ի Շրջ. Վարչութեան կազմակերպութեամբ, Աթէնքի «Հայ Տուն»ի սրահին մէջ տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ. ի համագաղութային սկզբուտական Ա. համագումարը:

Կը մասնակցին՝ Գանատայի, Արեւ-

մըտեան Միացեալ Նահանգներու, Արեւելեան Միացեալ Նահանգներու, Արժանթինի, Անգլիոյ, Ֆրանսայի, Յունաստանի եւ Մերձաւոր Արեւելեան երկիրներու Մասնաճիւղերէն 42 խմբապետ-խմբապետուհիներ, Սկզբուտական Խորհուրդներու ներկայացուցիչներ եւ Կեդր. Վարչութեան 6 անդամներ:

— 1982ին, Հ. Մ. Լ. Մ. ի համագաղութային կառոյցը կը հաշուէր 53 Մասնաճիւղ: Անդամներու ընդհանուր թիւ՝ 15,000: Սկզբուտական կազմեր ունէին 40 Մասնաճիւղեր, միասնաբար 7500 անդամով:

— 1983ին, Հ. Մ. Լ. Մ. ի Կեդր. Վարչութիւնը Տիգրան Ա. քհնյ. Խոյեանի «Նահատակ Ցեղի Անմահներ» յուշերու գիրքը հրատարակելով, հիմը կը դնէ Հ. Մ. Լ. Մ. ի Մատենաշարին:

— Հ. Մ. Լ. Մ. ի Կեդր. Վարչութիւնը գնահատելու համար երախտարժան Հ. Մ. Լ. Մ. ականներու վաստակը, կը հաստատէ Հ. Մ. Լ. Մ. ի Արժանեաց Շքանշան:

Ցարդ Հ. Մ. Լ. Մ. ի Արժանեաց Ոսկի



ՎԱՐԴԳԵՍՏԻՎ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Շքանշան ստացած են՝ Տիգրան Ա. քհնյ. Խոյեան (Պոլիս, Հայաստան, Միացեալ Նահանգներ), Յովհաննէս Շահհինեան (Պէյրութ), Լուտեր Մասպանաձեան (Հալէպ, Գանատա), Թորոս Խաչատուրեան (Գահիրէ), Գէորգ Յաբէթեան (Իզմիր, Աթէնք), Լեւոն Գայեան (Աթէնք), Վահան Գալուռը ճեան

(Աղեքսանդրիա), Դանիէլ Դանիէլեան (Յունաստան-Գանատա), Քերոբ Առաքելեան (Աթէնք, Մեքսիկօ, Միացեալ Նահանգներ), Ալպէո Յակոբեան (Պէյրութ), Գարեգին Շամլեան (Գահիրէ), Շաւարչ Ա. Քհնյ. Մեհրապեան (Աթէնք, Արժանթին), Պետրոս Կարապետեան (Սուրիա, Միացեալ Նահանգներ) :

Հ.Մ.Լ.Մ.ի Արժանեաց Արծաթ Շքա-
նշան ստացած են՝

Խաչիկ Բարթեմեան (Յունաստան), Հրանդ Մուրատեան (Հալէպ, Պէյրովթ), Տիգրան Ոսկերիչեան (Դամասկոս), Սարգիս Պապիկեան (Դամասկոս), Եղիշէ Խոստեղեան, Յովհաննէս Մթամպուլեան, Մանուկ Գարճեան, տոքթ. Ժողէփ Մելիքեան (Արեւելեան Միացեալ Նահանգներ), Սուրէն Նազարեան, Զաւէն Սապունճեան (Սուրբիա), Ժորժ Տաքէսեան (Յորդանան):

— 1983ին, Աթէնքի մէջ կը գումարուի Հ.Մ.Լ.Մ.ի Պատգմ. Գ. Ընդհ. Ժողովը՝ կը մասնակցին՝ 7 Շրջաններէ (44 Մասնաճիւղ) եւ 11 Մեկուսի Մասնաճիւղերէ իրաւասու ձայնով 48 պատգամաւորներ եւ խորհրդակցական ձայնով 15 Հ.Մ.Լ.Մ.-ականներ։


— Հ.Մ.Լ.Մ.ի Պատգմ. Գ. Ընդհ. Ժողովէն ընտրուած կեղր. Վարչութիւնը ունի հետեւեալ կազմու.—

Վարդգէս Տէր Կարապետեան ատենապետ, տոքթ. Յարութիւն Գաղանճեան (Յ. Գեղարդ) փոխ-ատենապետ, Վարուժան Մուրատեան եւ Եղուարդ Տէմիրճեան ատենապիհներ, Բիւզանդ Թորիկեան գանձապահ, Միհրան Շիմշիրեան հաշուապահ, Կարօ Թիւթիւնճեան, Վարուժան Սերոբեան (Մոնթրէալ), Վարդգէս Ալահայտոյեան (Լոս Անಡելըս) խորհրդականներ։ Վարդգէս Տէր Կարապետեանի մահէն ետք, ատենապետի պաշտօնը կը վարէ Բիւզանդ Թորիկեան։

— 1985ին, Լոս Անձելըսի մէջ տեղի կ'ունենայ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդր. Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Հ.Մ.Լ.Մ.ի Արեւ-մրտեան Միացեալ Նահանգներու Շրջ.



Հ.Ա.Ը.Ը. համագութային սկաուտական Գ. ընդ



Յուր բանակումին մասնակցողները, Լինցոն, 1986ին:



Հ. Մ. Լ. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու համագաղութայինի ախոյիան ֆութպոլի ներկայացուցիչ խումբը, Լու Ս.ննելըս, 1985ին:

Վարչութեան կազմակերպութեամբ Հ. Մ. Լ. Մ. ի համագաղութային ֆութպոլի Ա. մրցաշարքը: Կը մասնակցին՝ Հ. Մ. Լ. Մ. ի Աւտրալիոյ, Լիբանանի, Յունաստանի, Արեւմտեան Միացեալ Նահանգներու, Ֆրանսայի, Գանատայի, Արեւելեան Միացեալ Նահանգներու ֆութպոլի ներկայացուցիչ խումբերը:

Ախոյիանի տիտղոսին եւ բաժակին կը տիրանայ Հ. Մ. Լ. Մ. ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու ներկայացուցիչ խումբը:

— 1985ին, Իտալիոյ Միլանօ քաղաքի «Հայ Տուն»ի սրահին մէջ, Հ. Մ. Լ. Մ. ի Կեդր. Վարչութեան հրաւէրով, առաջին անգամ ըլլալով կը գումարուի Հ. Մ. Լ. Մ. ի Շրջանային եւ Մեկուսի Մասնաճիւղերու Վարչութեանց ներկայացուցիչներու խորհրդադողով։ Կը մասնակցին՝ Կեդր. Վարչութեան 9 անդամները եւ Շրջանային ու Մեկուսի Մասնաճիւղերու Վարչութեանց 27 ներկայացուցիչներ։

— 1985ին, Հ. Մ. Լ. Մ. ի Կեդր. Վարչութեան հովանիին տակ կը գործէին 7 Շրջանային Վարչութիւններ, 44 Մասնաճիւղերով եւ 13 Մեկուսի Մասնաճիւղեր։ 57 Մասնաճիւղերը միասնաբար ունէին՝ 2766 մարզիկ, 5971 անդամ, 7019 սկաուտ։ Գումար՝ 15,756։

— 1986ին, Պէյրութի մէջ, քստմնելի ու անարգ ոճիրի գոհ կ'երթայ Հ. Մ. Լ. Մ. ի Կեդր. Վարչութեան վաստակաւոր ատենապետ Վարդգէս Տէր Կարապետեան, նուիրեալ ու գործունեայ Հ. Մ. Լ. Մ. ականներ Լեւոն Պէրպէրեանի եւ ներսէս Խուտավերտեանի հետ։

— 1986ին, Հ. Մ. Լ. Մ. ի Կեդր. Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Հ. Մ. Լ. Մ. ի Լոնտոնի Մասնաճիւղի կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ Հ. Մ. Լ. Մ. ի համագաղութային սկաուտական Գ. Ընդհանուր բանակումը, Լոնտոնի մօտ, Զէլֆոնթ Հայթց սկաուտական բանակավայրին մէջ։



Հ. Մ. Ը. Մ. ի համագաղութային սկաուտական Գ. բանակումին
Կիրակնօրեայ առաւտեան ժամերգութիւն բանակավայրի մատուդին
առջեւ, Լոնտոն, 1986ին:

Բանակումի ընդհանուր խմբապետ կը նշանակուի Արտուր Աղամալեան: Կը մասնակցին՝ Հ. Մ. Ը. Մ. ի Լիբանանի, Յորդանանի, Քուէյթի, Կիպրոսի, Յունաստանի, Արեւմտեան Միացեալ Նահանգներու, Արժանինի, Արեւելեան Միացեալ Նահանգներու, Ֆրանսայի, Անգլիոյ, Գանատայի եւ Աւստրալիոյ Մասնաճիւղերէն 350 արի-արենոյշներ:

— 1987ին, Աթէնքի մէջ տեղի կ'ունեայ Հ. Մ. Ը. Մ. ի Պատգ. Դ. Ընդհ. Ժողովը: Իրաւասու ձայնով Ժողովին կը մասնակցին՝ 14 երկիրներէ Հ. Մ. Ը. Մ. ի 57 Մասնաճիւղերը ներկայացնող 53 պատգամաւորներ, ի պաշտօնէ 7 եւ խորհրդակցական ձայնով 20 Հ. Մ. Ը. Մ. ականներ:

Հ. Յ. Դ. Բիւրոյի կողմէ ողջոյնի խօսքով ելոյթ կ'ունենայ Հրայր Մարուխեան, ընդգծելով յատկապէս Հ. Մ. Ը. Մ. ը աւելի քան երբեք զօրաւոր կազմակերպութեան մը վերածելու պահանջը, որպէսզի ալ աւելի շեշտուի Հ. Մ. Ը. Մ. ի կենսական դերակատարութիւնն ու նշանակութիւնը հայ իրականութեան մէջ:

Քալիֆորնիոյ կառավարիչ Ճորժ Տէօքմէնեան Պատգմ. Ժողովին կը յդէ շնորհաւորական յատուկ գիր մը, որուն մէջ ան կը

մաղթէ յաջողութիւն Ժողովի աշխատանքներուն, յատկապէս Հ. Մ. Ը. Մ. ի համասփիւքեան ազգօգուտ դերակատարութեան եւ առաքելութեան:

Պատգ. Դ. Ընդհ. Ժողովին կողմէ ընտրուած Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութիւնը ունէր հետեւեալ կազմը. —


Տոքթ. Միսաք Արզումանեան ատենապետ, Երուանդ Տէմիրճեան փոխ ատենապետ, Յովհաննէս Տէր Յարութիւնեան եւ Կարօ Թիւթիւննեան ատենապիրներ, Միհրան Շիմշիրեան գանձապահ, Պատրիկ Կիւլպէնկեան հաշուապահ, Արա Յակոբեան (Լիբանանէն), Ժիրայր Պօյաճեան (Լոռ Անձելըսէն), Ճորժ Տաղեան (Պուէնոս Այրէսէն), Վարուժան Սերոբեան (Մոնթրէալէն), Միամանթօ Կարապետեան (Լոնտոնէն) խորհրդականներ:

— 1987ին, Պուէճ Համուտի (Լիբանան) մէջ տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութեան սեփական կեդրոնատեղիի բացման հանդիսութիւնը, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Գարեգին Բ. Կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ:

Վարդգէս Տէր Կարապետեանի յիշատակը յաւերժացնելու համար, կեդրոնատեղիի թանգարան-սրահը կը կոչուի «Վարդգէս Տէր Կարապետեան»:



Հ. Մ. Ը. Մ. ի համագորսային սկզբանական թ. Համագումարին
մասնակցողները, Լոնկ Պիչ (Քայիֆորնիա), 1988ին:



Հ. Մ. Ը. Մ. ի Դ. Ընդհանուր ժողովին պատգամաւորները, Աբէնք, 1987ին:

— 1988ին, Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Հ. Մ. Ը. Մ. Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջ. Սկաուտական Խորհուրդի կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի համագաղութային սկաուտական Բ. Համագումարը, Լոնկ Պիչի (Քալիֆորնիա) ամերիկեան սկաուտական բանակավայրին մէջ: Կը մասնակցին՝ Հ. Մ. Ը. Մ. ի 12 Շրջաններէն 32 շրջանային խմբապետ-խմբապետուհիներ եւ Կեդր. Վարչութեան ներկայացուցիչներ:

* * *

— 1974ին, Հ. Մ. Ը. Մ. ի Պատգմ. Ա. Ընդհ. ժողովին, Հ. Մ. Ը. Մ. ի համագաղութային կառոյցը կը հաշուէր 27 Մասնաճիւղ:

Այնուհետեւ, տարիներու հոլովոյթին հետ, չնորհիւ Կեդր. Վարչութեան ջան-

քերուն եւ քաջալերանքին, յատկապէս ատենապետ Վարդգէս Տէր Կարապետեանի, նաեւ իր վարչական գործակիցներու գաղութէ-գաղութ այցելութիւններուն եւ շրջաններու Շրջ. Վարչութեանց եւ Մասնաճիւղերու Վարչութեանց բոլորանուէր աջակցութեան եւ ճիգերուն, Մասնաճիւղերուն թիւը կ'աւելնայ եւ 1987ին կը հասնի 57ի :

1987էն սկսեալ, Հ. Մ. Ը. Մ. ի հզօրացումը եւ ճիւղաւորումը նոր թափ կը ստանայ: Կը հիմնուէին նոր Մասնաճիւղեր, նաեւ նոր շրջաններու մէջ, օրինակ՝ Կեդր. Վարչութեան նախաձեռնութեամբ եւ ատենապետ տոքթ. Միսաք Արգումանեանի Հարաւային Ամերիկա այցելութեամբ եւ իր ջանքերով, Ուրուկուէյի մայրաքաղաք Մոնթէվիտէոյի մէջ, գործակցութեամբ Պուէնոս Այրէսի Հ. Մ. Ը. Մ. ի Վարչութեան եւ տեղւոյն խումբ մը հաւատաւոր երիտա-

սարդներու, կը հիմնուի Մոնթէվիտէոյի
Հ. Մ. Ը. Մ.ի «Վոամեան» Մասնաճիւղը:

Կը շարունակուի, պիտի շարունակուի
Հ. Մ. Ը. Մ.ի առաքելութիւնը վառ հաւատ-
քով, նոր հեռանկարներով:

— Հ. Մ. Ը. Մ.ի բարձրագոյն իշխանու-
թիւնը Պատգմ. Ընդհ. Ժողովն է, երաշխա-
ւորուած՝ Ծրագիր-Կանոնագրով, ուր կը
պահուին Հ. Մ. Ը. Մ.ի աւանդական ոգին
եւ ուղեգիծը:

Պատգմ. Ընդհ. Ժողովի որոշումները
նուիրական են ու գործադրելի՝ բոլոր Շըր-
ջաններու եւ Մեկուսի Մասնաճիւղերու
կողմէ:

Պատգմ. Ընդհ. Ժողովէն ընտրուած
կեդր. Վարչութիւնը Հ. Մ. Ը. Մ.ի գործադիր
վերին Մարմինն է:

Նուիրապետական այս կարգով կը պահ-
ուի ենթակայութիւնը, եւ սակայն իւրա-

քանչիւր Շըրջան եւ Մեկուսի Մասնաճիւղ,
իր միջավայրին ու պայմաններուն համա-
պատասխան քայլ պահելու, որոշումներ
առնելու եւ գործադրելու ազատութիւնը
ունի:

— 1918-1988 — 70ամեայ փառահեղ
անցեալով արժեւորուած կազմակերպու-
թիւն՝ Հ. Մ. Ը. Մ. ը, 1974էն սկսեալ համա-
գաղութային իր կառոյցով, հայահոծ հին ու
նոր կազմաւորուող գաղութներու մէջ միշտ
ներկայ, կը շարունակէ իր առաքելութիւ-
նը իբրեւ հայկական կենսունակութեան
եւ հայ ուժին արտայայտութիւնը, նաեւ
միշտ պատրաստ, ամբողջական նուիրումով
ու հաւատքով իր գործօն մասնակցութիւնը
կը բերէ հայապահպանման, հայակերտման,
մեր ազգային գերագոյն նպատակներու
իրագործման, մեր արդար դատի հետա-
պընդման աշխատանքներուն:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջ

Յառաջ Նահատակ

Երկու խօսք՝ Հ. Մ. Ը. Մ. ի ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
Բոլորուիլ Հ. Մ. Ը. Մ. ի շուրջ,
Ըլլալ Հ. Մ. Ը. Մ. ի Ծառայութեան մէջ . . . ՀՐԱԶԴԱՆ 5

Հ. Մ. Ը. Մ. ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Պոլիս — Գաւառներ — Կիլիկիա 11
Առաքելութիւն դէպի Հայաստան 19

ՄԵՐՁԱԽՈՐ ԱՐԵՒԵԼՔ

Լիքանան, Սուրբա, Ամման,
Երուսաղէմ, Հայֆա, Եափա 21
Իրաք 110
Քուէյթ 114
Իրան 116
Եգիպտոս (Ափրիկէ) 128
Կիպրոս 139

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐ

Յունաստան 140
Պուլկարիա 154
Ռումանիա 159
Պելինիքա 170
Ֆրանսա 171
Անգլիա 180
Իտալիա 186

ԱԻՍՏՐԱԼԻԱ 189

ՀԱՐԱԽԱՑԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Արժանքին, Ուրուկուէյ 201

ՀԻԻՍԻՍԱՑԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Մեխիքա 212

Գանատա 214

Արեւելեան Միացեալ Նահանգներ 234

Արեւմտեան Միացեալ Նահանգներ


Մասնաճիւղեր 248

Շրջանային Վարչութիւն 308

Հ. Մ. Ը. Մ. ի

ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՑԻՆ ԿԱՌՈՅՑՑԸ

Կեդրոնական Վարչութիւն 332



**BARKEV SHIRINIAN
224 W. Kenneth Rd.
Glendale, CA 91202**

Կողմի գծանկար՝ վաստակաւոր Ակարիչ
ՊԱՂՏԱՍԱՐ ԱՅՎԱԶԵԱՆԻ
1957, Պուէնոս Այրես

Ամեն իրաւունք վերապահուած՝

Printed in the United States of America
by
MESHAG PRINTING and PUBLISHING
1302 N. Wishon, Fresno, CA 93728
Phone: (209) 266-8351

Տպարան Մշակ - Երուանդ Զատրիճեան

